






THE UNIVERSITY OF MICHIGAN
LIBRARIES





ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԵՒ

ՆՈՐԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ

ԳԻՐՔ ՄԱԿԱԲԱՅԵՑԻՈՑ


ԵՒԹԱՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ եւ ՓԱՒՍՏՈՍ ԲԻՒԶԱՆԴ

ՀԱՆԴԵՐՁ ԴԻՏՈՂՈՒԹԵԱՄԲՔ, ՏԵՂԵԿՈՒԹԵԱՄԲՔ ԵՒ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԵԱՄԲՔ

ԳՐԵԱՑ

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻՒԶԱՆԴԱՑԻ




«Որքան կարեմ՝ զայն առնեմ».

ՏՓՂԻՍ
ԱՐԱԳԱՏԻՊ ՏՊԱՐԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ
Միքայէլեան փողոց, տուն 81
1900



Дозволено цензурою. Тифлисъ, 11 іюня 1899 г.



վաղվաղակի զհրամանն կատարել կամ Փութային կատարել վաղվաղակի զհրամանսն (=Վաղվաղակի կատարէր զհրամանս, Բիւզ.), *Ոչ իւիք անտեղեակ կամ անտեղեակք, Իրաց իրաց ինչ, Կոր. Ագաթ.—Դիպացն պատահելոց, Կոր. Բիւզ. (այլ ոմն՝ Իրացն պատահելոց, Իրաց դիպելոց.)—*Կոտորէին կամ Կոտորեալ զամենայն զաւրսն Պարսից, *Արկանէր ի սուր զզաւրս Պարսից, Ըստ *աւրինաց թագաւորաց (=Ըստ աւրէնս թագաւորաց, Մկք.), *Մանկիկ մի փոքրիկ, անուն Տրդատ կամ Սպանդարատ, Մեծ թագաւորն *Հայոց, Մեծ թագաւորն *Յունաց, Ի *ծեռս աւտար թըշնամեաց, Նշանաւքն տուեալովք կամ եղելովք, Զի *ծեռնադրեսցեն զՍուրբն Գրիգորիոս կամ Ներսէս, Անթիւ մարդիկ, Ագաթ. Բիւզ.—*Անդրէն արշաւել ի կողմանս Պարսից կամ Հրէաստանի, Որ ընդ իմով կամ մերով *իշխանութեամբ, Ի *կողմն Ազովտայ, Ագաթ. Մկք.—*Անց ըստ գետն մեծ ըստ Կուր կամ Եփրատ, Հասանէին հարկանէին, Հասանէր սատակէր կամ Հասանել սատակել, *Բերէին տային ի ղուրս, Մինչ նա դեռ, Ե՛կ տեսցուք զմիմեանս, Էր երթեալ նա, *Իւրով գնդաւն, Երկոցունց *գնդացն, Բիւզ. Մկք., այլովքն հանդերձ։ Այս ամենայն նշանաւոր եւ աննշան, ձեւաւոր եւ ամենապարզ բանից կրկին եւ կրկին դառնալ գալն ընդ գրչաւ Կորեան՝ շատ բնական երեւոյթ մի է. այնու զի ո եւ իցէ մատենագիր թէպէտ եւ ջանայ խորշել ի միակերպութենէ, թէպէտ եւ գիտնայ պէսպէս եղանակօք եւ կերպակերպ բացատրութեամբք ներկայացնել զայս ինչ կամ զայն իմաստ,—յայտնի է ճարտարութիւն Կորեան յայսմ մասին,— յաճախ կը հետեւի յանգէտս իւր ընդելական ոճոյն եւ իւր սիրական խօսիւք կը նոյնաբանէ ի զանազան տեղիս, կամայ ակամայ ծրագրելով զիւր գրութեան կերպին որոշիչ նկարագիրն՝ որով կը զատուի յօտար մատենագրաց։

Վերջին փաստ իմ կարծեաց ստուգութեան։ Ոսկեդարու հատորաւոր մատենից մէջ չկան այլ բնագիրք որ այնքան լուսաւորեն զմիմեանս, այնչափ ապահովութեամբ եւ յաճախութեամբ ուղղեն զիրերաց սխալմունս՝ գործեալս ի տգէտ կամ յանհաւատարիմ գաղափարողաց, որքան Վարքն Մաշտոցի, Ագաթանգեղ, Բիւզանդ, Մակաբայեցիք, Նաթաղ։ Ո՞չ ապաքէն յայտնի նշան է այս թէ մի միայն գրչի վաստակք են հնգեքին մատե-

ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԵՒ

ՆՈՐԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ

ԳԼՈՒԽ Ա.

Նախաշաւիղ.—Կորիւն Վարդապետի վերայ տեղեկութիւնք, որչափ ունինք.—Միակ մատենագրութիւն Կորեան հասեալ առ մեզ՝ Վարք Երանելւոյն Մաշտոցի Վարդապետի, եւ միակ Թարգմանութիւն Նորա յիշատակեալ ի Նախնեաց՝ Սրբոյն Կիւրղի Երուսաղեմացւոյ Ապաշխարող կարգել եւ արձակել ի մեծի Հինգշաբաթին.—Քննութիւն Վարուցն Մաշտոցի պատմաբանական եւ լեզուաբանական հայեցմամբք.—Թարգմանութիւնք զորս ես Կորեան կը համարիմ, Գիրք Մակաբայեցւոց, Եւթաղ Աղեքսանդրացի, Ագաթանգեղոս, եւ Փաւստոս Բիւզանդ.—Ծրագիր գործոյս։

Նախաշաւիղ.—Ամենայն ոք որ կը սիրէ զայն սքանչելի Հայ լեզուն՝ որով գրեցին Սահակ և Մաշտոց եւ իւրեանց ձեռնասուն աշակերտաց դասն, կը բաղձայ միանգամայն գիտել թէ ովք եղած են արդեօք թարգմանիչ այն ասորի եւ յոյն բնագրաց՝ զորս մեք հայերէն կը կարդանք եւ կ'ուսումնասիրենք, եւ չենք յագենար ոչ կարդալով եւ ոչ ուսումնասիրելով։ Թարգմանութեան արուեստն այնչափ կատարեալ, եւ հայերէնն այնպէս գեղեցիկ է եւ համեղ, գլխաւորապէս ի յունէ թարգմանութեանց մէջ, որ աւելի մատե-

նագրութիւն եւ գերազանց մատենագրութիւն կոչելի են՝ քան թէ թարգմանութիւն՝ Սուրբ Գիրք մեծագոյն մասամբ, եւ Յոհաննու Ոսկեբերանի բազում Մեկնութիւնք։ Մինչև ցայսօր չյայտնուեցաւ յիշատակարան մի՝ որ ծանուցանէր մեզ ճշդիւ, թէ զոր բնագիրս ի Հայ փոխեցին Սահակ եւ Մաշտոց, եւ զորս Առաջին Խմբից [1]) աշակերտքն, կամ Առաջին Թարգմանիչքն, Եզնիկ, Կորիւն, եւ ընկերք նոցա։ Միայն Կարգաւորութիւն Աւրհնութիւնաբեր Ցուցակի [2]) վերնագրով համառօտ գրուած մի ունինք արդ ի ձեռին, յորում նշանակեալ են եկեղեցական պաշտամանց քանի մի կարգք, յայտարարութեամբ անուան իւրաքանչիւր թարգմանչի։ Բաց յայսմանէ, իբրև հաւանական՝ Սրբոյն Սահակայ կ'ընծայուի թարգմանութիւն Հնգամատենին, մարգարէութեանց եւ Նոր Կտակարանին. մինչդեռ զԱռակաց դիրս կ'ըսուի թէ Սուրբն Մաշտոց թարգմանած է՝ օգնականութեամբ Յոհաննու Եկեղեցայնոյ եւ Յովսեփայ Պաղնացւոյ (1) [3])։ Իսկ իբրեւ ստոյգ կը յիշատակուի եւեթ Աբրահամ Զենակացի (Խոստովանող), ընկերակիցն Սրբոց Ղեւոնդեանց, որ յետ կիսոյ Հինգերորդ դարուն թարգմանած է յասորի լեզուէ զՄարութայի Պատմութիւնն Արեւելեան Վկայից, եւ զնորին ճառ ի Վկայսն Արեւելից։ Առաւել քան զայս ոչ ինչ ոչ գիտեմք։

Ժամանակիս այն բանասիրաց՝ որ մասնաւոր իմն օրինակաւ Հինգերորդ դարու Հայ գրականութեամբ կը պարապին, եւ կը ցանկան նոյն դարուն բազմախուռն թարգմանութեանց գոնէ զոմանց աշխատասիրողներն իմանալ, կը մնայ ուրեմն մի միայն հնարք. որ է մանր կրկտել զննել զոճ և զյատկաբանութիւնս (գղ. idiotisme) այս ինչ բնագրի՝ որոյ յայտ է մատենագիրն, և այն ինչ անանուն թարգմանութեան, և ի ծանօթէն գուշակել

---

1. «Մեսրոպայ կացեալ յանապատ եւ ի հովանաւոր տեղիսն՝ որ Ճաղգոմքն անուանին, բովանդակեաց զվարդապետութիւնս առաջին առելոց խմբիցն». Մ. Խոր. Պատմ. Գ. կ. 541—542։

2. Զայս Ցուցակ հրատարակած է Հ. Գար. Զ. ի Մտնդր. 246—248։ Տես եւ Հ. Միք. Չամչեան, Պատմ. Հայոց. Հ. Ա. 768—769։

3. Ցոյց թուանշանքս Տեղեկութեանց եւ լուսաբանութեանց համարք են, զորս տես ի վերջ կոյս մատենիս։

գտանել զանծանօթն։ Ըստ այսմ՝ Թոռնեան Հ. Թադէոսի [1]) կարծեօք՝ Կիւրղի Աղեքսանդրացւոյ Սուրբ Գրոց Մեկնութեանց թարգմանիչն է Եզնիկ Կողբացի, եւ շատ հաւանական է իւր կարծիքն։ Աւասիկ իւր խօսքերն. «Կիւրղի Աղեքսանդրացւոյ Մեկնութիւն Մովսիսի գրոց, Եսայեայ, Դատաւորաց, Թագաւորութեանց եւ այլն։ Ասոր եւ Եզնկայ գրոց մէջ՝ եթէ իմաստից եւ եթէ մանաւանդ բառերու եւ դարձուածներու նկատմամբ այնչափ մեծ է նմանութիւնը, որ կարծենք թէ երկուքը միեւնոյն գրչէ ելած են, ինչպէս վերջին ժամանակներս արդէն ստուգուած կը համարուի»։

Այսպէս եւ ես յետ ցուցանելոյ Քննասիրի Բ. Գրակա (երեսք 29—63) թէ յԵրկրորդ Աշակերտաց կարգէն քանի մի թարգմանութեանց, Սուտ Կալլիսթենեայ Պատմութեանն Աղեքսանդրի կ՚ըսեմ, Փիլոնի Եբրայեցւոյ Մեկնութեանց եւ ճառից, Գրիգորի Նազիանզացւոյ ճառից, եւ Գրիգորի Նիւսացւոյ ճառին ի Մանկունսն Բեթղեհեմի երկասիրողն է Մովսէս Խորենացի, առաջիկայ գործովս պիտի ցուցանեմ թէ յԱռաջին Աշակերտաց ժամանակէն չորս պատուական թարգմանութիւնք՝ Կորիւն Վարդապետի արդիւնք են։

Կորիւն Վարդապետի վերայ տեղեկութիւնք, որչափ ունինք.—Կորիւն [2]), զորոյ ոչ գաւառն գիտենք եւ ոչ զծննդեան տեղին եւ զթուականն, Սրբոյն Մաշտոցի աշակերտաց Առաջին Խմբից մէջ «կրտսերագոյն» է, ինչպէս ինքն իսկ կը վկայէ զանձնէ [3])։ Յետ ուսանելոյ զասորի լեզուն—եւ թերեւս զպարսիկն —ըստ ամենայն հաւանականութեան առ ոտս վարդապետին իւրոյ Մաշտոցի [4]), գնացած է ի Կոստանդնուպոլիս հանդերձ Ղեւոնդիւ

---

1. Հատ. Ընթերց. Առաջին Դաս, 20 (ի ստորէ)։

2. Այս անուամբ երկու անձինք միայն կը յիշուին ի գիրս մեր. մին ի Հինգերորդ դարու, զորմէ բանքս են. միւսն՝ ի սկիզբն Ութերորդին, Կորիւն Արծրունի, նախարար, զոր սպանին Արաբացիք. տես Ղեւոնդ Երէց, Պատմ. 34։

3. Վարք Մաշտոցի, 1։

4. Թէ Սուրբն Մաշտոց տեղեակ էր ասորի եւ պարսիկ լեզուաց, կը յայտնուի ի բանից Մ. Խորենացւոյ, Պատմ. Գ. խէ. 501. ծր. 517։ Գիտենք եւ ի Կորիւնէ, Վարք Մաշտոցի, 6, (յորմէ և Ղ. Փարպեցի, Պատմ.

Վանանդեցւով իբր յամին 431, *որպէս զի յունարէն ուսանի, կամ զարդէն ուսեալն կատարելագործէ։ Ի Կոստանդնուպոլիս կը գտնէ զԵզնիկ Կողբացի, զիւր «ընտանեգոյն սննդակից»ն, որ զոյգ ընդ Յովսեփայ Պաղնացւոյ առաքեալ էր կանխաւ յԵդեսիա՝ ի թարգմանել յասորականէ Ասորի Սրբոց Հարց քանի մի գործեր, եւ յետ կատարելոյ զյանձնարարութիւն վարդապետացն՝ Եզնիկ եւ Յովսէփ անցած էին ի Կոստանդնուպոլիս* [1]). *ուր զկնի Ղեւոնդի եւ Կորեան՝ կը ժամանեն նա եւ Յոհան եւ Արձան* [2]). *եւ վեցեքեանդ միանգամայն՝ սիրալիր ընդունելութեան կը հանդիպին ի Մաքսիմիանոսէ* (2), *որ յամսեան Հոկտեմբերի* 431 *տարւոյն յաջորդեց չարադաւանդ Նեստորի ի պատրիարքութեան Կոստանդնուպոլսի։ Հաւանական է որ Եզնիկ եւ հինգ ուսումնակիցք իւր՝ յետ իբր երեքամեայ վարժից յոյն լեզուի ի կայսերական մայրաքաղաքին՝ խմբովին մեկնած են ի Կոստանդնուպոլսէ յամին* 434 *եւ դարձած ի Հայս առ իւրեանց վարդապետս, պարգեւ բերելով նոցա յառատաձեռնութենէ Թէոդոս Բ կայսեր եւ Պրոկղ պատրիարքի,— որ յաջորդեց Մաքսիմիանոսի յետ սորա մահուանն յ'* 12 *Ապրիլի* 434 *տարւոյ* [3]),—*ընտիր ընտիր յոյն ձեռագրեր, յորոց գլխաւորքն էին Հին եւ Նոր Կտակարանաց օրինակք, «հաստատուն եւ ճշմարիտ աւրինակք», ինչպէս կ' ըսէ Կորիւն* [4]), *կամ «ստոյգ աւրինակք»,*

24—25,) *որ Մաշտոց ի մանկութեան հասակի վարժեալ էր եւ հելլենական դպրութեամբ. բայց ի բանից Փարպեցւոյն*, **29—32**, *կ'երեւի թէ «սակաւ» էր յունագիտութիւն Մաշտոցի։*

1. *Վարք Մաշտոցի*, **20—21**։ *Ըստ Մ. Խորենացւոյ, Պատմ. Գ. կ.* **544**, *Եզնիկ եւ Յովսէփ «առանց հրամանի վարդապետացն իւրեանց» կը չուեն ի Կոստանդնուպոլիս. նոյնպէս Ղեւոնդ եւ Կորիւն «յիւրեանց կամաց» կ'ուղեւորին ի նոյն քաղաք։*

2. *Մ. Խոր. Պատմ. Գ. կ.* **544—545**։ *Յոհանդ թուի ինձ ոչ Եկեղեցային, որպէս կը համարի Չամչեան, Պատմ. Հայոց Հ. Ա.* **509**, **521**, **536**, (*յորմէ եւ Հ. Գար. Զ. Հայկ. Հին Դպր. Պատմ.* **277**, *եւ Հ. Ղ. Ալիշան, Այրարատ* **93** *ա*,) *այլ Յոհան Խաղամվանեցի՝ զորմէ բազում գովութեամբ կը խօսի Կորիւն ի Վարս Մաշտոցի*, **28**։ *Իսկ Արձան, զոր կը յիշէ եւ Ղ. Փարպեցի, Պատմ.* **119**, *կը կոչուի Արծրունի ի Նախադրութեան Բարձրացուցեաց Ճառին Դաւթի Անյաղթի*, **99**։

3. *Ըստ Ալիշանի, Այրարատ*, **99** *ա, ծան.* **3**։

4. *Վարք Մաշտոցի*, **21**։

ըստ Մ. Խորենացւոյ [1]։ Յունական այլեւայլ ձեռագրաց հետ բերին Թարգմանիչքն նա եւ զԿանոնս ժողովոցն Նիկիոյ եւ Եփեսոսի [2], եւ զԹուղթս Պրոկղի՝ Կոստանդնուպոլսի հայրապետին, Կիւրղի Աղեքսանդրացւոյ, եւ Ակակայ՝ Մելիտինոյ եպիսկոպոսին՝ առ Սահակ եւ Մաշտոց [3]։

Չկնի դարձին ի Կոստանդնուպոլսէ, Կորիւն հասած է վարդապետական աստիճանի (3), եւ իբր հաւատարիմ «աշակերտ» միշտ առընթեր գտնուած Երանելւոյն Մաշտոցի [4]) մինչեւ ի մահ նորին՝ որ հանդիպեցաւ յ՚ 17 Փետրուարի 439 ամին (4)։ Ղազարայ Փարպեցւոյ ստէպ ստէպ ըսելն Այրն ցանկալի Կորիւն, Այրն հոգեւոր Կորիւն, Երանելի այրն Կորիւն, Երանելին Կորիւն [5]), կը ցուցանէ թէ յոյժ բարի համբաւ թողած էր Կորիւն իւր վարուց սրբութեամբ, որ մինչեւ անգամ տեսլեան արժանացած կը համարուի ի Փարպեցւոյն. քանզի խօսելով ի Պատմութեանն, ե. 119—120, զՂեւոնդէ Վանանդեցւոյ՝ կ՚աւանդէ Ղազար, թէ «Յառաջագոյն ժամանակի կալով ի քուն սրբոյն (Ղեւոնդի), այրն Աստուծոյ Մաշթոց, վարդապետն նորին, հանդերձ աշակերտաւք (այլ. հանդերձ եւ աշակերտօք) իւրովք երանելեաւն Կորեամբ եւ Արձանաւ, տեսանէին արթնութեամբ՝ ճառագայթեալ շուրջ զնովաւ լոյս սաստիկ. որք անդէն եւ անդ ծանեան երանելի արքն Սուրբ Հոգւովն զվախճան սրբոյն թէ նահատակութեամբ կատարի։ Զոր թէպէտ եւ նմա ոչ յայտնեցին զսքանչելագործութեան զտեսութիւնն, սակայն ի բազում շշնջելն՝ պատմեալ հռչակեցաւ բան երեւմանս այսորիկ»։ Յաճախ եւ այլ մատենագիրք մեր երբ կը յիշեն զԿորիւն, չեն մոռանար կցել նա եւ վերադիր մի՝ յայտարար իւր առաքինակրօն վարուց. օրինակ իմն, Երանե-

1. Պատմ. Գ. կա. 547։

2. Կորիւն, անդ, 21։ Մ. Խոր. Պատմ. Գ. կա. 547, միայն զԿանոնս Եփեսոսի ժողովոյն կը յիշէ։

3. Մ. Խոր. Պատմ. Գ. կա. 546, 547։

4. Կորիւն, անդ, 28։

5. Պատմ. 25, 63, 119։

«Ապաշխարող արձակելոյ կարգն, զոր թարգմանած է Կորիւն աջակցութեամբ Արձանայ. «Ապաշխարող կարդել եւ արձակել ի մեծի Հինգշաբաթի՝ երանելոյն Կիւրղի Երուսաղեմացւոյ գրեալ ի գուռն սրբոյն Սիոնի՝ ի քսան եւ մի ամի հայրապետութեան իւրոյ [1]), յաւուրն յորում ընծայեցուցանէք զնզովմայեցիսն (կամ զնզխպտացիսն) յԱստուած. եւ Արձան եւ Կորիւն Թարգմանիչք բերին ի Հայս» [2]), անշուշտ ի Հայ թարգմանեալ։ Այս Ապաշխարողարձակէից կարգն, որ մինչեւ ցայժմ կը գտնուի կարծեմ ի Ձեռագիրս, անծանօթ է ինձ, եւ արտաքոյ կը մնայ իմ խուզարկութեանց։

Քննութիւն Վարուցն Մաշտոցի պատմաբանական եւ լեզուաբանական հայեցմամբք.—Մաշտոցի Վարքն, հիմն բովանդակ աւաջիկայ գրութեանս, եւ զոր Կորիւն յօրինած է իբր յամի 443—444, ի խնդրոյ աշակերտակցացն, եւ մանաւորապէս՝ կաթուղիկոսական տեղապահ Յովսեփայ Վայոցձորեցւոյ [3]), երիս մասունս ունի. ա. Յառաջաբան (կամ ինչպէս մատենագիրն կ'անուանէ՝ Նախակարգ բան, Ե. 6,) վեց երես. բ. Բուն կենսագրութիւն Մաշտոցի, քսանուերկու երես. գ. Վերջաբան, կէս երես։ Կորիւն կը ներկայանայ մեզ յայսմ փոքրիկ մատենագրութեան իբր այր ծայրացեալ հոգեւորութեամբ, սնեալ եւ պարարեալ Սուրբ Գրովք, այլ յոյժ տկար՝ իբր Պատմաբան։ Անդէն ի գլուխ Յառաջաբանին «առաւել քան զկար իւր» կը համարի պատմել զվարս Մաշտոցի, եւ կը փութայ խնդրել ի սատարութիւն զաղօթս ուսումնակցացն, որպէս թէ քանի մի էջ բան գրելն՝ սաստկիւ մարդկային կարողութենէ վեր ըլլար եւ աստուածեղէն շնորհաց օգնականութեան կա-

1. Այսինքն յամին 371. զի Սուրբն Կիւրեղ հայրապետ կարգեցաւ Երուսաղեմի յամին 350։

2. Յեռ. Հ. Գար. Զ. Մտնդր. 246։ Փոխանակ Արձանայ գրեալ է անդ Արջեւան, իսկ ի Հայկ. Հին Դպր. Պատմ. 277, Արջեւան կամ Արզեւան, ուր աւելորդ թուի ինձ ըսելն՝ թէ Կորեան ընկերակից Արձանն «անշուշտ զատ է համանուն Արձան կամ Աղան Արծրունիէն» և այլն։ Չամչեան, Պատմ. Հայոց Հ. Ա. 769, կը գրէ Ընձակ. և զնոյն կ'երկրորդէ Հ. Գար. Զ. յերես 291 իւր Հայկ. Հին Դպր. Պատմ.։

3. Վարք Մաշտոցի, 1։

բառ։ Ցետոյ զարմանալի երկիւղածութեամբ չհամարձակիլը ձեռնար-կել ի գործ իւր՝ մինչեւ որ Հին եւ Նոր Կտակարանաց խօսք առ խօսք վկայութիւնք շքաղցրելեն զինքն՝ թէ չէք ինչ անպատեհու-թիւն առ ի «գրով նշանակել զձայն արանցն կատարելոց», ե. 2։ Այս վկայութիւնք հինգ երեւէ աւելի անդ կը գրուին. եւ եթէ նկատենք որ Մաշտոցի բուն կենսագրութիւնն հազիւ քառասնեւ երես կը լեցնէ, կը տեսնուինք ըսել թէ այսպիսի կարճառօտ գրուածոյ համար այնչափ երկայն Ցառաջաբանն՝ ամէն համեմա-թենէ դուրս է։ Ի զուր կը փափաքինք հանդիպել ի կենսագրու-թեանն Մաշտոցի պէսպէս մանրամասնութեանց՝ որ մեզ վերջնոցս համար մեծ կարեւորութիւն ունին եւ խրատմբք կը զարթուցանեն զմեր հետաքրքրութիւն։ Քանի անգամ էր Մաշտոց երբ մտաւ յար-քունի դիւանն (Խոսրովայ Դ-ի) եւ որչափ ժամանակ մնաց ի դիւանին, ե. 6—7.—ինչ էին առ Դանիէլի Ասորւոյ գտնուած հին հայերէն նշանագիրքն՝ զորս ժամանակաւ գործածած էին Հայք, բայց իբր անշահ՝ վերջապէս մէկդի թողած, ե. 8, 9.—ուր հնա-րեց Եպանեալն զիւր նշանագիրս, եւ քանի էին այնոքիկ, երեսուն եւ վեց թէ տասնուչորս թէ եօթն, ե. 10.—որ Ասորի Սուրբ Հարց մատենագրութիւնք են, զորս Յովսէփ Պաղնացի եւ Եզնիկ Կողբացի թարգմանեցին յԵդեսիա յասորի լեզուէ, ե. 20.—զորոց «հայրապետաց որբոց զճշմարիտ իմաստութիւնն» ի յունական բարբառոյն ի հայերէն դարձոյց Սուրբն Սահակ, եւ ո՞յք են «շառ մեկնութիւնքն Գրոց» զորս թարգմանեց ընդ Եզնկայ, ե. 21.— յորում ամս վախճանեցաւ Սահակ «լցեալ աւուրբք երկայն ժա-մանակաւք», ե· 25. Նմանապէս Մաշտոց իւր «ծերունական (ալ-ւէրունական) հասակին» ո՞ր տարւոյն մէջ ել յաշխարհէս, ե. 26. եւ այլն եւ այլն. բնաւ ամենեւին այսպիսի էական խնդրոց վերայ չըսեր ոչ մի ինչ լիով, ոչ մի ինչ ճշգրտիւ, նա որ քաջ տեղեակ էր այսմ ամենայնի եւ պարտէր տեղեկացնել եւ գլխաւորս։ Իսկ ժա-մանակագրութեան մասին,—բաց ի Վռամշապհոյ թագաւորութեան հինգերորդ, եօթներորդ եւ ութերորդ տարիներէն, եւ քանի մի Սասանեան արքայից թագաւորութեան տարիներէն՝ որովք կը ծանուցանէ թէ երբ մտաւ Մաշտոց ի կրօնաւորական կեանս, երբ սկսաւ Հայոց Դպրութիւնն, եւ երբ եւ յորում աւուր Նա-ւասարդ եւ Մեհեկանի ամսոց վախճանեցան երանելի անձինքն

երկրին անլուր աղետից, հէք արքային դատապարտութեան, մանաւանդ մեծանուն կաթուղիկոսին հալածման, որ թերեւս աւելի քան զՄաշտոց հոգ եւ խնամ տարած էր իւր դաստիարակութեան։ Այս ամենայն ծանր ծանր թերութիւնք կը պարտաւորեն զիս ըսել՝ թէ Վարքն Մաշտոցի իբրեւ Պատմական գրուած չունի մեծ արժէս. ճառ մի է այն, եւ ոչ Պատմութիւն, եւ վասն այնորիկ մի ումն յԵրկրորդ Աշակերտաց հարկ դատած է ի նորոյ գրել զԿատարեալ Պատմութիւն Սահակայ եւ Մեսրոպայ [1]։

Եկեսցուք արդ ի լեզուաբանականն։ Ճոռոմ, պերճ, վսեմ, աւասիկ Կորեան հայերէնն ի Մաշտոցի կենսագրութեան։ Ի՞նչ յորդութիւն քաջահնչիւն բառերու. որպիսի՜ ճախարակեալ պարբերութիւնք (դղ. période). ո՜րքան զարդք, ո՜րչափ ձեւք եւ պէսպիսութիւն ասացուածոց. ի՜նչպէս ձայնդ կը հանգչի յաւարտ մէն մի նախադասութեան՝ որպէս թէ ողորկ ոտանաւոր մի կարդայիր. միանգամայն իւր պաճուճաբան առատութեան հետ՝ ի՜նչպէս լաւ գիտէ դերբայներով հատու եւ սեղմ դարձուած տալ իւր գաղափարաց արտայայտութեան, եւ ո՜րչափ մեծ արուեստիւ կը զուգէ մատենագրական բարձր լեզուին յատուկ ձեւոց եւ շարուածոց՝ ընտանեկան խօսից ձեւեր եւ շարուածներ։

Սակայն անաչառ քննադատին պարտքն է գովելով հանդերձ զմատենագրին առաւելութիւնս՝ խօսել նա եւ զպակասութեանցն եթէ կան։ Եւ ուրվհետեւ ո եւ է մատենագրի առաւելութիւնք կամ

1. Տես ՔՆնասէր, Պրակ Բ. 17—18։—Յ. Ցարութիւն Ըմաւոնեան յիւրում Ազդարար ամսագրին, Մադրաս, 1795, ի Ցանկին Մատենագրութեանց եւ Թարգմանութեանց նախնեաց, երես 188—192, կը գրէ. «Խոսրով Թարգմանիչ, որ է Պատմ. Սրբոյն Սահակայ հայրապետին». (տես Հ. Գր. Գալէմքեարեան, Պտմ. Հայ Լրագր. Ե. 206. տես եւ Հ. Գար. Զ. Հայկ. Հին Դպր. Պտմ. 278, որ կը նշանակէ զԽոսրովայ Պատմ. Սրբոյն Սահակայ, բայց ըստ իւր եպերելի սովորութեան՝ չըսեր 'թէ ուստի' կ'առնու զանդեկութիւնդ, եւ տարակուսանաց կը մատնէ զՀ. Յ. Տաշեան, Հանդէս Ամսօրեայ, 1892, 258 ա, ծան. 5)։ Կիրակոս Գանձակեցի երկիցս կը յիշէ ի Պատմութեան իւրում, Ե. 3, 16, զԽոսրով ի շարի Հայ Պատմչաց։ Չգիտեմ թէ մի եւ նո՞յն է յիշատակեալն ի Ըմաւոնեանէ Պատմութիւն Սրբոյն Սահակայ հայրապետի յօրինեալ ի Խոսրովայ Թարգմանչէ, եւ Կատարեալ Պատմութիւն Սահակայ եւ Մեսրոպայ՝ յոր կ'ակնարկէ գրիչն Բ. հատորոյ Հայկական Սոփերաց, Ե. 37։

սիրոյն ետանդմամբ զաղտ եւ զժանգ շարաւահոտ դիւացն ի բաց [քերել], 15. *Աշխարհամուտ դուռն*, 17. *Ծովացուցանել զվարդապետութեանն զխորութիւն*, 18. *Վայելել ի հիւթ եւ ի պարարտութիւն վարդապետութեանն*, 20. *Պատկահամբար (տպ. պտակահաս) քրիստոսադիր կէտ*, 23. *Ամենայն աստուածեղէն զանձուցն վայելչութեամբք լցեալք պարարտացեալք*, 24. *Վայելչացեալ աստուածաբեր պտղոցն բարութեամբք*», 25։ Ապա չեն ինչ զարմանք եթէ Գերմանացի ոմն, Բ. Վելտէ (B. Welte), յիւր ազգային լեզու փոխելով *զՎարս Մաշտոցի*՝ կը տեսպուի բազում ուրեք շեղել ի հաւատարմութենէ եւ կրճատել ու յապաւել զբնագիրն [1]։ Դարձեալ չեն ինչ զարմանք եթէ մեծազգին Յոհաննէս Ռափայէլ Էմին, յորդորեալ ի Վիկտոր Լանգլուայէ որ թարգմանէ զայն ի գաղղիերէն, յանհնարին դժուարութենէն պրծանելոյ այլ հնարս չգտանէր՝ բայց եթէ զվաւերական Կորիւնն իբր խոտան ի միակողմն թողուլ եւ Սուտ—Կորիւն [2]) մի *ընտրելագոյն* համարել։ Ցայտնի չէ թէ ով է հեղինակ այս Սուտ—Կորեան. թուի վարդապետ ոմն ԺԱ կամ ԺԲ դարու, որ տեսնելով թէ սակաւուց հասկանալի է Կորեան բնագիրն՝ ջանացած է պարզել զայն, եւ միանգամայն՝ ըստ իւր խելաց՝ կատարելագոյն *Վարք Մաշտոցի* մի տալ մեզ ի վայելումն, քաղելով ի *Պատմութենէն Մ. Խորենացւոյ*, եւ զանջրպետս երկու բոլորովին աննման մատենագրացդ լցնելով իւր կարկատանօք։ Թէ որչափ այլանդակ երեւոյթ կ՚ընծայեցնէ յայսպիսի

1. «Il existe une traduction allemande de la «Vie de Mesrob» par Gorioun, due à M. le Dr. B. Welte, et qui fut publiée à l'occasion du vingt-cinquième anniversaire de l'avénement au trône de Wurtemberg, du roi Guillaume I-er (*Goriun's Lebensbeschreibung des hl. Mesrop* . . . , Tübingen, 1841, in—4°, 52 pages). Cette traduction, qui fut entreprise sur le texte publié en 1833 par les Mékhitaristes de Venise, est enrichie de notes nombreuses. Seulement nous ferons observer que cette version n'est pas toujours très-fidèle, et que l'auteur a fait, à plusieurs reprises, des suppressions qui nuisent à l'intelligence du texte». V. Langlois, *Introduction (à la Biogr. de Mesrob, par Gorioun), Collection* etc., t. II p. 4 a.—Գերմանական թարգմանութիւնդ Բ. Վելտէի ես տեսած չեմ։

2. Հրատարակեալ ի *Սոփերս Հայկականս*, Հ. ԺԱ. 5—7։ Գաղղիերէն թարգմանութիւն Սուտ—Կորեանդ ի ձեռն Յ. Ռ. Էմինի՝ կը գտնուի ի Վ. Լանգլուայի *Collection* եւ այլն, Հ. Բ. 9—16։

օգուտ իրր մի մի փորձաքար՝ առ ի ճանաչել զզանազանութիւն պէսպէս թարգմանութեանց նոյն շրջանին։

Թարգմանութիւնք զորս ես Կորեան կը համարիմ. Գիրք Մակաբայեցւոց, Եւթաղ Աղեքսանդրացի, Ագաթանգեղոս, եւ Փաւստոս Բիւզանդ.—Արդ ոմն՝ որ ուշի ուշով կը կարդայ *զՎարս Մաշտոցի*, քաջ միտ դնելով Կորեան գրական արուեստին, եւ յետոյ կ՚անցնի ի քանի մի թարգմանութիւնս Ոսկեդարուն եւ զնոյն արուեստ ի նոսին կը գտնէ յար եւ նման,—այսինքն նոյնութիւն քերականական ձեւոց, զարդուց եւ աւելադրութեանց, նոյնութիւն բառից եւ բարդութեանց, բացատրութեանց եւ դարձուածոց, եւ առաւել քան զայդոսիկ՝ նոյնութիւն մանր մանր պատառիկներու երեք, չորս եւ հինգ բառերով,—ինչ պէտք է հետեւցնէ։ Պատասխանն յայտնի է եւ բնական, այսինքն՝ թէ *Վարքն Մաշտոցի* եւ այն թարգմանութիւնք մի եւ նոյն անձին են, որ ամէնուրեք ի կիր արկած է սեպհական բառս, ձեւս եւ բացատրութիւնս՝ անծանօթս այլ Առաջին Աշակերտաց, ըստ որում տեսանք ի Յառաջաբանի գրոցս մանրամասնաբար։ Յետ տեղեկանալոյ սերտ կապակցութեան թարգմանութեանցդ՝ ընդ Կորեան բնագրին՝ եթէ եւ ընդ միմեանս համեմատենք զայնոսիկ ու գտնենք որ տարբեր տարբեր հեղինակներ իրօք կը նոյնանան լեզուաւ շատ եւ շատ անգամ, կարծեմ այլ եւս երկբայութեան տեղի չմնար թէ թարգմանիչն Կորիւն է թէ ոչ։

Այս թարգմանութիւնք են հետեւեալքդ.

ա. Մակաբայեցւոց երեք գիրք.

բ. Եւթաղի Աղեքսանդրացւոյ Յառաջաբանք եւ Գլուխք Գործոց Առաքելոց, Թղթոցն Կաթուղիկեայց եւ Պաւղոսի Թղթոց, Յիշատակարան եւ Աղերս.

գ. Ագաթանգեղայ Պատմութիւն դարձի Հայաստան աշխարհին.

դ. Փաւստոսի Բիւզանդայ Պատմութիւն Հայոց։

Ծրագիր գործոյս.—Յառաջ քան զձեռնարկել ի ցուցանել թէ վերոյնշանակեալ չորս մատենագրութիւնքդ թարգմանեալք են ի Կորիւն Վարդապետէ, կարեւոր կը համարիմ խօսել նախ

նութեան Սահակայ եւ Մաշտոցի, եւ այս պատճառաւ այլեւայլ ոճոյ տէր եղան այն պատմնիք՝ որ լով առ ոտս Սրբոյն Սահակայ դեգերեցան, եւ այնք՝ որ միայն Սրբոյն Մաշտոցի աշակերտեցան, եւ վերջապէս այնոքիկ՝ որ կէս ի Սահակայ եւ կէս ի Մաշտոցէ ընկալան զհրահանգս ուսմանս (7)։ Արդեօք Թարգմանիչքն, Հայաստանի զանազան գաւառաց զաւակք, զատական հայերէն լեզուի վարժելով հանդերձ՝ մասն առած են յիւրեանց գիրս նաեւ իւրաքանչիւր գաւառական տարրեր։ Ցուցայով որ թերեւս ժամանակին յաջողի զոհացուցիչ պատասխան տալ այս հարցմանց՝ առ որ անբաւական են մեր այժմու կցկտուր տեղեկութիւնք, անցնինք տեսնել, թէ ի քանի՞ դասս կը բաժանուի Առաջին Աշակերտաց հայկաբանութիւնն, եւ թէ ինչ է իւրաքանչիւր ոճոյն նկարագիրն։

Բաժանումն Առաջին Աշակերտաց ի չորս Դասս, եւ Նկարագիր իւրաքանչիւրոց ոճոյն.—Վերագոյն (յերես 2, ծան. 1) վկայութիւն մի ի մէջ բերի ի Մ. Խորենացւոյ, յորում Առաջին Աշակերտք (Սահակայ եւ) Մաշտոցի բազմաթիւ կը կոչուին *Առաջին Խումբ* [1]. եւ դարձեալ (յերես 3) նշանակեցի զվկայութիւն մի Կորեան՝ որ ի մէջ ուսումնակցաց իւրոց *կրտսերագոյն* կ'անուանէ զանձն։ Յայս կրկին վկայութիւնս յեցեալ՝ նախ յերկու խումբս կ'որոշեմ զԱռաջին Աշակերտս, *յԵրիցագոյնս* եւ ի *Կրտսերագոյնս*. և ապա ստորաբաժանելով զԵրիցագոյնսն

---

1. Դիտողութեան արժանի են նա եւ Կորեան հետեւեալ բանքն. «Իսկ աշակերտաւէրն վարդապետին (Մաշտոցի)՝ զտարեալսն ընդ իւր (՝յԵզնիկ եւ յՅովսէփ) յերկուս բաժանեալ, *զոմանս* յԱսորի դպրութեանն կարգէր (յԱմիդ), եւ *զոմանս* [ի] Յունական դպրութիւնն՝ անտի (այսինքն յԱմդայ) ի Սամոսատական քաղաքն գումարէր». Ե. 9. (ազ. սխալ կիտադրած է, որով եւ հասարակ իմաստն կը մնայ անհասկանալի. տես *Քննասէր*, Պրակ Ա. 12—17։ Անդ, 15, գրած եմ թէ ի Թարգմանչաց ոմանք *յԵդեսիա* գնացեալ յուսումն ասորերէնի, եւ թէ *յԵդեսիոյ* ի Սամոսատ յղեցան այլքն՝ որպէս զի յունարէն ուսանին. այժմ զօրաւոր պատճառ ունիմ կարծելոյ թէ առաջինքն *յԱմիդ* գնացեալ են, եւ թէ *յԱմդայ* ի Սամոսատ յաղարկեալ են երկրորդքն.)—եւ դարձեալ. «Գումարել ի կողմանս, ջի գաւառս, ի տեղիս տեղիս Հայաստան աշխարհի՝ *դասս դասս* զաշակերտակալ ճշմարտութեանն». անդ, 13։

յերկու եւ գծագրաբառային ի մի միայն՝ կը գտնեմ ընդ ամենն Չորս Դասս, որք են այսպէսիկ.

Առաջին Դասն է (յերեցագունից) Եզնիկեան, յանուն Եզնկայ Կողբացւոյ՝ որ գլխաւորն է այս Դասուս եւ Թարգմանած է մեզ անգին մատենիկ մի, ձառք ընդդէմ Աղանդոց, «որոյ մէջն լեզուի բազմապատիկ գեղեցկութեանցն ու յստակութեանց գանձ, եւ ամենայն նկատմամբ հոյակապանութեան կերպ ճաշակի օրինակ [1]»։ Եւ որպիսեաւ Եզնիկ գլխաւոր գործակիցն եղած է Սրբոյն Սահակայ ի թարգմանութեան Աստուածաշնչին մատենին [2], կրնամք կարենք համարել զիւր անձ՝ նորին ընկերն Մաշտոցայ անձ։ Կանոնաւոր, գաղափարաւոր, յղկութեան եւ ի շարադասութեան բառից անհնարար, առոգանութեամբ, բացառութեամբ եւ նախանձախնդրաբար շատ հարուստ, մերթ պարզ՝ բայց այնպիսի պարզութեամբ յոր քաջ արուեստագէտք միայն կը հասնին, մերթ զարդարուն առանց բանադրութեան, եւ ի վեր քան զամենայն՝ յստակ (գղ. clair)-անոր նկարագիր այս Դասու հոյակապանութեան։

Երկրորդ Դասն (յերեցագունից)—կը յաւելեմ որ չկրնամ զոք ի Թարգմանչացն յակնել—է Եփրեմեան, յանուն Սրբոյն Եփրեմի Խորին Ասորւոյ (8)՝ որոյ բազում մատենագրութիւնք թարգմանեալք են յասորւոյն ի ձեռն այս կարգի Աշակերտաց, համեմատ այլ քանի մի բնագրօք ի նմին լեզուէ։ Սոցա հոյակապանութիւնն է ընդհանրապէս հարթ եւ պարզ, բայց ոչ անմասն ի զարդուց եւ յաւելորդութեանց. միայն թէ ունին գլխաւոր թերութիւն մի՝ որ է յաճախ նուիթագէս թարգմանել զասորերէնն, օտարանալով յոգւոյ Հայ լեզուի. այս է պատճառն որ չատ անգամ աղճատութիւն կը կրենք առ ի հասու լինել սոցա գրուածոց, եւ իւրեանց երկարաբան ու ճապաղ ոճն ծանրատաղտուկ կը դառնայ մեզ։ Ինչպէս անհնար է հասկանալ զթարգմանութիւնս ի յունականէ Երկրորդ Աշակերտաց ոմանց՝ Դ. Ներգինացւոյ (եւ երբեմն Մ. Խորենացւոյ)՝ առանց յոյն լեզուի գիտութեան, այսպէս եւ ի խելամտութիւն սոցա թարգմանութեանց, օրինակ իմն Եւսեբեայ Եկեղեցական Պատմու-

1. Թոսնեան, Հատ. Ընթերց. Առաջին Դաս, 19 (ի ստորէ)։
2. Կորիւն, Վարք Մաշտոցի, 21։

թեան, անհրաժեշտ հարկ է գիտել զասորերէնն։ Առաջին եւ Երկրորդ Դասք եւս ունին թարգմանութիւնս յասորւոյն, ինչպէս պիտի տեսնենք ի կարգին. բայց անարատ պահած են զազնուութիւն եւ զվայելչութիւն հայերէնի։

Երրորդ Դասն (յԵրիցագունից)—կը ցուցնէ նոյնպէս որ չգիտեմ զոք յարկանէ ի Թարգմանչաց այս կարգիս—է *Կիւրղեան*, յանուն Սրբոյն Կիւրղի Երուսաղեմացւոյ՝ որոյ *Կոչումն Ընծայութեան* գրոց թարգմանութիւնն ներկայացուցիչ է սոյն Դասու հայկաբանութեան։ Սոքա հաւասար են Առաջին Դասուն իւրեանց ճոխ եւ ընդարձակ լեզուաւ, այլ կ'առաւելուն զարդուք եւ մանաւանդ աւելադրութեամբք, եւ ընդ հակառակն ուրեք ուրեք կը նուազին յստակութեամբ (գղ. clarté)։

Չորրորդ Դասն է (ի Կրասերագունից) *Կորիւնեան*, յանուն Կորիւն Վարդապետի՝ որ զայն կարգ կը ներկայացնէ միայնակ՝ իւր համառօտ գրութեամբն *Վարք Երանելւոյն Մաշտոցի* եւ իւր չորս թարգմանութեամբք։ Ինչ որ ըսի ի վեր անդր (երեսք 9—12) զհայկաբանութենէ *Վարուցն Մաշտոցի*, պատշաճ է իմանալ նա եւ զթարգմանութեանցդ։ Ե՛ւ աստ եւ անդ մի եւ նոյն Կորիւնն է՝ իւր յաճախութեամբ զարդուց ի Մակաբայեցիս, ծաղկալից լեզուովն յՕւեթաղ, պերճութեամբն եւ վսեմութեամբ յԱգաթանգեղ, առատութեամբն ի Բիւզանդ. բայց եւ նոյն թերութեամբք, գլխաւորապէս ի մասին զարտուղութեանց եւ անկանոնութեանց՝ որ կը գտնուին ի գիրս Մակաբայեցւոց, Ագաթանգեղի եւ Բիւզանդայ։ Վերջին երկու մատենից մէջ կան եւ շատ մթութիւնք. այլ ոչ ինչ ընդհատ ի *Վարուցն Մաշտոցի*՝ եւ աստ յանցաւորն ոչ այնչափ Կորիւն է կարծեմ որչափ ձեռագրողք եւ տպագրողք. եթէ կը պակասին մեզ լաւ եւ ընտիր օրինակք, ուշադրութիւնն կարող է անհամար աղաւաղութիւնս ուղղել, ինչպէս ընթերցողն պիտի տեսնէ ինչ ինչ ուղղեալ յընթացս գործոյս։ Զենոբեայ հայկաբանութիւնն համարեցայ (յերես 18) նոյն ընդ հայկաբանութեան Սրբոյն Սահակայ. նկատելով որ Կորիւն կը կոչէ զանձն «առընթերակաց, լսող, աշակերտակ» Սրբոյն Մաշտոցի (*Վարք Մաշտոցի*, 28), զոր եւ «հայր իմ» կ'անուանէ (անդ), հաւանական թուի ինձ թէ եւ Կորիւն յայնպիսի տեղիս իւր գրուածոց ուր չիք ինչ արատ՝ կը պատկերացնէ յատկապէս զոճն Մաշտոցի։

ԳԼՈՒԽ Գ.

Կորիւն Վարդապետի Վարք Երանելւոյն Մաշտոցի ի համեմատութեան ընդ Ագաթանգեղի, Բիւզանդայ, Մակաբայեցւոց եւ Եղիշէի.—ա. Կորիւն եւ Ագաթանգեղ.—բ. Կորիւն եւ Բիւզանդ.—գ. Կորիւն եւ Մակաբայեցիք.—դ. Կորիւն եւ Եղիշէ.

—◦—

ա. ԿՈՐԻՒՆ ԵՒ ԱԳԱԹԱՆԳԵՂ

I.

ԿՈՐ. «Զասքանազեան ազգին եւ Հայաստան աշխարհին զաստուածապարգեւ գրոյն, եթէ երբ եւ յորում ժամանակի մատակարարեցաւ». 1.—«Եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն». 11.—«Ի կողմանց [կողմանց] եւ ի գաւառաց [գաւառաց] Հայաստան աշխարհին յորդեալք եւ գրգեալք հաստատէին ի բացեալ աղբիւրն գիտութեանն Աստուծոյ». 13.—«Դէպ լինէր ումանց եղբարց ի Հայաստան աշխարհէն դիմել իջանել ի կողմանս Յունաց».21—«Յայնմ ժամանակի բերեալ երեւեցան [ի] Հայաստան աշխարհին գիրք սուտապատումք առն ուրումն Հռոմի». 25: Այլուր. Աշխարհ. Հայոց. 6,12,16,21. Երկիր Հայոց. 9,16,28:

ԱԳԱԹ. «Իբրեւ լուսաւորք ծագեցին փարատել զմէգ խաւարի ի Հայաստան աշխարհէս». Յաջք. 20—21. եւ 24,26,41, եւ այլն: Այլուր. Հայաստան երկիր. 657 երկիրս. Աշխարհ Հայոց. 21,47,48, եւ այլն. Երկիր Հայոց. 21,25,42, եւ այլն. Հայք. 587,637:

ԲԻՒԶ. «Սոքա չորք մատեանք, . . . յիշեցուցիչք Պատմու-

տակն, Ա. Թագ. ԻԹ. 3, Յովհ. Է. Ժ,3. Եւս. Եկեղ. 51,90. Աստրեւստանկ. Բիւզ. 133, եւ այլն. Խուժապատան, անդ, 205, (Տաճկաստան, Սգոթ. 159, եւ Մկր. բացում ուրեք,) չասուիր Հայաստան, այլ միշտ Հայկական աշխարհ, Հայաստան երկիր, կամ Աշխարհ Հայաստանի։

2

ԿՈՐ. «Որպիսի արամբ այնպիսի նորոգատուր (Նոր Հայկզ. Նորատուր) աստուածեղէն շնորհս երեւեցաւ». 1։

ԱԳԱԹ. «Զի զամենեսեան արժանիս արասցէ նորապարգեւն՝ նորատուրն՝ նորաբերն (Զ. իսկ տպ.՝ նորապարգեւ նորատուր նորաբեր) շնորհի Աստուածութեանն». 501։

3

ԿՈՐ. «Վասն նորին լուսաւոր վարդապետութեան . . . զմտաւ ածելով յիշատակարանս առանձին մատենանշան ծաղկեցուցանել». 1։

ԱԳԱԹ. «Քանզի եւ Առաքելոցն . . . թուղթս հոգեպատումս եւ աստուածախօսս (Զ. իսկ տպ.՝ հոգէպատումս առաքելախօսս) ծաղկեցուցեալ». 524։

—ԴԻՏ. Յիշատակարանս կամ թուղթս ծաղկեցուցանել կը նշանակէ փոխաբերաբար. Գրել, կամ «ի լոյս ընծայել շարագրութեամբ», ինչպէս կը մեկնէ Նոր Հայկզ. ի Ծաղկեցուցանեմ՝ ուր միայն զԿորեան վկայութիւնն կը յիշէ։ Այլ է «Ծաղկեցուցանէր զազնուականութիւնս». Կոր. 4.—«Ծաղկեցուցանէր զվարդապետութիւնն». անդ, 20.—«Զիրաւունս ծաղկեցուցանել». Ագաթ. 413.—«Զբանն կենաց . . . յարութենական յուսովն ծաղկեցուցեալ». անդ, 518։

4

ԿՈՐ. «Եւ մինչդեռ անդէն ի խորհրդանոցի մտացս (տպ. մտացն), վասն յուշ արկանելոյ միայնագործ (միայն գործ?) հոգացայ». 1։

զացեալ Կիւրոս ի Պարսկաստանէ գաւառաց բազմաց։ Տես անդ ի Պարսկաստանէ եւ 164։

6

ԿՈՐ. «Եկեալ հասանէր առ իս հրամ
եւ առանց յապաղելոյ զառաջի եդեալն
—«Անվեհեր եւ առանց յապաղելոյ». 2
ԱԳԱԹ. «Զօրութ է ձեզ զԹեկեղոր մին
յապաղելոյ ի քահանայութիւն». 596։
պաղանաց՝ ամենայն արարածք սպաս
կատարելոյն». 208։

ՄԿԲ. «Զի առանց յապաղելոյ
զնենգչեա խնդրելոցս». Գ. Ե. 1։

(Բիւզանդ կ'ըսէ. «Եւ ինքն ի նմին
զինուորելոյն տեսանել առանց յապ
—«Զ զօրաւորական բանն առանց ա
ձգէր մինչեւ ի վախճան». Գ. Ե. 1
աշխարհի . . . առանց . . . ամենե
նէր մինչեւ ի վախճան իւր». Գ. ղ
փութացի զայլ առանց դանդաղա
նման եւ ԵւԹաղ. «Զայն իմ առաւ
զխրատուԹեամբ արտաքսել». Յաչխ. Ք
ռանց դանդաղանաց եւ առա
ԵւԹ.=առանց յապաղանաց եւ
Եզնիկ. Բուզ.)։

[Ա Դպր]+[1]) «ՓուԹալէս, ա
իցէ փութալէս. առանց յամելոյ
Բ. 448։

=ԴԻՏ. Կայ մի անվճար եւ
որ զապաքինցուցեն զհապաճանն

1. Առաջին. Դասուն այն վկայ
բերանի ՄխիԹարեանց Դաւթան է
Կորեան հետ կը միացնին, կը դնէ
Թարգմանիչն՝ ըստ ամենայն հաւա
տեան, ընԹերցած են զԿորեան զրա
կամ միջնորդաւ, օտարանալով յէ
նաւ «ուղղակի կամ միջնորդաւ»

ժառանգորդ» 193.—«Ու ի յարդարմանս ի պիտոյութիւն աստուածամերձ» 248.—«Ու ի ծանուցմ անձինս աստուածամերձ գիտութեանն» անդ.—«Զի մերձաւորս եւ աստուածամնութիւ . . . պատրաստից է» 250.—«Մերձաւոր եւ աստուածամնութիւ լինել աստուածականն վայելչութեան». 252.—«Զայր իւրաքանչիւր աստուածամուխ կենաւքն . . . յականէ ծանուցանէր». 546—547. —«Զնոյն կեանս վարուցն քաջութեան աստուածամուխ կենացն անձին մատուցանէր». 632. Ըստ այսմ եւ «Առաւել հոգելից եւ հոգեմուխ աստուածատեսացն զաստուածատուր աւետիսն». 525:

ԻԻԹ. «Որք միանգամ ճշմարտիւ եւ կարեւոր աստուածամերձ եւ աստուածասէր անմահութեանն իցեն ցանկացողք». Յաչք. Գծ. 1047 ա.—«Խրատ ըստ Աստուծոյ միաբանութեանն՝ եւ աստուածամուխ կենաց». Գլուխք Փիլիպ. Գ. 1156 բ.

=ԴԻՏ. Կայ մի անգամ եւ յԱռաջին Դասի Աստուածամուխ. «Նոյնպէս եւ բանն Աստուծոյ յորդորէ զոգիս պատարելոս լինել աստուածամուխ զգաստութեամբ». Սերեր. Թ. 157: Այսպէս եւ Մարդամուխ. «Քանզի սաստ եթէ մարդացաւ մարդամուխ եղեւ, այլ համարձակագոյնս իսկ զխոնարհագոյնսն բարբառի». Ոսկ. Փիլիպ. Է. 424:

15

ԿՈՐ. «Զի ոմն ընդունելի պատարագաւ արդար կոչեցաւ, եւ այլ ոմն հաճոյական արուեստիւ (տպ. արուեստին) ի վերայ ամենակուլ մահուանն կենաւք երեւեալ». 2:

ԱԳԱԹ. «Քանզի միայն եւ անծառայական անձամբ միացն՝ սպան (Քրիստոս) զզաւրացեալ մահ աշխարհակուլ». 354: Այսպէս եւ «Ասացեալ ի Հաւրէ . . . լինել լոյս, եւ անդէն եղեալ լոյսն համասփիւռ, խաւարակուլ, աւրարեր». 196: Այլուր. «Զի զհնացեալ եւ զմահակուլ աշխարհս . . . եկեալ յերկնից նորոգեսցէ (Քրիստոս)». 293:

=ԴԻՏ. Ամենակուլ, Աշխարհակուլ, Խաւարակուլ· կը նշանակեն Որ կլանէ զամենայն, զաշխարհ, զխաւար. իսկ Մահակուլ՝ Կլեալ ի մահուանէ: Փոխանակ «Լոյս խաւարակուլ», տես յԵփր. Բ Կոր. Դ. 94, «Լոյս մաշիչ եւ սպառիչ խաւարի». Եւ

մենապարգեւողէն Աստուծոյ» 2։ Այլուր. *«Որում պարգեւէր իսկ վկայել յամենաշնորհողէն Աստուծոյ».* 10։

ԱԳԱԹ. *«Եւ ձեզ քաւութիւն շնորհի ամենայնի ձերով ապաշխարութեամբ յամենապարգեւէն Աստուծոյ».* 185.—*«Ի նորոգել յամենապարգեւէն Աստուծոյ».* 550։ Տես եւ *«Ամենապարգեւ Հոգւոյն զաւրութիւն».* 526։

18

ԿՈՐ. *«Իսկ իբրեւ հայեցեալ ի բազմախուռն զումարութիւն, արդարեւ զսակաւուցն զանուանս յայտ առնէ».* 3։ Տես եւ *«Բազմախուռն արգասիք».* 28։

ԱԳԱԹ. *«Որ եւ զեղան հեղան* (Զ. իսկ տպ.՝ *որ հեղան*) *շնորհք Հոգւոյն Սրբոյ [ի] յետին ժամանակիս, սփռեցան ի վերայ բազմախուռն զումարութեան ժողովրդոցն* (Զ. իսկ տպ.՝ *ժողովոյն*)». 500։

19

ԿՈՐ. ա. *«Սոյն աւրինակ եւ ամենայն Գիրք հոգեպատումք նշանակեալ ունին զքաջութիւնս ամենայն զաւրաց».* 3։

ԱԳԱԹ. *«Սոյն աւրինակ տեսանեմք՝ հարկ վտանգի հասեալ առնելոց զմեզ».* Յաջր. 11.—*«Սոյն աւրինակ եւ մեր, ոչ յանդգնութեամբ . . . ի ներքս անկանել անմտաբար հոսեցայ* (*հոսեցաք?*)». 12. եւ 225,306,382 երկիցս, 422,442,462,480, 498, 627.—*«Զի զոր աւրինակ ի ձեռն կուսին առաջնոյ Եւայի մահ եմուտ յաշխարհ, սոյն աւրինակ եւ ի ձեռն այսր Կուսի կեանք մտցեն յաշխարհ։ Զի զոր աւրինակ ի ձեռն ծննդեան Եւա ի զԿայէն անէծք եւ քրտունք . . . մտին յաշխարհ, սոյն աւրինակ եւ [ի] ծննդենէն Որդւոյ քոյ ի Կուսէն՝ հանգիստք . . . մտցեն յաշխարհ».* 70։ Տես *զոր աւրինակ . . . սոյն աւրինակ* եւ 508. Իսկ այլուր. *«Որպէս ի դրախտի անդ . . ., սոյնպէս եւ աստ».* 115։

ԲԻԻԶ. *«Սոյն աւրինակ բազմութիւնք կրաւնաւորաց».* Դ. գ. 76.—*«Սոյն աւրինակ եւ որ միանգամ ի կողմանսն* (Զ. իսկ տպ.՝ *ի կողմանն*) *յայն էին նախարարքն, . . . զամենեսեան զըլխատէր».* Ե. ժե. 211.—*«Իբրեւ աւձի քարբի . . . սոյն աւրի-*

ծառկ եւ դու խոցեր զակամնջա» Գ. ժա. 119.—«Որպէս արար ի Սամարացի լերինն. սոյնպէս եւ . . . » Գ. ժդ. 24.—Զոր աւրինակ . . . սոյնպէս» Գ. ժգ. 83:

ՄԿԲ. «Նոյն աւրինակ եւ Թագաւորն վասն նոցա ի մեծի տանջանս փառս ունէր» Գ. դ. 24.—Որպէս . . . սոյնպէս» Բ. ի. 10.—Զոր աւրինակ . . . սոյնպէս. Բ. ժե. 40.

ԱԳԱԹ. բ. «Նա եւ ամենայն մարդիկն որ ի քաղաքին էին նոյն աւրինակ դիւահարեալ մոլեգնէին» 165, եւ 231, 244, 245, 307, 314, 383.—«Զի զոր աւրինակ ի հնոցս ընտրեալ զորամն ի զարմանս ի հուր արկանիցեն, նոյն աւրինակ . . . » 389. Այլուր. «Զի որպէս անդն աստ. թէ . . . նոյն աւրինակ եւ աստ (քաս Զ.) ասացեալ . . . » 210, եւ 307, 491: Այլուր «Որպէս նոյն (խնկանոցն) լի էր հոտով անուշութեամբ (սալլի էր խոստովանութեամբ), նոյնպէս եւ Նոյն Հոգւով Սրբով» 319, եւ 390: Այլուր. «Զոր աւրինակ անդ . . . նոյնպէս եւ աստ . . . » 363:

ՍԻՐԱՔ. «Որպէս զգայ ամենայն կէր Թագաւորն Յփնաց, նոյն աւրինակ եւ նա զիւր զաւրսն զումարէր» Գ. խա. 55: Այլուր. «Նա հաստատեալ զնոյն աւրինակ ամենայն հրամայէր յամենայն աշխարհս» Դ. զ. 75.—«Մերամաւանդ զիւր զղէնն եւ զարդկս զնշանն սաղաւարտին բարձեալ եղեալ էր զնոյն աւրինակս» Ե. խգ. 253.—«Որպէս հայրն նոյնպէս եւ որդին» Ի. Ե. 80:

ԵՒՍ. «Նոյն աւրինակ յիմաստից ազգականաց չարչարանս կրեալ առէ որպէս եւ նոցա յիշատակացն» Ցաշ. Պաւղ. Ը. 1108 բ. (=«Զնոյն չարչարանս չարչարեցայք եւ դուք ի ձեռաց ազգականաց որպէս եւ նոքայն ի Հրէից», Ա. Թես. Բ. 14.)—Զոր աւրինակ . . . զսա նմին աւրինակի. Ցաշ. Դժ. 1048 ա. Ցաշ. Կթ. 1079 ա.

[Ա. Դաւ] † «Նա աւանդեալ նոյնպէս անձնացուցանելով. զգործողութիւնն կա նոյն աւրինակ ասուցանելով եւ նորին նման աշակերտս ասելով Ջաւսորն գործել զԹագաւորն. Ձեռ. Փիլիպ. Բ. 864.—«Զոր աւրինակ հատան . . . հաստատութիւնն այնոց զոր չասպատի, նոյն աւրինակ եւ ոչ այնպիսեաց արտաքս է. մեծամեանց». Նոյն. Ա Տեմ. Ս. Ցոքոց 12.—«Զոր աւրինակ ի տան

Երկրորդ Աշակերտաց, Առաջին Աշակերտք կ'ըսեն *Ըստ դմին աւրինակի*. Ղուկ. Զ. 23:

20

ԿՈՐ. «Սոյն աւրինակ եւ ամենայն Գիրք *հոգեպատումք* նշանակեալ ունին գքաջութիւնս ամենայն զաւրաց». 3.—«Անդ կրթութիւն քաղցրուսոյց ընթերցուածոց *հոգեպատում* Գրոց». 23:

ԱԳԱԹ. «Անդ էր այնուհետեւ քննելի *հոգեպատում մատեանքն* մարգարէականք». 292—293: Տես եւ «*Հոգեպատում* բարբառ, 296, 526.—երգող, 353.—թուղթք, 524.—մարգարէ, 619.—պատգամք». 546:

=ԴԻՏ. *Պատում* արմատով բարդութիւնք սիրելի են Կորեան, ինչպէս կը վկայեն եւ յաջորդքդ. «Այնպէս միջամուխ եղեալ հանգամանաւք *աւրինապատում* պատգամացն».[1] 12.—«Սկըսեալ Երանելւոյն Մաշտոցի ճառս յաճախագոյնս, *դիւրապատումս* (Ագաթ. 657, դժուարապատումս) . . . կարգել եւ յաւրինել». 21—22. *Ճշմարտապատում*. (տես աստէն, թիւ 148.) —«Զի անցաւոր ժամանակաւքս *մատենապատում* երկնաբերձ պայծառացուցեալ». 2.—«Ունիմք եւ զկանոնական յաջորդեալ յԱռաքելոցն անտի *դշնորհապատում* գրեալսն». 6.—«Որոց մեր իսկ ականատես եղեալ կերպարանացն, . . . եւ լսող *շնորհապատում* վարդապետութեանն». 28.—«Իւրով աւետարանական եւ *ողջունապատում* (ըստ Զ. Ագաթ. 628. իսկ տպ. Կորեան՝ ողջապատում) գնացիւքն». 22.—«Գիրք *սուտապատումք* . . . առն ուրումն Հռոմի». 25.—«Ոչ *սուտապատում* ճարտարա-

1. Տպ. *օրինապատգամացն*. պատշաճ համարեցայ փոխել *աւրինապատում պատգամացն*, զի կան առ Ագաթ. «Որով ածեալ ի կատարումն *զյառաջապատում պատգամս* նայեալ». 365.—«Հոգեպատում պատգամացն ընդելս եւ ծանաւթս կացուցանէր». 516.—եւ «Քանզի միայն Աստուծոյ աւրէնք եւ *աւրինապատումք*՝ առաջին եւ երկրորդն ճանաչէր». 521: Նա եւ յԱռաջին Դասէն ունինք *Աւրինապատում*. «Իսկ բազումք պնդին որպէս թէ ճշմարիտ իցէ բան՝ Եզրի դպրի եւ *աւրինապատմի* . . . այլ նշանագիրս Եբրայեցւոց ցուցանել». Յերոն. Յաջր.—ՅԱռաջին գիրս Եզրի կ'ըսուի *Պատմիչ աւրինաց*, Ը. 21. Թ. 39, 42, 50:

խաւս եղեալ». 28։—Առ Ագաթ. *Անպատում* արքայութիւն, 426, 552. եւ այլ բազում ուրեք. *Անպատում լինել* (այսինքն Չպատմել). 246. *Աշխարհապատում* մեծն մարգարէիցն (Մովսէս). 192. *Աշխարհապատում լինել*. 236. *Աշխարհապատում* արարչութիւն. 546. *Աստուածապատում* իմաստութեանն նուագք. 491. *Աստուածապատում* աւետաբեր վարդապետութիւն Միածնին. 523. *Աստուածապատումն* (Յոհ. Աւետարանիչ). 534. *Աւրինապատում*. 521. *Բարձրապատում* հնչեցուցանել. 367. *Բարձրապատումն* հռչակեցուցանել. 534. *Ինքնապատում առնել*. 242, 371. *Ինքնապատում լինել* գյանցանացն. 216—217. *Խառնապատում* շալել (տպ. շարժել). 346. *Կարճապատում* շարել. 368. *Ճշմարտապատում*. (տես ստէն, թիւ 148.) *Մանրապատում* նշանք. 193, 345. *Յառաջապատում* լինել, չարչարանք, պատգամք. 293,348,365. *Յատկապատում առնել*. 546. *Քրիստոսապատում* աւետիք. 366։—Առ Բիւզանդայ կան միայն. «նա եւ բազում զաւրութիւնս *անպատումս* յանձին իւրում բարձեալ բերէր». Դ. դ. 74.—«Եւ *յանպատում* ուրախութեան ուրախ լինէին». Դ. ժգ. 124։

Միւս Դասուց մէջ կը գտնուին, յԱռաջին Դասի. *Անպատում* պարգեւք. Բ. Կոր. Թ. 15. *Անպատում* Աստուած. Սեբեր. Ա. 2. եւ այլն. *Աւրինապատում*. Յերոն. Յուջբ. (տես զվկայութիւնն յերես 50, ծան. 1). *Դժուարապատում* դատաստանք. Իմաստ. ժէ. 1. *Դժուարապատում* ի մեկնել բանք. Եբր. Ե. 11. *Ըղձապատում*. Զաք. Ժ. 2. Երեմ. ԻԹ. 8. *Յերկարապատում* բանք. Աթ. Անտ. 33. *Վիպապատում* մատեան, մատենագիրք. Եւս. ժմ. 9, 30։

Յերկրորդ Դասի. *Անպատում*[1]) ճաշակք. Եփր. Համաբ.

1. Յեփրեմի Մեկն. Բ. Աւրինաց, 283, սխալ է «Եւ գի առէ Նախանձեցուցի[ց] զձեզ յազգս *անպատումս*». (այսպէս եւ Նոր Հայկզ. ի բառն Անպատում.) ուղղելի է *ապատոհմս*։ Համեմատէ. «Նախանձեցուցից զձեզ յազգս *ապատոհմս*». Զգուշ, ԺԱ. 202. ԺԴ. 253. ԺԵ. 266,276. ԺԸ. 307. որ է բանն Երկրորդ Աւրինաց, ԼԲ. 21. «Նախանձեցուցից զնոսա չազգաւ». («Ես Նախանձեցուցից զձեզ ոչ ինչ ժողովրդեամբ». Հռ. Ժ. 19.—«Նախանձեցուցից զձեզ յոր ոչ ժողովուրդ իմ». Եփր. Հռ. Ժ. 39.—«Նախանձեցուցից զձեզ չնչին ազգաւ». Ոսկ. Հռ. ԺԸ. 258։)

53. *Անպատում* նեղութիւնք. Եւս. Եկեղ. Բ. իգ. 137. *Բազմապատում* բանք. Եփր. Յաջբ. Մեկն. Թղթ. Գաղ.5. *Դժուարապատում* ի պատմել չարիք. Եւս. Եկեղ. Բ. գ. 88:

Յերրորդ Դասի. *Անպատում* պսակք. Կիւր. Կոչ. Դ. 60. *Անպատումք*. Բրս. Վեց. Բ. 23. *Աստուածապատումն* Յովհաննէս (Աւետարանիչ). Կիւր. Կոչ. ԺԲ. 201. *Դժուարապատում* զարմանալիք. Բրս. Վեց. Բ. 36. *Մեծապատում* ճառք, առաւելութիւն. անդ, Ա. 1. Բ. 23:

21

ԿՈՐ. «Եւ զոմանց *ըստ աշխարհակիր* (տպ. աշխարհագիր) *կարգաց*[1]) զմարտից եւ զպատերազմաց (տպ. զպատերազմողաց) արութիւնսն». 3: Տես եւ «Մերկանայր այնուհետեւ *զաշխարհակիր* (տպ. զիշխանակիր) ցանկութիւնսն». 7.—«Յամենայն *աշխարհակիր* զբաւսանաց առանձինն սահմանել». 24:

ԸԳՆԹ. «Նախ թեթեւագոյն *ըստ աշխարհակիր* (տպ. աշխարհագիր) *կարգաց* առակաբանեալ եւ արուեստախառնեալ». 520: Տես եւ «Նաւեալք ընդ մրրկեալ [ծով] *աշխարհակիր* մեղացն». Յոջբ. 16:

22

ԿՈՐ. «Եւ ոչ այսչափ միայն. այլ եւ *հոգեկան ազգին* հրեշտակութեամբ զովեալ զսրբոցն (տպ. զսրբոյն) զաւրութիւն». 3. (Թերեւս «հոգեկան ազգին հրեշտակութեանն». այսինքն հրեշտակաց. վերացեալ հրեշտակութիւն, փոխանակ թանձրացելոյ հրեշտակք. որ է ոճ ասորի:)

ԱԳՆԹ. «Ճշմարտագոյն համարիմք այսուհետեւ *զհոգեկան ազգին* զամենայն մարդակերպ նմանութիւնս առ մարդիկ եդեալ». 245:

23

ԿՈՐ. «Որպէս զհիւրամեծարին Աբրահամու, *հրեշտակաւքն հասեալովք* զծառայական հաւասարութիւնն յայտ արարեալ». 3:

---

1. Խոր. Պատմ. Ա. գ. 14, բառն է *Ըստ աշխարհաւրէն կարգաց*:

ԱԳԱԹ. «Այսպէս եւ առ Դաւիթ եկեղեցւոյն Հրեշտակի պատենագոյն է եւ զայլոցն իմանալ». 263։

24

ԿՈՐ. «Պատմելով նմա՝ յետ ամենեցուն ընկալելոց՝ ի Սողոմոն էր գործելոց». 3։

ԱԳԱԹ. «Զհետ երթեալ (սոյ. երեւեալ) հրամանաց կայսերաց». 660։

25

ԿՈՐ. «Նոյնպէս եւ ղքաջի նախահաւատակին Յոբայ" . . . . Զի պատերազմականին յաղթեաց զգօլութիւն». 3։

ԱԳԱԹ. «Զի խաղաղութիւն այսոցն եւ ի պատերազմ դիւացն՝ աստուածակարգ անպարտելի ոգիքն՝ զազգս մա[րդկան] աներկիւղ պահեսցեն». 242—243։

=ԴԻՏ. Պատերազմականն գոյական է, եւ կը նշա[նակէ] զԱստուածային պատերազմող ընդ մարդկան. իսկ Պատերազմ[իչ] դեւ՝ ածականաբար առնել է։

26

ԿՈՐ. «Միայն մեծին (մեծամ կամ ընթերցիր՝ զմեծին) Մ[illegible] պառաւեալ զաստուածամուխ մեծութիւն ամենայն զեցական Տրդատ (Տրդատ? Դրոց?) հնչեցուցեալ». 3—4.— նայն [illegible] հնչեցուցանէ զընթերցողն զազնուա[կա]նութիւն». 5։

ԱԳԱԹ. «Վ.սան որոյ եւ բարձրաղաղակ հնչեցուցա[նէ] սկզբանն [illegible] Աւետարանին, ասելով՝ թէ Կա[լ]ինձ» եւ այլն. 367.—«[illegible] կենաց հնչեցուցեալ». 518

=ԴԻՏ. Հնչեցուցանեմ կը նշանակէ ի [illegible] հարկանել, հաշուել, հաշուեցուցանել, [illegible], եւն. Pro [illegible] . . .— սկսան հռչակեցուցանել զպատ[մութիւն] Միածնին. Ա.յսպ. 534. զոր համեմատէ ընդ առաջին վկ.

27

ԿՈՐ. «Եւ ոչ միայն [illegible], այլ եւ զկ[illegible]լոցն զմիածնի [illegible] Աստուածոյ Փրկչին (Միածին. Որ[illegible]

32

ԿՈՐ. «Զոմանց ի սուրբ Աւետարանին, եւ
Առաքելոցն երանելոյն Ղուկասու մատենագ
ԱԳԱԹ. «Մանաւանդ զի առընթեր եւս ո
րանելին Ղուկաս». 366—367.—«Որպէս ե
ի սկզբան Աւետարանին յայտ արարեալ». 53

33

ԿՈՐ. «Այլ սրբոյն Պաւղոսի առաւել
տասանեքումբք թղթովք պատմել զիւր
զակակիցս, եւ ուրախակիցս իւր առն
որ ի կաթուղիկէս առաքելոցն առաւել
բոյն Պաւղոսի չորեքտասանեքումբք [
քելակիցս, եւ նիզակակիցս եւ ուր
չաճ թուեցաւ ինձ փոխել ըստ վեր
գարեալ հատուածդ։ Կայ առ Ագա
հրամանացն ճանաչի՝ եթէ մարդ
մարգարէիցն)»։ Ցերկոսին եւս տ
է, յայտնի տեսանի։)
ԱԳԱԹ. «Արդ նոցին բա
Աստուծոյ, ըստ խրատու սոցի
լոցս՝ մեծին Պաւղոսի». 424.
տու սոցին ձեռոց առաքելո
համեմատէ. «Նոցին Առաք
«Զոր եւ երանելին (Զ. ի
քելակից ձեռոց առաքե
ի թղթին մխիթարակ
451։—Հ. Բ. Սարգիսե
բառիցդ «ձեռոց առա

ԿՈՐ. «Այլ ս
տասանեքումբք [
կակիցս, եւ ու
նախընթաց թ

մակից, Մարտակից. («Երթայր՝ այնուհետեւ մկրտէր (Պաւղոս), եւ անճառ խորհրդոյն լինէր խորհրդակից, եւ պաշտպան եւ համօր մարտակից քարոզութեանն». Եւթ. Յուշք. Պաւղ. 1107 բ.) 4. Առ Ագաթանգեղի (երկրորդ վկ.) եւ ի միւս յամենայն վկայութիւնս Մակաբայեցւոց՝ Դաշնակից, գղ. Allié. 5. Առ Մաքութայի՝ (եթէ չիցէ գրելի «նիզակակիրքն եւ կապարճակիրքն»)՝ Զինակիր, գղ. Écuyer, Valet d'armes. 6. Առ Եփրեմայ՝ Զինուորակից։

Առաջին Դասուն մատենագիրք՝ բաց ի Մարութայի՝ Թարգմանչէն՝ չգիտեն Նիզակակից բառ, այլ Զինակիր. Ա Թագ. ԺԷ. 7. Վահանակիր. անդ, 41. Կապարճակիր. Դատ. Թ. 54, եւ այլն։ Իսկ ուր Կորիւն Նիզակակից կը կոչէ զգործակիցս Պաւղոսի, ի Թուղթս Առաքելոյն կը գտնենք Գործակից, (Հռ. ԺԶ. 3, 9, 21. Ա Կոր. ԺԶ. 16. Փիլիպ. Բ. 25, Դ. 3. Կողոս. Դ. 11. Փիլիմոն, 1, 24,) Վաստակակից, (Ա Կոր. ԺԶ. 16.) Զինուորակից, (Փիլիպ. Բ. 25. Փիլիմոն, 2.) Պատերազմակից, (Հռ. ԺԵ. 30)։ Նոյնպէս եւ յԵրկրորդ Դասի. «Բիւրք էին նորա (Պաւղոսի) աւգնականք, որպէս եւ ինքն անուանէ զնոսա՝ գործակիցք էին նոքա ընդ նմա յԱւետարանի անդ». Եւս. Եկեղ. Գ. դ. 149—150.—«Ինքն իսկ Պաւղոս վկայէ վասն նորա (Կղեմենտեայ) եթէ աւգնական եւ գործակից էր նորա». անդ, 151.—«Նա էր աւգնական նորա յԱւետարանի անդ». անդ, Գ. ԺԵ. 180.—«Քանզի նոքա մարտեան եւ կցորդ եղեն պատերազմին իմոյ՝ որ յԱւետարանի անդ էր». Եփր. Փիլիպ. Դ. 162։ Եւ յԵրրորդ Դասի. «Զպատերազմակիցն Պաւղոս ի Տարսոնէ յԱնտիոք առեալ ընդ իւր ածէր (Բառնաբաս)». Կիւր. Կոչ. ԺԿ. 386։ Նիզակակից բառի 2դ նշանակութեան համազօրն չգտնուիր ի գիրս միւս Դասուց։ 3դ նշանակութեամբ կ'բառի Պատերազմակից. Յուդիթ, Գ. 7. Սեբեր. Դ. 65, եւ այլն. Մարտակից. Եսայ, Ա. 14, եւ այլն. Կռուակից. «Մեմնոն եւ Ամազոնք (տպ. Եմոզոնք) Պրիամայ կռուակից եղեն». Եւս. Քր. 74։ 4դ նշանակութեամբ՝ «Եւ նա (Աբրամ) էր բնակեալ առ կաղնեաւն Մամբրէի Ամովրհացւոյն՝ եղբաւրն Եսքողայ եւ եղբաւրն Աւնանայ, որ էին դաշնաւորք Աբրամու». Ծնն. ԺԴ. 13։

գրոյն». 367։ Տես եւ «
(տպ. առաքելարան) առ
=ԴԻՏ. Միւս Դա
որ յնփր. Եբր. 196, ե
բստած է նա եւ Գոր
րեք յԱռաջին Դասի
յԵրրորդ Դասի՝ Պրա
նականէն práxeis=

ԿՈՐ. «Յայտ
վութիւն ամենայն
ԱԳԱԹ. «Եւ
թէ եւ նախաստ

ԿՈՐ. «Ա
էր Մաշտոց ա
ԱԳԱԹ.
նախակարւ
ԵԻԹ.
ի գլուխ գր
=ԴԻ
վերնադրի
շունչ Գր
խակարւ
է բառդ
ջաբան

կան
Հեղ
«Ուր
Հել

նուն էր յԵլլադացւոց աշխարհին». անդ, 207.—«Յեղենոսէ որդւոյ
Դեւկաղիոնի եւ Պիւռեայ՝ Եղղէնք անուանեցան, որք են Եղէ-
նացիք». Եւս. Քր. 56·—«Այլ եւ յԵլլենացւոց իմաստնոց ոմ
ասաց, թէ՝ Արդարն խոշտանգեսցի». Վկ. Աստ. 142.—«Այլ
այժմ եւս պարծին Ելլենացիք ի վերայ այնպիսի պղծութե
եւ մարդադրհութեանց». Վկ. Իգն. 159—160: Սոյն Դասս
նա եւ Ելլադա, Ես. ԿՁ. 19. Գործք Առաք. Ի. 2. եւ Ել
ցւոց աշխարհ, Եզնիկ, 207. Ոսկ. Մատթ. Բ. ը. 509. Եւս. ժ
փոխանակ աշխարհ Յունաց կամ Յոյնք. Ելլադացիք
154. Ոսկ. Բ Տիմ. Դ. 208. եւ Ելլադական բարբառ, Եւս.

41

ԿՈՐ. ա. Դուռն Արշակունեաց. «Եկեալ հ
տոց) ի դուռն (տպ. ի գաւառն) Արշակունեաց, թագ
Մեծացն». 6:

բ. Դուռն կայսեր Յունաց. «Եւ մտեալ (
ջի պատուակալ (տպ. պատուական. իսկ Ագա
կալ) աթոռոյն, յանդիման լինէր աստուածակ
եւ հայրապետին սրբոյ՝ կաթուղիկոսին աշխ
որում Ատտիկոս կոչէին». 17:

գ. Դուռն Թագաւորին Աղուանից
աշակերտացն վերակացուս իւրեանց (Ա
հանդերձ արամբ քահանայիւ արքունա
նուն (տպ. անունն) Յովնաթան կոչէին

չին Յոյնք», ի Զենոբայ Ասորւոյ Պատմութ
զանին հելլենացի եւ յոյն. «Զայս գրեցին
գրով, եւ խմայելացի նշանաւ». (այսպէ
տպ. ունի. «Զայս գրեցին ասորի եւ հ
ցի նշանաւ»:) Նոյնպէս ի Գր. Նարեկա
«Արդ [ի] Յառաջաբանի գրոցս ասա
կանք, զի ի բազմաց լեզուաց է առ
նոցի, եւ ի հելլենացւոյն ի յոյն
ի Յիշատակարանի ուրեք Զարտո
«Ես Զորտուանէլ Մամիկոնեան
լէն եւ յոյն գրով ի Լուսաւորչ
թարգմանեցի ի Հայ գիրս».



ի դուռն փղապետին, աչաւք ցուցանէր զպատրաստութիւն փղացն, որպէս վառեալ պատրաստեալ ի դուռն հասեալ էր». անդ, 14։

—ԴԻՑ. Դուռն արքայի կամ արքունի, Արքունական դուռն, կը գանուին եւ յԱռաջին եւ յԵրկրորդ Դասս. «Եւ Դանիէլ էր ի դրան արքայքին». Դան. Բ. 49.—«Եւ մի ոմն, որում անուն էր (տպ. է) Փրանտոն, եւ նա էր յարքունական դրանէն, եւ ունէր ախտ դժնդակ». Աթ. Անտ. 57. (տես Արքունական դուռն ի Կոր. երրորդ վկ. եւ յԱգաթ. երրորդ վկ.)—«Համան Համթադեանց մինչդեռ ի տան թագաւորութեանց Արշաւրի արքային էր, պատուական եւ փառաւոր էր. եւ Մուրթքէ առ դրան արքունի նստէր համապազ վասն Եսթերայ սանու իւրոյ . . . եւ Մուրթքէ կանխէր համապազ եւ նստէր ի դրանն արքունի[1], . . . եւ ամենայն մարդ՝ որ էր ի դուռն արքունի, անկանէր ի խոնարհ երկիր պագանէր, իբրեւ տեսանէր զՀաման». Զգաւն, Գ. 54. (զվերջին մասն համածիս համեմատէ ընդ գրոցն Եսթերայ, Գ. 2. «Եւ ամենեքին որ միանգամ էին ի տան թագաւորին՝ երկիր պագանէին նմա (Համանայ)».)—«Բարձրացեալ վերանայ նա (զինուորն) յաշտիճանի իւրում, եւ կայ անդրէն (անդէն?) ի դրան արքունի». Եփր. Աւետ. 319—320.—«Եւ առին ածին զնա (զՅիսուս) ի դուռն, եւ եառն ի ձեռս Պեղատոսի: եւ նոքա ոչ մտին ի ներքս ի հրապարակն, զի մի պղծեսցին». նոյն, Համար. 217. (համեմատէ. «Եւ ածեն զՅիսուս ի վանացն Կայիափայ յապարանս դատաւորին» եւ այլն. Յովհ. ԺԸ. 28.) ՅԱռաջին Դասի կայ մի անգամ եւ բազմարար Դրունք արքունեաց. «Զոր աւրինակ եթէ ոք զմահապարտ եւ զգող եւ զշուն ի մահ տանիցի, եւ հրաման տայցէ թագաւորն դարձուցանել զնա անդրէն ի դրունս[2]) ար-

1. «Առ դրան արքունի նստէր . . . նստէր ի դրանն արքունի» ասորաբանութիւն է, եւ կը նշանակէ in aula regia serviebat. տես P. Smith, *Thes. Syr.* Յող. 1642, ի բառն Իթէը (այսինքն նստաւ)։ Ի գիրս Եսթերայ, Բ. 18, գրեալ է. «Եւ Մուրթքէ դարմանէր եւ կազմէր զտունն թագաւորին»։

2. Կայ եւ ի Ղ. Փարպեցի Դուռք. «Զիմոց զնախնեացն զհպատակութիւն եւ զվաստակ, զոր յայս դուրս եւ առ ձեր թագաւորութիւնդ արարեալ է». Պատմ. 92.—«Եւ զքեզ պատուով այնպէս արձակեմ ի Հայս, զի Հայոյ ուրուք ի մեր դրացս պատիւ եւ շքեղութիւն այնպիսի չիցէ գտեալ, որպէս դու գտանես». անդ, 198։

քունեացն, չկարիցէ ընդ որ նայել այնուհետեւ, թէպէտ եւ ի պատժոցն ազատեցաւ». Ոսկ. Երր. ԺԳ. 508։

42

ԿՈՐ. ա. «Եկեալ հասեալ (Մաշտոց) ի գուռն Արշակունեաց, Թագաւորաց Հայոց Մեծաց». 6.—«Ի վեցերորդ ամի Վռամշապհոյ՝ արքային Հայոց Մեծաց». 11։

բ. «Ցալուցեալ այնուհետեւ հասանէր (Մաշտոց) առ սուրբ կաթուղիկոսն Հայոց Մեծաց, որոյ անունն ճանաչէր Սահակ». 8։

գ. «Եւ ինքն բազում աշակերտաւք գայր անցանէր ի կողմանս Հայոց Մեծաց». 18.—«Ինքն դառնայր ի կողմանս Հայոց Մեծաց». 20։

դ. «Վահան . . . յազգէն Ամատունեաց, որ էր հազարապետ Հայոց Մեծաց». 27։

ԱԳԱԹ. ա. «Ցաշտից տեղիք Թագաւորացն Հայոց Մեծաց». 606.—«Տրդատէս, Թագաւոր Հայոց Մեծաց». 614. Արքայ Հայոց Մեծաց. 27, 49, 106, 110, 123, 649.—Արքայութիւն Հայոց Մեծաց. 49։

բ. «Նստաւ (Ոբստակէս) յաթոռ կաթուղիկոսութեան Հայոց Մեծաց». 643։

ե. Աշխարհ Հայոց Մեծաց (տպ. մեծութեան). 624.—Երկիր Հայոց Մեծաց. 600, 649։

զ. Սպարապետ ամենայն զաւրացն Հայոց Մեծաց. 641։

է. Ժողովուրդք Հայոց Մեծաց. 614։

ԲՈՒԶ. ա. «Խոսրով, Թագաւորն Հայոց Մեծաց». 28.—«Թագաւորն Հայոց Մեծաց Արշակ». 104։

բ. Կաթուղիկոս Հայոց Մեծաց. 25,59.—Կաթուղիկոսութիւն Հայոց Մեծաց. 44, 45, 72։ Այլուր. Եպիսկոպոսապետ Հայոց Մեծաց. 72։

դ. Մեծ հազարապետն ի հազարապետութեանն իսկ ի տոհմէ ամենայն Հայոց Մեծաց՝ Վաղարշ. 29. (տպ. սխալ կիտադրած է։)

ե. Աշխարհ Հայոց Մեծաց. 18. Աշխարհք Հայոց Մեծաց. 29։

զ. *Սպարապետն զաւրավարն Հայոց Մեծաց*. 124, 131, 168։ Այլուր. *Զաւրավար Հայոց Մեծաց*. 16, 20, 26.— Սորատեղատ *Հայոց Մեծաց*. 189։

ը. Եկեղեցիք *Հայոց Մեծաց*. 36։

թ. Նախարարք *Հայոց Մեծաց*. 156։

ժ. Սահմանք *Հայոց Մեծաց*. 74. Տեղիք *Հայոց Մեծաց*. 76։

=ԴԻՏ. *Հայոց Մեծաց* պատուանուն է, ինչպէս կը կարծէ եւ Ինճիճեան (Հնախ. Գ. 298)։ Այլ է *Մեծ Հայք* աշխարհագրական բաժանումնն՝ հակադրեալ *Փոքր Հայոց*. «*Մեծ Հայք* յեկից կալով Կապադովկիոյ եւ *Փոքր Հայոց*». Մ. Խոր. Աշխ. 606. (տես *Փոքր Հայք* եւ ի Միխ. Աս. 164, 378)։ Իսկ ուր կը կարդանք *ի Պատմութեան* Խորենացւոյն, Ա. իթ. 121. «Եւ ժողովէ արքայն Հայոց (Տիգրան Ա)...զամենայն ընտիրս *Հայոց Մեծաց եւ Փոքունց*», հարաղատ ընթերցուածն է լոկ *Հայոց Մեծաց*, համեմատ տպագրին Թովմայի Վանանդեցւոյ[1] եւ Ձեռագրի մի 1668 տարւոյն. նոյնպէս Սանահնեան Ձեռագիրն ունի լոկ *ի Հայոց Մեծաց*. տես Ն. Մառ, *Ցամառն. Ուղեւ.* ԺՁ. ե. 51, ռուսերէն բնագիր։

43

ԿՈՐ. «Կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր *արքայատուր հրամանին*». 6։

ԱԳԱԹ. «Ոչ կարի ինչ ընդդէմ մարթացեալ դառնալ *արքայատուր հրամանացն*». 12։

(Կայ ի Մկբ. Գ. դ. 5, ոչ բոլորովին նման Ագաթանգեղի. «Իսկ որ ի քաղաքի անդ հեթանոսք էին,...աւգնել ինչ ոչ կարէին, եւ ոչ *ընդդէմ դառնալ հրամանացն արքունի*»։)

44

ԿՈՐ. «Եւ յետ այնորիկ ըստ աւետարանական չափուցն՝ *ի*

---

1. Տես ի տպագրին Վիեննեանց, 70, ուր գրեալ է «Հայոց մեծաց, և փոքունց», այլ ի ծան. կը նշանակուի. «Desunt in Edit. (այսինքն ի տպագրին Թովմայի Վանանդեցւոյ) և փոքունց»։

47

ԿՈՐ. «Ձեռն արկանէր զգաւառաւն (տպ. զգաւառովն) հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին». 7։

ԱԳԱԹ. «Մի մի իւրաքանչիւր ամենայն բազմութեանն սատարութիւն ի ձեռն առեալ». 569.—«Առաւել եւս պայծառացուցանէր զվարդապետութեանն սատարութիւն». 645։

ԵՒԹ. «Արդ ա՛ռն առեալ զքո աղաւթ՛ող տացես ինձ ի ս տարութիւն». Ցաջխ. Պաւղ. 1107 ա.

(Բիւզանդ չունի Սատարութիւն, այլ միայն Սատար Սատար լինիմ. «Ապա Տիրիթն . . . բազում վարձէր իւ զհանկանս եւ սատարս, որով զիւր չարախաւսութիւնն յառ ջել կարասցէ». Դ. ժե. 116. «Որք միանգամ գործոյ սա լեալ էին». Ե. լէ. 244. (տպ. «Որք միանգամայն գործ Չ. «Որք միանգամայն գործոյ». տես եւ Չալ.—Այտը 303։) Ագաթ. փոխանակ Սատար լինիմ կ'ըսէ Սա «Եւ կանանւոյն անգամ սատարեալ ըստ իւրեան թեան կանացի ուժոյն». 569.—«Մէն սակաւ սատ նեցին զվկայարանն». 608։ Իսկ ի Մկբ. կայ միայն անաւրէնութեան». Ա. գ. 6։)

—ԴԻՏ. Ի գիրս միւս Դասուց հանդիպած չե թիւն, այլ միայն Սատար. Եփր. Բ Աւրէնք, Բ. ունել զոք. Ոսկ. Եփես. ԺԱ. Ցորդ. 798. Սատ նիկ, 108. Ոսկ. Փիլիպ. ԺԴ. 502. Սատարեմ ժբ. 46. Նոյն, Փիլիպ. Գ. 372. Եփր. Համաբ.

48

ԿՈՐ. ա. Կաթուղիկոս Հայոց. «Յա (Մաշտոց) հասանէր առ սուրբ կաթուղի որոյ անունն ճանաչէր Սահակ». 8.—«Եւ կաթուղիկոսի Հայոց, պատմէր նմա զու նէ?) եղելոցն». 16։ Այլուր Սահակ կը կոչ 11. «տէր եպիսկոպոս», 14։

բ. Կաթուղիկոս Կոստանդնեա Կոստանդնուպոլսի). «Հասանէին (Մաշ

եւ կոչի «եպիսկոպոս», Դ. գ. ի վերնագրին, 67. «եպիսկոպոսապետ», 72. «մեծ եպիսկոպոսապետ», 118. «արքեպիսկոպոսապետ», 118, 193. «հայրապետ», 110. *Զոնակ կաթողիկոս*, 123։ Տես եւ *Կաթողիկոսութիւն*, 30. *Կաթողիկոսութիւն* Հայոց Մեծաց. 44, 45, 72. Հայրապետութեանն *կաթողիկոսութիւն*, 45։

գ. *Կաթողիկոս*, եւս *Կաթողիկոսաց կաթողիկոս Կեսարիայ*. «Զնոսա զամենեսին կազմեցին եւ արձակեցին . . . առ *կաթողիկոսաց կաթողիկոսն* Եւսեբիոս յերկիրն Գամրաց, եւ ի մայր քաղաքացն նոցա ի Կեսարիա, զի ձեռնադրեսցեն անդ զսուրբն Ներսէս[ի] կաթողիկոսութիւն Հայոց Մեծաց։ Եւ եկին ածին նոքա ցնծութեամբ եւ ուրախութեամբ (Զ. իսկ տպ.՝ ցընծութեամբ ուրախութեամբ), եւ տեսին անդ զ*կաթողիկոսն կաթողիկոսաց*, զսուրբն՝ զմեծանունն՝ զերանելին՝ զհոյակապն՝ զզքանչելին Եւսեբիոս». Դ. գ. 72. (տպ. սխալ կը գրէ «Զնոսա զամենեսին կազմեցին եւ արձակեցին բազում ընծայիւք եւ մեծամեծ պատարագօք եւ հաւատարիմ հրովարտակօք կաթողիկոսաց առ կաթողիկոսն Եւսեբիոս». յորմէ Հ. Բ. Սարգիսեան սխալ հետեւութիւն կը հանէ (23)։) Այլուր Եւսեբիոս կոչի «եպիսկոպոս», 96, 97, 98. «մեծ եպիսկոպոսապետ». 72.—«Եւ եկաց Բարսեղ յաթոռ *կաթողիկոսութեանն* Կեսարու». Դ. թ. 99։ Այլուր Բարսեղ կոչի «արքեպիսկոպոս», 99, 103. «եպիսկոպոսապետ», 100, 226. «մեծ եպիսկոպոսապետ», 226. «հայրապետ», 226։

ե. *Կաթողիկոս Վրաց եւ Աղուանից*. «Վասն Գրիգորի (իմա՝ Գրիգորիսի) եպիսկոպոսի, որդւոյ Վրթանայ, եղբաւրն Յուսկանն, որ *կաթողիկոսն* էր կողմանցն Վրաց եւ Աղուանից». Գ. զ. 13։

=ԴԻՏ. *Կաթողիկոս* յունարէն բառ է, *catholicós*, եւ կը նշանակէ Տիեզերական, Համաշխարհական։ Սոյն անուամբ կը կոչուէին հռոմէական կայսրութեան հարկահանքն[1], եւ այս է զոր կը յիշէ Եւսեբիոս յիր *Եկեղ. Պատմ*. Ը. ժա. 642—643. «Եւ էր այր մի (ի Փռիւգիա) պատուաւոր, որ ի Հոռոմոց ունէր զայն պատիւ, զի անուն էր նորա Աւգակտոս (տպ. Օգոստոս). եւ էր (Զ.

1. "Catholique; officier qui était chargé de la levée des impôts dans l'empire grec.„ É. Littré, *Dict. de la langue française* ի բառն Catholique, 3°.

երկրորդին Ակակիոս,—հանդերձ *կղերականաւքն* և իշխանաւքն քաղաքին պատահել (տպ. պատահեալ)». 9։

ԱԳԱԹ. «Եւ անդ տեսանէին...զամենայն եկեղեցական գունդս գունդս սրբոցն *կղերիկոսացն*». 608։

ԲՈՒԶ. «Հրաման տայր, եւ բերին զհանդերձս *կղերիկոսաց* զգեցուցանէին նմա (Ներսեսի)». Դ. գ. 70.—«Դէսքն եպիսկոպոս էին յայլոց քաղաքաց, կէսք *կղերիկոսք* յայլոց եկեղեցեաց». Դ. գ. 91.—«Առեալ եպիսկոպոսն Եւսեբիոս զ*կղերն* զամենայն, եւ ի մեծ հոգս մտանէր. . ։ Երկին եւ *կղերքն* ամենայն ձեռնագիր աղաչանաց, զի մի ինչ դանդաղեսցի գալ (Բարսեղ)». Դ. ը. 96։

=ԴԻՏ. *Կղեր* է յոյն բառն *cliros*, որ կը նշանակէ Վիճակ, Բաժին, Ժառանգութիւն, եւ եկեղեցական լեզուով՝ Դաս քահանայից, կամ Ուխտ քահանայութեան (Աղաւթ.=Բիւզ. թիւ 149). գղ. Clergé. նոյնպէս *Կղերիկոս* է յունարէն *cliricos*, այսինքն Պաշտօնեայ եկեղեցւոյ, Եկեղեցական, գղ. Clerc, Ecclésiastique. զոր Կորիւն ուրեք *ի Վարս Մաշտոցի* կ՚ըսէ կէս հայացմամբ *Կղերական*, եւ այլուր *Ժառանգաւոր*[1]. «Անանիաս, այր սուրբ եւ երեւելի՝ [ի]հայրաբարոյ *ժառանգաւորաց* Եկեղեցւոյ». 14—15. (համեմատէ. «Խրատէ (Աստուած) քահանայապետիւք եւ *ժառանգաւորաւք Եկեղեցւոյ*». Ցճխ. Ժ. 88։) Վերջին բառս կարծեմ ի Կորիւնէ անցած է յԱռաջին Դասն. «Ընդէ՞ր ոչ երբեք ուրեք գրէ (Պաւղոս) առ քահանայս, ոչ ի Հռոմ, ոչ ի Կորնթոս, ոչ յԵփեսոս եւ ոչ այլ ուրեք...եւ աստ առ քահանայս *ժառանգաւորս* գրէ». Ոսկ. Փիլիպ. Ա. 349.—«Այսպէս կատարեցաւ սուրբն Հմաւոն եպիսկոպոս...հարիւր արամբք *ժառանգաւորաւք* սուրբ Եկեղեցւոյ». Մար. Պոմ. Արեւ. Վկ. 53—54։

57

ԿՈՐ. «Իսկ աշակերտաւէրն վարդապետին (այս ինքն Մաշտոցի)՝ *զտարեալն ընդ իւր* յերկուս բաժանեալ». 9։

ԱԳԱԹ. «Զոր անդէն իսկ յանդիման ցուցանէր կայսերն *զտարեալն ընդ իւր* զԳրիգորն». 652։

---

1. Իսկ Մ. Խոր. յՈղբսն՝ *Վիճակաւոր*. 578։

դիս կ'ըսէ Գումարել ի վերայ, այլուր կ'ըսէ Առաքել ի վերայ, Արձակել ի վերայ. «Ապա յետ այսորիկ առաքէր արքայն Պարսից ի վերայ արքային Հայոց գունդ կազմեալ». Գ. իէ. 146. եւ 147 երկիցս, 149 երկիցս, 150 երկիցս, 151, 192, 249 երկիցս. —«Պազմէր պատրաստէր (Շապուհ Բ) գունդս բազումս ... եւ արձակեաց ի վերայ նոցա (Հայոց)». 149—150. եւ 151, 169, 248: Իսկ ուր կ'ըսէ Բիւզանդ. «Բայց գումարեաց ընդ նմա թագաւորն Տիրան զմեծամեծ նախարարսն ըստ սովորութեան աւրինակին». Գ. ժբ. 29.—«Եւ յաւաղաց գումարեն ընդ նմա զիշխանն Գարդմանաց Ձորոյն». Գ. ժէ. 45.—«Եւ զամենայն նախարարսն Հայոց ընդ նմա գումարեալ, գայր հասանէր ընդ առաջ զաւրացն Պարսից». Դ. լը. 152. այս Գումարել զոք ընդ ումեք կը նշանակէ Ուղեկից կամ ընկեր տալ ումեք, զգ. Adjoindre à quelqu'un.

Գումարել զաւրս կամ զաւր, Գումարել զաւրս ի վերայ կը գտնուի յայլեւայլ տեղիս Առաջին Դասուն, բայց ոչ իբր Առաքել, այլ իբր Ժողովել. «Զաւրս գումարեալ (Նաբուկոդոնոսոր) գայր առնոյր զերի զՀրեաս եւ զՓիւնիկեցիս եւ զԱսորիս». Եւս. Ժմ. 22.—«Եւ կամ յորժամ հէն յաշխարհ արշաւիցէ,...մի զաւրս ժողովեսցեն, եւ մի գունդս առ գունդս կազմեսցեն՝ հանելոյ զհէնն յաշխարհէ...այլ գումարելով զզաւրսն եւ հանելով զթշնամին յաշխարհէ, ցուցանեն՝ եթէ ոչ ըստ սահմանելոյ ինչ հրամանի կատորածքն գործիցին». Եզնիկ, 162.—«Եւ գազանացի թագաւորն հարաւոյ,...եւ գումարեսցէ զաւր բազում». Դան. ԺԱ. 11.—«Ցանկարծակի Մարք զաւր ի վերայ Բաբելոնի գումարէին՝ ունել զնա». Եւս. Ժմ. 19—20.—«Եւ գումարեաց զունդ Ովսէէ որդի Ելայ ի վերայ Փակէի որդւոյ Ռոմելայ, եւ եհար զնա եւ սպան զնա». Դ Թագ. ԺԵ. 30: Միայն յՍսկ. Եփես. Թ. 770, «Զայրացեալ, ի ցասման միայն եղեալ (թագաւորն Ասորւոց)՝ հեծեալս եւ սպառազէնս գումարեաց երթալ ունել զմարգարէն», թերեւս գումարեաց կը նշանակէ առաքեաց (15): Իսկ ի յաջորդ վկայութեանդ յԵրկրորդ Դասէ՝ չկարեմ որոշել թէ գումարէր ի վերայ ինչ կը նշանակէ, ժողովէ՞ր թէ առաքէր. «Զաւր առնէր, հեծելազաւր գումարէր ի վերայ նոցա. եւ իբրեւ ոչ ախն առնէին՝ յանկարծակի անկան

եղեալ (փ. գնէր) կամն որոյ եկ անցեալ զիժեալ ի կողմանսն (Վ. դիմէր.)—«Զերջեալ զամենայն աչա պրատփոփէր) կոչ ի ճշմարտութե րագրոց՝ առն պարտականի եւ տուեալ (տպ. տալը) նմա զանձն այր պարտական. եւ պատրաստ բարգում նմանութիւնս յերկերեւ —«Լոյս նմին արքունի՝ եւ նո պատուալ) զանձն եւ զմնացեալս՝ ս 25. (փ. նա. ապապատէր.)—«Տ ուրոյք քննողաւ եղեալ. եւ բէ) պատմեալ». 27. (վս. ամե այր ընկերի պատմեաց)».

ԱԳԱԹ. «Ծնեալ գայեկաց խաւցանէին) ի դուռն կայսեր. ուսեալ. Տրդատէս առ կոմսի նէր. համեմատէ. «Որդի Գա Գեղարքայ». 42.)—«Պեապանդ նեալ ընդ աշխարհս, զի վաս մաքսատուացեալ (փ. ծաղ 115.—«Թագեալ գերկիր ծնն հրեշտակական զուարթական սորեցին)». 122.—«Եղեալ բնն, զի անհաբեկեալ զամ բեկեաց.)—«Եւ ոչ ուրուք հարկել զնա» 151. եւ այլ 363.—«Սուաքի եղեալ նո վասն նորա վկայեալ է. Ձ Տերերական ծածկանաներ գիտաս. եւ յայտ արարե ոչ) առկաւեր ինչ. կասե գործ զարթեցին». 36 Կոր. եօթնեկորդ. վկ.) զ

առ ... յմ...ըով

զոր եւ Նորաքաղաքն». իսկ Զ.՝ «ի Վաղարշապատ քաղաք, զոր Նոր Քաղաք»։)

=ԴԻՏ. Նոր Քաղաքդ Կորեան է նոյն ինքն Վաղարշապատ, ինչպէս յայտնի կ'ըսէ Ագաթ.։—Ի Գործս Առաքելոց, ԺԶ. 11, Նոր Քաղաք թարգմանեալ է յունականն Նէապոլիս, որ էր ծովեզերեայ քաղաք Մակեդոնիոյ, եւ այժմ կոչի Cavala.[1]

66

ԿՈՐ. «Եւ ոչ այնպէս մեծն Մովսէս զուարճանայր յէջս Սինէական լերինն». 11։ Ըստ այսմ եւ այլուր. Թաբորական լեառն, 23. Սամուսատական քաղաք, 9. Կոստանդինական քաղաք, այս ինքն Կոստանդնուպոլիս, 17. Գարդմանական Ձոր, 20. Տարաւնական գաւառ, 6. Խորձենական գաւառ, 14. Պաղնական տուն, 10. Սիւնական աշխարհ, այս ինքն Սիւնիք, 14. (եթէ չիցէ գրելի Սիսական աշխարհ[2], ըստ գրելոյն յերես 15. «Հասանէր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց՝ քաջն Սիսականն Վասակ»։)

ԱԳԱԹ. «Եւ անդ ի վեր ի Սինէական լերինն ամպայարկ աստուածամուտ խորան հարեալ». 234.—«Կոչեաց Տէր զՄովսէս ... ի գլուխ Սինէական լերինն». 318.—«Կամ զկնովին ժողովրդեանն ի Սինէական լերինն իջեալ ամպովն պատեալ երեւէր». 408. (իսկ յերես 234, լեառն Սինեայ։) Ըստ այսմ եւ այլուր. Նպատական լեառն[3]. Անահտական դիք, 584, 591, փոխանակ Նպատ լեառն, Անահիտ դիք. Եփրատական գետ, 630, 632, փ. Եփրատ գետ. Տարիերական կամուրջք, 40, որ

---

1. Տես E. Renan, *Saint Paul*, Paris, Michel Lévy, 1869, Ե. 139, եւ ծան. 1.—Վարդան Արեւելցի, Պատմ. 101, Նոր Քաղաք կը թարգմանէ զԱխալքալաքն Վրաց. «Նոր Քաղաք, զոր Վիրք Ախալքալաք ասեն»։

2. Սիսական աշխարհ հին անուն է Սիւնեաց գաւառին, որ կը գըտնուի բազում ուրեք ի Պատմութեան Ստեփաննոսի Օրբելեանի։

3. «Դայլ հասանէր առ ստորոտով Նպատական լերինն» 613. ուր օպ. ունի Նպատ. բայց ԻՆՃԻՃ. Ստորագր. 403, կը գրէ Նպատական ըստ հին տպագրին, «Թղթ. յկզ. ուր ի ձեռագրի գրի Նպատակ». Նոյնպէս եւ Չեռագիրն Աբրահամ Երիցու ունի Նըպատակ։ Տես եւ ի Պատմ. Մ. Ներսեսի, Սոփ. Հայկ. Զ. 72, Նպատակ, ուր այլ 22. ունին Նպատայ, որպէս յերես 73. եւ գործեալ Նպատակ, 113։

բ. «Հրաման տայր (Ճապուհ Բ) հոլանել զամենայն ազատ կանանին...եւ ինքն...անցանէր առ կանանոցն»․ Դ. ծը. 176.—«Եւ զազատ կանանին անդէն ի բերդեանն բաշխէր եւ թողոյր»․ անդ, 177.—«Եւ զիւրեանց կանանին ընդ նոսա արձակեալ, յամուր յուղարկէին»․ Ե. խդ. 252.—«Եւ զմանուկն Արտաւազդ, որդի Վաչէի, ընդ կանանին տայր հրաման երթալ Մանուէլ»․ անդ.—«Ոչ հաւանեցաւ նա ընդ կանանին երթալ»․ անդ, 253։ Այլուր բազմաբար Կանանիք․ «Ամենայն կանանաւքն, եւ հանդերձ տիկնանց տիկնաւն, եկն եհաս ի սահմանս Հայոց»․ Գ. իա. 55. ինչպէս Մանկտի եւ Մանկտիք, Երեմ. ԽԳ. 6. Բիւզ. Դ. ծը. 177. Պամ. Աղեքս. 124. Ոսկ. Անոմ. Գ. 594 (ի հատորին ձառից).—Գրեան եւ Գրեանք, Եւ. Եկեղ. Ե. ը. 362. —Աւագանի եւ Աւագանիք, Ղ. Փրպ. Պամ. 44, եւ այլն.—Որեար եւ Որեարք. «Առնոյր այնուհետեւ եւ զԱրշակունեացն տոհմի որեարս»․ Ագաթ. 587 (ըստ Զ.).—«Եւ այնպէս անցեալ գնացին որեարքն»․ Պամ. Աղեքս. 124. Քաջ որեարք. անդ, 143. Ազատ որեարք. Ղ. Փրպ. 168. Ազատազգունդ որեարք. Յոհ. կթ. 123։

գ. «Եւ այլ մեծամեծք նախարարացն եւ աւագ տանուտեարք ազատանին (չէին անդ)»․ Գ. ի. 52. (մեծամեծք նախարարացն եւ 217, համեմատէ ընդ Ագաթ. մեծամեծք աւագանոյն.)—«Հայոց ազատանոյն ախոյենացն նիզակաւորացն ռազմ արարեալ յարձակեալ»․ Ե. ե. 201։

դ. «Ոչ գոյր չափ գլխանոյն ախոյենիցն՝ զոր բերեալ էր առաջի թագաւորին Հայոց Պապայ՝ զաւրավարն Հայոց Մուշեղ»․ Ե. գ. 198։

ՄԿԲ. ա. «Աւագանին՝ որ թշնամութեամբ ոխս պահէին Յուղայ, առաւել եւս չուրջ գայլրացուցին զթագաւորն»․ Բ. ժդ. 11.—«Եւ ինքն յուրախութիւն զառնայր բազում զաւրաւք, բարեկամաւք, մեծամեծ աւագանւով»․ Գ. ե. 2. (տես մեծամեծ աւագանի յԱգաթ. եւ ի Բիւզ.)—«Մատուցեալ փղապետն՝ զմեծամեծս յաւագանւոյն ի վկայութիւն տանէր»․ անդ 16. (թերեւս զմեծամեծս աւագանւոյն. տես առ Ագաթ. մեծամեծք աւագանւոյն երկիցս, եւ առ Բիւզ. մեծամեծք նախարարացն։)

[Ա Դպս]† բ. «Եւ այն զինչ իցէ առ այժմու կանանովս»․ Ոսկ. Ա Տիմ. Թ. 72. (այլ. կանոնովս. եւ ի ծանօթութեան էր

ԱԳԱԹ. «Գիտել ճանաչել իմանալ եւ ի միտ առնուլ... զաստուածատուր իմաստութիւնն». 200.—«Աստուծոյ զպատուիրանապահութեամբն զնախանձելի զաստուածատուր իմաստութիւն պահեալ». 212. Այլուր. Աստուածատուր առաքել. 525. Աստուածատուր զաւրութիւն. 656. Աստուածատուր ձիրքն կամ շնորհ. 23, 601, 622։ Ըստ այսմ եւ Քրիստոսատուր փառք. 595. Քրիստոսատուր փրկութիւն. 519։

=ԴԻՏ. Աստուածատուր իմաստութիւն հանդիպած չեմ ի գիրս միւս Դարուց. այլ կայ յԱռաջին Դարի՝ Աստուածատուր պարգեւք. Ոսկ. Մատթ. Ա. դ. Ցորգ. 58. (տես եւ ի Կոր.). Աստուածատուր Գիրք. Եզնիկ, 79, 97, 153, 188 երկիցս, 214, 215, 218. Եւս. Ժմ. 21, (տես եւ ի Կոր.)։ Ըստ այսմ եւ Անձնատուր վարդապետութիւն. Ոսկ. Մատթ. Բ. իգ. 725, 727, 729 երկիցս. Դիւատուր խաղ. նոյն, Ձեռ., ԻԸ. 554. Հայրենատուր գնացք. Ա Պետր. Ա. 18 (այս ինքն՝ տուեալ ի հայրենեաց=ի հարց, զոր տես աստէն ի Թիւն 151, ԴԻՏ)։

74

ԿՈՐ. «Եւ զնոցա հպարտ ամացն (?) ծնունդս՝, առեալ պատրաստեալս հեռաւորաց կրթեալ՝ աստուածատուր իմաստութեանն ծանաւթս կացուցանէին». 12. (տպ. «ծնունդս կացուցանէին». այլ ի նմին հատուածի առ Ագաթ. գրեալ է՝ «ծանաւթս աւետարանական աւանդացն յարդարելոյ ընգելս կացուցանէր», 593։).

ԱԳԱԹ. «Զամենայն որ աստուածպաշտութեան ծանաւթս կացուցանել». 511.—«ծանաւթս Աստուածութեանն կացուցանել զամենեսին». 514.—«Հոգեպատում պատգամացն ընգելս եւ ծանաւթս կացուցանէր». 546։

(Նովին ոճով եւ ի Մկր. «Ի՞բր ոչ գիտէիք եթէ անծանաւթ հրաման է զտեղիդ կացուցանել». Բ. բ. 7։).

75

ԿՈՐ. «Ի ձեռն առեալ այնուհետեւ աստուածազօրծ մշակութեամբ զաւետարանական արուեստն». 12.—«Երկիր՝ որ համբաւուցն անգամ աւտար էր կողմանցն այնոցիկ, յորում ամենայն

85

ԿՈՐ. «Որում եւ հասեալ ժամանեալ *հայրապետութիւն* Գտայ, որդւոյ Ձաքաթայ՝ առն քրիստոսասիրի». 14.—«Անանիաս, այր սուրբ եւ երեւելի՝ [ի] *հայրապետոյ* ժառանգաւորաց եկեղեցւոյ». 14—15։

ԱԳԱԹ. «Զի *հայրապետոյ* բարեբարութեամբն լիցին արժանի՝ ճշմարիտ Որդւոյն եղբարք անուանիլ». 438։

ԲՈՒԶ. «Զի ի վարս կարգաց գնացից իւրոց՝ նմանեաց իւրոյ հաւրն մեծին Գրիգորի, արդարեւ *հայրապետոյ* գտանէր». Դ. դ. 73։

86

ԿՈՐ. «Եւ այնչափ *փոյթ ի վերայ ունելով*՝ եւ դայեկաբար սնուցանել եւ խրատել, մինչեւ» եւ այլն. 14։

ԱԳԱԹ. «Եւ յայնմհետէ *փոյթ ի վերայ ունէր*՝ զառընթերակաց արքունիսն ... աստուածեղէն իմաստութեամբն վարդապետել». 594. (վերջին մասն հատուածիս նոյն է ընդ բանիցն *Վարուցն Մաշտոցի* յերես 13.)—«Եւ զամենս յորդւոց քրմացն առեալ զառաջասուն ձեռնասունս առնէր. *փոյթ* ուսման *ի վերայ ունէր*». 629։

ԲՈՒԶ. «Որք (Գրիգորիս եւ Յուսիկ) սնեալ զառաջնեաւ թագաւորին Հայոց, եւ ուսման գրոց *փոյթ ի վերայ* կալեալ ուսուցանել զնոսա». Գ. ե. 10։

87

ԿՈՐ. «Եւ այնչափ փոյթ ի վերայ ունելով՝ եւ դայեկաբար սնուցանել եւ խրատել, մինչեւ ի նոցունց իսկ ի վայրենեացն *եպիսկոպոս տեսուչ* (տպ. եպիսկոպոսս տեսուչս) եկեղեցւոյն Սիւնեաց կարգել, որոյ անունն կոչէր Անանիաս». 14։

ԱԳԱԹ. «Մինչեւ . . . երեւեցին ձեզ առաջնորդք, քահանայապետք, *տեսուչք եպիսկոպոսք* (տպ. տեսուչք, եպիսկոպոսք)՝ երիցամբք». 572.—«Եւ բազմացոյց կացոյց (Սուրբն Գրիգոր) *տեսուչս եպիսկոպոսս* յամենայն գաւառս Հայոց իշխանութեանն իւրոյ». 637։

96.

ԿՈՐ. «Հրաման ելանէր (ի Թէո
մեծարանաւք զՍուրբն (Մաշտոց)
ԱԳԱԹ. «Եւ բազում վայելուչ
րեալ նմա (Գրիգորի), իբրեւ Խոսւ

9

ԿՈՐ. «Ցանդիման լինէր (Մ
զաւորացն (Թէոդոսի Բի եւ
ւանդ զի ուսէին պատուիրս
կարգ պատգամաւորացն». 2
ԱԳԱԹ. «Ատուածա
զաւորութիւնն անուանեալ
առեալ թագաւորին (Տ
կարգ լծոյն հնազանդ
գունդ այսոցն եւ ի պա
անուշահոտ ոգիքն
242—243։
=ԳԻՏ. Աստո
Թղթին Հռ. ԺԳ. 1
տուծոյ. եւ որ ենն
գործաբար յեղնի
մի դատարկք ին

ԿՈՐ. «Մ
եւ սրբոյ կա
ԱԳԱԹ
չիմնիայ».
=Գ
տակավ
բսած

երկն

[illegible] [illegible] . . . Հնազանդ լինել ամենայնի
[illegible]». 19։

ՍԴՍԲ. «Զի հնազանդեցին ընդ ամ
[illegible]». 87. (Համեմատէ ընդ Ծնն. «[illegible] [illegible]
հնազանդել ընդ ամենաներ լծովն [illegible]
[illegible] [illegible], եւ [illegible]՝ [illegible]
[illegible] [illegible] զամենաներ լուծն [illegible]

([illegible] կ'ըսէ [illegible] [illegible]
ե. 12. «լուծ [illegible]».

=ԴԻՏ. [illegible] Ամենաներ
[illegible]. բառն է. «Այլ [illegible] հեշտական
[illegible] լուծն, եւ [illegible] [illegible] [illegible]
581. [illegible] [illegible]. Ա Տիմ. 244, «լուծն
[illegible]։—[illegible] [illegible] եւ [illegible]
[illegible]) կայ Ամենաներ լուծ
[illegible] [illegible] [illegible]. «[illegible] ընդ
[illegible] [illegible], այլ ընդ ամէ
[illegible] [illegible]. Հ. Դ.
[illegible] [illegible] [illegible]
[illegible] եւ [illegible]». Վկ. Դիր
355.—«Եւ նա [illegible] [illegible]
[illegible] ընդ [illegible] . . . Հնար
[illegible]». Վկ. [illegible]

ԿԱՐ. . «Զ[illegible]
[illegible] ի [illegible]
Մուշեղ կոչէին».
ՍԴՍԲ. «[illegible]
Համայնեցուց . .
[illegible]». 118։

ԿԱՐ
շնորհաւ

114

ԿՈՐ. «Նիկիական եւ Եփեսոսական կանոնաւք *զայինս երեւելով* աշխարհին Հայոց (Թարգմանիչքն), եւ առաջի դնէին Հարցն զբերեալ կտակարանսն եկեղեցւոյ սրբոյ». 21։ Այլուր. «Ցայնմ ժամանակի բերեալ *երեւեցան* [ի] Հայաստան աշխարհին գիրք սուտապատումք... առն ուրումն Հռոմի, որում Թէոդորոս (այլ. Թէոդիրոս) անուն». 25։

ԱԳԱԹ. «Զի ոչ եթէ յետոյ իմացեալ Ամենագիտին՝ *զայր երեւել* Որդին յաշխարհ». 257—258.—«Որպէս թէ վասն երկայնմտութեան համբերողացն եւ յուսալից սպասելեացն *զայցէ երեւել* (Քրիստոս)». 536. (Նոյն եւ ի Բուզ. Դ. Ե. 85.)—«Ոչ եթէ անչափակալ բնութիւնն Աստուծոյ՝ սահմանաւթաքոյց եւ կողմնափակ իցէ, եւ երբեք երբեք յիւրակայեան սահմանաց յայլ սահմանս *երեւեալ զայցէ*». 250.—«Խորհրդով միաբանական Հաւրն եւ Հոգւոյն՝ *եկեալ երեւի* (Որդին) ի վախճան ժամանակաց». 312։

ԲՈՒԶ. «Ցորժամ առանց նմանութեանցն եւ առակացն *զայցէ երեւեալ* Որդի՝ Հաւրն (այլ. Հօր) եւ Սուրբ Հոգւոյն». Դ. Ե. 85։

115

ԿՈՐ. «Առաջի դնէին Հարցն *զբերեալ կտակարանսն* եկեղեցւոյ սրբոյ». 21։ Այլուր. «Զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի զթարգմանութիւնս, հաստատէր ճշմարիտ *աւրինակաւք բերելովք*». անդ։

ԱԳԱԹ. «Եւ անդ մատուցեալ թագաւորին իշխանքն եկեալք *զբերեալ պատասխանիսն* ողջունաբեր թղթոյն». 613։ Այլուր. «Իսկ երանելին Գրիգորիոս ոչ արժանի համարէր *զպատանիսն բերեալս* թագաւորին». 170.—«Եւ բերէին *զպարգեւս բերեալս* անդստին... ի տունն Նուիրաց սրբոց վկայիցն դնէին». 655։

ԲՈՒԶ. «Եւ *զբերեալ պարգեւացն* պղնձոյ՝ իւրեանց յաւժարութեամբ ընդունէին». Դ. Ժ. 23.—«Հրաման տայես հարկանել զկէս խորանին (Զ. իսկ այլ. խորանի) յատակի (այլ. եւ Զ. յատակ) *ի բերեալ հողոյն Հայոց*...։ Ապա հրաման տայր թագաւորն Շապուհ՝ զկէս յատակին իւրոյ խորանին հարկանել *ի բերեալ հողոյն Հայոց*». Դ. ԾԴ. 166։ Այլուր. «Տային (կայսերն)

կանաց բարգաւթ[իւ]նք. «Թէպէտ *արդարութիւնաբերը* լինին, եւ թէպէտ մեղաւորք». 484—485.—«Ցախտեանցն Տէրն *արքայութիւնաբեր*». 279.—«Անտարանիչն Սիովնի *ածութիւնընկալու* (տպ. օծութեանն անկու), առեալ զպատիւ նախնեացն քահանայութեանն». 317.—«Իւրովք *արհնութիւնաբեր* գարշապարաւքն». 291.—«Վասն *մխիթարութիւնաբեր* (տպ. մխիթարութիւնաբեր աղբեր) Հոգւոյն Սրբոյ». 366.—«*Զյարութիւնագործ* տեսիլն պատմէր». 371.—«Թէպէտ եւ այնպէս *նեղութիւնակիր* ամենայն արարածքն ընդունայնութեան ծառայէին». 264.—«*Զփրկութենագործ* զմարմինն իւր եւ զարիւնն պարգեւէ աշակերտացն». 341.—«Զի յառան *բաւութիւնաբերս* հասեալ մարդոյն, ինքնապատում լինելով դյանցանացն՝ փրկութիւն զանիցէ». 216—217։

ԲԻԻԶ. «Եւ զի լինիցին յամունութեան աւրինաւորք. մի առել եւ մի զաւ բերել խրեանց *ամուսնութիւնընկալ* կողմանց». Դ. դ. 76.—«Պարարէր մնուցանէր (տպ. մնուցանել) զշայեկան արգիւնան (տպ. արդարութիւնան) *աւրհնութիւնընկալու*». անդ, 74. (համեմատէ ընդ Ապաթ. *ածութիւնընկալու*:)

ՆԻԹ. «Վասն *փրկութիւնագործ* հաւատոցն յառաջագոյն պատմելոյ ի մարգարէիցն». Գլուխք Ա Պետր. Ա. 1085. (տես յԱգաթ. *Փրկութենագործ*, *Ցարութիւնագործ*:)

=ԴԻՏ. *Ութիւն* վերջիւ ածանցականաց բարդութիւնք անծանօթ են Առաջին Դասուն։ Կան յԵրկրորդ Դասի *Իմաստութիւնախնդիր*, եւ յԵրրորդ Դասի *Փրկութենական*, բայց եւ երկոքին երկբայական թուին. «Մեք քարոզեմք զխաչելեալն Քրիստոս. գայթագղութիւն է եւ չարչարանք նորա եւ Հրէիցն նշանախնդրաց, եւ յիմարութիւն է նա եւ հեթանոսացն *իմաստութիւնախնդրաց*». Եփր. Ա Կոր. Ա. 54. (Նոր Հայկզ. ի բառն նշանախնդիր՝ կը գրէ *իմաստութիւն խնդրողաց*, անշուշտ ըստ այլ օրինակի. Ի Թղթին Ա Կոր. Ա. 22; գրեալ է. «Հրեայք նշան հայցեն, եւ հեթանոսք *իմաստութիւն խնդրեն*».)—«Արդ՝ թէ երբեք ի հերեսիովտաց անտի լուիցես, թէ հայհոյեն զաւրէնս եւ զմարգարէս, պատասխանի տուր նոցա *փրկութենական բարբառովն*. Ոչ եկն Քրիստոս քակել զաւրէնս, այլ կատարել». Կիւր. Կոչ. Դ. 68. զոր համեմատէ ընդ յաջորդիդ՝ որ է ուրիշ թարգ-

գում եղբարս . . . *լեռնականս* (Ձ. իսկ տպ.՝ լեառնականս), ճըգնաւորս, միանձունս». Ե. իը. 222.—«Եւ էր եղբայր մի Փաւստեայ եպիսկոպոսի, կրաւնազգեաց, մենակեաց, անապատակեաց, *լեառնական*, աքանչելի». Ձ. գ. 265։

[Ա Դաս]† «Զտեսանիցես *զլեառնականսն*, զի նոքա եւ զտունս թողին, եւ զկանայս եւ զորդիս . . ., եւ արտաքոյ արարին զանձինս յաշխարհէ». Ոսկ. Եփես. ԺԴ. Յորդ. 813։ Այլուր. «Զի որք բարիոք վարս ունին եւ համարձակութիւն առ Աստուած, նոքա *ի լերինս ամրացեալ են*, եւ չգտանին ուրեք ի միջի». Ձ. Յորդ. 733։

=ԴԻՏ. *Լեռնական* կամ *Լեռնակեաց* (տես աստէն զԹիւն 121) կը նշանակէ Լեռնաբնակ միայնակեաց։ Ոսկեբերանի Մատթէի Մեկնութեան Թարգմանիչն՝ փոխանակ ըսելու հանգոյն Պաւղոսի Մեկնութեանց Թարգմանչին *լեռնականքն, զլեռնականացն, քան զլեռնականսն, իբրեւ զլեռնականսն*, ըսած է. «Եւ մանաւանդ վանականացն գունդք, . . . եւ *որ բնաւ ի լերինսն բնակեալ իցեն*». Ա. Ի. 322.—«Ոչ զվանականացն միայն ասէ զայս, եւ ոչ *զայնոցիկ՝ որ ի լերինս երթեալ դադարեալ իցեն*». Գ. իզ. 85.—«Կամիմ՝ թէ որ ի քաղաքս կան, առաքինանայցեն քան *զայնոսիկ՝ որ ի լերինսն երթեալ դադարեալ իցեն*». Բ. ժը. Յորդ. 637.—«*Իբրեւ զվանականսն՝ որ ի լերինսն իցեն*, թէ զինչ բնաւ ագահութիւնն իցէ՝ չգիտեն». Գ. ը. Յորդ. 30։—Ա՛յլ է Քաղաք *լեռնական*, այս ինքն լեռնային, Բ Աւր. Բ. 37. Երեմ. ԼԴ. 13։

120

ԿՈՐ. «Առեալ զօմանս յաշակերտաց յիւրաքանչիւր *մենաստանացն*, եւ երթեալ լեռնակեաց սորամուտ ծակախիթ եզեալ». 22։

ԱԳԱԹ. «Գտին զՎրթանէս ի Կեսարացւոց քաղաքին, եւ զՍուրբն Ռըստակէս բնակեալ յանապատի յիւրում *միայնաստանս* (Ձ. իսկ տպ.՝ մենաւորաստանին)». 641։

=ԴԻՏ. *Մենաստան* կամ *Միայնաստան* կը նշանակէ ոչ թէ գղ.Couvent, վանք ուր կը բնակին ի միասին կրօնաւորք կամ միաբանակեացք, այլ գղ. Ermitage, տեղի բնակութեան

58—59, տպագրքեն Ագաթանգեղի եւ Մակարայեցւոց ունին ծառախիտ, ամրախիտ. (Չամչեան՝ եւ զՊարսանն ծակախիթ՝ կը գրէ ծակախիտ. Հ. Ա. 524—525։) Նոյն սխալ է եւ յամենայն Բառարանս. ուր Ամրախիտ առնել ի Նոր Հայկ., ի Ջախջախեանի Հայ—Իտալերէնն, ի Չաքըճեանի Բառարանաբանն, յԱւձեանի երկրորդ տպ.—Ծառախիտ լինել ի Ջախջախեանի նոյն բառգիրս եւ յԱւձեանի երկրորդ տպ.։ Ամրախիթ, Ծակախիթ եւ Ծառախիթ[1] բառերու վերջին վանկն է արմատ Խիթիմ բայի, որ է Մտանել թաքչել ընդ իսիք. «Երթայ, ասէ, եփեա՝ խիթի ընդ քարին, եւ մածնու կայ ի նմա իբրեւ զանկիրոս». Բրս. Վեց. Է. 150։ Ի սոյն Խիթիմ բայէ է նա եւ մակբայն Ոտնխիթի, որ կը գտնուի ի Թարգմանութիւնս Ոսկերերանի Մեկնութեանցն Պաւղոսի, Փիլիպ. ԺԵ. 510. Կողոս. Զ. 585. Եփես. Ը. 746. (սխալ Թուի Ոտնխիթի ի Փիլիպ. ԺԵ. 510, եւ ի Բազմավ Արծրունի, 127։)—Փոխանակ ծակախիթ՝ ուրեք յԱռաջինն Դասի կը գտնենք. «Լրբութիւն սրտի քոյ արար զքեզ ծակամուտ վիմաց». Երեմ. ԽԹ. 16։

123

ԿՈՐ. «Եւ նովին (տպ. նորին) հաջեկրաւն արուեստիւն հանէր աւուրս բազումս յանապատ տեղիս. մինչեւ ազդ լինէր՝ իրաց իրաց ինչ աւգտակարաց եկեղեցեաց կողմանցն այնոցիկ՝ հասանել յաւգնականութիւն շնորհաւքն Քրիստոսի». 23. (տպ. «մինչեւ ազդ [յայլ օրին.՝ ազատ] լինէր յերկրցանց, իրաց ինչ օգտակարաց» եւ այլն.՝ զոր Չամչեան, Հ. Ա. 525, այսպէս կը գրէ եւ կը մեկնէ. «մինչեւ ազատ լինէր յերկցանց՝ (այսինքն ազատանայր երիցանց մեկնեալ գնայր անտի՝) իրաց ինչ օգտակարաց» եւ այլն։ Ագաթ. 633, ունի ի նմին հատուածի. «իրաց իրաց պիտոյից օգտակարաց»։)

ԱԳԱԹ. «Ճշմարտագոյն համարիմք այսուհետեւ զհոգեկան ազգին զամենայն մարդակերպ նմանութիւնս առ մարդիկ եդեալ, ... առ ի պաշտաւն ժամանակաց ըստ իրաց իրաց ինչ ընծայելոյ». 245։

=ԴԻՏ. Միւս Դասքն ունին միայն յեզականն իրաց ինչ։

1. Ա՛յլ է ծառախիտ առ Ղազարայ Փարպեցւոյ.. «Ի ծառախիտ կատարս քարանց լերանցն». Պատմ. 250, որ այլուր բառած է Խտածառ։

ԱԳԱԹ. «Անդ՝ ուր ամենայն զաւրք հոգեղինացն զփառս Տեառն բարձրացուցանէին». 211.—«Եւ յորդագոյն նշանակելով ի վարդապետելն իւրում, զփառս Հաւրն բարձրացուցանէ». 528—529։

127

ԿՈՐ. «Վասն որոյ սիւնհոդոսական հայրապետաց եկեղեցեացն սրբոց նշանակեալ ազդ առնէին ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ եւ Մաշտոցի». 25։

ԱԳԱԹ. «Վասն որոյ եւ սիւնհոդոսական հրամանաւ Առաքելոցն, նախածանաւթ մատուցելոցն հեթանոսացն զթեթեւագոյնսն աւանդեալ (տպ. աւանդել)». 522։

(Բիւզանդ. ունի միայն Սիւնհոդոս, Գ. ժ. 25, 26, ուր կը նշանակէ Տիեզերական ժողով (Նիկիայ).—Դ. դ. 74, իբր Ազգային ժողով (Հայոց ի Աշտիշատ).—Ե. իթ. 226, իբր Գաւառական ժողով (Յունաց ի Կեսարիա)։

=ԴԻՏ. Սիւնհոդոս յոյն բառ է, sýnodos (սինոդոս), այսինքն ժողով. Ասորիք փոքր ինչ ծռելով փոխած են զայն ի Սունհոդոս (sounkodos տես P. Smith, Thes. Syr. Սէմքաթ, 2674). եւ յԱսորւոց անցած է առ մեզ Սիւնհոդոս ձեւով, ինչպէս յայտ է յեւսեբեայ Եկեղեցականէն. «Վասն նորա իսկ ժողովեցաւ սիւնհոդոս ի Հռոմ քաղաք մեծ՝ վաթսուն եպիսկոպոսաց, եւ երիցունք աւելագոյն քան զնոսա, եւ սարկաւագունք». Զ. խբ. (յոյնն՝ խգ.) 505. (իսկ ի 463 եւ ի 507 սխալ են Սիւնհոդոս գրութիւնքն. առաջինն ուղղելի է ըստ ասորւոյն Սիմնադու, P. Smith, անդ, Սէմքաթ, 2614, կամ ըստ յունին՝ Սիննադա կամ Սիննադաւ, քաղաք Փռիւգացւոց. երկրորդն ուղղելի է Սիդոնիոս, անուն մարդոյ։) Կայ մի անգամ եւ յԱռաջին Գիրս. «Յետ նոցա Նիկէական սիւնհոդոսն զնոյն հաստատեաց». Սեբեր. Ի. 140։

128

ԿՈՐ. «Չի մի ի լուսաւոր վարդապետութենէն՝ ծուխ ինչ սատանայական յարիցի (տպ. յարիցէ. իսկ Զամչեան, Հ. Ա. 526, յարեսցի)». 25։

ԱԳԱԹ. «Եղեն (Առաքեալքն) կոչնականք կոչել զամենեսեան

ծեռնասունս աստուածատէր պաշտամնէիցն իւրոց». 25.—«Եւ յոր-ժամ որոշել (տպ. որոշեալ) ի միջոյ *ծեռնասուն* աշակերտացն եւ խառնել (տպ. աշակերտաց եւ խառնեալ) ի գունդն Քրիստոսի հասանէր». 26։

ԱԳԱԹ. «Արդ՝ ամենայն նախարարք, մեծամեծք եւ ազատք, ...բնակք եւ ձեռատունկք եւ *ծեռասունք* մեր Արշակունեաց». 109.—«Եւ զամենս յօրդւոց քրմացն առեալ՝ պատաշխատն *ծեր-բասունս* առնէր». 629։

ԲԻԻԶ. «Այրս այս Խադ ...*ծեռնասուն* էր սա եպիսկոպո-սապետին Ներսեսի». Դ. ժբ. 105.—«Առնոյր սուրբն Գինդ եւ զՄուշէ մանուկ *ծեռասուն*, հաղորդէր վարուցն մեծին Գնդայ». Զ. ժղ. 272։

Տես եւ «Ձեռաջասուն» յԱգաթ.—Բիւզ. Թիւ 188։

—ԴԻՏ. Կայ *Ձեռասուն* եւ յԱռաջին Դասի մի անգամ. «Յոր-ժամ զխաղաղութիւնն եւ զշինութիւնն նշանակէ՝ *զծեռասուն* եւ զընտանի անասունս եւ զմշակս եւ զգործ երկրի (ի մէջ բերէ)». Ովկ. Խս. Է. 95։ Այլուր ըսուած է. «Երիշեացես զասուրսն սառա-պանաց քոց՝ որպէս եւ *ծնայրն ի ծեռս իմ*». Եսթեր, ԺԵ. 2։

132

ԿՈՐ. «Եւ անդ ի մարտիրոսական խորանին յարկեալ (տպ. յարկեղ) որդոցն, հանգեալ ամենայն անուշահոտ խնկովք եղեալ, եւ *կնքեալ քրիստոսադրոշմ կնքովն*». 25։

ԱԳԱԹ. «Զմի մի իւրաքանչիւր ի սրբոցն յիւրաքանչիւր տա-կեղ դնէր՝ իւրաքանչիւր հանդերձովն եւ իւրեանց լոկ կազմու-թեամբն (ըստ Զ.) պնդէր, եւ *կնքէր քրիստոսանշան կնքովն*». 571։ Այլուր հանգոյն *քրիստոսադրոշմ* բառի *Վարուցն Մաշ-տոցի*. «Ոչ զմկրտութիւն *աստուածադրոշմ* լուսաւորութեանն կենացն, այլ տալ զապաշխարութեանն սրբութեան մկրտութիւն». 303։

133

ԿՈՐ. «Որոց եւ նոյնպէս ամի ամի զումարեալք ի նոյն ամ-սեան՝ զնոյն (զնորին?) յիշատակն *տանախմբեն*». 26։

ԱԳԱԹ. «Զի խնդութեամբ ժողովեալ (ի Ցաշտիշատ)՝ զատք

ԲԻՒՋ. «Եւ Սուրբն Ներսէս զքաջութեան հանապազատարած համբարձեալ յերկինս՝ խնդրէր ի Տեառնէ գիր եւ այլն». Ե. դ. 195։ Այլուր. «Համբարձեալ զձեռս իւր եւ պաշտ իւր ընդ երկինս, ասաց». Ե. իդ. 218։

(ՄԿԲ. «Եւ ամենեքեան առ հասարակ աղաւթից բարբառով զձեռս համբարձեալ յերկինս՝ մատուցին աստուածէին». Բ. գ. 20. —«Զձեռս յերկինս բարձեալ՝ ի նշանագործ Տէրն կարդային». Բ. ժե. 21.—«Զձեռս յերկինս բարձեալ՝ զմեծ զամենազօրն Աստուած աղաչէին». Գ. ե. 13.—«Քահանայքն ձեռս բարձին յերկինս». Բ. ժդ. 34։)

=ԴԻՏ. Կան յԱռաջին Դասի. «Եւ լինէր յորժամ ամբառնայր Մովսէս զձեռս իւր, զաւրանայր Իսրայէլ». Ելք, ժէ. 11. —«Ոչ գաւազան կարկառ (Քրիստոս հանգոյն Մովսիսի), եւ ոչ ձեռս ընդ երկինս տարածեաց, եւ ոչ աղաւթից կարաւտացաւ». Ոսկ. Մատթ. Բ. գ. 439.—«Եւ միայն նախարարացն կացեալ՝ համբարձ զձեռս իւր ի վեր, եւ յաղաւթս կայր այսպէս». Հանգ. Յովհ. Է. 1222 ա.—«Յորժամ ամենայն ժողովուրդն բովանդակ կայցէ ձեռս ի վեր համբարձեալ». Ոսկ. Փիլիպ. Գ. Յորդ. 381։ Վերջնոցս նման եւ յԵրկրորդ Դասի. «Համբարձեալ զձեռս ի վեր, եկաց յաղաւթս». Լաբուբ. 45.—«Յոտն կացեալ, համբարձ զձեռս իւր ի վեր». Եսս Ակեղ. Գ. գ. 160.—Միւս Դասքն՝ բաց ի Հանապազասուտ բառէն՝ որ կայ ի Թղթին առ Տիտոս, Ա. 12, չունին այլ բարդութիւնս Հանապազ մակբայիւ։ Կորիւն Հանապազատարած բառին հետ ունի եւ Հանապազաբուխ արտասուք. Ագաթ. 644. Հանապազախաղաց լինիմ. անդ, 237. Հանապազաժիր զնոյն նմանութեան յանկանելոյ պանել. անդ, 245. Հանապազատես յիշատակ. անդ, 231։ Իսկ «Մշտաբուխ աղբիւն», Ագաթ. 505, կայ եւ չԵղիշէ, 8. «Աղբերք մշտաբուխք». նոյնպէս «Աղբիւր մշտնջենաբուխ», Ագաթ. 508, կայ եւ ի Բրս. Վկց. Գ. 55, «Աղբեւր մշտնջենաբուղխք». որ յՈսկ. Մատթ. Ա. դ. 45, բուած է «Մշտնջենաւորն աղբերք».—Համեմատէ ընդ Ագաթ. Հանապազակիր=Բուզ. Մշտակիր. տես ստորեւ թիւ 140, առաջին մկ. Բուզանդայ.

առաջ անցուցանիցէ, եւ ամենեցուն *հրամանակատար* կացուցանիցէ». ուղղելի է *հրամանատար*, ինչպէս կը պահանջեն միտք բանին, եւ ինչպէս կ'ըսուի յետոյ ի նմին երեսի. «Ամենայն ծառայից իւրոց *հրամանատար* կացոյց». տես անդ *Հրամանատար* եւ 319 չորիցս. եւ յեփես. ԽԱ. Յորդ. 906, «*Հրամանատար* կացուցանիցէ»։—*Կամակատար* կայ մի անգամ եւ յԵղնիկ, 91. «Ասի Հրեշտակ ոգի, այլ ոգի հարկաւոր, որ է հնազանդ եւ *կամակատար*». որ յերես 183 կ'ըսուի *կամարար*։ Իսկ *Դժուարակատար*, Ոսկ. Ես. ԼԳ. 206, կը նշ. Դժուարաւ կատարելի. նոյնպէս *Ինքնակատար*, Ոսկ. Եփես. Ժ. 779, է Ինքնին կատարելի։

141

ԿՈՐ. «Եւ մինչդեռ ձեռք Սրբոյն (Մաշտոցի) ընդ երկինս կարկառեալ էին, տեսիլ սքանչելի *խաչանման* . . . երեւէր ի վերայ ապարանիցն, յորում Երանելին վախճանէր». 27։

ԱԳԱԹ. «Զսիրելին քո գնոյ . . . ապրեցուցեր *խաչանման* փայտիւն ի ջուրցն հեղեղէ». 134։ Այլուր. «Տարածեաց (Հռիփսիմէ) զբազուկս իւր *ի նմանութիւն խաչին*». 133։ ընդ որում համեմատէ. «Եւ Թեկղ անցեալ կայր, եւ տարածեալ ունէր զձեռս իւր *ի նմանութիւն խաչափայտին*». Պատմ. Թեկղի, 526։ Տես եւ զյաջորդդ. «Զգէր զձեռս իւր *ըստ աւրինակի նմանութեան խաչին*». Եւս. Եկեղ. Ը. է. 631—632։

142

ԿՈՐ. «Զոր (զտեսիլն խաչանմանն) ամենայն ուրուք *ինքնատես եղեալ*, եւ ոչ առն ընկերի (տպ. առ յընկերէ) պատմեալ». 27։

ԱԳԱԹ. «Վասն այնորիկ առեալ շրջեցուցեալ զնոսա (զորդիսն Իսրայելի) ընդ անապատն՝ *ինքնատես* ի լերինն *լինելով*». 238.—«Յետ որոյ քահանայիցն հանդերձ ծերովքն *ինքնատես երեւէր* (Աստուած)». 235։

=ԴԻՏ. Առ Կորեան *Ինքնատես լինիմ* է Ինքնին տեսանել աչօք իւրովք, ականատես լինել. իսկ յԱգաթ. *Ինքնատես լինիմ կամ երեւիմ*՝ Ինքնին երեւել դէմ յանդիման։

143

ԿՈՐ. «Եւ սոցա Սրբոյն (Մաշտոցի) (տպ. Եւ սորա սրբոցն) զսէր եւ զմիաբանութիւն աւանդեալ, զմերձաւորս եւ զհեռաւորս *աւրհնութեամբ պսակէր*». 27: Այլուր. «Ի լուսարեր Աւետարանին խրատ ծաղկեցուցանէր զաղուականութիւնս (նոցա Քրիստոս), մանաւանդ *երանութեամբ* իսկ *պսակէր*». 4. (Համեմատէ զվերջինս ընդ Ցճխ. «Զի առցեն զանուն խոստովանողաց եւ վկայից սուրբ մարտիրոսաց՝ որ *երանութեամբ պսակին*». Ե. 38.—«Զի արդարակորովքն՝ *երանութեամբքն պսակին* . . . եւ վայելեն ի բարութիւնան ըստ արժանաւորութեանն, եւ *երանութեամբք պսակին*». Է. 62. տես եւ Փ. 93. ԺԱ. 111, 113, 114, 115, 118, 120, 122, 123:)

ԱԳԱԹ. «Եւ *աւրհնութեամբ պսակեալ* ի ժողովոյն (Նիկիացւոց՝ կայսրն Կոստանդիանոս՝) զանուն յերկրի թողոյր, եւ զարդարութիւն յերկինս հաստատէր». 656—657:

—ԴԻՏ. *Պսակեմ* սովին առմամբ կը գտնուի ի գիրս Սաղմոսաց. «Տէր, որպէս զինու *հաճութեամբ* քով *պսակեցեր* զմեզ». Ե.13.--«*Փառաւք եւ պատուով պսակեցեր* զնա(զմարդն)». Ը. 7.—«*Պսակէ* զքեզ *ողորմութեամբ եւ գթութեամբ*». ՃԲ. 4:

144

ԿՈՐ. «Եւ *ի ներքսագոյն խորանին* զՍրբոյն (Մաշտոցի) հանգիստն յաւրինեալ». 27:

ԱԳԱԹ. «Եւ *ի ներքսագոյն* (Զ. իսկ տպ.՝ Եւ ներքսագոյն) *խորանացն* կենդանագիր գերեզմանացն . . . կանգնեաց զսուրբ նշան տէրունեան խաչին». 578:

145

ԿՈՐ. «Սպասս վայելուչս զունագոյնս պայծառատեսիլս՝ . . . ի յիշատակարան սեղանոյն *կենդանարար մարմնոյ եւ արեանն Քրիստոսի* պատրաստեաց». 27:

ԱԳԱԹ. «Եւ բաշխէր անդ *զկենդանարար մարմին եւ զարիւնն Քրիստոսի*». 610—611 (ըստ Զ. իսկ տպ.՝ «զմարմին եւ զարիւն կենարարին Քրիստոսի».)—«*Կենդանարար մար-*

մնոյն եւ քաւիչ արեանն Քրիստոսի». 617.—«Պարգեւեաց զկենդանարար մարմինն իւր եւ զարիւնն աշակերտացն». 362.—«Ուտել զմարմին Աստուածորդւոյն, եւ ըմպել զարիւնն կենդանարար». 516. տես եւ 358, 622։

ԲԻՒԶ. «Մա (Վրթանէս) երթեալ կատարէր անդ... զպատարագն գոհութեան,... զկենդանարարն եւ զազատիչն զմարմին եւ զարիւն Աստուածորդւոյն՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի». Գ. գ. 7։

=ԴԻՏ. Կայ յներկրորդ Դասի. «Ներակրեաց զնոսա (Քրիստոս) ի շահ անցաւոր հացին եւ գինւոյ, զի հաղորդեսցէ զնոսա ի շահ կենարար մարմնոյ եւ արեանն». Եփր. Համաբ. 121։ Այլուր պարզապէս. «Էառ զմարմին եւ զարիւն Տեառն մերոյ». Եւս. Եկեղ. Է. Թ. 536։

146

ԿՈՐ. «Եւ ամենայն սրբովք ի միասին գումարելովք խաչակրաւն վկայիցն Քրիստոսի, հանդերձ երանելեաւն Մաշտոցիւ, ի հանգիստ խորանին փոխէ». 27։

ԱԳԱԹ. «Իւր եւ անդէն բազմութեան զաւրացն՝ մէն սակաւ սատարեալ, շինեցին զվկայարանն, եւ զսուրբսն ի հանգիստ փոխեցին». 608.—«Եւ արդ եկայք շինեսցուք զվկայարանսն, փոխել զվկայսն ի հանգիստ». 568։

147

ԿՈՐ. «Եւ զնորին (Մաշտոցի) աշակերտ՝ Թադիկ անուն, զայր զգաստ եւ բարեպաշտօն, հանդերձ եղբարբք երանութեանն հասելոց՝ սպասաւոր սրբոցն ի փառս Աստուծոյ կարգէին». 27—28։

ԱԳԱԹ. «Գան այնուհետեւ (տպ. այսուհետեւ) երանութեանն հասեալքն ի խորհրդանոց (Զ. իսկ տպ.՝ ի խորհրդոցն) Հոգւոյն Սրբոյ». 523։

148

ԿՈՐ. «Եւ երկրորդն՝ այլ աշակերտ, Յովհան անուն, այր բուն սուրբ, վարդապետասէր եւ ճշմարտապատում». 28։

կեաց եւ փառս կենդանատուր Աւետարանին իւրոյ». 524. զոր այլուր կ'ըսէ. «Յարուցեալ Աւետարանն կենդանութեան ընդ տիեզերս ամենայն». 510: Փոխանակ *Կենդանատուր*՝ Աղօթ- ւենք նա եւ *Կենատուր*, *Կենատու*. «Վասն կենատուր փրկութեանդ հասելոյդ ձեզ յԱստուածոյ». 614.—«Աղբեւր ամենա- ցուն լուսաբեր եւ կենատու մկրտութեամբն». 304:

ՆԻԹ. «Եւ դարձեալ՝ քան զամենայն իմաստասէս իմաստնա- գոյն եւ ամենաբարի *կենդանատուր*, զամենայն ինչ կրթու- թեանն հաճարեցաւ». Յաչք. Գծ. 1047 բ.

=ԴԻՏ. *Կենդանատուր* եւ *Կենատուր* կը նշանակեն Տուիչ կենդանութեան, կենաց: Առաջին բառը չգտնուիր ի գիրս միւս Դասուց (անստոյգ է *Կենդանատու* զոր կը յիշէ Նոր Հայկազ. իբր յԱռակաբանի Մեկնութենէն Ա Տիմոթ. «Վերոյ զԱստուած ասէր, որ *կենդանատուն* է ամենեցուն». չիք այդպիսի ինչ ի տպագրին:) Փոխանակ Աղաթանգեղի *կենդանատուր Աւետա- րանին*, զոր ասեմք նա եւ ըստ ամ *Աւետարան կենդանու- թեան*, կը գտնենք յԵրկրորդ Դասի. «Տալ ձեզ ոչ միայն *զկե- նարար Աւետարանն*, այլ եւ զանձինս մեր առաջ ձեզ». Եփր. Ա Թես. Բ. 177.—«Ի ժամանակի իբրեւ հանապազաւր միշտ անէր եւ բազմանայր *Աւետարանն կենաց*». Եւս. Եկեղ. Բ. ա. 77.— «Ընդ ամենայն տիեզերս ծագեցաւ *Աւետարանն կենաց*». անդ, Բ. գ. 81: Իսկ *Կենատուր* կամ *Կենատու* կը գտնուին մի մի անգամ յԱռաջին եւ յԵրկրորդ Դասս. «Յաւիտենաւոր յիւր բա- րութիւնն զաշխարհս ամենայն օրհնեցաւ (Քրիստոս) *կենա- տուր* քարոզութեամբն իւրով». Արիստ. Զատատ.—«Եղեւ նա մեզ *կենատու* յաւիտենից փոխանակ Ադամայ՝ որ եղեւ մեզ անհնա- զանդութեամբն իւրով մահատու». Եփր. Եբր. Ե. 206: Առ հա- սարակ երեցունց Դասուց ընտանեգոյն ասացուածն է *Տուիչ կենաց*. «Զի ի կատարածոյ զաւրացն բարեաց՝ ծանիցեն եթէ նա է տէր մահու. եւ [ի] յաւիտենից կենաց ի ժամանակս Եզեկիայ՝ եթէ նա է իշխան եւ *տուիչ կենաց*». Ոսկ. Ես. ԼԸ. 238.—«Զի թէպէտ եւ *տուիչ* իցէ նա *կենաց*, այնուհետեւ տայ՝ որ հնազան- դիցեն». Եփր. Եբր. Ե. 207.—«Զիա՞րդ *զտուիչն կենաց* կարա- ցուք պատմել ... զիա՞րդ զտուիչն ողւոց պատմել մարթասցուք». Գիւր. Կոչ. Զ. 93.—«Պատճառք կենաց մերոց՝ որ աստ են, եւ

գիրս. «Զի փոյթ արասցեն բարեաց գործոց վերակացու լինել». Տիտ. Գ. 8։

7

ԿՈՐ. «Ցանկալի եղեալ (Մաշտոց) զինուորական արուեստին իւրոց զաւրականացն». 6. («իւրոց զաւրականացն» ընթերցուածով այնպէս իմն կրնայ հասկցուիլ՝ որ Մաշտոց էր ի բարձրագոյն աստիճանի եւ ունէր ընդ իւրեւ զինուորս։ Ինձ լաւագոյն թուի ընթեռնուլ «իւրոց զուգականացն», որպէս յերեւս 26. «Իսկ երանելի զուգականին լուեալ (զմահ Սրբոյն Սահակայ), զՄաշտոցէ ասեմ». կամ «իւրոց զուգակցացն», համեմատ Բիւզանդայ առաջին վկայութեանն. որով Մաշտոց կը ներկայանայ իբր սովորական զինուոր. մանաւանդ զի իւր հայրն Վարդան՝ լոկ շինական մի էր Հացեկացի, եւ Կորիւն կ'ըսէ դարձեալ զՄաշտոցէ յերեւս 7. «Հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնսն»։ Իսկ ի նմին երեսի «Մերկանայր այնուհետեւ զիշխանականն ցանկութիւնսն», ուղղելի կը համարիմ զաշխարհականն. աշխարհ եւ իշխան բառերն ի զանազան տեղիս մատենագրութեանց նախնեաց՝ ոչ ըստ այլոյ գրեալ են սխալմամբ. տես օրինակ իմն յԱգաթ.=Բիւզ. թիւ 159, ի չորրորդ վկ. Բիւզանդայ։)

ԲԻՒԶ. «Ցանկալի եղեալ (Ներսէս) իւրոյն համարուեստ զուգակցացն». Դ. գ. 68.—«Անձամբ զանձինս իւրեանց խոստորատուր՝ յարուեստն զինուորութեան զինեցան». Գ. ժե. 43։

ԱԳԱԹ. «Ցանկալի եղեալ (Տրդատ) աւրինապահն կալեալ, եւ բարեաց աւրինակ ամենայն աշխարհի». 643։

8

ԿՈՐ. «Առեալ այնուհետեւ երանելւոյն զհաւատացեալս իւր, դիմեալ իջանէր յանկարգ եւ յանդարման տեղիս Գողթան». 7։ Այլուր. «Եւ արդ լինի համար հաւատոց երանելւոյն ամք քառասուն եւ եւթն (տպ. քառասուն եւ հինգ. տես 4)....։ Եւ արդ առնու համար ամաց Սրբոյն (տպ. սրբոց) հաւատոց ի չորրորդում ամէն Կրմանայ արքայի». 29։

ԲԻՒԶ. «Եթող անդ (սուրբն Ներսէս) բազում եղբարս միաբանս միահաւանս, հաւատացեալս կրաւնաւորս». Ե. իը. 222։

խորեանց Թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վաղարշապատ». Կոր. 8. եւ 14, 17.—«Ցղէին անդր նախարարք գամն աւագ, որոյ անուն Աւազ կոչէր». Ագաթ. 167.—«Հայրապետեան մեծ ... որում անուն կոչէր Նաւեբիոս (այլ. Սեպըհատերոս)». անդ, 651—652.—«Ապա եկին յայտնեալ երեւեցաւ առն որբոյ աշակերտաց ին խորում, որոյ անուն կոչէր Եղիփան». Բիւզ. Դ. ժգ. 42. եւ այլն:—գ. «ի լերինն՝ որ կոչի Մանայարքը». Ագաթ. 642.—«ի լերինն՝ որ կոչի Ցլու Գլուխ». Բիւզ. Դ. է. 16. եւ այլն:—դ. «Բանակեցան առ ափն գետոյն՝ զոր Գայլն կոչեն». Ագաթ. 49. եւ այլն.—«ի դժուարին լերինն մեծի՝ զոր Արագածն կոչեն». Բիւզ. Դ. խդ. 144. եւ այլն:

14

ԿՈՐ. «Որում պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ՝ հայրական շափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին». 10:

ԲԻՒԶ. «Սա (Յուսիկ) զհեա հաւրն իւրոյ Վրթանայ զառաքելական յաջորդէր, հայրական շափոցն նմանեալ ծնունդ». Գ. ժբ. 30:

15

ԿՈՐ. «Վասն որոյ բազում իսկ զոհութիւնք յեպիսկոպոսաց սրբոց եւ յամենայն եկեղեցեաց բարձրանային ի փառս Աստուծոյ». 10. (տպ. զովութիւնք. եղի զոհութիւնք ըստ հատուածին Բիւզանդայ:)

ԲԻՒԶ. «Ուր եւ բազում իսկ եւ կարի յաճախէր զոհութիւն ի փառս Աստուծոյ». Դ. ժգ. 109:

(Ագաթ. «Եւ ամենեքեան զարմացեալք բարձրացուցանէին զաւրհնութիւն ի փառս Աստուծոյ». 621. համեմատէ ընդ Կորեանն. «զոհութիւնք ... բարձրանային ի փառս Աստուծոյ»: Ցայլ գիրս՝ փոխանակ Բ սրձրացուցանեմ զաւրհնութիւն կ'ըսուի Աւրհնութիւնս համեմ Աստուծոյ. Նւս. Եկեղ. Ը. Թ. 635:)

16

ԿՈՐ. «Հանդերձ շնորհատուր պարգեւաւքն ... ճանապար-

19

ԿՈՐ. «Եւ իւրեանց անդէն զաւրնթերակաց արքունիսն, հանդերձ ամենայն *ազատազունդ բանակաւն* (տպ. բանակիւն)՝ աստուածեղէն իմաստութեամբն վարդապետեալ». 13։ Այլուր. «Որոց առեալ զամենայն *նախարարազունդ ասպազանւոյն* ամբոխ, ... պատահէին երանելւոյն». 11։

ԲԻՒԶ. «Տայր հրաման Թագաւորն Արշակ *ազատազունդ բանակին* գնալ լինել Տիրիթայն». Դ. ժե. 122.—«Զայս ամենայն լուան *ազատազունդ բանակն* Հայոց». Դ. ծե. 170.—«Հայր մարդպետ, եւ ամենայն *ազատազունդ բանակն* արքունի». Ե. իդ. 218։ Տես եւ «Պահէին զնոսա արձակ ի մէջ *ազատազունդ* փուշտիպան *զաւրացն*». Դ. ծգ. 164.—«Մուշեղ, որդի Վասակայ, ժողովեաց զամենայն *ազատազունդ* մարդկանն». Ե. ա. 185։ Այլուր. «Գոյժ տային կայսերն *բազմազունդ բանակին* նախարարացն». Գ. իա. 55։ Այլուր. «Հասանէր անկանէր (Վասակ) ի վերայ *արքայազնդին*». Դ. լա. 148, որ է գոյական, եւ կ՚ըսուի նա եւ *Գունդ արքունական*. Ե. լէ. 242։

(Ագաթ. նովին ոճով. «Եւ նորա տուեալ հրաման *արքայազունդ բանակացն*՝ ամսաւրեայ ժամանակաւք ի պահս եւ յաղաւթս յամենալ». 619. համեմատէ ընդ Բիւզանդայն *արքայազունդ*։ Ըստ այսմ եւ *Հրեշտակազունդ զաւր*, 537 (=Բիւզ. *Ազատազունդ զաւրք*). *Պղծազունդ այսք*, 242. *Քրիստոսազունդ Առաքեալք*, 511, 518։ Գոյական են *Ներքնազունդ*, 452. *Սրոբէազունդ*, 242. *Քրիստոսազունդ*, 516։ Իսկ *Գունդազունդ*, 252. *Համազունդ*, 228. *Միազունդ*, 503, կան եւ ի գիրս միւս Դասուց։)

20

ԿՈՐ. «Յետ այնորիկ առնոյր հաւանութիւն երանելին Մաշտոց, որպէս զի *տէր եպիսկոպոսն* (Սահակ) ի կայենականսն, եւ նա *ի սփիւռս հեթանոսաց* զբանն կենաց սերմանիցեն». 14։

ԲԻՒԶ. «Աւրհնեա՛, *տէ՛ր եպիսկոպոս*, զմեզ եւ զայգիսս». Զ. թ. 268.—«Եւ ընդ բազում հեթանոս տեղիս շրջէին, յաշխարհս հեռաւորս եւ *ի սփիւռս հեթանոսաց*». Զ. ժգ. 272։

պեցին բռնազբաւսեցին[1] զիւրեանց Թագաւորն զԱրշակ եւ շառապեցին, զի յարիցէ գնասցէ *երթիցէ յանդիման լիցի թագաւորին* Պարսից Շապհոյ». Դ. ծգ. 164.—«Ապա եկն եհաս Շապուհվարազն երիւք հազարաւքն, եւ *յանդիման եղեւ թագաւորին* (Տիրանայ)». Գ. ի. 51.—«Եւ գայր *յանդիման լինէր թագաւորին*». Ե. գ. 204։

ՄԿԲ. «Ցաւժարեցին ոմանք ի ժողովրդենէ անտի *երթալ յանդիման լինել թագաւորին*». Ա. ա. 14.—«*Գնաց յանդիման լինել թագաւորին* ի քաղաքն Պտղոմէացւոց». Ա. ժա. 24։

ԱԳԱԹ. «Եւ Լիկիանէս *յանդիման լինէր թագաւորին*». 46.—«Ցայնմ ժամանակի գայր հասանէր դեսպան առ Տրդատ արքայ Հայոց Մեծաց, եւ *յանդիման լինէր թագաւորին*». 123. —«Զի զարդարեսցի (Հռիփսիմէ),...եւ *յանդիման լիցի թագաւորին*». 132։

23

ԿՈՐ. «Եւ *հոգեւոր սիրոյն եռանդմամբ*՝ զաղտ եւ զժանգ

---

1. *Տպ.բռնաբօսեցին*, եւ ի ծանօթութեան կ'ըսէ. «Ցօրինակի միում *բռնազբօսեցին*» նոյնպէս յէրես 203 կը գրէ *պատեզէնք*, եւ ի ծանօթութեան կ'ըսէ. «Ցօրինակի միում *պատենազէնք*»։ Աւելի զարմանալին այն է՝ որ 1889 տարւոյ երկրորդ տպագրութիւնն, յէրես 168, անփոփոխ պահելով զտխմարական գրութիւնդ *բռնաբօսեցին*, կը նշանակէ ի ծանօթութեան. «Ցերբս (!!!) օրինակս *բռնազբօսեցին*»։ Անիմանալի է ինձ թէ ինչու հրատարակիչն՝ որ խղճած չէ ուղղել զայնպիսի սխալ գրութիւնս՝ յորս կը միաբանին *ամենայն* (հինգ) *Ձեռագիրք*, (տես յէրեսն 16, 23, 49, 72, 96, 106, 129, 192, 198, 214, 237, 239, 242, 246, 258.—չեմ ընդունիր զուղղեալսն յէրեսն 208, 219, 230,) իբրեւ անպիտան կը մերժէ զայնպիսի ուղիղ ընթերցուածս՝ զոր կու տան մի կամ երկու Ձեռագիրք։ Ի՞նչ ըսեմ *նա եւ առանցոյն* անլուր անգոյ բառին համար յէրես 228, որ ի չորս օրինակս գրեալ է *աւանդոցն*. (տես յԱզգաթ.=Բիւզ. թիւ 77.) այս բոլորովին հակառակ է *բռնաբօսեցին* եւ *պատեզէնք* գրութիւններն նախամեծար ընտրելոյ կանոնին. զի անդ երկիցս՝ չորս սխալագիր օրինակաց կը հետեւի հրատարակիչն՝ եւ կը խոտէ զմի ուղիղն, իսկ աստ կը հետեւի մի սխալագիր օրինակի եւ կը խոտէ զչորս ուղիղս։—*Բռնաբօսեմ* անճոռնի սխալն կը գտնուի եւ *ի Պատմութեան* Ստեփաննոսի Ուռպելեան. ուր տպագիրքն (Շահնազար, Հ. Բ. 173, եւ Էմին, 312,) ունին, «Եւ բաղում թախանձանօք *բռնաբօսեաց գնաւ*», Չեռագիր մի ծէ դարու կը գրէ *բռնաբօսեաց*։

չարաւահոտ դիւացն եւ զմոտխագործ պաշտամանցն ի բաց [քե-րէր]». 15. (տես ի Կոր.=Ագաթ. Թիւ 91։)

ԲԻՒԶ. «Երանելի եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս ... զհո-գեւոր սիրոյն եռանդն ածէր առ ամենեսին». Դ. դ. 79։

24

ԿՈՐ. «Ապա դարձեալ ելանէր շրջէր տեղեւք կարգելովք (տպ. կարգելեօք) եւ զգաւառաւքն աշակերտելովք աշխարհին Հայ-ոց, զուարթացուցանել, [զաւրացուցանել,] նորոգել [եւ] հաս-տատել». 16. (տես Ագաթ. 643։)

ԲԻՒԶ. «Եւ նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւնն թա-գաւորութեանն Հայաստան երկրին». Դ. բ. 66։

25

ԿՈՐ. «Խորհուրդ առնոյր այնուհետեւ վասն կէս ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հոռոմոց». 16. —«Վասն մանկտւոյն յաշակերտութիւնն առ ի կէս ազգէն Հայ-ոց ժողովելոյ». 17.—«Հրեշտակս արձակեալ այնուհետեւ ի գա-ւառս կէս ազգին Հայոց». անդ։

ԲԻՒԶ. «Յաղագս ընդ երկու բաժանելոյ աշխարհին Հայոց, զի կէս ազգին Հայոց թագաւորեալ Արշակ հրամանաւ թա-գաւորին Յունաց, եւ կէս ազգին թագաւորեալ Խոսրով հրա-մանաւ թագաւորին Պարսից». Խոստաբ. Ձ. Դպր. գլ. Ա. 259։

26

ԿՈՐ. «Եւ զգլխաւոր աշակերտացն Թողոյր զայն՝ որում Ղեւոնդէսն կոչէին». 16։

ԲԻՒԶ. «Եթող անդ բազում եղբարս ..., եւ ի վերայ նո-ցա երէց մի զգլխաւոր». Ե. իը. 222—223։

Տես եւ «Վերակացու Թողում» ի Կոր.=Ագաթ. Թիւ 105։

27

ԿՈՐ. «Եւ զգլխաւոր աշակերտացն Թողոյր զայն՝ որում Ղեւոնդէսն կոչէին». 16։

ԲԻՒԶ. «Ապա յականէ յանուանէ խնդրեցին աշխարհա-

ժողով զաւրքն թագաւորութեան սէտ». Դ. գ. 68։

ԿՈՐ. «Եւ մտեալ առ իսկ Ագաթ. 651, ի Նմի[illegible] յանդիման լինէր ատուա

ԲԻՒԶ. «Հարցն Նմ[illegible] պատիւն պատուակալ

ԿՈՐ. «Հրաման[illegible] բական քաղաքին մէ[illegible] տար. «Գումարեղ՝ զո[illegible] զատս զատս զպըա[illegible] զաւրմանն». 19. զերկրորդ վկ. Բիւ զովել, եւ նոցին

ԲԻՒԶ. «Զ[illegible] մենայն զաւրու 77։ Այլուր. «Եւ հրամանաւ[illegible]ոցս, կարգեալս».

—ԴԻՑ. զանուի եւ յ[illegible] ճիկս ար կարգեցաւ Բարեկացու[illegible] ճիկք եւ [illegible] անդ (Հող[illegible] զաւրաց

Կ

եւ պատեհ [պատեհ] տեղեաց՝ դասս դասս դպրաց (տպ. դըպրոցաց)». 19. (ընչանակութենէ «Յումարեմ» բայից՝ տես ի Կոր.=Ազաթ. Թիւ 58։)

ԲԻԻՁ. «Յայտ արարեալ զպատեհ պատեհ տեղիսն զատուցանել, չինել աղքատանոցս». Դ. գ. 75։ Այլուր. «Զի Արեաց գնդին պատեհ է գլխան ելանել զաւրացն Յունաց. իսկ ես իմով գնդաւս՝ Հայոց իշխանացն ելից». Ե. գ. 192—193։

Տես եւ «Պատեհագոյն» ի Կոր.=Ազաթ. Թիւ 102։

=ԴԻՏ. Պատեհ տեղի , զոր Կորիւն եւ Բիւզանդ կրկնութեամբ կ'ըսեն ի յոքնականն՝ Պատեհ պատեհ տեղիք, (համեմատէ ընդ «Ամուր ամուր տեղիք» ի Բիւզ.=Մկր. Թիւ 88,) կը նշ. Պատշաճ տեղի, եւ կը գտնուի մի անգամ եւ յԱռաջին Դասի. «Ձըրջեալ ընդ տեղիսն չուրջ զլերամբն՝ եգիտ փոքր մի տեղի պատեհ ի հողագործութիւն». Աթ. Անտ. 52։ Իսկ Բիւզանդայն Պատեհ է՝ կը նշ. Պատշաճ է. որու նման կ'ըսուի եւ յՈսկ. Հռ. Ժ. 84. «Վասն զի զայլ ընդ այլոց տանջեալ (կամ տանջել)՝ ոչ յայժ պատեհ թուի»։ Նկատելի է որ բաց յերկու վկայութեանցս՝ այլուր յԱռաջին Դասի չգտնուիր Պատեհ, մինչդեռ շատ յաճախութեամբ կը գործածուին բացասականքն Անպատեհ, Անպատեհք (գոյական), Անպատեհութիւն, Դժպատեհ (Սիրաք, ԻՋ. 7. Գործք Առաք. Իէ. 12. Ոսկ. Մատթ. Բ. Ժ. Յորդ. 540), Դժպատեհութիւն (Ոսկ. Հռ. ԻԸ. 391). (կայ Դժպատեհ եւ ի Կորիւն, 18)։—Երկրորդ Դասի կը գտնենք մի անգամ Պատեհ գոյականաբար, իբր Պատեհութիւն. «Եւ ոչ ի գիշերի (2. իսկ տպ՝ «և ոչ գիշերի») պատեհ լինէր մեզ այսմ». Եւս. Եկեղ. Ե. ա. 343. զոր Նոր Հայկզ. սխալ կը կարդայ «Եւ ոչ գիշեր 'ի պատեհ լինէր մեզ այսմ», եւ կը կարծէ թէ է ոճ Ի պատեհ լինել։—Երրորդ Դասի կայ մի անգամ Պատեհութիւն. «Յամանս ընդունելեացն ըստ արարչութեան փոփոխեալ (անձրեւն), իւրաքանչիւր ազգի պատեհութիւնս ցուցանէ (կամ՝ զպատեհութիւնն մատուցանէ, ըստ Նոր Հայկզ.)». Կիւր. Կոչ. ԺՁ. 344։

34

ԿՈՐ. «Եւ նորա առանց իրիք զբաղելոյ՝ հանդերձ գործա-

որ իւրաքանչիւր՝ Տեառն Աստուծոյ զեղեալ ուխտս կատարէին». Դ. ժզ. 109։

Տես եւ «Համաշխարհի խնդրուածք» ի Բիւզ.=Մկբ. Թիւ 44։ =ԴԻՑ. Կայ մի անգամ եւ յԱռաջին Դասի. «Զի եթէ զերկիրս ես արարի, յայտ է եթէ ի համաշխարհումն (Նոր Հայկզ.՝ ի համաշխարհական) Աստուած եմ». Ոսկ. Ես. Խե. 329։

36

ԿՈՐ. «Եւ այնպէս յառաջ՝ ամենայն աստուածեղէն զանձուցն վայելչութեամբք լցեալք, պարարտացեալք, խաղացեալք գային ի բազում ժամանակս՝ նովին ի նոյն կանխեալք՝ ի նմին համապազորդեալք». 24։

ԲԻԻԶ. «Եւ զիւրեանց երգս առաքելաց զվիպասանութեանն սիրեցեալք ի փոյթ կրթութեանցն, եւ նմին հաւատացեալք, եւ ի նոյն համապազորդեալք». Գ. ժզ. 33։

37

ԿՈՐ. «Եւ նոցա (Սահակայ եւ Մաշտոցի) ճշմարտասէր փութով զայն ի միջոյ բարձեալ՝ աշխարհահալած արտաքոյ իւրեանց [սահմանացն] մերժեցին (զգիրս Թէոդորոսի)». 25։

ԲԻԻԶ. «Զհետ հալածէին զմնացեալսն՝ փախուցեալ (Զ. իսկ տպ.՝ զմնացեալսն փախուցեալսն) արտաքոյ իւրեանց սահմանացն». Դ. իդ. 143.—«Եւ զսինլքորսն (տպ. սինլքորքն) արտաքոյ իւրեանց սահմանացն հալածեալ տանէին». Դ. իթ. 147։

38

ԿՈՐ. «Զօր եւ առեալ վաղվաղակի ամենայն հանդերձելովք ձեռնասուն աստուածասէր պաշտաւնէիցն իւրոց, որոյ գլխաւորին Երեմիա անուն ճանաչէր». 25։

ԲԻԻԶ. «Ապա բարձին զմարմին նորա սուրբ՝ սիրելիք իւր աշակերտք, որոյ գլխաւորին անունն էր Ղազիտաս». Գ. ժդ. 42. —«Ետուն հրաման ածել զերիցունս եկեղեցւոյն Տիզբոնի քաղաքի, որում անուն գլխաւորին Մարի». Գ. ժզ. 125։

ԱԳԱԹ. «Յայնմ ժամանակի եկեալ գտանէին ի քաղաքին Հռոմայեցւոց՝ արգելափակս մի կուսանաց... որոյ անուն գլխաւո-

=ԴԻՏ. Յայլ գիրս կայ Աւետարանական, այլ ոչ ընդ հրամանք բառի։

Զայլ նմանութիւնս Կորեան եւ Բիւզանդայ՝ տես ի Կոր. = Ագաթ. Թիւք 1. Հայաստան աշխարհ. 5, Հրամանին եւ Թշուառութեանն հասելոյ. 19, Սոյն աւրինակ. 34, Նիզակակից. 36, Բարեաց գործոց նախանձաւոր լինիմ. 40, Հելլենական եւ Հելլէն. 41, Դուռն արքային Հայոց, եւ այլն. 42, Թագաւորք Հայոց Մեծաց, եւ այլն. 48, Կաթուղիկոս. 49, Որոյ եւ Միումն անունն ճանաչէր. 54, Իբրեւ հասեալ եւ Իբրեւ լուեալ. 56, Կղերական եւ Կղերիկոս, Կղեր. 58, Գումարեմ. 59, Խստամբերութիւն. 60, Զաստացեալսն մարգարէին եւ Զաստացեալսն արքայի. 61, Համբերեալ եւ Երեւեալ (փոխ. համբերէր, երեւէր). 64, Կողմանք Այրարատեան գաւառին. 71, Աւագանի. 75, Աստուածագործ. 79, Յառաջակարգ եւ Յառաջակարգութիւն. 82, Քահանայապետ (քրիստոնէից). 84, Առաքելականն, Տէրունականն. 85, Հայրաբարոյ. 86, Փոյթ ի վերայ ունիմ. 87, Եպիսկոպոս տեսուչ եւ Տեսուչ եպիսկոպոս. 93, Կենաց ճանապարհ. 100, Ժամադիր կողմանք. 105, Թողում վերակացու. 106, Որում անուն. 114, Գամ երեւելով եւ Գամ երեւեալ. 115, Զբերեալ կտակարանսն եւ Զբերեալ զշնորհս. 117, Յարութենական եւ Ամուսնութիւնընկալ. 119, Լեռնական. 131, Ձեռնասուն. 134, Հրաժարիմ (=Մեռանիմ). 138, Համբարձեալ զձեռսն կամ զբազուկսն հանապազատարածս յերկինս. 140, Հրամանակատար եւ Պատուիրանակատար. 145, Կենդանարար մարմին եւ արիւն Քրիստոսի։ Ի Կոր. =Մկր. Թիւ 5, Խոստաբուտ եւ Ընդաբուտ։ ՅԱգաթ. =Բիւզ. Թիւք 92, Ամենատէրն. 115, Վերնապարգեւ եւ Վերինն. 140, Մարտիրոսարան եւ Վկայարան. 156, Մարտիրոսական. 159, ԴԻՏ. Ասքանազեան ազգ եւ Տուն Թորգոմայ. 179, Անպայման. 191, Աշխարհակեաց. 192, Եռանց իրիք զբաղելոյ եւ Անզբաղապէս։

ՄԿԲ. «Իբրեւ ղայեկաբար սնուցի
Սուրբին Աստուծոյ եւ Տանկաստանի». Գ.

4

ԿՈՐ. «Ցանձն առնելով զնուս
չնորհացն Աստուծոյ». 19—20.—«Դ
պրեալ) զանձն եւ զմնացեալս՝ ամ
ծոյ». 25։ Այլուր. «Զորս յանձն արս
անդէն զեառեղէր». 18.—«Զամէն մնա
հացն Աստուծոյ». 26։ Եւ այլուր. «
լին չնորհացն Աստուծոյ, երթեալ
ուստ տանն) Գողթան». 14. (տես
չան, Այրարատ, 204 ա.)

ՄԿԲ. «Բանակ հարկանէր (Բ
առնէր Աստուծոյ զանձն եւ զզս
Բ. Ժգ. 15։

=ԴԻՏ. Ցանձն առնեմ՝
գտած չեմ այլուր։ Կայ միայն
յանձն առնեմ զձեզ Աստուծ
հանդերձ պահովք, յանձն ար
—«Գնացին յՄնտիոք, ուստի էր
Աստուծոյ՝ ի գործն զոր կատ
սի ընտրեալ զՇիղա՝ ել, յանձ
ծոյ յեղբարց անտի». ԺԵ. 40

ԿՈՐ. «Հեռնակեաց սոյ
րէական զկերակուրն խոստ
(տպ. «խոստաբուստ ճաշակօքն
ՄԿԲ. «Փախստեայ լին
զանակեաց կեանս ի լերին
ընդ նմա էին՝ խոտաքուս
զժամանակն». Բ. Ե. 27։
(Բիւզանդ հանգոյն Դ

1. Այս երկու բառից

ՆԻԹ. «Ցանծնարարութիւն Ոնեսիմայ ծառայի փախուցելոյ». Գլուխք Փիլիմոնի, Բ. 1194 բ.

[Ա Դաս]† «Քրքրէ զմիտս նոցա յանծնարարութեան ազաւթիւքս առ զութս իւր». Ոսկ. Եբր. (Նոր Հայկզ. ի բառն Ցանձնարարութիւն:)

3

ԿՈՐ. «Հզաւր թագաւորացն խրատիչք էին (Ցովսէփ եւ Դանիէլ), զաշխարհական (տպ. զաշխարհակալ) կենցաղոյս զհանգամանսն ցուցանէին». 3:

ՆԻԹ. «Եւ իբրեւ զքազում իրաց զհանգամանս եցոյց (Պաւղոս), ապա հրամայէ (Տիմոթեայ) առ ինքն գալ». Ցոյք. Պաւղ. 1109 ա.

=ԴԻՏ. Դասաւորութիւն բանիցն ճշգիւ նոյն է եւ յհրկոսին վկայութիւնսդ. զ նախդիրն կրկնեալ, զաշխարհական, զհանգամանսն=զքազում, զհանգամանս. ածականն յառաջ քան զգոյականն, զաշխարհական կենցաղոյս=զքազում իրաց. բայն ի վերջ նախադասութեանն, զհանգամանսն ցուցանէին =զհանգամանս եցոյց:

4

ԿՈՐ. «Այլ Սրբոյն Պաւղոսի առաւելագոյնս ճանաչի չորեքտասանեքումքք թղթովք պատմել զիւր առաքելակիցս եւ նիզակակիցս, եւ ուրախակիցս իւր աննել». 5. (տպ. այլազգ. տես ի Կոր.=Ագաթ. թիւ 33:)

ՆԻԹ. «Եւ ամենեւին բնաւին իսկ չորեքտասանեքումքք թղթովք այսորքիւք զմարդկան նկարեաց (Պաւղոս) զառաքինութիւն». Ցոյք. Պաւղ. 1108 ա.

=ԴԻՏ. Այլուր կը գտնենք առանց համաձայնութեան. «Պիտի եւ այլ բազում ի կաթուղիկէ թղթոց անտի, եւ ի Պաւղոսի չորեքտասան թղթոց անտի». Կիւր. Կոչ. ԺԷ. 380.—«Արդ ոչ բաւական լիցի ինձ ժամանակս, եթէ կամիցիմ պատմել զբազմացեալ զաւրութիւն Հոգւոյն Սրբոյ՝ Պաւղոսի ի չորեքտասան թղթոյ անտի». անդ, 392: Կորիւն պիտի ըսէր ի չորեքտասանեցունց թղթոց:

ԵՒԹ. «Նոցա կէտ ազնուական սահմանեալ անձանց զաւաջինսն, ... զցայդ եւ զցերեկ զանձեն զանձ անձանց իւրեանց ճշմարտիւ *գնծալից բարբառովք*». Յուջր. Գծ. 1047 *ա.*

=ԴԻՏ. Ագաթ. կ'ըսէ. «Եւ թագաւորն Հայոց դառնայր ի մեծ կոտորածէն... *գնծալից ուրախութեամբ*». 33.—«Եւս քան զեւս ի հաւատսն հաստատեցան մեծաւ *գնծալից բեր-կրութեամբ*». 618։ Կայ եւ յնփր. Յաւպաշխ. Նիհ. 120. «Իբրեւ եսես Յովնան զթագաւորն եւ զզաւրսն իւր *գնծալից ուրա-խութեամբ*, տրտմեցաւ տրտմութիւն մեծ»։ Նոյնպէս եւ ի Մար. Ի Վկ. Արեւ. 63. «Միրով եւ *գնծալից ուրախութեամբ* հասանել ի յարութիւնն ճեպէին»։

10

ԿՈՐ. «Ուստի եւ երանելի Հարցն մերոց համարձակութիւն առեալ, յուտալից փութով եւ երեւելի եւ *արդիւնակատար* ըստ Աւետարանին զիւրեանց մշակութիւնն ցուցանէին (տպ. ցուցանեն)». 12. (համեմատէ ընդ *արդիւնակատար մշակութիւն*. «Որպէս Աստուծոյ գործավարք եւ իմաստուն *մշակք արդիւնակատարք*՝ ժողովել (զարդիւնսն) յըշտեմարանս». Յճխ. ԻԳ. 214. որ յՆրրորդ Դասի ըսուած է. «Գեղեցիկ է այս եւ յոյժ բարիոք, զի *արդիւնաւոր մշակ* է պատուիրանաց». Վարք Յոհ. Թեզը. 111։

ԵՒԹ. «Զի ընդելասէր է եւ գթասէր, եւ առաւել խնամոտ եւ *արդիւնակատար*[1], զիւրաքանչիւր աւգուտս վաստակոց չափեալ միշտ». Յուջր. Գծ. 1048 *ա.* (համեմատէ *միշտ* մակբայ ի վերջ նախադասութեանն. *չափեալ միշտ*. Նաթ.=«Զի ճշմարիտ գիտութիւն իմաստից կենարար շահիւքն *լցուցանէ միշտ*». Յճխ. Դ. 28. «Զի վերաբերեալ ի հեզգութենէ՝ յառաջինութեանն վարս

1. Ուժացի չորք բառքդ *Զի . . . խնամոտ եւ արդիւնակատար* կը գտնուին ճշգիւ եւ ի Կանոնս Սրբոյն Սահակայ. «Եկեղեցի . . . ունելով յինքեան նաւապետ կառապետութեան զտեսուչ եպիսկոպոսն, *զի խնամոտ եւ արդիւնակատար* կամաւք անշարժ ունիցի զսահման իւրոյ կարգին». Սոփ. Հայկ. Բ. 117։ Սահակայ Կանոնքդ ոչ են «սկզբնագիր երկասիրութիւնք» մեծի կաթուղիկոսին, ինչպէս սխալմամբ կը համարի *Բազմավէպն*, 1853, 252 *բ.* այլ թարգմանեալք ի յունէ ի ձեռն այլոյ ուրուք (տես ի նմին Սոփերի, 115, Ցիշատակարան Գրչին), թուի ի կատարած Ե դարուն։

մեմատ Նւթաղի։ 2. Ագաթանգեղի ունի՝ «յաստուածպաշտութեանն պայմանեաց»։)

ԵԻԹ. «Եւ նոյնժամայն զհրամանս մոլորութեանն ի բաց ընկեցեալ (Պաւղոսի)՝ *ի պատգամաւորութեան պայման փոխէր*, եւ զՔրիստոսի աստուածպաշտութիւնն խոստովանէր». Ցուցք. Պաւղ. 1107 *բ.*

==ԴԻՏ. Առ Կորեան *Յաստուածպաշտութեան պայման փոխեմ*, ներգործական, է Դարձուցանել յաստուածպաշտութիւն։ Իսկ առ Եւթաղի *Ի պատգամաւորութեան պայման փոխիմ*, չէզոք, է Դառնալ ի վիճակ Առաքելութեան։ Ցերկոսին եւս տեղիսդ միտ դիր Աստուածպաշտութիւն բառին։

14

ԿՈՐ. «Անդ կրթութիւն *քաղցրուսոյց ընթերցուածոց* հոգեպատում Գրոց». 23։

ԵԻԹ. «Ըստ նմին աւրինակի եւ մեզ դիպիցի *քաղցրուսոյց ընթերցուածոցն* վաճառաշահութիւն». Ցուցք. Գծ. 1048 *ա.*

ԱԳԱԹ. «Զի *քաղցրուսոյց* վարդապետութեամբ ածիցէ զվրիպեալսն ի հաւատոցն ճշմարտութիւնն». 355։

15

ԿՈՐ. «Եւ ամենայն սրբովք *ի միասին գումարելովք* խաչակրաւն վկայիցն Քրիստոսի, հանդերձ Երանելեաւն Մաշտոցիւ, ի հանդիստ խորանին փոխէ». 27. (յորմէ եւ Ագաթ. 577—578։) Այլուր. «Ժողովրդովքն *գումարելովք*». 24։

ԵԻԹ. «Ածեալ յաղերս զԱստուած վասն մեր, համաւրէն զամենայն մարդիկ Եկեղեցւոյ Քրիստոսի, սրբոցն գնդիւք *ի միասին գումարելովք*, առնել աղաւթս անդադար վասն մեր». Ցուցք. Կթղ. 1079 *բ.* (տես աստէն ի թիւն 6 զԴԻՏ.)։

16

ԿՈՐ. «Յովհան (Խոստովանող) . . . որում դէպ լինէր յետ վախճանի Սրբոյն (Մաշտոցի)՝ *բազում եւ ազգի ազգի* փորձութեանց եւ կապանաւոր *վշտաց* . . . վասն Քրիստոսի յաղթու-

(երկրայական Թուի Աշխատանք, զի այլուր ամ կ'ըսէ Աշխատութիւն. 11, 14, 26, 70, 276, 3 499։)

ԲԻՒՋ. «Խաղաղութեամբ արձակէր (Արշա նահապետն (Վարդան) ի տուն իւր, զի երթի խատուցենէն յերկայն ճանապարհէն (ել հին?)». Դ. ժբ. 127։

[Ա Դաս]† «Եւ քեզ (Աստուած) ծով, ջիցիս, եւ չխոնջիցիս աշխատութեամբ Հաց». Ոսկ. Փիլիպ. Ժ. Ցորդ. 468։ Այլուր ըէ գամագիտ լինել), ոչ ճանապարհաց Կողոս. Ա. Ցորդ. 528. ըստ որում եւ յՈ 88. «Եւ զառաջնորդէն առէին (մոգքն) ճանապարհին պատմէին»։

4

ԱԳԱԹ. «Նա եւ զազքատս լցուց ձրացուցանեն յաղքեւաց». Ցուջք. 1 ՃԺԲ. 7. «Ցարուցանէ զաղքատս յերկ ռապկալս յաղքեւաց»։ Տես եւ յաղօթ

ԲԻՒՋ. «Ջձեզ կեցուցեալ զամե Թափեալ է (ազգին Արշակունեաց

5

ԱԳԱԹ. «Ցամս քաջի առա Տրդատայ». Ցուջք. 19։

ԲԻՒՋ. «Թագաւորեաց Խոս առաքինւոյն Տրդատայ արքա

ԱԳԱԹ. «Ընդ շրջշրջումն կոյս հարկանելոյ». Ցուջք. զօր ուղղեցի ըստ Բիւզանդայ այն ար ասկա. ինչ ընդ կոյս

ԲԻՒՋ. «Ջքապում կոյ



նոցա», չկարաց հասանել, քանզի անցեալ էր նոցա ընդ գետն Ազատ». Ա. ժբ. 30։)

=ԴԻՏ. Թէպէտ եւ լուեալ, տեսեալ, փոխանակ լուալ, տեսել։ Տես ի Կոր.=Ագաթ. զթիւն 61 եւ 54, ԴԻՏ. տես եւ ստորէն զթիւն 95։

10

ԱԳԱԹ. «Ոչ ինչ ժամանեաց հասանել յամրավկի գործոյն պատերազմի». 30.—«Եւ որ ուստեք ուստեք եկեալ հասեալ էին ի թիկունս աւգնականութեան՝ նիզակակիցք գործոյն պատերազմի». 32—33։

ԲԻՒԶ. «Իբրեւ կատարեալ հազար ընտրեալք եւ պատերազմողք, որ միամիտք եւ միաբանք էին միաբանութեան գործոյն (տպ. գործոցն) պատերազմին». Դ. իգ. 143.—«Նայէր տեսանել՝ թէ ով ի նոցանէն կոչեսցէ զնա ի թիկունս աւգնականութեան յառաջս գործոյ պատերազմին». ի. 130. (Համեմատէ ընդ երկրորդ վկ. Ագաթ. «ի թիկունս աւգնականութեան... գործոյն պատերազմի»։) Տես գործ պատերազմի եւ 18—19, 130, 131 երկիցս, 150, 195, 200, 205, 251. գործ ճակատու, 192. գործ ճակատու պատերազմի, 149.

ՄԿԲ. «Ընդէր զայդչափ զաւրս կոտորեցէք, զի ոչ ինչ գոյր ի մէջի գործ պատերազմի». Ա. ժբ. 44։

Տես եւ «Անձամբ վճարեմ զգործ պատերազմին» ի Բիւզ.=Մկբ. Թիւ 118։

=ԴԻՏ. Կայ մի անգամ եւ յՈւռհայեցին Դաւթի. «Եւ կազմեցին եւ եղին անդ զզարմանս ի գործ պատերազմի». Յաւելթ, Դ. 4։

11

ԱԳԱԹ. «Սկսանէր Խոսրով Թագաւորն Հայոց գունդ կազմել եւ զաւրս բովանդակել». 30։

ԲԻՒԶ. «Գունդ կազմէր բազում յոյժ». Գ. է. 16.—«Զաւրավարն Հայոց Մուշեղ գունդ կազմեաց պատրաստեաց». Ե.ա. 187.—«Մուշեղ զգունդ իւր կազմէր». անդ, 188.—«գունդ կազմեաց, եւ զաւր բազում առ ինքն կուտեաց». Ե. լը. 247.—«Զգունդըն կազմէր, եւ զաւրսն (զզաւրսն?) պատրաստէր». անդ, 248։

ջուրսն կորնչել»։ 422.—«Ուր եւ երեւեալ կերպարանաւք դիւացն՝ ի նմանութիւն առն եւ ծիոյ»։ 584։

ԲԻԻՁ. «Եւ որ հասին ի ժամանակի անդ ի ձեռս (տպ. ի ձեռն) նորա՝ տասն հազար հեծեալ, ընտիր ընտիր եւ քաջ այր եւ ծի»։ Գ. իգ. 140—141։ Այլուր դարձեալ. «Եւ ոչ ոք էր՝ որ մնացեալ էր առ Թագաւորին, եւ ոչ գունդ եւ այր եւ ծի»։ Գ. ի. 52.—«Զամենայն այր եւ ծի գումարեալ՝ խաղացայց ընդ ինքեան»։ Ե. է. 205։ Տես եւ Հեծելազաւր. Գ. իա. 137։

ՄԿԲ. «Ի գալուստ ամին միւսոյ՝ զաւր հատանէր, այր եւ ծի անէր»։ Ա. գ. 28.—«Զեր ինքնին լուեալ իցէ վասն առն եւ ծիոյ ճանապարհին»։ Գ. գ. 9. (տպ. «Վասն առնուծիոյ»։ փոխեցի առն եւ ծիոյ, ըստ որում կ'ըսէ Ագաթ. չորիցս. զի ուղղականն է Այր եւ ձի, եւ ոչ Առնուձի։) Այլուր Այրուծի, Ա. գ. 38. Բ. ժ. 24, կը հոլովի այրուծիոյ. Ա. ժ. 73։ Կայ եւ Հեծելազաւրք, Հեծելազաւր. Ա. ժե. 41. ժզ. 7. Հեծեալք. Գ. ա. 1. եւ այլն։

—ԴԻՏ. Միւս Դասուց սովորականն է Հեծեալք կամ Հեծելազաւր. բայց կը գտնուի յԱռաջին Դասի քանի մի անգամ Այրուծի, այլ ոչ Այր եւ ծի. «Բարձից ի միջոյ քումմէ զԹագաւորս, եւ ցրուեցից ի քեզ զայրուծի նորա»։ Երեմ. ԾԱ. 21.—«Սեթոս, որ եւ Թամեւէս. որ զայրուծին եւ Նաւական ունէր բազում զաւր»։ Եւս. Ժմ. 111.—«Եւ ելեալ փութապէս յՆրուսաղէմ եւ ի Հրէաստան մեծաւ զաւրութեամբ եւ այրուծիով՝ արգելին եւ խափանեցին զՀրէայսն ի շինելոյ»։ Եղր, Բ. դ. 23։ Կայ եւ յՆերրորդ Դասի. «Զոր աւրինակ որ զայրուծիդ անեն, զայր ընտիր զէն ընտիր ժողովեն, զհասակս եւ զանդամս զաւրականացն ընտրեն»։ Կիւր. Կոչ. Ա. 3. (տպ. զայրուծիգ. եդի զայրուծիդ ըստ Նոր Հայկզ. ի բառն Զօրաժողով առնել. տես Այր եւ ձի առնեմ ի Մկբ. առաջին վկ։)։

14

ԱԳԱԹ. «Հնազանդեցան եւ ի ծառայութիւն մտին համբարձելոյ Թագաւորութեան Ստահրացւոյն»։ 32։

ԲԻԻՁ. «Պիտոյ է ինձ յղել զքեզ առ Թագաւորն Պարսից Ճապուհ, զի ես մտից նմա ի ծառայութիւն»։ Ե. գ. 203.—

խարհն դարձեալ». իա. 55.—«Զառ ինքն եկեալսն դեսպանան արձակէր յիւրմէ (Թագաւորն Պարսից)». անդ, 57։ Տես եւ 104, 135, 136 երկիցս, 170 երկիցս, 191, 203, 204, 232, 246, 247, 262։ Ցորմէ եւ Դեսպանութիւն. «Զորմէ յերթալն իւրոյ դեսպանութեանն (դեսպանութեամբն?)՝ սենեկապետն արքային Փիսակ մատնեաց զձին Վարազայ». Գ. ի. 49.—«Զի այս արք էին՝ որ չոգան առ նա դեսպանութեամբ յառաջնում նուագին». Գ. իա. 55.—«Սորա չոգան դեսպանութեամբ ի սէր միաբանութեան առ կայսրն Վաղէս». Դ. ժա. 104։

բ. «Առաքեա՛ դու դեսպանս յերկիրն Հայոց, եւ տո՛ւր բերել անտի հող . . . եւ կահոյր մի ջուր։ . . . Ապա Թագաւորն Պարսից . . . արձակէ ի Հայս արս զհողոյ եւ զջրոյ». Գ. ծդ. 166։

=ԴԻՏ. Կայ մի անգամ եւ յԵրկրորդ Դասի. «Կարի յոյժ պակասութիւն եւ յափշտակութիւն եղեւ նոցա (քրիստոնէից) ի դեսպանից». Եւս. Եկեղ. Թ. ժա. (ժ. ըստ յոյն բնագրին.) 706. ուր յոյնն կ'ըսէ *offikialis*, որ է լատինականն Officialis, Պաշտօնեայ. իսկ առ Ագաթանգեղի եւ Բիւզանդայ՝ բառիս առաջին նշանակութիւնն է Հրեշտակ, Պատգամաւոր, ինչպէս կ'ըսեն սովորաբար միւս Դասքն, զգ. Envoyé, Messager, Ambassadeur. Երկրորդ նշանակութիւնն է՝ ըստ Հ. Արսենի Բագրատունւոյ՝ Ո՛ր եւ է առաքեալ գործոյ[1]։ Ոչ ուրեք կը գտնուի Դեսպան ի գիրս Առաջին եւ Երրորդ Դասուց։ Սխալ է դեսպան գրութիւնն ի ճառս Սեբերիանոսի, Զ. 114 չորիցս, փոխանակ դեսպակ[2]. (տես Հայկ. Բառարանն. Ե. 52։) Դեսպան բառի երկրորդ նշանակութեամբ կ'ըսէ Կորիւն ի Վարս Մաշտոցի. «Եւ հրեշտակս արձակեալ այնուհետեւ ի գաւառս կէս ազգին Հայոց՝ յիշխանութեանն կայսեր, բազմութիւն մանկտւոյ ժողովել». 17. իսկ առա-

1. Սովին երկրորդ նշանակութեամբ կ'ըսէ նա եւ Ղ. Փարպեցի, Պատմ. 151. «Յետ այսորիկ դեսպանս հրամայէր առնել Թագաւորն Յազկերտ . . . յաղագս երանելւոյ եպիսկոպոսին Բասենոյ Թաթկայ, . . . եւ հրամայէր սպանանել անդէն»։

2. Հակառակ սխալն, դեսպակ փոխանակ դեսպան, կը գտնուի ի Յոհ. կթ. «Իսկ ոստիկանն Ոգբա իբրեւ լուաւ զմահ սրբոյն Սահակայ, փաղփաղակի առաքեաց դեսպակս, հրամայէ ոչ թաղել զնա՝ մինչ զի ինքն իսկ երթիցէ». տպ. Էմին, 55. տպ. Երուս. 123. կարդա՛ դեսպանս:

18

ԱԳԱԹ. «Նա եւ հինգերորդ եւս հանէր յամենայն մեծամեծ աւարացն ածելոց». 34։

ԲԻՒԶ. «Նոյնպէս եւ ամենայն զաւրացն տային բաշխել[1] ի մեծամեծ աւարացն ածելոցն». Ե. բ. 190։

19

ԱԳԱԹ. «Գումարտակ առնէր, . . . ասպատակ սփռեալ զկողմամբքն Ասորեստանի». 34—35.—«Զաւրաժողով լինէր, խաղայր գնայր, ասպատակ սփռէր զկողմամբք Հայաստան աշխարհին». 41։ Այլուր. «Բազում տեղիք այն են՝ որ իմ խաղաղութեամբ հասեալ է. եւ բազումք այն են՝ որ մարտիւ պատերազմաւ աւարի ասպատակեալ». 159.—«Ի միտ արկ թագաւորն գումարտակ առնել, անդրէն արշաւել ի կողմանս Պարսից». 38—39. (տպ. «ի միտ առ թագաւորն. գումարտակ առնէր անդրէն» եւ այլն. իսկ Պաբիեան Զ.՝ «եւ ի միտ արկեալ թագաւորին՝ գումարտակս» եւ այլն։)

ԲԻՒԶ. «Ապա գայր ելանէր Վինն, ասպատակ սփռէր ընդ ամենայն երկիրն սահմանացն Հայոց». Դ. իզ. 145.—«Եւ ապա ընդ ցիրն ասպատակ սփռեալ Հայացիքն». լա. 148.—«Ընդ ամենայն երկիրն ասպատակ սփռեալ՝ զամենայն այր ի չափ հասեալ՝ կոտորէին». ծե. 172։ Այլուր. «Նոցա առաջնորդ կալեալ

1. Տպ. *բաշխիշ*, զոր Նոր Հայկզ. կը մեկնէ. «որպէս ամկ. *պաշխիշ*, պրս. *պախշիշ*, այս ինքն Պարգև, կամ մասն և բաժին ի բարեաց». յորմէ եւ այլ ամենայն Հայերէն Բառարանք, Ջախջախեանի, Առձեռն, Չագըճեանի, Ամբրոսիոս Գալֆայեանի՝ որ գզ. կը դնէ Pourboire. Նոյնպէս Տեր. Այտընեան կը գրէ ի Քնն. Քեր. երես 182, ծան. 23. «Պաշխշներ. *բաշխիշք*. պարգեւք»։ Իսկ Հ. Արսէն Բագրատունի ուղղելի կարծած է զԲիւզանդայ տեղիդ՝ «ամենայն զաւրացն տային ի *Բախիշ*». այս ինքն որ էին ի *Բախիշն*. տես ի Բիւզանդ *Բախիշն*, տեղի անծանօթ, յերես 188 եւ 192։ Հարազատ ընթերցուածն է «տային *բաշխել* ի մեծամեծ աւարացն». համեմատէ. «*Զաւար* հզաւրաց *բաշխեսցէ*». Եսա. ԾԳ. 12.—«Եւ *զաւար* եւ զկապուտ եւ զստացուածս *բաշխեսցէ* նոցա». Դան. ԺԱ. 24.—«*Զաւար* նորա *բաշխեսցէ*». Ղուկ. ԺԱ. 22.—«Զամենայն զանձս քո *բաշխեցից յաւարի*». Երեմ. ԺԷ. 3.—«Ընդ լեր յափշտակող, ուր որչափ եւ յափշտակիցես՝ չպակասէ ինչ, եւ ոչ *յաւարի բաշխի*». Ոսկ. Բ Տիմ. Ժ. Տորգ. 275. յորմէ եւ *Աւարաբաշխ*. Դատ. Ե. 30։

զՄերուժանն՝ ընդ այլ կարթեալ ապատակ յաշխարհն Հայոց առնէին». Դ. իդ. 141. (տպ. «ընդ այլ կաթել». զոր տես ի Բիւզ.=Մկր. Թիւ 73.)—«Կամէին ապատակ առնել յերկիրն Հայոց». լԹ. 152.—«Եւ եկեալ զաւրքն Պարսից ապատակ առնէին եւ ի միջնաշխարհն Հայոց». Ե. գ. 192.—«Ընդ այլ դիմեալ՝ ապատակս կապէին».[1] Դ. իդ. 142։ Տես եւ *Ապատակեմ*. 138, 139, 140. *Արշաւեմ*. 14, 138 երկիցս, 142, 153։

ՄԿԹ. «*Ապատակ սփռէր* ընդ աշխարհն ամենայն Անտիոքոս». Ա. ա. 20։ Այլուր. *Ապատակեմ*. Բ. ժգ. 19. *Արշաւեմ*. Ա. դ. 35. Թ. 69։

Տես եւ «Ապատակ գնեմ» յԱգաթ.=Մկր. Թիւ 2. «Ապատակ տամ» ի Բիւզ.=Մկր. Թիւ 74։

=ԴԻՏ. *Ապատակ սփռեմ, առնեմ, կապեմ, դնեմ, տամ*, անծանօթ են միւս Դասուց։ Կայ եւեթ մի անգամ յԱռաջին Դասի. «Դիմեալ ի վերայ Աստրեստանեաց՝ որ յայնժամ հոյակապքն էին, ի ցանկութիւն մտաբերէր յայսպիսի թագաւորութեանն (թագաւորութեան?) վերայ *ապատակ արձակել*». Եւս. Ժմ. 108. զոր Նոր Հայկազեանն ի Մտաբերեմ՝ սխալ կը գրէ *ապատակ սփռել*։ Այլուր ամէնուրեք կ'ըսուի *Ապատակեմ*. Ա Թագ. ԺԷ. 53. ԻԷ. 8. Լ. 1. եւ այլն. *Արշաւեմ*. Ա Թագ. ԻԳ. 27. ԻԷ. 10.—«Վողոգեսոս արքայ Պարթեւաց ի Հռոմայեցւոց վայրս *արշաւեաց*». Եւս. Քր. 160. եւ այլն։

20

ԱԳԱԹ. «Եւ ամս տասն . . . աւերէին *զամենայն երկիր սահմանացն*՝ որ ընդ Պարսից թագաւորութեամբ եւ իշխանութեամբ էր». 35.—«Հասանել նմա բովանդակ ի վերայ *ամենայն երկրին սահմանացն* Հայոց Մեծաց (տպ. մեծութեան) աշխարհին». 624.

ԲԻՒԶ. «Ապա գայր եղանէր Վինն, ապատակ սփռէր ընդ *ամենայն երկիրն սահմանացն* Հայոց». Դ. իդ. 145։ Այլուր.

---

1. Այս ասացուած չգտնուիր ի Նոր Հայկազեաններ: Ի Ստ. Ասողիկ, Բ. գ. 120, ծան. 1, գրեալն ի 2. «Եւ մեծ մասն զաւրուն *ապատակ ամ-պեալ* [յ]աւարի առին զՄարս, զԳողթն, զՆախճաւան», ուղղելի է *ապատակ կապեալ*:

«Զվեց ամ զմիմեանց զհետ աւերէր *զաշխարհ սահմանացն* Յունաց». Դ. ժա. 105։

21

ԱԳԱԹ. «*Ցերկրորդական* գահ[1] իւրոյ տէրութեանն մատուցանել խոստանայր». 36. (համեմատէ. «Հանէք նստուցանէք զնա *յերկրորդ* աթոռ թագաւորութեանն». 38.—«Զոր (զՀամամն) *յերկրորդ* աթոռս իմում նստուցեալ պատուեցաք». Եսթեր, ԺԶ. 11. տես անդ եւ ԺԳ. 3։) Ըստ այսմ եւ «Վկայեցին զմիաբանական տէրութիւնն *Երրորդական*. 178.—«Ցայտ արարեալ զմիաբուն *Երրորդական* զաւրութիւնն». 311։

ԲՈՒԶ. «Եւ իբրեւ զեղբայր որպէս զորդի գրգեալ եղեւ ի նմանէ (Արշակ ի Ձաւպհոյ), եւ *երկրորդական* զմեծ ատենն տայր նմա յԱրքպատական աշխարհին». Դ. ժզ. 124։

—ԴԻՑ. *Երկրորդական* եւ *Երրորդական* կը գտնուին եւ յԱռաջին Դասի, այլ չթուին հարազատ. «Եւ զի ասէ. Ցամին երկրորդի զմնացեալն (կերիցես), թուի ինձ եթէ հացամոլ իմն լինելոց էր. զի այնչափ բերիցէ երկիրն՝ զի եւ *երկրորդական* եւս բաւական լինիցի». Ոսկ. Ես. Լէ. 230. ուղիղ ընթերցուածն թուի *երկրորդ ամին*, հանգոյն Գէորգայ Սկեւռացւոյ Մեկնութեանն Եսայեայ. «Թուի ինձ, թէ հացաշատ իմն լինելոց էր տարին, զի եւ *երկրորդ տարւոյն* բաւական լիցի». (տես Հացաշատ ի Նոր Հայկզ.)—«Զի զխուժադուժ ազգին Նինուէացւոց ուսցիս զարուեստ, որք *երրորդական* աւուրքն կարացին զայնպիսի մեղաց բարկութիւն ցածուցանել». Ոսկ. Վասն Պահոց եւ Աղաւթից, 30—31. Թոռնեան կը նշանակէ ի Հատ. *Ընթերց*. 451, ծան. 3, թէ այլ օրինակ ունի «*երեք* (կարդա *երիւք*) աւուրքն»։

22

ԱԳԱԹ. «Եթէ միայն զայդ նախանձ խնդրեսցես միամտութեամբ, *զբնակութիւնն* Պարթեւական՝ զձեր սեպհական Պալհաւն ի ձեզ դարձուցից». 36.—«Իբրեւ ի հայրենի *բնակութիւնն*

1. Յօրմէ եւ Մ. Խոր. Պատմ. Երկրորդական գահ. Բ. ժա. 184. խզ. 260. խէ. 267. կը. 300. Երկրորդականն. Բ. ժթ. 201. Երկրորդական պատիւ. Բ. ձբ. 367։

դարձեալ լինէր (տպ. էր. տես Կոր.=Ագաթ. Թիւ 118), բազում գործս արութեանն քաջութեանն եւ անդ ցուցեալ». 144—145. —«Զի զՅունաց աշխարհն եւ զհռոմոց քաջ գիտեմ, եւ զմեր Պարթեւաց կողմանսն, վասն զի ընակութիւն (Չ. իսկ տպ.՝ բնութեամբ) իսկ է մեր». 159.—«Եւ անդր հայեցուցեալ զտեսոյն ի Հայրն ի գլուխն Քրիստոսի, եւ ընակութիւն ցուցանիցէ». 360.—«Եւ զհամբերութիւն նահատակեալ վկայիցն քաջութեան, եւ որ գործք գործեցան, եւ որպէս ընակութիւն զաւրութեան նոցա». 652։

ԲԻՒԶ. «Խառնեաց զձեզ ի ընակութիւն կենդանութեան ընտանութեան վարդապետութեանն իւրոյ». Գ. ժդ. 39.—«Հասանել մարտնչել ի վերայ որդւոց եւ կանանց իւրեանց,... եւ ի վերայ աշխարհին զաւառացն ընակութեան». Դ. իդ. 143.—«Զկէս յատակին իւրոյ խորանին հարկանել ի բերեալ հողոյն Հայոց, եւ զջուրն ցանել ի վերայ նորա. եւ զկէսն՝ ի նոյն հողն զիւրոյ ընակութեան երկրին թողուլ». ծդ. 166։

ՄԿԲ. «Զի իբր ընակութեամբ իմն հասեալ կայր ի տեղի անդր ինքնին Անտիոքոս եւ որ ընդ նմա բարեկամքն էին՝ առնուլ զգանձսն ամենայն». Բ. ա. 14.—«Զի մի հողոյ եւ մի պատանաց յիւրում ընակութեան աշխարհին մի արժանի լիցի». ժզ. 8։

=ԴԻՑ. Յօրինակդ Բնակութիւն չնշանակէ Բնակելն կամ Բնակարան, զգ. Habitation, այլ Որ ինչ բնակ կամ բնիկ է ումեք, Սեպհականութիւն, զգ. Propriété. որով եւ Աշխարհ բնակութեան, Բնակութեան երկիր կամ աշխարհ՝ նոյն է ընդ Բնակ կամ բնիկ աշխարհ, երկիր, զգ. (Son) propre pays. զոր Ագաթ. կը կոչէ նա եւ Բուն աշխարհ, 32, 39։ Զվերջին ընակութիւնն Բիւզանդայ համեմատէ ընդ յաջորդսդ ի նմին մատենի. «ուր ընակ իսկ իցէ հողն». 166. «ի վերայ բուն գետնոյն». 168։

23

ԱԳԱԹ. «Յայնժամ տայր նմա պատիւ ըստ աւրինաց թագաւորաց». 38.—«Գալ կատարել առ հասարակ ամենեցուն զաւրէնս արքայական փեսային՝ ըստ աւրինաց (Չ. իսկ տպ.՝ ըստ օրինացն) թագաւորաց». 114։

ԲԻՒԶ. «Եւ էարկ նմա (Դրաստամատ՝ Արշակայ) բազմականս,

եւ բազմեցոյց զնա. եւ եդ առաջի նորա ընթրիս *ըստ արժանաց Թագաւորաց*, եւ եդ առաջի նորա գինի որպէս արքէն էր Թագաւորացն». Ե. է. 207։

ՄԿԲ. «Եւ արարին հարսանիս մեծամեծս պատրաստութեամբ՝ մեծաւ փառաւք *ըստ արքէնս Թագաւորաց*». Ա. Ժ. 58։ Նոյնպէս եւ այլուր. «Եւ զնոսա գրգել *ըստ արքէնս Նախնեաց* իւրեանց». Բ. Ժա. 25։

24

ԱԳԱԹ. «Ցանկարծ *յեղակարծումն ժամանակի* զէնս վերացուցեալ՝ զԹագաւորն (Խոսրով) դիթեալ կացուցեալ յերկիր կործանէին». 39։

ԲԻԽՁ. «Անկանէր ի վերայ բանակին Թագաւորին Պարսից ի գիշերի *յեղակարծումն ժամանակի*». Դ. իդ. 143։ Այլուր. «Զի կազմ կայցեն գործոյն, հարկանել յանկարծաւրէն յանպատրաստից *յեղակարծումն ժամու*[1] ի վերայ Մուշեղի». Ե. լե. 237. —«Ցանկարծ *յեղակարծումն* տարակարծի՝ քառասուն հազար զաւրսն Հայոց միանգամայն կոտորէին». Գ. ը. 19.—«Ցանկարծաւրէն *յեղակարծումն* զաւրավարն Հայոց Մանուէլ հասանէր անկանէր ի վերայ բանակին Սուրենայ». Ե. լը. 247։ Այլուր դարձեալ. «Զաւրն դարանակալ յանպատրաստից յանկարծաւրէն *յայլակարծուց* զնոսա յանկարծուստ յիւրաքանչիւր բազմականի ի վերայ հասեալք ըմբռնէին». Գ. ի. 52։

ՄԿԲ. «Ցանկարծակի *յաղեկարծում* (Նոր Հայկզ. ի Ցեղակարծ՝ *յեղակարծում*) *ժամու* զամենայն քաղաքն ի բուռն արկանէր». Ա. Ե. 28։

=ԴԻՏ. *Ցեղակարծումն ժամանակի* չիք յայլ գիրս։ Կայ եւեթ յԵրկրորդ Դասի մի անգամ. «Զի այսպէս *յաղեկարծում ժամու*[2] յարիցէ նա». Եփր. Աւետ. 334։ *Ցեղակարծ* է ի բառիցն *յեղ* եւ *կարծ*, (յորմէ եւ *Ցեղափոխ*). իսկ *Աղեկարծ* Թուի

---

1. «Ցանկարծաւրէն իբրեւ *յեղակարծումն ժամու*... դիմեալ յարձակէին». Մ. Խոր. Պատ. Թ. բ. 535։

2. «Եւ այնպէս յանդէտս, ասէ, *աղէկարծումն ժամանակի*՝ մերկ զնէ (այս ինքն՝ զկինն) իւրումն մարմնակցին ցուցանէր». Մ. Խոր. Պատ. Դ. բ. 377։

զուգավարին». անդ, 241.—«Ետուն նմա *զյղեալ պատգամն* հնազանդութեան». լը. 245։ Այլուր. «Զայսպիսի *պատգամս առաքէր* Տիրիթն». Դ. ժե. 121։

[Ա Դաս]† «Հասին իրքն յարքայ. *յղեաց* առ նա *պատգամ*, եւ ասէ». Մաք. Գոմ. Արեւ. Վկ. 32։ Այլուր. «*Առաքեաց պատգամ* առ արքայ, եւ ասէ». 19։

=ԴԻՑ. Հանգոյն Մաքութայի երկրորդ վկայութեանն կ'ըսուի եւ այլուր յԱռաջին Դասի. «Զարհուրեալ կին դատաւորին (Պիղատոսի) յանուրջս՝ *առաքէր պատգամս* առ այր իւր». Սեբեր. ԺԴ. 214. (որ ի Մատթ. Իէ. 19, գրեալ է. «*Առաքեաց* առ նա կինն իւր, եւ ասէ»։) Իսկ թարգմանիչն Եւս. Ժմ. կ'ըսէ. «*Պատգամաւորէր* (Ցեփթայէ) առ թշնամիսն զայս աւրինակ բանիւք. Եւ այժմ դու լա՞ւ ինչ իցես, ասէ, քան զԲաղակ». 81.—«*Պատգամազնաց լինէր*, դաշինս կռէր, թողուլ զերկիրն Եգիպտացւոց՝ յուղէտ յուկամ առանց վնասու գնալ». 110։

32

ԱԳԱԹ. «Ես աւասիկ *ախոյեան ելանեմ* քեզ ի մերոց զաւրաց աստի». 44։

ԲԻԻԶ. «Իսկ յորժամ զայն լսէր Մերուժանն, . . . յառաջ խաղացեալ՝ *ախոյեան ելանէր* Մանուէլի (տպ. Մանուէլն)». Ե. խզ. 254.—«Թագաւորն Վարազդատ եւ սպարապետն Մանուէլ զնիզակս առեալ, միմեանց յարձակեալ *ախոյեանք ելանէին*». լէ. 241։ Այլուր. «*Հայոց գնդին* Պապայ արքայէն՝ ես ինձէն *ելից* իմով գնդաւս (տպ. գնդովս) *նահատակ*». Ե. գ. 192։

=ԴԻՏ. Բիւզանդայն *Նահատակ ելանեմ* կայ եւ ի վերնագրի վերջին Սաղմոսին՝ որոյ սկիզբն է «Փոքր էի ես յեղբարս իմ». «Այս սաղմոս ինքնագիր Դաւթի արտաքոյ թուոյ. ի ժամանակի՝ զի *ել* նա *նահատակ* ընդդէմ Գողիադու»։

33

ԱԳԱԹ. «Հրաման տայր հրովարտակս եւ դեսպանս առնել առ իշխանս եւ *զաւրս զաւրութեան իւրոյ* (Զ. իսկ տպ.՝ իւր)». 45։

ԲԻԻԶ. «Արար ընդ նմա զամենայն *զզաւրս զաւրութեան իւրոյ*». Զ. ա. 261։



34

ԱԳԱԹ. «Աանալ եւ Լիկկիանէ զքուն զունդն՝ որ ընդ իւրով ձեռամբն էր». 45։

ԲԻԻԶ. «Երթայր գտանէր զՄանէսան Թագաւորն Մազքթաց քուն զնդաւն». Գ. է. 16։

35

ԱԳԱԹ. «Յայնժամ եառուն կազմութիւն մարտի՝ առ ի ժամ վաղուի զմիմեանս տեսանել պատերազմաւ». 47։

ԲԻԻԶ. «Եւ յետ այսօրիկ ժամադիր միմեանց լինէին՝ պատերազմաւ զմիմեանս տեսանել». Ե. լէ. 241։

=ԴԻՏ. Բիւզանդ կ'ըսէ այլուր. «Ապա [սմա] եւս պատահէր պատերազմաւ Վասակ՝ ամենայն զաւրաւքն Հայոց». Դ. խը. 154. որում նման եւ ի Մկբ. «Իբրեւ ետես Նիկանովր եթէ յայտնեցաւ խորհուրդս նմա, խաղաց պատահել նմա պատերազմաւ ի կողմանս Փարսալայ». Ա. է. 31։ Կայ այս եւ յԱռաջին Դաւի. «Զի ի Տեառնէ կարծրանայքին սիրտք նոցա պատահել պատերազմաւ Իսրայելի՝ զի սատակեսցին». Յեսու, ԺԱ. 20։

36

ԱԳԱԹ. ա. «Հրաման ել ամենեցուն՝ թէ ինքն իսկ կայսրն (Զ. իսկ տպ.՝ ինքն կայսրն) իցէ». 47—48։

բ. «Եւ ինքն իսկ Թագաւորն խաղայր գնայր ի ձմերոց». 103.—«Ապա ինքն իսկ Թագաւորն խաղայր ամենայն զաւրաւքն հանդերձ . . . յԱրտաշատ քաղաք». 584։ Ըստ այսմ եւ այլուր. «Զոր եւ ինքն իսկ մարգարէն՝ զմուտս Աստուծոյն երգէր». 296. —«Ապա եւ ինքն իսկ մեծն Գրիգորիոս ելանէր զտեղեաւքն (տպ. զտեղօքն) կարգելովք». 643. (կարկատեալ ի Վարուցն Մաշտոցի, ե. 16։)

ԲԻԻԶ. ա. «Եւ այսպէս հանդերձ նոքաւք ինքն իսկ կայսրն . . . մտանէր ի բանակն Պարսից». Գ. իա. 55։

բ. «Ինքն իսկ Թագաւորն Արշակ երթայր ընդ առաջ նորա (Ներսեսի)». Դ. ժգ. 110։

=ԴԻՏ. Ինքն իսկ կայսրն, Թագաւորն գտած չեմ յայլ

գիրս։ Կայ ի Յովհ. Դ. 44. «Զի՝ ինքն իսկ Յիսուս վկայեաց, եթէ մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի»։ Կայ եւ յՈսկ. Եփես. Գ. Յորդ. 702. «Ինքնին իսկ Թագաւորն եկեալ հասեալ է ի սեղանն, եւ դու կաս եւ յաւրանչես եւ ձգտիս»։

37

ԱԳԱԹ. «Մտրակ ի կուշտ արարեալ երիվարացն՝ ի միմեանս հասանէին». 48։

ԲՈՒԶ. «Հասին մերձեցան ի միմեանս զունդքն երկոքեան». Ե. դ. 193։

ՄԳՐ. «Հասին ճակատքն երկոքեան ի միմեանս». Ա. է. 42.—«Եւ իբրեւ մարտն առատացաւ, զունդքն ի միմեանս հասին». Բ. ժբ. 11. (համեմատէ ընդ Բիւզանդայ.)—«Իբրեւ կողմանք զաւրացն երկոցունց ի միմեանս հասանէին». ժե. 20։

=ԴԻՏ. Կայ մի անգամ եւ յԱռաջին Դասի. «Յաջորդէր զպատերազմն՝ զորմէ ասացաք իսկ՝ Գեմետրիոս, որ էր որդի Դեմետրի։ Եկեալ հասեալք ի միմեանս Դեմետրի ի Սելեւկիայ[1], եւ Անտիոքայ՝ որդւոյ Աղեքսանդրի՝ յԱսորւոց եւ յԱնտիոք քաղաքէ, յաղթէր Դեմետրիոս». Եւս. Ժմ. 166։

38

ԱԳԱԹ. «Թագ կապեալ ի գլուխ նորա, եւ ծիրանիւք զարդարեալ մեծացոյց զնա». 48։ Այլուր. «Եւ քեզ Թագ եղեալ փառաւորեցից». 36։

ԲՈՒԶ. «Կապեաց Թագ ի գլուխ նորա, եւ ետ նմա կին զքոյր իւր զԶարմանդուխտ». Զ. ա. 261։

=ԴԻՏ. Միւս Դասքն չունին Թագ կապեմ ի գլուխ ուրուք, այլ Թագ կապեմ ումեք. «Մերն զոր էառ նա՝ պա-

---

1. Սխալ է ի տպագրին Դէմէտրի Սեղեւկեայ, եւ սխալ հաւաքած է հրատարակիչն՝ Հ. Մկրտիչ Ցանկեան՝ «Դեմետրի որդւոյ Սելեւկեայ», ինչպէս կը թարգմանէ եւ լատիներէն. «(Itaque) Demetrio Seleuci», եւ այլն։ Ուղիղ ընթերցուածն է Դեմետրի [ի] Սելեւկիայ, այս ինքն՝ ի Սելեւկիայ քաղաքէ։ «Դեմետրիոս, որդի Դեմետրի», կամ «Դեմետրիոս Դեմետրի», ինչպէս կ'ըսէ Եւսեբիոս, Ժմ. 166, 170, է Դեմետրիոս Բ Նիկանովր, որդի Դեմետրիոս Ա Սոտերի, որդւոյ Սելեւկոս Դ Փիլոպատորի։

վասստակէր ի վերայ թագաւորութեանն». ի. 213.—«Փոխանակ ամենայն ազգին մերոյ վաստակոցն, զոր . . . միամտութեամբ առ ձեզ Արշակունիս վաստակեալ եմք». լէ. 240։

ՄԳԲ. «*Ոչ հատոյց նմա ըստ միամտութեան վաստակոց նորա*». Ա. ժա. 53։

=ԴԻՏ. *Միամտութեամբ վաստակեմ*, *Միամտութեան վաստակք* կը նշ. Հաւատարմութեամբ ծառայել, Հաւատարիմ ծառայութիւն։

41

ԱԳԱԹ. «*Այլ ոչ թողից քեզ զմնաբզանս գիցն զոր թըշնամանեցեր զնոսա*». 56։

ԲԻԻԶ. «*Այլ ոչ թողից քեզ* (տպ. եւ 2.՝ դքեզ) եւ ոպ-դւոց քոց զվրէժ նախնեաց իմոց». Դ. ծգ. 167։

42

ԱԳԱԹ. «Եւ *Հրեշտակքն այն են՝ որ* ապստամբքն են նորա մեծութեանն եւ աստուածութեանն». 58։ Տես անդ դարձեալ. «Եւ *անպակաս ուրախութիւնքն այն են՝* յորժամ զիւր սիրեցեալսն . . . անմահացուցէ . . . ։ Եւ *զաւրաստն այն է՝* յորժամ զայցէ առնել զայս ամենայն»։

ԲԻԻԶ. «Եւ խոստովան եղեւ (Մեհրուժան Արծրունի)՝ թէ *աստուածք այն են՝ զոր* թագաւորն Պարսից պաշտէ». Դ. իգ. 140։

43

ԱԳԱԹ. «Եւ յետ եւթն աւուրն ետ հրաման եւ լուծին զնա ի չարաշար եւ *ի դառն կապանացն*». 62։

ԲԻԻԶ. «Յայնժամ *ի դառն կապանացն* պատուհասէն մեռանէր եպիսկոպոսն Նաւեքիոս ի նեղքս ի բանտին». Դ. ը. 98։

=ԴԻՏ. Գայ յՆւս. Եկեղ. «Իբրեւ ի չարաշար տեղանց ազատեցան, եւ արձակեցան *ի խիստ կապանաց*». Բ. գ. 82.—«Դատաստանքն Աստուծոյ ժամանեցին ի վերայ նորա, եւ իբրեւ ի հարկէ կապեցին զնա ի չարաչար կապանաց անտի». Է. իը. 593։

(Նփրեմ?), Ցանդամալոյծն, 851։ Եւ յե փսոն) զդրունս քաղաքին՝ սեմովքն ա ըստ անծին, եւ քարձ գնաց ա նփք. Դատ. Գ. 343.—«Այլ զի ցու ջուլթիանն եւ նմա (անդամալուծ ըստ անծինն». նոյն, Համար. 1 մայեաց քեզ առնուլ զմահիճան թու...ով, ասեն, հրամեաց ք ծին։ Եւ զի կամեցան նոքա.. հիճան իւր ըստ անծին, յա նորա». անդ, 135։ Ի Ցովհան պէս. «Ա՛ռ զմահիճս քո». Ե

ԱԳԱԹ. «Վերացուցե վիճակն», 67.—«Վերաց մահուլթեան վիճակն»
. ԲԻԻԶ. «Զի անմ
Ե. գ. 197։

ԱԳԱԹ. «Եւ մ զօր պատրաստեցեր 67.—«Զի ինքն Ո աշխարհի». 503։
ԲԻԻԶ. «Ան Ուրշտունեաց եւ ղոյն իսկ յիւր —«Պամէր հայր հաղոյն?) յա կսւմն ի վեր հաղոյն վա ցին ի թա կրկին ան երթալոյն

164. (որ յետս 64 դրեալ է մի՛հանգոյն կամ միահանգոյն)

=ԴԻՏ. Միահաղոյն ի բառիցն Մի եւ Հաղ, է Միանգամայն. Հաղ, իբր Անգամ, կը գտնուի յՈսկեբերանի Մեկնութեանն Ծննդոց, զորոյ թարգմանութեան ժամանակն կ'անգիտանամ. «Եթէ տեսանէ զմեզ զգոյշս եւ զուարթունս, թէպէտ եւ մի հաղ եւ երկիցս ձեռն արկեալ ջանայ, ... մեծաւ ամաւթով յետս դառնայ»: Կայ եւ ի Խրատս Սեբեռիանի եպիսկոպոսի Թմուացւոց, Վարք Հարանց, Հ. Բ. 517. «Մի հաղ կերիցես յաւուրն եւ տացես զպէտս մարմնոյ քում»: Սոսկ է եւ Հաղ քան զհաղ առ Բիւզանդեայ, նոյն ընդ Գամ քան զգամ, զդ. De plus en plus. «Իբրեւ հաղ քան զհաղ յաւել վնասել պատերազմն». Գ. ի. 130.—«Եւս նա հաղ քան զհաղ ճշէր, բազմացուցանէր զփոյթն». ԽԴ. 155.—«Թագաւորութիւնն հաղ քան զհաղ նորոգէր, եւ իբրեւ ժամանակին հաղ քան զհաղ յառաջադէմ առնելին». Ե. ա. 198. (որ ի Մկր. կըրտոյի Գամ քան զգամ. տես ի Բիւզ.—Մկր. Թիւ 95։) Միւս Դասքն չգիտեն Հաղ եւ Միահաղոյն, այլ կ'ըսեն ամենուրեք Անգամ կամ Նուագ, եւ Միանգամայն. համեմատէ զԲիւզանդեայն «Միահաղոյն եկն սատակումն ի վերայ նոցա» ընդ յաջորդին. «Միանգամայն հասցէ սատակումն ի վերայ ամենայն քաղաքաց». Երեմ. ԽԸ. 8։ Նոր Հայկազեանն կը յիշատակէ Համահաղոյն իբր յՈսկեբերանի Մեկնութենէն Եսայեայ. «Զի թէ համահաղոյն ածէր զպատիժսն, վաղուց արդեօք բարձեալ էր զմարդիկ». բայց սխալ է. անշուշտ ի Գէորգայ Սկեւռացւոյ Մեկնութենէն Եսայեայ է հատուածդ, ուր Ոսկեբերանի թարգմանիչն կ'ըսէ. «Եւ թէ ըստ մեղացն անդէն վաղվաղակի հատուցանէր, ի վաղուց հետէ ջնջեալ լինէր ազգ մարդկութեան». Լե. 217։

47

ԱԳԱԹ. «Զոր դու առ քում բարերարութիւնդ (Զ. իսկ ասէ՝ առ քո բարերարութեանդ) շնորհեցեր մարդկան». 68։

ԲԻԻԶ. «Առ քում բարեսացութիւնդ տեսեր զիմոյդ մեծարեցի զքեզ». Գ. ժ. 24։ Այլուր. «Զի իմ, առ բարերարութեան իմոյ, արձակեալ լիցի զքեզ». Ե. լէ. 241։

=ԴԻՏ. Առ քում բարերարութիւնդ կամ բարեսացութիւնդ չիք յայլ գիրս։ Կայ միայն յԱռաջին Դասի՝ համանգոյն Բիւ-

Պարսկերէն—Հայերէն Բառարանէն. «Մեծ կԹղայ գինւոյ, որով ի վախճան բազմականի խրախճանուԹեան լի գինի ըմպեն. Գիւյիւք զատէհ»։ Այլուր Բիւզանդ փոխանակ ՈւրախուԹեանց նուագ՝ կ՚ըսէ. «Մինչդեռ Թագաւորն Պապ զուրախուԹեան գինին ունէր ի մատունս իւր». Ե. լբ. 232—233. կայ այս եւ յՌուաջին Դասի. «Մի դանդաղեսցի ազախինդ գեղեցիկ գալ առ առէր իմ եւ փառաւորել ի նմանէն, եւ ըմպել ընդ նմա զգինի ուրախուԹեան մեւք հանդերձ». Յուդիթ, ԺԲ. 12։

49

ԱԳԱԹ. «Եւ ոչ զըրածեծ զանին գրեաց ինչ զվիշտս. զի ջարդեալ էր ամենայն մարմինն յոզորածեծն առնելոյ». 90 (ըստ Զ.)։ Այլուր. «Զի մինչդեռ կայցէ գլխիվայր՝ ծխեսցեն ի ներքոյ նորա աղբ, եւ արբցէ զան սաստիկ ըրաւք գալարովք». 65։

ԲԻԻԶ. «Բրածեծ եղեալ ջախջախեալ քահանայապետն Աստուծոյ, սուրբ երանելի (տպ. Աստուծոյ սուրբ, երանելի. տես առաէն Թիւ 79) մանուկն Յուսիկ». Գ. ժբ. 32։

[Ա Դաս]† «Որբեցս ըրածեծ եղէ». Ոսկ. Բ Կոր. (Նոր Հայկզ. ի Բրածեծ. որ յ՚Բ Կոր. ԺԱ. 25, գրեալ է. «Երիցս ծաղկեցայ»․ այսպէս եւ յՈսկ. Փիլիպ. Դ. 383. Եբր. ԻԸ. 549. եւ այլն։)

=ԴԻՑ. Նշանաւոր է նա եւ Բրածեծ (եւ Ողորածեծ) բարդուԹեանց չգտնուիլն ի գիրս միւս Դասուց։ Եւսեբեայ Եկեղեցականին Թարգմանիչն ըսած է. «Եւ հրամայեաց եԹէ որ միանգամ ոք աղաղակեսցէ՝ ըրաւք ծեծեսցեն զնոսա». Բ. գ. 90. զոր Կորիւն պիտի ըսէր ըրածեծ արասցեն։ Տես անդ եւ «Զաղկաւ հարաւ ի մահ». Բ. իգ. 126։

50

ԱԳԱԹ. «Եւ այլ եւս բազում քան զայս խաւսեցաւ՝ մինչդեռ կայր կախեալ». 90։

ԲԻԻԶ. «Արդ՝ մինչդեռ կայր (Ներսէս) ի վերայ լերինն, զայս եւ այսպիսի եւ որ ինչ նման է այս բանից՝ աւելի եւ բազում քան զոյն խաւսեցաւ». Ե. դ. 197։

51

ԱԳԱԹ. «Եւ ետ պնդել զոտս նորա ի տրապոյրս տկաց». 94—95։

ԲԻԲԼ. «Հրամայեաց ի հրապարակին իմն առնել տրապոյրս մեքենայից». Դ. Ծե. 173։

—ԴԻՏ. Հ. Արսէն Բագրատունի զԱգաթանգեղի Տրապոյրք բառն կը մեկնէ «պրկոց, գելոց, ոլորք կաշեաց կամ փայտից». Եւ անտարակոյս նոյն նշանակութիւնն է նա եւ ի Բիւզանդեայ տա-տուածին, կամ «պրկումն, ոլորումն, նուաճումն, առ արգելուլ զոք անշարժ անփախուստ», ըստ մեկնութեան նոյն հայագիտին։ Ի Ձեռագիրս ինչ Ագաթանգեղի գրեալ է «ի Տրապարս տկաց». յորմէ Նոր Հայկզ. «Տրապար. պարան ի մորթոյ. փոկ»։

52

ԱԳԱԹ. «Իսկ զորս գտանէ յանարէնութեան եւ յամբարշտութեան, յապստամբեցութեան, ... զնոսին նովին ոգւով եւ նովին մարմնով արկանէ ի գեհեն». 99—100։

ԲԻԲԼ. «Այլ որդիքն Յուսկանն, Գաղն եւ Աթանագինէս, յապստամբեցութեանն զկեանս իւրեանց վարեցին. յանարէնութեան եւ յամբարշտութեան շրջէին». Գ. ԺԹ. 47։

53

ԱԳԱԹ. «Մինչդեռ խորհէր Տրդատիոս խաւսել եւ այլ ողո-քով ընդ նմա». 101։

ԲԻԲԼ. «Խաւսէր ընդ նմա ողոքով». Գ. Իա. 57.—«Իսկ մինչդեռ նա գայր եւ գայապիսի (Ձ. իսկ տպ.՝ այսպիսի) բանիւ ողոքով (տպ. եւ Ձ.՝ ողոքոյ) ընդ Թագաւորին խաւսէր». Գ. ԺԵ. 119.—«Խաւսէր համակ ողոքով». Իա. 136։

[Ա Դաս]† «Եւ եթէ պարտ ինչ իցէ յուղղութիւն ածել (զծերն) զի՞ գործիցէ. իբրեւ զհայր յանցաւոր՝ յորժամ մատուցեալ որ ողոքիցէ, նոյնպէս եւ ընդ նոցա (նոսա?), առէ, ողոքանաւք խաւսիցի». Ոսկ. Ա Տիմ. ԺԳ. 107. (տպ. «Եւ եթէ պարտ ինչ իցէ յուղղութիւն ածել. զի գործիցէ իբրեւ» եւ այլն. զոր ուղղեցի ըստ յաջորդից. «Եւ եթէ չլինիցի որ, առէ, վրէժխնդիր, զի՞ գործիցեմ». Նոյն, Եփես. ԺԶ. Յորդ. 843։

առի

կես

քեր
Աղա
այդ
ապր
Արե

իրս

եթէ
Դ. ի
ի վ

առւ

ի Տա
րու
նէր

Պար
ատր
րու
ի վե
անհ
կերն



նէր սատակէր ի մեծ հարուածս զզաւրսն Պարսից Վասակ զաւրավարն». Դ. խգ. 154.—«Դարձան ի փախուստ անհնարին հարուածովք». Ե. լէ. 239։

(Մկբ. «Հար զնոսա հարուածս մեծամեծս». Ա. ա. 32.—«Հարին զնոսա ի հարուածս մեծամեծս». ը. 4.—«Ի մեծամեծ հարուածս հարկանէին զհեղինգորսս». Բ. գ. 26.—«Հարկանէր զնոսա ի հարուածս բազումս». Ա. ե. 3.—«Եւ հարկանէր յաւուր յայնմիկ զնոսա ի հարուածս սաստիկս». անդ, 34.—«Մեծամեծ հարուածովք հարեալ». Բ. գ. 39.—«Հարկանէր զնա առտի անտի սաստիկ հարուածովք». Գ. բ. 10.—«Հարուածս մեծամեծս հասուցէք ի վերայ երկրին նոցա». Ա. ժե. 29. (համեմատէ ընդ Ագաթ. երկրորդ վկ. «Անհնարին հարուածս ի վերայ հասուցանէին».)—«Մեծամեծ սաստիկ հարուածս ի վերայ թշնամեացն հասուցանէր». Բ. ը. 6.—«Արարին հարուածս մեծամեծս ի վերայ Իսրայելի». Ա. է. 22.—«Արար հարուածս (22. համարս, կամ համբարս) մեծամեծս յերկրի». ժգ. 32։)

=ԴԻՏ. Կայ լոկ Անհնարին հարուածք յԱռաջին Դասի. «Տեսանէին (զԾովքայ) զանհնարին հարուածսն եւ զմեծամեծս յոյժ». Ցովբ, Բ. 13.—«Սատակեաց զազգսն սրամտութեամբ, անհնարին հարուածովք բարկութեամբ յանխնայ». Ես. ծԴ. 6. (տես եւ յԱգաթ. 183. «Ձի սակաւիկ մի ոչ կարէին մեկնել ի նմանէ, վասն անհնարին հարուածոցն բարկութեանն»։) Իսկ փոխանակ Հարկանեմ ի հարուածս անհնարինս (կամ ի հարուածս մեծամեծս, բազումս, սաստիկս)՝ սոյն Դասս կ՚ըսէ. Հարկանեմ հարուածս մեծամեծս յոյժ (զժողովուրդն, զթշնամիս կամ ի թշնամեաց). Թիւք, ժԱ. 33. Դատ. ժԱ. 33. Ա Թագ. ժԹ. 8. Հարկանեմ հարուածս մեծամեծս (զթշնամիս կամ ի թշնամեաց). Դատ. ժԵ. 8. Ա Թագ. ԻԳ. 5. Գ Թագ. Ի. 21. Հարկանեմ մեծամեծ հարուածովք (զթշնամիս). Ես. ժԹ. 22. Մեծամեծ հարուածս առնեմ (ի թշնամիսն). Ա Թագ. ժԴ. 30։ Բայց նման Ագաթ. Բիւզ. Մկբ. կայ յԵրկրորդ Դասի. «Եւ թէ ինչ առ ումեք գտանէին եւ որ ուրանայինն՝ հարկանէ-ին ի հարուածս դառնութեան». Եւս. Եկեղ. Գ. դ. 156։—Նկատելի է որ Եսայեայն Հարկանեմ մեծամեծ հարուածովք՝

թագաւորն մեր». Ուխ. Մաթ. Ա. բ. 18.—«Զկորանեալսն յաղթամարտն թափիցէ . . . եւ զայլսն թափեսցէ եւ ազատեսցէ». Սեբեր. Գ. 40, 41։ Նոյն մտօք կ'ըսէ եւ Բիւզանդ. «Եւ թափէր անչափ եւ անթիւ զամենայն զառեալ գերութիւնն». Դ. իգ. 141. —«Կամ զիւրդ զաւրավարն Վասակ թափեաց զգերեալսն». իդ. վերնագիր. 141.—«Թափէին ի նոցանէն զոսկերս թագաւորացն իւրեանց . . . թափէր Վասակ զգերութիւնն ամենայն զծայրատան աշխարհին. եւ զոսկերս թագաւորացն Հայոց, զորս թափեաց Վասակ, հանեալ թաղեցին». անդ, 144.—«Թափեաց յինքն զամուր ամուր բերդիցն (Հայոց), զոր կալեալ էր Պարսկացն». Ե. ա. 187։ Վերջին տեղւոյս նշանակութեամբ այլուր կ'ըսէ Ցինքն ունել (զաշխարհ իւր, զբերդորն Հայոց). Ե. ա. վերնագիր. 185. լէ. վերնագիր. 238. իսկ Ագաթ. 49, «Զհայրենեաց տէրութիւնն յինքն նուաճեաց»։

59

ԱԳԱԹ. «Արկանէր ի սուր զզաւրս Պարսից, եւ թափէր զկողոպուտ անհնարին». 104։

ԲՈՒԶ. «Արկանէր ի սուր զզաւրսն Պարսից, եւ զԳումանդշապուհն սպանանէր». Ե. լթ. 248։

Տես եւ «Արկանել ի սուր սուսերի իւրեանց, իւրոյ» ի Բիւզ. —Մկր. Թիւ 66։

60

ԱԳԱԹ. «Կին ոմն այրի . . . հրաման առեալ յարհաւրաց՝ զի առցէ նկանակ մի արարեալ պատրաստական՝ ընկենուլ ի ներքս ի խոր վիրապին (վիրապն?)». 105.—«Հրաման ելեալ ի թագաւորէ անտի, զի զերանելին Հռիփսիմէ տանել յարքունիս, եւ զաւրքն Գայիանէ անդէն պահել». 181. (համեմատէ ընդ Եղիշ. «Ոչ փակի դուռն կենաց աստուածպաշտութեան մինչեւ ի վախճան աշխարհի, զի զհանապազորդ օրհնութեան հանապազորդ արտասուաց առագանսին լուանալ եւ սրբել». ԺԹ. 179—180։) Այլուր. «Պատուիրակս հանեալ ընդ աշխարհ, զի ամենեքեան ամենայն ընծայատար լիցին մեծի հարսանեացն, եւ բազում ուրախութեամբ զալ կատարել առ հասարակ ամենեցուն զաւրէնս ար-

յիշեալ վկայութեանցդ, բայց կարծեմ անյարմար է Ագաթանգեղի վերջին չորս՝ եւ Բիւզանդայ ու Մակաբայեցւոց վերջին հատուածոց, «զի ամենեքեան ընծայատար լիցին եւ գալ կատարել ամենեցուն», փոխանակ «եւ եկեսցեն կատարեսցեն ամենեքեան» եւ այլն։ Բառգրատունքն (անդ, ե. 477, յ. 1162, եւ ե. 533—534, յ. 1244,) ուրիշ մեկնութիւն մի եւս կու տայ. այս ինքն թէ կարելի է փոխադրութիւն համարել Զի ընկենուլ, Զի տանել, փոխանակ դիմաւոր բայիւ Զի ընկեսցէ, Զի տարցեն: Այս ճահողագոյն թուի ինձ. (համեմատէ աստէն, թիւ 95 եւ թիւ 9, «Քանզի հրաման առեալ» փոխ. առի. «Թէպէտ եւ լուեալ» փոխ. լուաւ. տես եւ ի Կոր.=Ագաթ. գլուխ 54, «Իբրեւ ի վերայ հասեալ» փոխ. հասին։) Զի չափական ընդ անորիշ դերբայի կայ ուրեք ուրեք եւ ի գիրս Առաջին եւ Երկրորդ Դասուց. «Սոյնպիսի միտս եւ առաքինութեանն պարտիս իմանալ. զի մի վասն այլոց, այլ վասն նորին իսկ ընթանալ (փ. ընթանայցես) զհետ նորա». Ոսկ. Մատթ. Ա. ե. 324.—«Զի ոչ զանձինս եւեթ փութացուցանել (փ. փութացուցանիցեն), այլ եւ ի վերուստ առնուլ (փ. առնուցուն) աւգնականութիւն ճգանցն». անդ, Ա. իգ. 363.—«Կամեցաւ (Պաւղոս)՝ զի եւ թըղթովն իւրով հաճել եւ հաւանեցուցանել (փ. հաճեսցէ եւ հաւանեցուսցէ) զհեռաստանեայսն՝ որ բացագոյն էին ի տեսլենէ անտի նորա». Եփր. Եբր. 197։ Իսկ մի եւ նոյն նախադասութեան մէջ Զի ընդ ապառնւոյ (կամ ընդ ստորադասականի) եւ ընդ անորիշ դերբայի, (տես զվերջին չորս վկ. Ագաթ. եւ զվերջին վկ. Բիւզանդայ եւ Մկբ.,) Կորեան յատուկ է; եւ յայլ գիրս չգտանուիր։ Կայ միայն յՈսկեբերանի Մեկնութիւնս Պաւղոսի (15). «Ոչ վասն այնր որ ողջանայ, զի միւսանգամ ընդ մահիճն ընկնոիցի, այլ զի ուսեալք (ուսեալ?) յախտէն զչարիսն՝ մի եւս անդրէն թաւալել, այլ զգուշանալ առողջութեանն». Բ Տիմ. Ա. Ցորդ. 178, տող 5 ի ստորէ. (փ. թաւալիցի, զգուշանայցէ.)—«Նոյնպէս եւ Աստուած ոչ առ կարաւտութեան ինչ կայր յաղաւթս, այլ զքեզ կամէր յորդորել, զի միշտ հպատակ կայցես յաղաւթս, եւ անդադար կրթութեամբ եւ բազում զուարթութեամբ արթուն կալ (փ. կայցես)». Եբր. Իէ. 543։ Բայց ի Մեկնութեան Ա Տիմ. Ը. Ցորդ. (առաջին աղ. Հատուածք, 317).

ամենայն աշխարհի իշխանութեանն իւրոյ. Աղքատքն բայց եթէ ի մոյր եւցեն». Ե. լա. 229.—«Եւ բազմացոյց զկարգս պաշտամանէից *յամենայն տեղիս իշխանութեանն*». իա. 214։

63

ԱԳԱԹ. «Հրովարտակ տանել ընդ ամենայն աշխարհս իշխանութեան իւրոյ, *հրաման հանեալ* աւրինակ զայս». 105—106։

ԲԻԻԶ. «*Հանէր հրաման* ընդ աշխարհ՝ զի մի ոք տացէ (զտասանորդսն յեկեղեցին)». Ե. լա. 229։

ՄԿԲ. «*Հրաման հանէր* ամենայն զաւրաց իւրոց հետեաց եւ հեծելոց». Գ. ա. 1։

64

ԱԳԱԹ. «Եւ զայն եւս տեսանէաք ի նոցանէ՝ ի նոցունց դից անտի զխաղաղաւէր *շինութիւն մարդաշատութեանն* ... շնորհել». 107։

ԲԻԻԶ. «Խաղաղութիւն եւ *շինութիւն, մարդաշատութիւն* (*շինութիւն մարդաշատութեան*?) եւ առողջութիւն ... յամս յաւուրս սոցա աճեալ (տպ. աճել). բազմացաւ». Գ. գ. 6—7։

(Մկբ. «Աղաչէր, ուխտս դնէր առ այն որ չէր նմա ողորմելոց, վասն զաւրբ քաղաքն հարթյատակ եւ անմարդի կացուցանել, զայն *մարդաշատ* եւ ազատ ցուցանել». Բ. Թ. 13—14։)

[Ա Դաս]† «Դրէ թէ քաղաք ուրեք [իցէ] *մարդաշատ*, եւ ամենայն բնակիչք չարագործք». Ոսկ. Ա Տիմ. Դ. 34։

=ԴԻՏ. Յայլ գիրս փոխ. *Մարդաշատ*՝ բռուած է. «Եւ տես նա զերկիրն (տպ. զերկիրս)՝ զի էր *մարդալից* բնակչաւք իւրովք». Եփր. Արար. Ե. 60.—«*Զբազմալից* եւ զխառնիճաղանջ զնինուէացւոց զզարմանալի եւ զմեծ քաղաքն». Ոսկ. Վասն Պահոց եւ Աղաւթից, 30.—«Զիա՛րդ զատաւ նստաւ միայնացեալ քաղաքն *բազմամժողով*». Ողբք Երեմ. Ա. 1։

65

ԱԳԱԹ. «Եւ էր *մարտ* սաստիկ *խստութեան* Տրդատայ ընդ Պարսից թագաւորին՝ զամենայն աւուրս կենաց իւրոց». 110։

ԲԻԻԶ. «Եւ յետ այսորիկ յաւել եւս լինել *մարտ խստու-*

թեան (տպ. խոստութեամբ) պատերազմի ի մէջ Պարսից եւ Հայոց ընդ միմեանս». Գ. ժա. 26։

66

ԱԳԱԹ. «Ապա թէ որ չյայտնեսցէ զայնպիսին, ... ի *Հրապարակ արքունի* եկեալ մեռցի». 111։

ԲԻՒԶ. «Եւ անդէն ի վանսն պատմուճակացն փոգոտեցին զնա, եւ հատին զգլուխ նորա, եւ հանին հարին ի նիզակի, եւ կանգնեցին ի *Հրապարակին արքունի*». Ն. գ. 205.—«Իբրեւ մերձ եղեւ ի *Հրապարակն արքունի*, եւ անդ ի (անդր?) յարքունուստ հասանէին բազում սպասաւորք». Դ. ժե. 118։

—ԴԻՏ. *Հրապարակ արքունի* յԱգաթ. եւ ի Բիւզ. առաջին վկ.՝ Թուի ինձ Հասարակաց հրապարակ, զդ. Place publique.. իսկ յերկրորդ վկ. Բիւզանդայ՝ Արքունիք, Դուռն արքայի։ Վերջին նշանակութեամբս կ'ըստի եւ ի Մար. Գամ. Արեւ. Վկ. 31. «Եւ մինչդեռ ձգէին հանէին զնա արտաքոյ (արտաքս?) քան *զՀրապարակն արքունի*, նստէր անդ ներքինի մի մեծ՝ դայեակ որդւոյ արքայի». զոր F. Lagrange այսպէս կը թարգմանէ. «Il y avait à la porte du *palais* par où devait passer Siméon un vieil eunuque qui avait élevé le roi.» *Les Actes des Martyrs d'Orient*, Tours, Alfred Mame et fils, 1876, Է. 47։

67

ԱԳԱԹ. «Մոլեկան (Զ. իսկ տպ.՝ մոլեգնական) ցանկութեամբ *տռփողաց* ... ժամ տուեալ հարսանեաց՝ ճեպով տագնապաւ ճեպէր զուրախութիւնս հարսանեացն կատարել». 114։

ԲԻՒԶ. «Ապա առ համբաւ ցանկութեան անուանն (նուանն? նուոյն?) *տրփեալ լինէր* միւս (Զ. իսկ տպ.՝ մին եւ) հաւրեղբաւրորդին Գնելոյ, որում անուն Տիրիթ կոչէր. վասն որոյ անկանէր ի գաղտագողանս, մինչ զի զնաւն իւր տեսանել կարասցէ». Դ. ժե. 116.—«Իսկ թագաւորն Արշակ ի լալիսն տեսանէր զկինն սպանելոյն, *տռփէր* եւ ակն դնէր՝ առնուլ զնա իւր կնութեան». անդ, 120—121.—«Տիրիթն սկսանէր ժոյժ չունելոյ *տռփանացն*». անդ, 121.—«Սկսան նուազել զիրսն *տրփանացն* Տիրիթայ». անդ։

—Դ.Ի.Ց. Եւսեբեայ Քրոնիկոնին Թարգմանիչն, 74, ըսած է. «Փեղըս Իպպոլիտի *ցանկանայր*». այսպէս եւ միւս Գիրքն՝ որ կ'ըսեն ամէնուրեք *Ցանկամ*, *Ցանկացող*, *Ցանկութիւն*։— Մեծ. Հ. Ղեւոնդ Վ. Յովսեփեան յիւրում ուսումնասիրութեանն «Հետազօտութիւնք Նախնեաց ռամկօրէնին վրայ» (*Հանդէս Ամսօրեայ*, 1888, 7 *ա*), կը գրէ. «Ծանօթ է բանասիրաց որ Ս. Մեսրոպայ Երիցագոյն աշակերտաց յաջորդող կրտսերագոյն աշակերտք[1], որոց մատենագրական գործունէութիւնն սկսած է իրենց անմահանուն Վարդապետաց (Սահակայ եւ Մեսրոպայ) մահուանէն ետեւ, իրենց գրուածոց մէջ բաւական յաճախութեամբ այնպիսի արմատական եւ ածանցեալ բառեր կը գործածեն, որ թէ եւ օտար բառեր չեն, . . . այլ բուն հայկական են, սակայն երբեք ի կիր արկած չեն ո՛չ իրենց ուսուցիչքն եւ սատարողք, եւ ո՛չ երիցագոյն աշակերտակիցք, որ առ կենդանութեամբ Վարդապետացն գրած են[2]։ Այնու աւելի զարմանալի կ'երեւայ եւ աչքի կը զարնէ այս զանազանութիւնն՝ որ նոյն բառերէն գէթ ոմանք շատ յաճախ կրնային գործածուիլ։ Օրինակ ըլլայ արմատական բառից՝ *աղխի*, *ապղայլթ*, *փայլթամ*, *տոփանք*, *տրտնել*, *հրճուիլ* . . . եւ ածանցեալ բառերու՝ *աղօթել*, *ողջունել*, *ուրախանալ*, *ուրախացուցանել*, *պատասխանել*, *գեղջուկ*, *վաղեմի* . . .»։ Ի շարունակութեան նոյն ուսումնասիրութեան կը գրէ եւ յերես 17 *ա*. «Գիտենք թէ յիշեալ բառերէն ոմանք մի կամ երկու անգամ կը հանդիպին Նա եւ առաջին Թարգմանչաց գրութեանց մէջ. բայց իրաւամբք կասկածելի կը համարինք վաւերականութիւնը, (բուն անոնց գրչէն ելած ըլլալը։) Անոր համար չվարանեցանք չեղածի տեղ դնել ի գործնականին, իբր ստոյգ դուշակելով օրինակողաց անհաւատարմութիւնն եւ անճըշդութիւնը»։ Եւ ի մէջ կը բերէ զ*Պատասխանեմ* (Յովբ, ԺԳ. 19)»։

1. Մեծ. մատենագիրն կ'ակնարկէ յԵրկրորդ Աշակերտս։

2. Ըստ իմում կարծեաց՝ Առաջին Աշակերտաց մատենագրական գործունէութիւնն շարունակուած է յետ մահուան Վարդապետացն։ Ոչ միայն Կորեան *Վարքն Մաշտոցի* յետոյ է մահուան Սահակայ եւ Մաշտոցի, այլ եւ Մարութայի գրուածոց թարգմանութիւնն (18), եւ նոյն իսկ՝ եթէ չեմ սխալիր՝ Ոսկեբերանի Մեկնութիւնքն Թղթոց Պաւղոսի (15)։ Կարծեմ թէ եւ Եզնիկ յետ մահուան Վարդապետացն գրած է զիւր ճառսն *Ընդդէմ Աղանդոց*։

[Ս Դաս]է «Զայն բարձեալ Մեծամայն ճչէ վասն վերելոյ երկրպագութեանց դիմեալց»։ Մար. ի Կկ. Երև. 150։

=ԴԻՏ. Կայ մի անգամ, եւ այլայլ յՕտարին դասի. «Դաստանեակ մի յարուս դոյր դեռ... անդէն վաղվաղակի ճչեաց Մեծամայն». Աթ. Անտ. 60։

73

ԱԳԱԹ. «Զի սարգսին զնա կնութեան թագաւորին Տրդատայ եւ Հայոց տիկնութեան». 137։

ԲԻՒԶ. «Հրամանաւ համարձակեալ ակնարկելով մեծին Հայոց տիկնոջն». Գ. գ. 8.—«Ապա իբրեւ եռեւ տիկին աշխարհին Հայոց... Փառանձեմ զզաւրս թագաւորին Պարսից, եթէ եկին լցին զաշխարհս Հայոց». Դ. ծե. 169.—«Իսկ յերկիրն Հայոց սակայն առաքէին դեսպանս առ տիկին աշխարհին առ Փառանձեմ». անդ, 170.—«Եւ հրաման (Շապուհ)... ի մէջ ամբոխին ածել զտիկինն Հայոց զՓառանձեմն». անդ, 173։

=ԴԻՏ. Հայոց տիկին, Հայոց տիկնութիւն կը նշ. Հայոց թագուհի, թագուհութիւն։

74

ԱԳԱԹ. «Թէպէտ եւ բիւր ազգի ազգի տանջիցէք զմեզ». 137. (Նար Հայկզ. կը գրէ ի Բիւր «բիւր եւ ազգի ազգի», այլ ուղիղ ընթերցուածն կը հաստատուի Բիւզանդայ վկայութեամբ։)

ԲԻՒԶ. «Բարեկամք բարեկամաց եւ ընկերք ընկերաց... բիւր ազգի ազգի թշնամութիւնս գործէին». Գ. ժը. 46։

[Ս Դաս]† «Որպէս յորժամ հոտ ինչ չար բուրիցի (բուրիցէ?), թէպէտ եւ բիւր ազգի ազգի ոք ինչ հնարս հնարիցէ՝ չկարիցէ ցածուցանել». Ոսկ. Եբր. ժԵ. 514։

=ԴԻՏ. Բիւր ազգի ազգի յԱգաթ. է մակբայ. իսկ ի Բիւզ. (եւ յՈսկ.)՝ ածական։ Ի գիրս Մակաբայեցւոց թէ ածականօրէն եւ թէ մակբայօրէն կ'առնուի Բիւրազգի. «Շինեաց ի նմա բիւրազգի գործած ապարանից». Ա. ժգ. 48.—«Եւ զայլ պահ պիշերապահ շուրջ զնոքաւք զգուշութեամբ բիւրազգի ածէին». Գ. ե. 3։ Նոյնպէս եւ յայլ Մեկնութիւնս Թղթոց Պաւղոսի ածականօրէն. «Թէպէտ եւ բիւրազգի մեքենայս խառնիցեն». Փիլիպ.

ՄԿԲ. «Զի յուշ լիցի նոցա՝ վրիպել յանձն զանձինս Գաղա-տարաձայնից ի չարեաց պաշտէին՝ յայլս եւ ի քաղաքներս, զա-րին երեք խոստաճարակ շրջիւ». Բ. Ժ. 6. (համեմատէ ընդ երկրորդ մկ. Բիւզանդեայ. «յայլս եւ ի քաղաքներս ... խոստաճա-րակք... զաւրէն գազանաց ի լերինս շրջէին»: Տես անդէն եւ ի Թիւն 189, «Ծայրս եւ ի քարանձաւս»:)

=ԳԻՏ. Այս նոր Խոտաճարակ լինիմ անծանօթ է մեւս Գառուց, որ կ'ըսեն ամէնուրեք Խոտ ճարակիմ կամ ուտեմ, եւ փոխանակ Խոտաճարակ՝ Խոտակեր. «Գազանք իբրեւ զար-ջառ խոտ ճարակին». Յոբ, Խ. 10. (Թարգմանեալ էր՝ «Բեհե-մովթ [իմա՝ Գետաձի] իբրեւ զարջառ խոտ ճարակի».)—«Երանի թէ ընդ վայրագուն եղանէի, եւ խոտ ճարակէի, եւ ոչ զմար-մինս մարդկան քանդէի». Ոսկ. Ես. ԾԶ. 423.—«Ի մարդկանէ հալածեցաւ (Նաբուքոդոնոսոր), եւ խոտ իբրեւ արջառ ուտէր». Դան. Դ. 30.—«Եւ այլք (ի մոլեկացն) խոտ ուտէին, եւ բանջար խառնաբանջար». Եւս. Եկեղ. Թ. ը. 689.—«Խոտ ուտէր (Նա-բուքոդոնոսոր) իբրեւ զարջառ, զի անասնագոյն էր քան զամե-նայն անասունս». Կիւր. Կոչ. Բ. 26.—«Փոխեցին զփառս իւրեանց ի նմանութիւն որթու խոտակերի». Սղ. ՃԵ. 20.—«Իբրեւ կամե-ցաւ Տէր իւր ջնջել զնոսա վասն մեղաց իւրեանց, զի եղելի պատկեր որթուն խոտակերի». Զգօն, Ժ. 193.—«Զի ի խոտակեր անասնոցն ասցեն սկիզբն իւրեանց մեկնութեան». Բրս. Վեց. Զ. 120:

77

ԱԳԱԹ. «Զի մի կորիցէ աւանդն՝ որ պահեալ զգուշացեալ էր». 144.—«Զգոյշ լեր աւանդին՝ որ քեզ հաւատացաւ». 567:

ԲՒԶ. «Աւերել զկուսաստանսն՝ ... որ նորին ներքսին էր չինել վասն ամրապահ աւանդոցն զգուշութեան». Ե. լա. 228. (տպ. «առանգոցն». եւ ի ծան. «Ի չորս օրինակս աւան-դոցն». տես զիմ դիտողութիւն ի Կոր.=Բիւզ. Թիւ 22, ծան. 1:)

78

ԱԳԱԹ. «Արմ զկամս դորա, եւ կեաց դու եւ մեք». 145:

ԲՒԶ. «[Կաղիւ] ի նոյն ժամ եկեսջիք դուք եւ մեք». Դ. Ժ. 102:

—ԴԻԶ. Ըստ սովորական կանոնին՝ պատշաճ էր «կեցցուք մեք եւ դու, կեցուցուք մեք եւ դուք», զի բայն՝ նախադասին դիմին կը համաձայնի (Չրգ. Քեր. Ե. 258, յ. 562). զոր օրինակ. «Զի մի մեզ եւ մի քուք առ հասարակ կորնչիցիմք». Ձսկ. Մ. թ. Ա. Թղ. Յոբ. 283.—«Եթէ լինիցի ինչ լաւութիւն, շահեսցուք եւ մեք եւ դուք». անդ. Դ. գ. Յուդ. 27.—«Դու եւ որդիք քո եւ տուն նահապետութեան քոյ ընդ քեզ առնուցուք զմեղս սրբութեանցն». Թիւք. ԺԸ. 1.—«Եւ դու եւ որդիք քո ընդ քեզ պահեսջիք զքահանայութիւն ձեր». անդ. 7: Բայց արտաքսութեամբ՝ երբեմն բայն համաձայն կը դրուի մերձաւոր դիմին (Չրգ. Քեր. Ե. 259, յ. 564), ինչպէս ի կիլիկ. վկայութիւնս Ագաթ. եւ Բիւզ., ուր մի եւ նոյն գրիչն յայտնի կը տեսնուի, դու եւ մեք, դուք եւ մեք։ Նման արտադրութեամբ կը գտնենք ուրեք ուրեք եւ ի թարգմանութեան Աստուածաշունչ մատենին. «Բայց ի սպասն իմ ի սուրբ եւ ի սեղանն մի մերձեսցին, զի մի մեռանիցին եւ նոքա եւ դուք». Թիւք, ԺԸ. 3.—«Վաղը դու եւ որդիք քո ընդ քեզ անկցին». Ա Թագ. ԻԸ. 19.—«Դու եւ մեծամեծք քո, հարճք քո եւ կանայք քո ըմպէին նոքաւք գինի». Դան. Ե. 23:

79

ԱԳԱԹ. ա. «Եւ մինչդեռ երանելին սուրբն Հռիփսիմէ խաւսէր զայս ամենայն». 154—155. (համեմատէ ընդ Յհնաշ «Երանելոյն սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի». Դ. 23, ի վեր նազրին. եւ յայլ հնգետասան վերնագիրս, Է—Թ, ԺԲ—ԻԳ.):

բ. «Եւ ամպեցայց զսուրբ զերանելին Հռիփսիմէ ընկերաւքն համերձ ի ձեռաց պղծութեանն եւ յանպարկեշտութենէն». 174.—«Վասն մահուան այնոցիկ սրբոց երանելեացն, որոց արիւն նոցա հեղեալ է (Զ. խոկ. ապ.՝ հեղեալ 'ի) յերկիր ձեռամբ». 185: Այսպէս. «Զի ժողովեալ ի յիշատակ մեծի երանելւոյն Յովհաննու,... յայնմ աւուր խմբեցեն ի նմին յաւանի». 623:

ԲՈՒԶ. ա. «Այլ երանելին սուրբն Եպիփան էր ընդ սրբոյն Գաղիպայի աշակերտ եղեալ մեծին Դանիէլի». Ե. ԻԷ. 221:

բ. «Զգածեալ եղեալ ջախջախեալ քահանայապետն Աստուծոյ սուրբ երանելի (այս. Աստուծոյ սուրբ երանելին) մանուկն Յաւսիկ». Գ. ԺԲ. 32:

[Ա Դաս]† ա. «Քանզի բաւական էր եւ ողջոյն միայն երանելւոյն եւ սրբոյ (Պաւղոսի) ցուցանել բազում շնորհաւք դոյն որ զողջոյնն ընդունիցին». Ոսկ. Բ Տիմ. Ժ. 270. (այլազգ յՈսկ. Մատթ. «Եւ եթէ չիցէ ուրուք յայն խորանս հանգչել (վանականնացն եղիպտոսի), զմտաւ ածցէ... զերանելին եւ զմեծն զԱնտոնիոս». Ա. ը. Յորդ. 122. համեմատէ ընդ վերջին վկ. Ագաթ.)։

—ԳԻՏ. Երկրորդ ասացուածդ սուրբ երանելի կը գտնուի եւ յերրորդ Դասի. «Իսկ սուրբն երանելին (Յոհ. Թեզրացի) իբրեւ եսես զայրն, սկսաւ աւետիս տալ, եւ ասէ». Վարք Յոհ. Թեզր. 99.—«Բազումք ի նոցանէ... զաւրութիւնս առնէին որպէս սուրբ երանելի մարգարէքն եւ Առաքեալքն». Պատմ. Հար. Եգիպտ. 209.—«Սկիզբն արասցուք պատմութեան զսրբոց զերանելեաց զմեծաց միայնակեցաց զկարգ վարուցն». անդ, 210։ Այլուր. «Տեսաք... զմեծն զերանելին Յոհաննէս, այր սուրբ ճշմարիտ». Վարք Յոհ. Թեզր. 97. զոր համեմատէ ընդ Ոսկ. Մատթ. եւ ընդ վերջին վկ. Ագաթ.։

80

ԱԳԱԹ. «Եւ քարինս վարեցին ընդ գոգն նորա, եւ ի վայր վայթեցին (ի վայր թափեցին՝ ըստ Զ) զաղիսն նորա». 155։ Իսկ յերես 162—163, փոխանակ ի վայր վայթեցին զաղիսն՝ կ'ըսէ. «Եւ վարեցին եւս քարինս ընդ գոգս նոցա, եւ ցրուեալ զաղիս նոցա յորովայնիցն ընդ գոգս նոցա»։

ԲԻԻԶ. «Եւ որչափ ի վայր վայրէին ոսկերքն, նա յիւր ծոցն ժողովէր բովանդակ զամենայն զոսկերս սանին». Դ. ծթ. 179. (առ. կը ծանուցանէ թէ Զ մի ունի ի վայր վարէին։) Այլուր. «Ուղիղ գլխոյն ի ցբտոյն վայրեալ՝ ի բաց ինչեալ՝ թափեալ էր ընդ քիթս նորա». Ե. գ. 191. (համեմատէ «Ուղիղ գըլխոյն վայրեալ»=«Իսկ մի ումն ի զինուորացն մատեալ եհար զփաղերր զգլուխն Երուանդայ, եւ ցրուեաց զուղիղն ի յատակս տանն». Մ. Խոր. Պատմ. Բ. խգ. 266։)

—ԴԻՏ. Հին Ձեռագրաց մէջ Թ եւ Բ նշանագրաց նմանութեան պատճառաւ՝ կարծեմ թէ ընդօրինակութեան սխալ մի կայ ի կրկնակ գրութիւնս ի վայր վայթեցին եւ ի վայր վայրէին. բայց դժուարին է որոշել թէ ո՛ր է ուղիղն, զի Վայթիմ

մեցաւ զնա չարաման առնել»։ Դ. ե. 87.—«Ձկասակ սպարապետն Հայոց չարաման հրամայէր առնել»։ ծդ. վերնագիր. 165.—«Եւ բազում բերդակալս բերգացն չարամանս առնէին»։ Ե. ա. 188։

բ. «Ցալագս... չարաման լինելոյ տիկնոջն Փառանձեմայ»։ Դ. ծե. վերնագիր. 169։ Այլուր մակբայօրէն. «Ցետոյ եւ ինքն չարաման ծակոտեալ ելանէր մեծաւ տանջանաւք յաշխարհէ»։ Գ. ժ. 25.—«Չարաման սպանանէին զամենեսեան»։ Դ. ծթ. 178.—«Գրեալ էր... հրաման առ նա, զի չարաման սատակեսցէ զՀայր մարդպետն»։ Ե. գ. 191։

=ԴԻՏ. Կայ մի անգամ յերկրորդ Դասի Չարաման ածական. «Ասաց Տէր վասն նոցա, թէ զման չարաման մեռցին ի սովու»։ Զպաւն, ժէ. 299։

85

ԱԳԱԹ. ա. «Որ միանգամ (ի Հոռոմոց աշխարհէն) միաբանք եկին հասին յերկիր Հայաստան աշխարհին, աւելի էին քան զեւթանասուն մարդ»։ 163։

բ. «Արդ գթա յալալածս քո, քոյով բարերարութեամբ շնորհաւքդ եւ առ երկիրս Հայոց աշխարհիս»։ 84։

ԲԻԻԶ. ա. «Ցաղագս որ ինչ յետ քարոզութեանն Թադէոսի Առաքելոյ յերկիրն Հայաստան աշխարհին»։ Գ. ա. վերնագիր. 5։ Այլուր. «Եւ եդին զնա առ եկեղեցեաւն, զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի՝ հաւուն Գրիգորիսի, քահանայապետին մեծի՝ աշխարհին Հայաստան երկրին»։ Գ. գ. 15.—«Ժողովեցան հասին կուտեցան առնուլ զաշխարհն Հայաստան երկրին»։ ժա. 26.—«Ժողովեցան ի մի ժողով միաբանութեամբն մարդիկ աշխարհին Հայաստան երկրին»։ իա. 54։

բ. «Եկն անց (Սանէսան) ըստ իւր սահմանն ըստ գետն մեծ ըստ Կուր, եւ եկն տարածեցաւ ելից զերկիրն Հայոց աշխարհին»։ Գ. է. 15. (տպ. ընդ գետն մեծ ընդ Կուր. զոր տես ի Բիւզ.=Մկբ. թիւ 3։) Ըստ այսմ եւ այլուր. «Ցերկրէն յաշխարհէն ծենաց եմք լեալք թագաւորք ի բնութենէ»։ Ե. լէ. 241։

Տես եւ «Հայաստան աշխարհ» ի Կոր.=Ագաթ. թիւ 1։

Առաջին անգամ Հ. Արսէն Բագրատունի տուած է զուղիղ մեկնութիւն *Պառական* բառիս յիւր Ջրգ. Քեր. ե. 48, յ. 104. «Ան. գատ. դատան . . . ։ Այսպէս է եւ *պառական*, այսինքն բարակք որսականք, չարք կամ երամ բարակաց». յորմէ եւ Առձեռն Բառարանի երկրորդ տպ. «Պառական. որսի շներ». մինչդեռ Նոր Հայկազեանն սխալ հասկացած է «երագազ. ուռկան որսորդաց էրէոց՝ իբրեւ փարախ շրջափակ».—reti, այս ինքն՝ ցանցս, կ'ըսէ եւ իտալական Թարգմանութիւնն Ազաթանգեղի հրատարակեալ ի Ս. Ղազար, 100.—«ուռկան» եւ Ջախջ. ի Հայ.—Իտալ. Բառարանին.—նոյնպէս եւ Չագըճեան ի Բարբառարանին՝ Թուրքերէն *Թօր*, ցանց, ուռկան։[1] Իսկ Հ. Սրապիոն Էմինեան յիւրում Գաղղ.—Հայ. Բառագիրս՝ գյոգնակի *Պառականն* կ'առնու իբր եզակի բառ, Որսոյ շուն. «Levron. Ազգ ինչ փոքրիկ *պառականի*». «Limier. Հետախոյզ *պառական*». եւ այլն։—Բիւզանդ ունի եւ *Պառակիմ* բայ, որ թուի նշանակել՝ որսական շներով հետազօտել կամ որոնել զանասունն. «Աստ. Արջ մի տեսի սպիտակ իբրեւ զձիւն։ Եւ հրապուրեաց զմարդպետն իջանել ի կառաց անտի, եւ հեծանել ի նժուգի. եւ մտեալ *պառակէին* մայրեացն». Դ. ժդ. 115։ Թովմա Արծրունի, 66, առեալ ի Բիւզանդայ՝ այսչափ ինչ միայն կ'ըսէ. «Եւ առեալ զնա մտանեն ի մէջ մայրեացն»։

89

ԱԳԱԹ. «Եւ դու ուրեմն մոլեգնեցար. դեւ ուրեմն *հարաւ ի քեզ*». 166։

ԲԻՒԶ. «Մոլիս դու. դեւ ուրեմն *հարաւ ի քեզ*». Զ. ը. 267։

[Ա Դաս]† «Իբրեւ տարան ի ներքս (զներքինին), ասէ արքայ. Դեւ *հարաւ ի քեզ*, զի զայդ եւս առնես Թագաւորութեանս իմոյ». Մար. Պատ. Արեւ. Վկ. 33։

90

ԱԳԱԹ. «Արդ իբրեւ *տեսանէին* զնոսա *ի բացէ*՝ զի գային Գրիգորիոս Աւետային հանդերձ». 168։

1. Եթէ Պառական նշանակէր Ցանց, Ուռկան, Ագաթանգեղ չէր ըսեր «ածել կուտել», այլ «ընկել կուտել». տես յԱգաթ.—Մկր. թիւ 42, «ընկել կուտել զգիակունս»։

92

ԱԳԱԹ. «Զի պահեաց զնա զաւրութիւն Ամենատեառն Քրիստոսի». 175—176.—«Աստուածագէտս յարդարեաց բիւրապատիկ սքանչելեաւքն Ամենատէրն Քրիստոս զսիրելի աշակերտսն իւր». 527։ Այլուր. «Նաւաջնորդ ասաեղն (աստեղքն?)՝ մոգուցն պատարագաւք յայտնի Ամենատեառնն տէրութիւն». 287։ Տես Ամենատէրն եւ 172, 243, 263, 290, 304, 568, 573, 649. իսկ 176 եւ 495, Տէր կամ Տէրն ամենայնի։

ԲՈՒԶ. «Զի կացցէ ի տեղի նախնեացն իւրոց եւ հաւր իւրոյ, եւ գործ քաջութեան գործեսցէ Ամենատեառնն Քրիստոսի». Գ. ժա. 28. իսկ Դ. ժգ. 111, Տէր ամենայնի Քրիստոս։ Այլուր. «Զի . . . զԱմենատեառնն տէրութիւնն գիտասցուք». Դ. ե. 83։

(Կոր. «Ոչ վասն անձին Ամենատէրն, այլ համաշխարհի յուսումն դայն գործէր». 24։ Իսկ յերես 3, «Զորոց եւ Տէրն իսկ ամենայնի՝ բերանալիր գոչէր (Նոր Հայկզ. ի Բերանալիր՝ գովէր) զաղնուականութիւնսն»։)

=ԴԻՏ. Ամենատէրն Քրիստոս եւ Ամենատեառնն տէրութիւն չկան ի գիրս միւս Դասուց, այլ լոկ Ամենատէրն. Սեբեր. ԺԱ. 200. Պամ. Թեկղի, 513. Բրս. Վեց. Բ. 37. Գ. 63. Դ. 72. իսկ զոր կը նշանակէ Նոր Հայկզ. «Գեղեցիկ աւրհնութիւնս Ամենատեառն մատուցանէր». Աթ. Անտ., ի տպագրին է «Իսկ Անտոնիոս գեղեցիկ գոհութիւն Տեառն Աստուծոյ մատուցանէր». 22։ Առաջին Դասուն սովորականն է Տէրն ամենայնի. Եզնիկ, 269, 270. կամ Ամենեցուն, ամենեցունց Տէրն. Իմաստ. Զ. 8. Ը. 3. Սեբեր. Ը. 146. Ոսկ. Մտթ. Ա. 158. Բ. 588. Նոյն, Կողոս. Ա. 533. Ե. 575. եւ այլն։

93

ԱԳԱԹ. «Ապա եթէ ոչ կամիցիք լսել քարոզութեան բանին կենաց, աստէն հարեալ վրիժուքն չարաչար հարուածովք զձեզ սատակեսցէ». 181.—«Ապա ընթացան (Առաքեալքն) ընդ տիեզերս ամենայն մինչեւ ի ծագս երկրի, լի առնել զքարոզութիւն բանին կենաց». 517.—«Մտերմութեամբ հասեալք լի-

զայր մի *երեւեալ*». 244—245.—«Եւ *քանզի* բազում անգամ *ւաւանդեալ* ի լսելիս աւրինականացն զչարչարանսն, եւ զերրորդ աւուրն զյարութիւնն,... յառաջագոյն ժամադիր առնէ ի յարութիւնն». 355.—«Եւ *քանզի* յառաջագոյն վկայութիւն եղեալ Հոգւոյն Սրբոյ տանն Իսրայելի, եւ ուխտ եղեալ քրիստոսամուտ գալստեանն,... *եկեալ* այնուհետեւ ի դատաստան կոչել զերկինս եւ զերկիր». 369—370.—«Եւ *քանզի* ոչ *կարացեալ մարդկան* բառնալ զլուծ պատուիրանաց արդարութեանն, վասն այսորիկ անկան ընդ կարեւք մահու մեղացն». 439—440: Այլուր. «*Զի* յորոյ երեսաց զկենդանութիւնն *ընկալեալ*, նախ քան զամենայն զնա ետես». 209.—«Խնդութեամբ ժողովեալ՝ զաւր տանելին խըմբեցեն. *զի* նախ անդ սկիզբն *ալարեալ* չինել զեկեղեցին». 611: Այլուր. «*Վասն զի* ոչ կանխեալ *գիտացեալ ծեր* զարժանն, վասն այսորիկ ած զարժան գաւազանն ի վերայ». 615:

ԲԻԻՋ. «Ապա Թագաւորն Պարսից, *քանզի* զայս *լուեալ* ի քաւզէիցն, տաճիկ ուղտուք արձակէ ի Հայս արս ղհոզոյ եւ գջրոյ». Դ. ծգ. 166:

ՄԿԲ. «Ժողովեցան զաւրքն ի վերայ Լիւսիմաքեայ, *քանզի* բազում նուագս ոսկիս *կորուսեալ* ի միջոյ համարուէն». Բ. դ. 39:

=ԴԻՏ. *Քանզի առեալ*, *դարմանեալ*, *Քանզի* ոչ *կարացեալ մարդկան*, *Վասն զի* ոչ *գիտացեալ ծեր*, փոխանակ դիմաւորին՝ որ սովորականն է. *Քանզի առի*, *դարմանեցան*, ոչ *կարացին մարդիկ*, ոչ *գիտացէք դուք*. (տես եւ ի Կար. =Ազատ. գլխում 61 եւ 54, ԴԻՏ. եւ աստէն գլ[?]ին 9:) *Քանզի* շաղկապի հետ անցեալ դերբայ՝ կը գտնուի ուրեք ուրեք եւ յԱռաջին Դասի. «Տուընջեամբն յորդորէ ի նոյն (ի հաշտութիւն՝ Պաւղոս). *քանզի կասկածեալ* (փ. կասկածէ) իմն ի գիշերոյն, գուցէ առեալ զզայրացեալն՝ եւս բորբոքիցէ». Ոսկ. Մատթ. Ա. ժգ. 259. (Նոյն բան կը գտնուի առանց *քանզի* շաղկապի յՈսկ. Եփես. ԺԴ. 820, այսպէս. «*Կասկածէ* ի գիշերոյն երանելին Պաւղոս, թէ գուցէ առնուցու զզրկեալն... գիշերոյն պաքապութիւն, եւս քան զեւս զհուրն (տպ. հուրն) բորբոքիցէ».)—«Ոչ այնպիսի ինչ չտայ ճանաչել զանձն՝ որպէս ընդ երկրաւորաս բեւեռել. եւ ոչ ինչ դարձեալ բեւեռեալ ընդ երկրաւորս կազմէ՝ որպէս չգիտել զանձն. *քանզի* միմեամբք *մխեալ* (փ. մխին) երկոքեան».

զէն բնութեանն՝ զանզբաւական (Ջ. իսկ տպ.՝ զանբաւական) զկեանսն *միասնական* վայելեցուցանէ (իւրոց սիրելեացն)». 537։

ԲԻԻՋ. «Եւ ուսեալք զհաւատսն *միասնական* սուրբ *Երրորդութեանն*, եւ ապա մկրտէր իբրեւ հազարս երկուս». Գ. գ. 8. (համեմատէ ընդ երկրորդ վկ. Ցճխ. ի վեր անդր։)

=ԴԻՏ. *Միասնական Երրորդութիւն* անծանօթ է միւս Դասուց. կայ միայն ի Սեբեր. Ա. 7, «*Մի էութիւն* սուրբ *Երրորդութեանն* դաւանեմք»։ Բայց առ ի նշանակել զհաւատաբութիւն այլ եւ այլ անձանց Երրորդութեան՝ երիցագոյն Թարգմանիչք ունին կերպակերպ բացատրութիւնս եւ բառս, զդ. Consubstantiel բառի մօտք։ Այսպէս յԱռաջին Դասի. «*Ի միոջէ էութենէ* Հայր է Որդի եւ Հոգին Սուրբ». Սեբեր. Ա. 7.—«Եւ զի Որդի է Միածին եւ ճշմարիտ, եւ անդստին *ի նմին էութենէ*». Ոսկ. Մատթ. Ա. ա. 6.—«Զի զՀայր գիտեմ, եւ *ի նորին էութենէ* եմ». անդ, Բ. ժգ. 576.—«Որպէս մարմին մի է, նոյնպէս եւ Քրիստոս եւ Հայր *մի էութիւն* (կամ *միէութիւն*), թէպէտ եւ երկու անձինք». նոյն, Եփես. Ի. 886.—«*Ի միասին էական* է Հայր (Որդի)». Սեբեր. Բ. 18.—«Այլ ի դիմի հարկանի հերձուածողն. Իսկ դու ընդէ՞ր ասիցես, ասեն, զ[*ի*] *միասին էականն*, որ չէ գրեալ... ։ Ի բաց առ դու նախ զաւտար *էականն*, զի մի՛ ի դիմի հարկանիցի քեզ *ի միասին էականն*. իսկ եթէ ասիցես զաւտար էականն, հարկ է՝ զի ի դիմի բախիցէ քեզ *ի միասին էականն*... քանզի *ի միասին էական* է անուն Հայր եւ Որդւոյ». անդ, 20.—«Զի յայտ արասցէ՝ եթէ *ի միասին էական* Հայր է (Որդի)». Ոսկ. Ես. ԾԳ. 394.—«Ուսուցանէր (Անտոնիոս) զժողովուրդսն եւ ասէր՝ եթէ Հաստատած ոչ է Որդին Աստուծոյ, եւ ոչ արարած, եւ ոչ ի չգոյէ եղեալ, այլ *ի Հայր էութենէ* եւ *ի բնութենէ* է Բան եւ իմաստութիւն... քանզի միշտ էր Բանն *էակից* Հայր». Աթ. Անտ. 64.—«Յայտ է թէ եւ Հոգին Հայր՝ նորա *բնակից* է... զՀոգին՝ զիւր *բնակից*՝ ետ ի կենդանութիւն մեռելութեան աշխարհի». Ոսկ. Ես. ԺԱ. 132.—«Որդի՝ որ նորին (Հոգւոյն) *բնակից* իսկ է». անդ, 133։ Իսկ յՈսկ. Մատթ. Գ. գ. 9, «Հաւասար նորին է (Որդի՝ Հայր) ամենեւին յամենայնի, եւ *համազոյ* եւ համապա-

տիւ», ճառընտրաց աղաւաղութիւն թուի ինձ թէ *Համազոյ*[1] եւ թէ *Համապատիւ*. (փոխանակ վերջնոյս՝ Մատթէի Մեկնութեան թարգմանիչն կ՚ըսէ այլուր *Հանգիտապատիւ*. նոյնպէս այլ Թարգմանիչք սոյն Դասուս։)—Երկրորդ Դասն կ՚ըսէ հանգոյն Առաջնոյն. «Ոչ է *էակից* նորա, այլ յաւելուած իմն լինին». Եփր. Համար. 138.— «Սոյնպէս ոչ գոյ ասել Հոգւոյն Սրբոյ ոչ եթէ որդի Նա, եւ ոչ եթէ քոյր, այլ ի նմանէն եւ *ընակից* նորա». անդ, 207։ Իսկ այլուր՝ «Ապա եթէ պատուաստի ի նա, լինի նա այնուհետեւ ի նմանէն *գոյակիցն* նորա հանդերձ ատարացեալ էութեան նորա». անդ, 138։—Երրորդ Դասն. «Հաւատամք . . . ի մի Տէր Յիսուս Քրիստոս, . . . Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, ծնեալ եւ ոչ արարեալ, *իսկակից* Հայր». Սահակայ եւ Մաշտոցի Պատասխանի Թղթոյն Պրոկղի, 140. (առեալ յՆւագրէ, ուր ասի « *միազաւր* Հայր». տես Հ. Յ. Գաթըրճեան, *Հանգանակ* հաւատոյ եւ այլն, ե. 22։) Սոյն Դասուս յատուկ է եւ *Իսկութիւն* (=*Էութիւն*)՝ որ կը գտնուի բազում ուրեք ի Կիւր.Կոչ., ի Բրս. Վեց., յՈսկ. Յոհ. (ստէպ եւ յԱգաթ. կայ եւ ի Բիւզ. եւ ի Յճխ.)։—*Բնակից* եւ *Իսկակից* կան եւ առ Բիւզանդայ, Դ. ե. 84. «Ամենայն ազգք (տպ. ազգ) եւ ազինք խոստովանին զՏէր Յիսուս Քրիստոս ծնեալ ի Հայրէ, ծնեալ եւ ոչ արարեալ, *իսկակից* Հայր եւ *ընակից* ծնողին իւրում». (տես վերագոյն ի Թղթին Սահակայ եւ Մաշտոցի, *ծնեալ եւ ոչ արարեալ, իսկակից Հայր*։)

97

ԱԳԱԹ. «Եւ անդէն ընդ ասելն Հաւրն արարչութեան *ցարարչակից* Որդին եւ ցհամագործ Հոգին». 196.—«Արդ՝ Հայր Արարչի խորհուրդ ի մէջ առեալ ընդ *արարչակից* Որդւոյ եւ

---

1. *Համազոյ* Երկրորդ Աշակերտաց բառ է. յորմէ եւ *Համազոյակից*. «Յորժամ զհնազանդելն *համազոյակցին* առ Ամենահայրն՝ հասցէ իմանալ Որդւոյ մարդկութեանն մինչ ի քեզ հնազանդեցելոյ». Դ. Անյաղթ, Ներբ. ի Սուրբ Խաչն, 119։ Զթերի պատառիկ մի Ոսկեբերանի ի Մեկնութեանն Բ Տիմ. Գ. 195, ծան. 1, սոյն բառիւ թարգմանած է Հ. Ներսէս Սարգսեան. «Եւ այս *զհամազոյակից* բնութիւնսն յայտ առնէ, և ոչ դայլեայլութիւն բնութեանց»։ Տես զիմ դիտողութիւն ի Հայկ. *Բառաքնն*, ե. 46—47։

թիւնն) յառաջին նախնեացն» 320։ Այլուր. «Վասն զի եւ զմեր զնախնիսն զառաջին հարսն զթագաւորսն դառնացուցեալս ձանձրացուցին». 124։

ԲՒՒԶ. «Ամենայն նախնիքն մեր առաջինքն անկան ի պատերազմունս ի վերայ ձեր». Ե. լէ. 240։

108

ԱԳԱԹ. «Վասն որոյ եւ քահանայապետ ազգին տիրասպանաց՝ ակամայ մարգարէացաւ». 340։ Այլուր. «Կամակոր ազգին խաչահանուացն». 358։

ԲՒՒԶ. «Առ ձեռում անմտութեան՝ տիրասպան ազգին խորհրդոյն հաղորդեցայք Հրէիցն». Գ. ժդ. 39։

109

ԱԳԱԹ. «Ազդ առնէր բարձրաձայն, հանդերձ ահաւոր նշանաւքն տուեալովք, թէ եւ ի հրաժարելն միակամ միաբանութեամբ»

ԱԳԱԹ. «Ազդ առնէր բարձրաձայն, հանդերձ ահաւոր նշանաւքն տուեալովք, թէ եւ ի հրաժարելն միակամ միազործ է ընդ Հաւր». 352։

ԲՒՒԶ. «Ցերկրին Տարաւնոյ (տպ. Տարօնու), ուր նշանաւքն եղելովք կործանեցան բագինք մեհենիցն». Գ. գ. 7.—«Կամ զիմրդ կայսրն Վաղէս սատակեցաւ նշանաւքն եղելովք յԱստուծոյ». Դ. ժ. վերնագիր. 100։

110

ԱԳԱԹ. «Վասն որոյ եւ դիշերի արարեալ գլուսաւոր յարութիւնն, զի պահ արկելոցն եւ զգուշացելոցն (տպ. եւ Զ.՝ պահարկելոցն եւ դուշակելոցն) ծանուցէ զճշմարտութիւն իրացն կատարելոց». 356։

ԲՒՒԶ. «Եւ ինքեանք զգուշացեալք զսահմանաւք (տպ. սահմանօք) երկրին իւրեանց, պահ արկեալ պահէին մեծաւ զգուշութեամբ». Դ. իե. 145։

=ԴԻՏ. Կայ յԱռաջին Դասի Պահ արկանեմ շուրջ (զոմամբ). «Ամենեքին եկեսցեն ի վերայ քո ի հիւսիսոյ, ... եւ արկցեն շուրջ զքեւ պահ». Եզեկ. ԻԳ. 24.—«Ձցայդ պահ արկցուք զմեւք շուրջ, եւ զցերեկ գործեսցուք». Նեեմի, Դ.

ընցաւ զանցաւորս՝ այլ զվերինն», իմա՝ զերկնաւորն. համեմատէ. «Զվերինն խորհեցարուք, մի զայս որ յերկրի աստ է». Կողոս. Գ. 2։

116

ԱԳԱԹ. «Որպէս միանգամ մոկնեցաւ առակն յաւուրս Նոյեան[1] դարին». 412։

ԲԻԻԶ. «Մեծաւ տենչանաւք աղաչէր (Յակոբ Մծբնայ) զԱստուած՝ տեսանել զփրկական տապանն Նոյեան շինուածոյն». Գ. Ժ. 22.—«Ապա իբրեւ գայր բերէր այրն Աստուծոյ... զնշանակն հայրենի գործոցն զՆոյեան տապանին». անդ, 23.—«Որ մինչեւ ցայսաւր նշանակ ոքանչելութեանն կայ պահեալ առ նոսա, երեւոյթ փայտն հայրապետական Նոյեան տապանին». անդ։

117

ԱԳԱԹ. «Եւ դարձեալ զարդարութիւն յերկրի խոստանայ գտնել,... եւ զիրաւունս ծաղկեցուցանել». 413։

ԲԻԻԶ. «Իրաւունք եւ արդարութիւն ծաղկեալ էին ի գաւառն յայնմ». Գ. գ. 7։

118

ԱԳԱԹ. «Նօրօգեցան ի փառս անպատումս, եւ զերծան յանպիտոյիցս (Զ. իսկ տպ.՝ յանպիտոյիցն)». 418.—«Իսկ զանպիտոյսն այրեսցէ». 435։ Այլուր կ'ըսէ Պիտոյ եւ Անպիտան. «Զի լոյսն ի լուսաւորել զպիտոյսն, եւ հուրն՝ այրել զանպիտանսն բարկութեամբն». 408։

ԲԻԻԶ. «Եւ այնչափ խորշել եւ մերժել յանպիտոյիցս (տպ. եւ մերժել եւ յանպիտոյիցս), մինչեւ զկերակուրս աւուրն ռոճկին արհամարհել». Դ. Ե. 84։

—ԴԻՏ. Կայ յԱգաթին Դասի Չպիտոյ, Չպիտանի. «Եթէ վասն ըոյզն ինչ եւ կարեւոր իրաց չիցէ պարտ հոգալ, որչափ ներելոյ եւ թողութեան լինիցին արժանի՝ որք վասն մեծամեծաց ինչ եւ չպիտոյից հոգայցեն». Ոսկ. Մատթ. Ա. էր. 346.—«Պա-

---

1. Յոհ. Մանդակունի, ճառք, Գ. 33, գրած է Նոյական։

ըեւորքն յանփոյթութեան են, եւ չպիտոյքն ի բազում խնամակալութեան». անդ, Գ. գ. Ցորդ. 26.—«Ի փառաց ոք արկ (գքեզ). ոչ եթէ յԱստուծոյ փառացն, այլ ի չպիտանեացս». նոյն, Փիլիպ. ԺԴ. Ցորդ. 506։

119

ԱԳՍԹ. «Առ հասարակ եւ զմոլորութիւն կռապաշտութեան ջնջել եւ ի բաց կորուսանել». 421.—«Զնախնական կարգս մոլորութեան ունայնութեան կռապաշտութեանն հայրենեացն, զոր Աստուած ի ձեռն դորա խլեաց եւ եբարձ ի միջոյ». 599—600։ Այլուր. «Կռապաշտութեանցն մոլորութիւնք, որ ի նախնեացն հետէ մոլորեալ դանդաչեցին». 384։ (Ի վերջին երկու տեղիսդ՝ տպագիրն ունի սովորութեան, սովորութիւնք. պատշաճ թուեցաւ ինձ փոխել մոլորութեան, մոլորութիւնք ըստ առաջին վկայութեանն յերես 421, եւ ըստ Բիւզանդայ։ Համեմատէ եւ ընդ յաջորդիդ՝ որ է յեզնըկայ, 231. մոլորութիւն դիւապաշտութեանն։ Նա եւ յայլ գիրս նախնեաց Մոլորիմ, Մոլորութիւն, եւ Սովորիմ, Սովորութիւն, այլ ընդ այլոյ գրեալք են։)

ԲՒԻԶ. «Եւ դուք դարձայք ի մոլորութիւն կռապաշտութեան նախնեացն ձերոց . . . եւ ի մոլորութիւնս ձեր անծանաւթք եղերուք դուք ի նմանէ». Գ. ժզ. 38—39։

120

ԱԳԱԹ. «Կենդանւոյն ի դժոխս յուղարկեաց զՂեւոնդացիսն՝ որ իշխեցին յընչաց քերել եւ արհամարհել . . . զՄովսէս». 423։

ԲՒԻԶ. «Եւ նշանակիր մի Մերուժանայ (տպ. ի Մերուժանայ) իբրեւ ետես զԱրտաւազդն, յընչաց քերեաց[1]. զի տեսանէր զնա պատանեակ մի կայտառ անմուրուս». Ե. խզ. 254։

---

1. Տպ. յընչացք եբաց. այսպէս եւ Նոր Հայկզ. ի բառն Ունչ[ք], ուր կը գրէ «Ցընչացք բանալ», եւ ի շարի վկայութեանցն՝ «յընչացք (կամ ընչացք) եբաց»։ Սոյն օրինակ եւ Գեր. Այտընեան, ՔՆՆ. Քեր. ե. 78, ծան. 34, որ եւ կ'ըսէ. «Հայոց ընտանեկան ոճերէն եղած կ'երեւայ՝

էին, եւ չասէր ոք զիւրաքանչիւր ընչից թէ իւր սեպհական իցէ». անդ, 887։

=ԴԻՏ. Ազաթանգեղին «ժողովուրդ ճեռական» ի Սուրբ Գիրս կ'ըսուի ամէնուրեք «ժողովուրդ սեպհական». Բ Օր. Է. 6. ԺԴ. 2. Ա Պետր. Բ. 9. Տիտ. Բ. 14։ Նոյնպէս եւ ի Պատմ. Հայր. Եգիպտ. 231. եւ այլն։

124

ԱԳԱԹ. «Զոր եւ յառաջավաստակ մշակացն մարգարէիցն՝ զկնի գալոցս դաւանեալ զայս զլինելոցս ամենայն ազգաց». 454։

ԲՒԻԶ. «Զի սիրելի էր աշխարհին պատուել... զյառաջեպիսկոպոսն զնախավաստակն Գրիգորիս». Գ. ժդ. 36—37։

125

ԱԳԱԹ. «Որպէս եւ ինքն Տէրն խաւսի զհանդերձելոցն բերանովք մարգարէիցն». 455.—«Այլ Հոգին Աստուծոյ ի վերջերորդիս երեւեցաւ լնուլ զյառաջաձայն խաստմունս իւր՝ զասացեալս բերանովք մարգարէիցն (տպ. մարգարէին)». 500։ Այլուր. «Ապա յիրաւի ուրեմն ասէ նոյն Հոգի ի բերանոյ մարգարէին յառաջագոյն». 495։

ԲՒԻԶ. «Գիտես, ով թագաւոր, վասն այսր ամենայնի ասացեալ է կանխասացութեանն Աստուծոյ բերանովք մարգարէիցն». Գ. ժգ. 111.—«Բերանով մարգարէին». ժե. 120։

=ԴԻՏ. Կայ ի Ղուկ. Ա. 70. «Որպէս խաւսեցաւ բերանով սրբոց՝ որ յաւիտենից մարգարէքն նորա էին». որ ի ձեռս Սեբերիանոսի թարգմանեալ է. «Որպէս խաւսեցաւ ի բերան սրբոց իւրոց մարգարէից». Գ. 45. Թ. 158. Գ. 33. տես անդ եւ «Աղբիւրն իմաստութեան՝ որ ի բերան Դաւթի ասէր». Թ. 159։ Այլուր. «Պարտ էր կատարել գրոյն, զոր յառաջագոյն ասաց Հոգին Սուրբ ի բերանոյ Դաւթի վասն Յուդայի». Գործք Առաք. Ա. 16. եւ ի բերանոյ մարգարէից. անդ, Գ. 18, 21։

126

ԱԳԱԹ. «Ի խեցակոյտ եւ ի խեցակարկառ ի կպրաչաղախ աշտարակն (Բաբելոնի) ապաւինեալք». 462։

—ԴԻՏ. Փոխանակ Բիւզանդայն *Թափ անցանել* (նետի)՝ կայ յԱռաջին Դասի. «Եւ ընդ գիրկս եմուտ, եւ եհար զՑովրամ ընդ մէջ *թ*իկանց նորա, եւ *ել* նետն ընդ սիրտ նորա». Դ Թագ. Թ. 24։

129

ԱԳԱԹ. «Արդ ոչ *զլրաղատ ինչ* զայն դաւսութիւն ծառոյն հասուցանէր». 488։

ԲԻՒԶ. «Զի մի բնաւ (տպ. զնա) բանադատ *զլրաղատ ինչ* երեւեսցի յաղթութիւնն». Դ. ը. 96։

130

ԱԳԱԹ. «Եւ *խոնարհագոյն* եւս ասէ, թէ Հեղից ի վերայ տանն Դաւթի եւ ի վերայ տանն Երուսաղեմի զոգի շնորհաց». 496։

ԲԻՒԶ. «Եւ *խոնարհագոյն*՝ յայտնագոյն ասնէր դասացեալսն. Զի ինքն է անդրանիկ ի մեռելոց». Դ. ե. 83։

—ԴԻՏ. *Խոնարհագոյն* է Փոքր մի զկնի. գզ. Plus bas, Plus loin. Առաջին Դասն կ'ըսէ *Խոնարհագոյն իջեալ*, *Իջեալ ի խոնարհ*. «Որ ասացն, թէ Որ մեղանչէ՝ չէ յԱստուծոյ, *խոնարհագոյն* եւս *իջեալ*՝ ասէ նոյն. Եթէ ասեմք, եթէ ոչ մեղաք, ստեմք». Սեբեր. Ե. 90.—«Այլ ես ոչ այսպէս ասեմ. զի եթէ այս այսպէս էր, զիա՞րդ *իջեալ խոնարհագոյն*՝ զկանայսն որ նման նմին էին՝ յիշէր». Ոսկ. Մաթ. Ա. գ. 33.—«Զի եւս հաստատագոյնս յայս արասցէ, *իջեալ* փոքր մի *ի խոնարհ*՝ [ասէ]. Սոքա են աչք Տեառն որ հային ընդ ամենայն երկիր». Սեբեր. Է. 126—127.—«Եւ զի հաստատութեամբ ուսանիցիս, . . . սակաւիկ մի *ի խոնարհ իջեալ*՝ զնոյն աւրինակ ի կիր արկանէ». անդ, Թ. 160։ Այլուր. «Զի թէպէտ *Եւս յառաջ կոյս* ասիցէ, թէ Զինչ լսէք յունկանէ՝ քարոզեսջիք ի վերայ տանեաց, այլ եւ ոչ այս ընդդէմ ինչ իցէ առաջնոյն». Ոսկ. Մաթ. Ա. իզ. 361.—«Նա *Եւս յառաջ կոյս* ասէ, եթէ Լուծ իմ քաղցր է». անդ, 367.—«Եւ *Եւս յառաջ* ի սոյն գիրս [ասէ]. Զի թէպէտ եւ մոռանայցէ կին՝ զողորմել ծննդոց իւրոց, սակայն ես ոչ մոռացայց զքեզ». նոյն, Ես. ԽԵ. 319—320.—«Եւ *Եւս յառաջ մատուցեալ*՝ ասէ. Եւ ի տաճարն պղծութիւն աւերածոյ». Եւս. Քր.

133

ԱԳԱԹ. «Իբրեւ զքաջ մշակս ընթացան լնուլ սերմամբ աստուածպաշտութեամբ զամենայն լեզուս». 508։

ԲԻԻԶ. «Եւ քաջ մշակն Բասիլիոս յիւրմէ գործոյն կայր (մյլ Զ. կալի. տես բ տպ. Վենետկոյ, 104) խափանեալ». Դ. ժ. 101։

=ԴԻՏ. Ցայլ գիրս. «Զի . . . ժրագլուխ մշակ առաքինութեանն լինիցիս». Ոսկ. Մտթ. Ա. ի. 323.—«Եղիցուք մշակք ժրագլուխք, զի խնդրեսցուք զվարձս մեր ընդ առաջինսն». Ջգաւն, Զ. 108.—«Մշակն ժիր ժողովեսցէ զարմտիս յամաբայնոյ». անդ, ԺԹ. 340.—«Ընդ մշակս ժիրս եւ առաքինիս». անդ, 361.—«Լինիցիս . . . մշակ առաքինի». Ոսկ. Մտթ. Բ. Ե. Ցորդ. 468։

134

ԱԳԱԹ. «Նոքին իսկ Առաքեալքն՝ բուն սիւնքն (տպ. եւ Զ.՝ նոքին իսկ բուն Առաքեալքն՝ սիւնքն) հաստատունք, եւ բազումք ի հեթանոսաց, զնոցին աւրինակն յանձինս իւրեանց առեալ բարձեալ բերէին». 509.—«Արդ՝ բուն սիւնք Առաքեալքն՝ (Զ. իսկ տպ.՝ Արդ բուն Առաքեալքն՝ սիւնքն), ամոլքն, որ խաւսեցան զամենայն լեզուս, ելին ընդ աւխարհս». 510։

ԲԻԻԶ. «Ցակոբոս եւ Կեփաս եւ Յովհաննէս, որ բուն սիւնքն էին». Դ. ղ. 78. (վկայութիւն ի Գաղատացւոց Թղթոյն, Բ. 9, ուր գրեալ է. «Ցակովբոս եւ Կեփաս եւ Յովհաննէս, որ կարծեալ սիւնքն էին»։)

135

ԱԳԱԹ. «Իբրեւ զպատերազմասէր նահատակս՝ զանձինս ի կիրթ առաքինութեան մխէին». 512։

ԲԻԻԶ. «Իբրեւ զպատերազմասէր նահատակ՝ միշտ զանձն ի կրթութիւն եւ ի պատրաստութեան ունէր ամենայն փորձութեանց եւ վշտաց». Գ. զ. 13—14։

=ԴԻՏ. Պատերազմասէր կը գտնուի առանձին յԱռաջին Դասի. «Զի պատերազմասէրք, հեռասէրք եւ կռուողք էին». Ոսկ. Ես. ԺԴ. 152.—«Նինուաս, Նինեայ եւ Շամիրամայ որդի,

139

ԱԳԱԹ. «Քանզի յաւաջագոյն իսկ աստուածագէտս յարդարեաց բիւրապատիկ սքանչելեւքն Ամենատէրն Քրիստոս զսիրելի աշակերտսն իւր». 527։

ԲԻԻԶ. «Եւ այսպէս բիւրապատիկ եւ պէսպէս առնէր զըսքանչելիս (Հաղիտա)». Ե. իզ. 220։

=ԴԻՏ. Կայ յՍսկ. Եբր. ԻԴ. Յոյգ. 536. «Թէպէտ եւ բիւր նշանս եւ սքանչելիս ցուցանիցեմք»։

140

ԱԳԱԹ. «Մատուսցուք զդոսա ի հանգիստ, եւ շինեսցուք վկայարանս ի վերայ դոցա՝ տաճարս աղաւթից միաբանութեան». 542.—«Բայց փութացարուք շինեցէք զվկայարանսն, զի հանգուսցուք զվկայսս Աստուծոյ». 551. տես եւ 562 երկիցս,567, 568, 569, 569—570, 575, 576, 577 երկիցս, 578, 607, 608, 610, 627։ Այլուր. «Զոսկին եւ զարծաթն եւ զպատուական կարասին՝ ի նուէրս սպասու եկեղեցեաց Աստուծոյ եւ ի տունս կատարելոց վկայիցն դնէին». 655 (ըստ Զ). տուն վկայից թուի թարգմանութիւն ասորականին բեթ սոհդէ, beth sohdé, որ է յունարէն մարտիւրիոն, լտ, Martyrium, locus ubi martyrum lipsana deponuntur. այս ինքն՝ Տեղի ուր դնին նշխարք վկայից. տես P. Smith, Thes. Syr. Սէմքաթ, 2536, ի բառն Սոհդո =Վկայ։ Այլուր դարձեալ. «Մինչդեռ գչինուած մատրանն կայմէին». 608. Մատուռն, մատրան, է վերոյնշանակեալ յոյն բառն մարտիւրիոն։—Տես Վկայարան բառի կազմութեան նման եւ զյաջորդս. «Շինէր զառաքինարանսն վկայիցն». 647.—«Իսկ խորանն ի վերայ, ունի զաւրինակ վերնոյ քաղաքին՝ զժողովարանն միաբանութեան արքայութեանն երկնից». 563.—«Զերանելեացն վկայարանն հանգստարանացն հիմունս յաւրինեալ». 569.—«Ի ներքս ի տաճարն հանգստարանացն». 575.—«Ի ներքսագոյն խորանացն՝ ի վերայ հանգստարանացն կենդանագիր գերեզմանացն». 578 (ըստ Զ). որ եւ Հանգստոց, 544, 590.—«Պաշտաւնարան տեղւոյն յարկի տան Աստուծոյ». 579։ Բայց վերոյեդեալ բառերէդ կը տարբերին նշանակութեամբ՝ Բժշկա-

րան (=բժշկութիւն, արուեստ բժշկութեան)․ 331, 581․ —*Երգարան* (=գիրք երգոց)․ 391․—*Զոհարան* (=անաւթ զոհից)․ 34․—*Խաւսարան* (=գործի խաւսելոյ)․ 551․—*Ծրագարան* (=կազմած ճրագի)․ 128․—*Չափարան* (=չափ)․ 575․—*Սաղմոսարան* (=գիրք Սաղմոսաց)․ 288, 302, 359—360, 366, 369, 434, 483։ Իսկ *Առաքելարան*, 660, ուղղելի է Առաքելաքան։ (Առաքելաքան, 24, ուղղելի է Առաքելաքար։)

ԲԻՒԶ. «Ի վկայարանս մարտիրոսացն ամի ամի ժողովեալք, զաւր տաւնին յիշատակի նոցա . . . խմբեալ՝ ցնծային». Գ. գ. 7․—«Եկն եւ սուրբ կաթուղիկոսն Ներսէս յառաջին տեղին, ուր նախ էր ցեկեղեցին շինեալ ի Գրիգորէ, եւ զվկայարանսն սրբոցն զվկայիցն». Դ. ժդ. 114․—«Եղանէր . . . ի վկայարանս սրբոցն». անդ.—«Մեռանել . . . ի վերայ վկայարանացն Քրիստոսի». Ե. ի. 213։ Այլուր *Վկայանոց*․ 101 չորիցս, 102 չորիցս, 188, 221, 223 երկիցս, 225, 258։ Այլուր դարձեալ. «Ի մեծի մարգարէարան մատրանն Յովհաննու». Գ. գ. 7։—*Վկայարան* բառի կազմութեամբ կ'ըսէ եւ *Առաքելարան*, 7. *Մարգարէարան*, անդ. որ եւ *Մարգարէանոց*․ 36, 44։

ԿՈՐ. «Եւ այնու խաչանշան լուսաւոր առաջախաղաց նշանաւն՝ յԱւշականն եղանէին. եւ անդ ի մարտիրոսարանն մատուցեալ (զմարմին Սրբոյն Մաշտոցի), զաւրինաւորն յիշատակն կատարեալ, ապա նշանն աներեւոյթ լինէր». 27։

=ԴԻՏ. *Վկայարան* եւ *Մարտիրոսարան* չունին միւս Դասքն, այլ կ'ըսեն յունարէն բառիւ *Մատուռն* (որ կայ եւ յՍգաթ. եւ ի Բիւզ.), կամ *Հանգրուան մարտիրոսաց*, *Ժողովուրդ վկայից*, *Տուն վկայութեան*. «Ննջէին՝ որպէս այժմ ի մատրունս, վասն ցաւոց ինչ, կամ վասն ուխտից». Գիր. Արեւս. Թագ. (Նոր Հայկզ. ի Մատուռն.)—«Մատեաց ի հանգրուանս մարտիրոսացն (բնագիրն՝ սիկոս[1] մարտիւրոն), ուր մարմնոց առողջութիւնք եւ ոգւոց շահք». Ոսկ. Մատթ. Բ. ժբ. Յորդ. 571.—«Եւ նախ զառաջինն արգելեալ զմեզ պատճառանաւք ի ժողովրդենէ անտի վկայից ջանայր». Եւս. Եկեղ. Թ. բ. 675. (բնա-

---

1. Յոյն բառիս բուն նշանակութիւնն է Հանգրուան հաւտից, ֆր. Bercail. երկրորդական նշանակութիւնն՝ Տաճար, Մատուռն, գղ. Temple, É'difice sacré, Chapelle.

գիրն՝ *կիմիտերիոն*[1]. իսկ ասորի Թարգմանութիւնն *բեթ սոհ-դէ*, այս ինքն՝ Տուն վկայից. տես P. Smith, *Thes. Syr. Սէմ-քաթ*, 2536, ի բառն *Սոհդո*.)—«Ապա թէ ոչ՝ ընդէր ոչ ըստ այլոց եկեղեցեաց եւ այս Գողգոթայս՝ տեղիս յարութեան՝ եկեղեցի կոչեցաւ, այլ *տուն վկայութեան*». Կիւր. Կոչ. ԺԴ. 278. (բնագիրն՝ *մարտիւրիոն*)։

Գիտելի է որ ի գիրս Երիցագոյն Թարգմանչաց *րան* մասնկաւ ածանցք՝ կը նշանակեն, 1. անուանս մասնից, Աւետարան, Բժշկարան (Ոսկ. Կողոս. Թ. 624), Կտակարան, Ցիշատակարան (Եւս. ԺՄ. 171), Սաղմոսարան (Կիւր. Կոչ. ԺԲ. 207, 208. ԺԶ. 346, 359, եւ այլն). 2. անուանս գործեաց, Նուագարան, Սաղմոսարան (Սղ. ԼԲ. 2, եւ այլն), Տանջանարան (Հանգիստ Յովհ. Թ. 1223 ա). 3. անուանս կահուց եւ անօթոց, Գանձարան (Առակք, Ա. 14), Կրակարան, Ճրագարան, Սարկարան. 4. անուն կազմածոյ՝ որով մարդ եւ անասուն կ'ընդունին զգգեցութիւն արտաքին առարկայից, Զգայարան (Ոսկ. Ա Տիմ. ԺԳ. Յորդ. 110. Բրս. Վեց. Թ. 190), որ սովորաբար կ'ըսուի Զգայութիւն, Զգայ-ունք. վերջապէս 5, Բժշկարան՝ դեղ կամ առիթ բժշկութեան (Ոսկ. Մատթ. Բ. Է. 486. ԺԸ. Յորդ. 635. Կողոս. Թ. 623. Եբր. ԻԷ. 544)։ Ձինուածոց կամ տեղեաց համար *րան* մասնկաւ ածանցք Կորեան, *Ժողովարան*, *Հանգստարան*, այլովքն հանդերձ, իբր Տուն կամ տեղի ժողովոյ, հանգստեան, չեն բոլորովին անծանօթ Երիցագունից, այլ եւ ոչ յոյժ սովորական. այսպէս կը գտնենք միայն *Բաստարան* յԵրկրորդ Դասի, եւ *Բնակարան* յԵրկրորդ եւ յԵրրորդ Դասս. «Իսկ Աւսար փոխանակ շնորհ ունելոյ Միքիայի, ... առ մատնեաց զնա ի բանտ *բաստարանին*». Եփր. Թագ. Բ. 446. (*Բաստարան* է Տեղի կապելոյ, կամ Տուն կապանաց, ինչպէս կ'ըսուի սովորաբար, կամ Կապարան՝ ըստ այլ մատենագրաց, ի պարսիկ բառէն *Պէսթէն*, որ է Կապեմ. տես Գէորգ Տէր Յովհաննէսեան, Բռգ. Պրս.—Հայ.)—«Եւ իբրեւ շինի եւ վե-

---

1. Այս բառ կը նշ. Տեղի ննջելոյ, Քնարան. եւ եկեղեցական լեզուաւ՝ Գերեզմանատուն, զղ. Cimetière. Թարգմանիչն՝ այլուր (Ի. Ժա. 543. Ժգ. 551) սոյն յունական բառիւ կ'ըսէ *Կենետրիայ*, *Կիմետէր*, զոր եւ կը մեկ-նէ Տեղի մարտիրոսաց։

րանայ նա՝ ամենայն շինուածն պռակի եւ կատարի, եւ ապա լինի նա տուն եւ տաճար եւ *ընակարան* Քրիստոսի». Զղաւն, Ա. 6.—«Ատեսջիր դու զնա, որ զամենայն չարեաց եւ զամենայն աղտեղութեան *ընակարանն*, եւ զամենայն հերեսիովտացն զխոհերն յինքն ընկալաւ». Գիւր. Կոչ. Զ. 106. սովորականն է Բնակութիւն, Տուն բնակութեան: Քիչ մ՚աւելի յաճախութեամբ կը գտնենք յԱռաջին Դասի *Ժողովարան*, *Կապարան*, *Մրցարան*, *Տեսարան*, յՈսկ. Հռ. (15). «նա եւ պատերազմն իսկ չէ այնպիսի, այլ տեղի խմն եւ *ժողովարան* ցնծութեան». ԽԹ. 342. (տես *Ժողովարան* յԱգաթ.)—«Յորժամ ասէ նեղութիւնք, *զկապարանն* ասէ, եւ զկապանսն եւ զզրպարտութիւնսն». ԺԵ. 203.—«Իսկ աստ ոչ ինչ այսպիսի էր, այլ ի *մրցարանին* խսկոյն եւ ջանն ի վերայ». Թ. 72.—«Ցերկինս ունիս թէատրոն, այս ինքն *տեսարան*». ԺԷ. Յորդ. 251.—«Այս է երկնից ասպարէզն, այս է Հրեշտակացն *տեսարան*». ԻԲ. Յորդ. 325. (այլուր *Տեսարան*=Տեսիլ. ԺԵ. Յորդ. 210. ԺԸ. Յորդ. 269:) Թերեւս Կարեան ազդեցութեան վերագրելի են եւ յաջորդ վկայութիւնքդ. «Զայս ընդ միտ ածելով՝ եմուտ ի ներքս ի *ժողովարանն*». Աթ. Անտ. 19.—«Ո՞չ տմաւթալիս լինել զձեզ հարկէին (գեւքն), մերկս մուծանել ի *տեսարանն* եւ զկանայս». Վկ. Իգն. 159.—«Փութայր այնուհետեւ մտանել ի *տեսարանն*, եւ եկեալ ի մէջ ամբոխին՝ ասէր այսպէս». անդ, 181: Այլուր ամէնուրեք սոյն Դասս կ՚ըսէ *նոց* մասնկաւ. Արուեստանոց, Բժշկանոց (Ոսկ. Բ Տիմ. Բ. Յորդ. 189. Եփես. Է. 735), Ժողովրդանոց (կամ *եւտղ* բառիւ՝ Ժողովետղ. տես եւ յԵրկրորդ Դասի՝ Ժողովրդանոց, Ղազաւր. 16, 30), Կուռանոց (Եզնիկ, 58. Ոսկ. Մատթ. Ա. Ժա. Յորդ. 169, 170), Մարտանոց (Ոսկ. Կողոս. Ժ. 637), Վարդապետանոց (Ոսկ. Մատթ. Ա. Է. Յորդ. 109. Բ. ԻԷ. Յորդ.748): Անստոյգ է *Կապարան* (=Բանտ), զոր կը յիշէ Նոր Հայկզ. յՈսկեբերանի Մեկնութենէն Տիմոթեայ առանց վկայութեան. չիք այդպիսի բառ ի տպագրին: Իսկ յՈսկ. Մատթ. Բ. Ժ. 531,« Յորժամ զփաւան հանիցէք, եւ *զկռուարանն* ի միջոյ բառնայցէք», թուի դաղափարողաց կամ տպագրողաց սխալ, զի Նոր Հայկզ. կը գրէ *զկռուարարն*[1]:

---

1. Այսպէս եւ ի Գիւր. Կոչ. ԺԲ. 229,. «Զի ի Գուաէ ծնանելոց էր

141

ԱԳԱԹ. «Մտերմութեամբ հասեալք լինէին աւգտակար խրատուն կենսաբեր քարոզութեանն բանին կենաց աւետեաց Աւետարանին». 548. (տես աստէն ի Թիւն 93 զերրորդ մկ. Ագաթ.։)

ԲՈՒԶ. «Պարտ բարւոյն չկամելոյ լսել զաւգտակարն խրատ ի նոցանէն». Գ. ժդ. 40.—«Զի իմաստութեամբ իւն կարէր սոցա զաւգտակար խրատն մատուցանել». Ե. ա. 186.—«Որք կարող էին զաւգտակար խրատն մատուցանել նմա». լե. 235։

142

ԱԳԱԹ. «Եւ նկնզումք ծայրից մատանցն ոտիցն եւ ձեռացն՝ կճղակեալք էին իբրեւ զգետնաբիր արմատակեր կնճացն (տպ. եւ Զ. կնճթացն)». 549։

ԲՈՒԶ. «Միահանդերձք, բոկագնացք, զգաստացեալք, խոտաճարակք ընդաբուսք արմատակերք». Զ. ժգ. 271։

—ԴԻՏ. Նոր Հայկզ. կը յիշէ իբր յՈսկեբերանի Մեկնութենէն Փիլիպեցւոց Թղթոյն. «Արմատակեր կենդանի (խոզ)». չիք այդպիսի ինչ ի տպագրին։

143

ԱԳԱԹ. «Այսամոլեալք ամենեքին՝ ի տեղին հասեալք յայտնեցան». 549։

ԲՈՒԶ. «Բայց քան զամենեսին աւելի՝ այր մի անաւրէն եւ այսամոլ, որ աւելի ընդ ամս նախարարացն գրգռէր զթագաւորն Տիրան». Գ. ժը. 46։

144

ԱԳԱԹ. «Զօրհասապատեալ կայր պատառեալ (ծրիզան) ի մէջ քաղաքամիջոյ աշխարհաժողով հրապարակացն կոտտելոց մարդկան ի միջի (Զ. իսկ տպ.՝ կոտտելոյ ի մարդկան միջի)». 550։

կուսպարթութեան հոգւոց», սխալ գրեալ է կուսարանն ի Կ. Պոլսոյ տպագրին. տես Կուսարար ի Նոր Հայկզ.։

ԲԻԻՋ. «Ապա յականէ յանուանէ իսկ խնդրեցին աշխարհաժողով զաւրքն բազմութեան՝ զայն որ անուանեալ կոչէր Ներսէս». Դ. գ. 68.—«Ապա ժողով լինէր նախարարացն եւ իշխանացն, գործակալք եւ զաւրագլուխք, պետք եւ ամենայն աշխարհաժողովք բազմութեանն եկեղեց կուսակրօնն». Գ. ի. 53: Այլուր. «Եւ ամ յամէ աշխարհաժողովուրդք ի մի վայր ժողովեալ . . . , զօրքս զաւր տաւնին գլխաւորակ քաջութեանն ցնծան». Գ. գ. 15:

145

ԱԳԱԹ. «Եւ իմ նայեցեալ տեսի զկերպարանս նորա, զարհուրեալ դողացեալ յերկիր կործանեցայ». 553:

ԲԻԻՋ. «Իսկ իբրեւ ետես զայս եղբայրն Թերահաւատ կրաւնաւորն, զարհուրեալ դողացեալ խռովեալ տագնապեալ յերկիր կործանեալ կայր». Ե. ժբ. 225:

==ԴԻՏ. Կան այլուր առանձին առանձին. «Եւ կէնն զարհուրեալ եւ դողացեալ . . . եկն անկաւ առաջի նորա». Մրկ. Ե. 33.—«Եւ մնասջիր միայն եւ յերկիր կործանեսջիր».Ես. Գ. 26:

146

ԱԳԱԹ. «Ըստ նմանութեան մանրամաղ փոշւոյ հիւղէի, որ . . . ըստ պատուհանացն կամ լոյսանցոյց երդոցն ի նշոյլսն խաղասցէ». 554:

ԲԻԻՋ. «Եւ էր փողն ընդ երկար, բազում երդս լոյսիջոյցս էր թողեալք». Ե. գ. 204:

==ԴԻՏ. Կայ յԱռաջին Դասի Լուսանցոյց պատուհան, կամ զոյականօրէն Լուսանցոյցք. Եզեկ. ԽԱ. 16. ԽԲ. 11:

147

ԱԳԱԹ. «Եւ տեղին այն լիցի տաճար Աստուծոյ, եւ տուն աղաւթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց». 561:

ԲԻԻՋ. «Յայնմ ժամանակի համարեցան արժանի զՓաւէն ամէն երէց, ի գաւառէն Տարաւնոյ, ի մեծէ մարգարէանոցէն Յովաննու, որ էր նախ շինեալ տուն աղաւթից եւ խնդրուածոց ի հանգիստ սրբոցն». Գ. ժգ. 44: Այլուր. «Յառաջ էին տեղիք պատկերաց կռոցն, եւ ապա յանուն Աստուածութեանն սրբեցան,

եւ եղեն տուն աղաւթից եւ տեղի ուխտից ։
Գ. գ. 7։

ՄԿԲ. «Դու ընտրեցեր զտաճարս քո զս
սուրբ քո ի վերայ սորա, զի լիցի դա տուն
ծոց ժողովրդեան քոյ». Ա. է. 37։

=ԴԻՏ. Բիւզանդայն Տուն աղաւ
գասի. «Գրեալ է, տուն իմ տուն աղաւ
ԻԱ. 13. Մրկ. ԺԱ. 17. Ղուկ. ԺԹ. 46։
թանոց. «Քրիստոս իբրեւ եկն՝ զամե
ամենայն երկիր աղաւթանոց եղեւ»
204։ Իսկ յերկրորդ Դասի. «Եւ տուն
ծածուկ, վասն երկիւղի այնոցիկ՝ ։
Նարուբ. 34։

14

ԱԴԱԹ. «Ձի նա լինցն (Աս
սրբոյ եւ կատարիչ (Զ. իսկ
թեանց». 563։

ԲԻԻՁ. «Տէր, . . . ընկ
ցիշդ ես ամենայն աշխար
րութեանց». Ն. իդ. 21

ԱԴԱԹ. «Եւ յու
հանեն ճաղճախիս ս
հանայութեանն (
վաւթիւն ժողովր
թեանդ սուրբ ն
նկեղեցւոյ սրբո

ԲԻԻՁ. «
եւ ի վերայ
ամենայն ու
ղովրդոցն,
հաստապե

=Գ

յորժամ զայն հրաման ընկալան, ամենայն որ ո՛ ոք առ ումեք էին՝ նեղեցին զնոսա ըստ հրամանին տուեալոյ». Գ. ծԹ. 178։ —«Ապա ինչին փոհանաւորքն եղեալք զվահանսն ի վերայ, եւ կային պահէին ըստ հրամանի տուեալոյն». Ե. լէ. 243։

153

ԱԳԱԹ. «Զմի մի իւրաքանչիւր ի որդոցն յիւրաքանչիւր արկեղ դնէր՝ իւրաքանչիւր հանդերձուքն եւ իւրեանց լոկ կազմութեամբն (Զ. իսկ տպ.՝ հանդերձով կազմութեամբ) պնդէր». 571։

ԲԻԻԶ. «Ոչ կարէր հանդուրժել զանձն իւր, զի պատեաց զնա մեծութիւն հանդերձոյն։ . . . Եւ ոչ ինչ իմացաւ Գղակ (տպ. Դղակ) թէ այն՝ մեծութիւն հանդերձոյն չարիս նորա իցէ այն». Ե. զ. 204.—«Բայց միայն վասն կրաւնիցն հանդերձոյն զեղեալ կարգն ըստ կրաւնիցն Զաւինայ զնային սոքա». Զ. դ. 264։

—ԴԻՏ. Հանդերձ, հանդերձոյ, կայ մի անգամ յԱռաջին Դասի. «Ցամենայն փայտեղէն անաւթոյ կամ ի հանդերձոյ կամ ի մաշկէ կամ ի քրձէ, ամենայն անաւթ յորում գործ ինչ գործիցի ի նմա, ի ջուր թացցի». Ղեւտ. ԺԱ. 32։ Այլուր ամէնուրեք Հանդերձ, հանդերձի, ի հանդերձէ[1]։—Չիք հանդերձոյ ի Նոր Հայկզ.։

154

ԱԳԱԹ. «Իսկ թագաւորն Տրդատ յայնժամ դեռ եւս (Զ. իսկ տպ.՝ դեռ ես յայնժամ) էր յամենայն կերպարանս խոզի, բայց ի մարդկապէսն խաւսելոյ». 573.—«Ցաշտից աեղիք թագաւորացն Հայոց Մեծաց . . . զի յայնժամ դեռ եւս (Զ. իսկ տպ.՝ յայնժամ ես դեռ) չէն կային երեք բագինքն ի նմա». 606։

ԲԻԻԶ. «Բայց յայնժամ դեռ եւս կենդանի էր ծերունի սուրբն մեծն քորեպիսկոպոսն Դանիէլ». Գ. ժդ. 36։

---

1. Ցեռ Ռսկեդարուն Ղազար Փարպեցի եւս ըստծ է Հանդերձ, ոյ. «Այլ կարգեալքն ինձ ըստ տարւոյ . . . ի պէտս զարմանոյ եւ հանդերձոյ եւ ձիոյ՝ յայտնի է». Թուղթ առ Վահ. Մամիկ. 591. (տպ. էմին, 55).

զմարտիրոսական ընթերցուած Նոր Հայկազեննին։) Այսպէս եւ «Կրեսկէս փիլիսոփոս . . . Ցուստինեայ փիլիսոփայի . . . խարգախեաց զմարտիրոսութեան մահն». Եւս. Քր. 160.—«Եւ ոչ մարտիրոսութեան, ասէ, արիւն՝ կարէ զայնպիսի մեղս ջնջել». Ոսկ. Եփես. ԺԱ. Ցորդ. 794. եւ այլն։

157

ԱԳԱԹ. «Եկայք, զնկատեալ տեղին տէրունական տանն . . . ի մէջ առեալ փակեսցուք». 578։

ԲՈՒԶ. «Նոքա (զաւրքն Հայոց) իբրեւ ի բերդ ամուր դիմէին ի լեգէոն ի զաւրսն վահանաւորս (Յունաց), եւ նոցա բացեալ զվահանսն՝ զնոսա ի մէջ առեալ փակէին». Ե. Ե. 201։

158

ԱԳԱԹ. «Քանզի յԱյրարատեան գաւառին՝ ի Թագաւորանիստ կայեանսն՝ բղխեցին Հայոց տանն Թորգոմայ շնորհք քարոզութեան Աւետարանին». 582. (կարկատեալ ի բանից Կորեան Մաշտոցի, 13։) Այլուր. «Գային հասանէին (Գայիանէ եւ ընկերք նորա) յերկիրն Հայոց, յԱյրարատ գաւառ ի Վաղարշապատ քաղաք (ըստ Զ.), . . . ի Նիստս Թագաւորացն Հայոց». 122—123։

ԲՈՒԶ. «Քաղաքս . . . ամուր պարսպաւորս զաւրանիստս հաստատել ընդ ամենայն երկիրն Հայոց». Ե. լդ. 235.—«Այժմ զՀայ երկիրս խորհի (Մուշեղ) լնուլ քաղաքաւք, եւ զաւրանիստ առնէ աստ բնակութեան զաւրացն Յունաց». լե. 236։

=ԴԻՏ. Թագաւորանիստ, Զաւրանիստ, կը նշ. Ուր նստի կամ բնակէ թագաւոր, Ուր նստին կամ բնակեն զաւրք։ Ազաթանգեղ ունի եւ Ստուերանիստ, որ է Նստեալ ի ստուերի. «Զուարճացուցանել զանձինս ստուերանստաց անկելոցն». 420։ Միւս Դասքն չունին այսպիսի բարդութիւնս։ Իսկ «Լայնանիստ այլք», Ագաթ. Յաջր. 26, կը գտնուի եւ յայլ գիրս. «Լայնանիստ մեծութեամբ տարածեալ կայ առաջի նոցա (ծովն)». Բրս. Վեց. Է. 148. ըստ այսմ եւ «Մեծանիստ բնակութիւն երկրի». անդ, Ա. 16.—«Զիջէ՞ տեսեալ ի գլխոյ բարձրացեալ լերին (տպ. լերինն) գծով մեծ իւրով մեծանիստ լայնութեամբն».

անդ, Ջ. 129.—«Երթայր մտանէր ի քաղաքն *Մեծանիստ*». Ոսկ. Վաստ Պահոց եւ Աղաւթից, 39. այս երկու բառերս կը նշ. Որոյ լայն կամ մեծ է նիստն, Լայնատարած, Մեծատարած:

159

ԱԳԱԹ. «Քանզի յԱյրարատեան գաւառին՝ ... բղխեցին Հայոց *տանն Թորգոմայ*[1] շնորհք քարոզութեան Աւետարանին». 582. (կարկատեալ ի բանից *Վարուցն Մաշտոցի*, 13.)—«Այս իշխանք են ընտիրք ... ի մէջ Հայաստան աշխարհի *տանն Թորգոմայ*». 597: Այլուր. «Որք հարցեալ զհայրենական մատեանսն՝ պատմեսցի նոցա, եւ գծրագիր կարգեալս ասասցի նոցա, ընթերցեալք *զԹորգոմեայ ազգին* զՀայաստան աշխարհին զաստուածապարգեւ աւետեաց Աւետարանին». 24 (ըստ Ձ):

ԲԻԻԶ. «Եւ սգային (զներսէս) ամենայն ազատք եւ շինականք,...ամենայն բնակիչք *տանն Թորգոմայ*, Հայ լեզուն առ հասարակ». Ե. լ. 227: Այլուր. «Եւ չորեքին միոյ իրաց յիշատակարանք են, յիշեցուցիչք Պատմութեանց ազգացն Հայաստան աշխարհին *որդւոց Թորգոմայ*». Խոստաք. 1.—«Ցաղագս որ ինչ յետ քարոզութեանն Թադէոսի Առաքելոյ յերկրին Հայաստան աշխարհին *որդւոց* (տպ. որդւոյ) Թորգոմեայ». Խօստումն Երրորդ, 2.—«Կանոնք ժամանակագիրք մատենից *տան որդւոց Թորգոմայ* աշխարհին Հայոց». վերնագիր Դ գլր. 65, եւ վերնագիր Ե գլր. 185. յերկրորդ տեղւոջս սխալ է «*իշխանին* Հայոց». փոխ. *աշխարհին*. (տես Կոր.=Բիւզ. թիւ 7, *իշխանակիր* փոխ. *աշխարհակիր*.)—«Զկնի թոպամահն լինելոյ երանելւոյն Ցուսկան, անառաջնորդք եղեալ՝ իբրեւ զկոյրս մոլորեցան երկիրն լեզուին *Թորգոմական աշխարհին*». Գ. ժգ. 32:

=ԴԻՏ. Ըստ մատենագրին Ծննդոց գրոց (Ժ. 2, 3. յորմէ եւ Ա Մնաց. Ա. 3. 5)՝ Ցաբեթի որդի է Գամեր, եւ Գամերայ որդիք՝ Ասքանազ, Րիփաթ եւ *Թորգոմա*[2] (ըստ եբրայական բնագրին *Թոգորմա*): Եւ ի մարգարէութեան Եզեկիելի երկիցս կը յիշատակուի *Տուն Թորգոմայ* իբր անուն աշխարհի կամ

---

1. Տես եւ ի Մ. Խոր. Պատմ. «Ազգ տանն Թորգոմայ». Ա. Ժ. 50:
2. Մ. Խոր. Թորգոմ կը գրէ յուղղականն. Պատմ. Ա. Ե. 28. Թ. 48:

ազգի. «Եւ ի տանէ Թորգոմայ ձիովք եւ հեծելովք եւ ջորւովք լցին զվաճառս քո». Եզ. 14.—«Գոմեր եւ ամենեքին որ շուրջ են զնովաւ, եւ տունն Թորգոմայ ի ծագաց հիւսիսոյ». ԼԸ. 6: Սուրբն Հիպպոլիտոս Պորտուացի յԳ դարու՝ զԹոգորմա նախահայր կը համարի Հայոց յիւրում Ժամանակագրութեանն. "Thogorma, de quo Armenii". «Թոգորմա, յորմէ Հայք». (տես ի *Chronicon Paschale*, տպ. Niebuhr եւ L. Dindorf, Bonn, 1832, Հ. Բ. Ե. 98.) եւ յետ նորա այլ եկեղեցական մատենագիրք, Եւսեբիոս, Թէոդորետոս, Իսիդորոս Հիսպալեացի (այսինքն Սեւիլլեցի), եւ այլն. (տես ԻնՃիՃ. Հնախ. Հ. Ը. 209—210, եւ ծան. 1 յերես 210. եւ 298—300. Դաթերրճ. Տեղ. Պատմ. Հ. Ը. 93—95:) Եզեկիէլի ասորական թարգմանութիւնն եւս՝ համաձայն եբրայական բնագրին կ'ըսէ բեթ Թուգորմո, *beth Thougormo*=Տուն Թորգոմայ, զոր P. Smith կը մեկնէ Armenia. (*Thes. Syr.* Բեթ, էջ 498:) Նկատողութեան արժանի է նա եւ Երեմիա մարգարէի բանն, ԾԱ. 27. «Պատուէր տուք յինէն Այրարատեան թագաւորութեանցն եւ Ասքանազեան գնդին». ուր Այրարատ անուան կից կը յիշուի եւ Ասքանազ՝ եղբայրն Թորգոմայ. եւ բատ այսմ կը գրէ Կորիւն ի սկիզբն Վարուցն Մաշտոցի. «ԶԱսքանազեան ազգին եւ Հայաստան աշխարհին զաստուածապարգեւ գրոյն, եթէ երբ եւ յորում ժամանակի մատակարարեցաւ:

160

ԱԳԱԹ. «Եւ յամենայն տեղիս հասեալ ինքնին թագաւորն լինէր քարոզ՝ խոստովանելով զիւր զամպարշտութիւնսն». 592—593.—«Առեալ երանելւոյն Գրիգորի զաշխարհաժողովն զաւրացն, եւ զինքնին զթագաւորն, ... յափն Եփրատ գետոյն մատուցանէր». 620:

ԲՈՒԶ. «Եւ յետ այսորիկ ինքնին թագաւորն ելանէր ի խնդիր հայրապետին Ներսեսի». Դ. ժգ. 112.—«Եւ միում գնդին ինքնին թագաւորն լինէր զաւրագլուխ». իբ. 137.—«Ինքնին թագաւորն Հայոց Պապ փախեաւ կազմեցաւ պատրաստեցաւ». Ե. գ. 193.—«Ինքնին թագաւորն յառն կացեալ ... անապակ մատուցանէր առնն Աստուծոյ Ներսիսի». իզ. 216.—«Մխիթա-

ըէր զամենեսեան (Վրթանէս), եւ զինքնին թագաւորն զԽոսրով». Գ. ժա. 26.—«Հասանէր թագաւորն Արշակ, ... գտանէր զինքնին թագաւորն Ճապուհ». Գ. իբ. 139։ Ըստ այսմ եւ այլուր. «Դէպ եղեւ առաքել անդր կազմութեամբ մեծաւ արքային Հայոց զինքնին մեծ կաթուղիկոսն Հայոց Ներսէս». Գ. ե. 79. (տպ. «արքային Հայոց. զի ինքնին» եւ այլն։)

ՄԿԲ. «Ի ժամանակի իբրեւ դիմեաց ինքնին իշխանն (այս ինքն Անտիոքոս Մեծն) ի կողմանս Պարսից անթիւ անհամար զաւրաւքն հանդերձ». Բ. ա. 12—13։

161

ԱԳԱԹ. «Եւ կուտեցան զաւրքն ամենայն, ... զաւրավարք, պետք եւ իշխանք». 594—595.—«Առ ինքն կոչէր ... զզաւրավարս եւ զպետս եւ զիշխանս իւրոյ տէրութեանն». 35։

ԲԻՒԶ. «Ապա ի մի ժողով կուտեցան ... պետք եւ իշխանք, զաւրավարք». Գ. գ. 67։

162

ԱԳԱԹ. «Եւ կուտեցան զաւրքն ամենայն, եւ մեծամեծք եւ կուսակալք, զաւառակալք». 594—595։

ԲԻՒԶ. «Երկու զաւառակալք աշխարհատեարք անկանէին ընդ միմեանս մեծաւ ոխութեամբ (յաշխարհին Հայոց)». Գ. դ. 9.—«Ընդ առաջ երթային նմա (Ներսիսի) ... Նախարարք ամենայն եւ ամենայն զաւառակալք». Գ. ժգ. 109.—«Գային եւ ի մի վայր բովանդակէին ... մեծամեծք զաւառակալք եւ զաւառատեարք». Ե. ա. 186։

163

ԱԳԱԹ. «Իսկ նա հաւանեալ վաղվաղակի բարբառեալ ասէր, թէ Կամք Աստուծոյ կատարեսցին». 596։

ԲԻՒԶ. «Իսկ նա ընդդէմ բարբառեալ ասէր. Չես արժանի, հի՞մ գաս, մի՛ գար ի ներքս». Գ. ժբ. 32։

164

ԱԳԱԹ. «Իսկ թագաւորն ... գումարեալ զգլխաւորսն Նախա-

րարացն... երրորդ՝ *իշխանն մարդպետութեան* իշխանու-թեանն». 596։

ԲԻՒԶ. «Եւ տան վնա (զՃահակ) ի ձեռս *իշխանին մարդ-պետութեանն*, որում անուն իւր Հայր կոչէր... եւ յուղարկե-ցին զնա մեծաշուք պատուով յերկիրն Գամրաց». Գ. ժէ. 45.— «ԶՀայր՝ մեծ *իշխանն մարդպետութեանն*». Դ. դ. 71։ Այլուր. «Այր մի անարէն եւ այսամուտ,... որ ունէր զպատիւն մեծի *մարդպետութեանն*, այր ներքինի,... որում Հայր կոչէին». Գ. ժը. 46.—«Եւ փոխանակ նորա (Հայր մարդպետի) ի տեղի հայ-րութեան *մարդպետութեանն* [կացուցին] զԴղակ ումն անուն, որ յառուրս Արշակայ թագաւորին կամ Տիրանայ հաւր նորա գա-մու միոջ լեալ նոյն գործ *մարդպետութեանն*». Ե. գ. 191—192. (տպ. «Եւ փոխանակ ի նորա տեղի հայրութեան մարդպե-տութեանն զԴգղակ» եւ այլն.)—«Այս գործակալութիւն եւ *մարդ-պետութիւն*, որում Հայրն կոչէին, ներքինեաց գործ լեալ էր ի բնէ ժամանակաց ի թագաւորութեանն Արշակունւոյ (տպ. ար-շակունոյ)». է. 206. (այս է ուղիղ միտք բանին, ինչպէս ունի եւ Նոր Հայկզ. ի Մարդպետութիւն։ Տպագիրն սխալ կը կիտագրէ «որում հայրն կոչէին ներքինեաց՝ գործ լեալ էր». նոյն սխալ է եւ յԻՆճիճ. Հնախ. Հ. Բ. 136։) Այլուր *Մարդպետութիւն* կը կոչէ զերկիր կամ զկալուած մարդպետին. «Ձրջէր ընդ *մարդպե-տութիւնն* իւր». Դ. ժդ. 114. (=«Մինչդեռ մարդպետն Հայր զիւրով *իշխանութեամբն* (Զ. իսկ տպ.՝ իշխանութեամբ) շըր-ջէր յերկրին Տարաւնոյ». Ե. գ. 191։) Տես եւ Հայր *մարդպետ* կամ լոկ *Մարդպետ*, Գ. ժը. 46. Դ. ժդ. 113—115. ծե. 171. Ե. գ. 191. գ. 203. իդ. 217։

=ԴԻՏ. *Մարդպետ* եւ *Մարդպետութիւն* է Ներքինա-պետ (Դան. Ա. 3—18) եւ Ներքինապետութիւն, եւ կը ստուգա-բանի *Կանանց պետ*. տես Մարդ=Կին, Յուդիթ, ԺԲ. 11. Բիւզ. Դ. խդ. 155. Պատմ. Աղեքս. 125. յորմէ եւ Մարդիկ=Կանայք, Եսթեր, Բ. 20։

165

ԱԳԱԹ. «Չորրորդ՝ *իշխանն թագակապ* իշխանութեանն ասպետութեան». 596—597։ Այլուր. «Աւնոյր ընդ իւր (Տրդատ)

ժա. 104.—«Գարջնոյ Մաղխազ». Ե. կր. 245. խգ. 255.—«Եկին բերին ... զմարմինն Գարջուլայ Մաղխազու Խոռխոռունւոյ». խգ. 255։ (Զմաղխազունեան կամ Մաղխազունեան տանէն տես Ինճիճ. Հնախ. Հ. Բ. 139—141, 172—173. եւ Ալիշան, Այրարատ, 420 բ—421 ա)։

167

ԱԳԱԹ. «Այս իշխանք են ընտիրք, կուսակալք կողմնակալք հազարաւորք եւ բիւրաւորք (ըստ Զ.) ի մէջ Հայաստան աշխարհի տանն Թորգոմայ». 597։

ԲԻՒԶ. «Նախարարքն աշխարհակալքն աշխարհատեարքն՝ որ էին բիւրաւորքն եւ հազարաւորքն». Գ. ը. 20։

=ԴԻՏ. Կողմնակալ հազարաւոր եւ բիւրաւոր, Աշխարհակալ բիւրաւոր եւ հազարաւոր, իմա՝ Որ ունի ընդ ձեռեւ հազարս եւ բիւրս, Իշխան բիւրուց եւ հազարաց, ինչպէս կ'ըսէ Մ. Խորենացի. «Ի ծայրս հայերէն խաւսից՝ կողմնակալ իշխան բիւրուց եւ հազարաց յարեւմտից կուսէ». Բ. գ. 159.—«Այս Առան անուանի եւ քաջ՝ կարգեցաւ ի Պարթեւէն Վաղարշակայ կողմնակալ բիւրաւոր (Աղուանից)». ը. 172։ Իսկ ի Սուրբ Գիրս Հազարաւորք եւ բիւրաւորք, Բիւրաւորք եւ հազարաւորք, կամ առանձին առանձին Հազարաւորք, Բիւրաւորք, կը նշանակեն պարզապէս Հազարք եւ Բիւրք. «Եւ ի դադարելն (տապանակին) ասէ (Մովսէս). Դարձիր, Տէր, ի հազարաւորս եւ ի բիւրաւորս Իսրայելի». Թիւք, Ժ. 36.—«Եթէ քեզ՝ ընկալցի Տէր ընդ հազարաւորս խոյոց, կամ ընդ բիւրաւորս նոխազաց պարարտաց». Միք. Զ. 7.—«Այս են բիւրաւորք Եփրեմի, եւ սոքա հազարաւորք Մանասէի». Բ Օր. ԼԳ. 17.—«Հազարաւորացն Իսրայելի». Թիւք, ԼԱ. 5.—«Ըստ հազարաւորաց ձերոց». Ա Թագ. Ժ. 19.—«Ամենայն հազարաւորաւք Յուդայ». անդ, ԻԳ. 23.—«Ի հազարաւորս Յուդայ». Միք. Ե. 2.—«Եւ եկաց արքայ (Դաւիթ) յեց առ դրանն, եւ ամենայն զաւրն ելանէր ըստ հարիւրաւորաց եւ ըստ հազարաւորաց». Բ Թագ. ԺԸ. 4.—«Եւ ահա հազարաւորն իմ խոնարհագոյն է ի մէջ Մանասէի». Դատ. Զ. 15.—«Իբրեւ զբիւրաւորս գառանց պարարտաց». Դան. Գ. 40։ Այս ասացուած կը գտնուի եւ ի Մար. Պատմ. Արեւ. Վկ. 14. «Կոտորեաց զհազարաւորս հազարաւք ի լերինս, եւ տապաստ

կառսն». Դ. ժբ. 29—30.—«Կանթեղաւք եւ մոմեղինաւք, . . . արքունական կառաւք զՍուրբն Վրթանէս . . . յուղարկէին». ժա. 28—29։

==ԴԻՏ. Կայ յՈսկ. Եբր. Թ. 500. «Այլ թէ բնաւ իսկ յարքունի կառս նստիցիմք, հեծեծեսցուք դառնապէս»։

170

ԱԳԱԹ. «Եւ եղեալ ժողով բազում եպիսկոպոսաց ի քաղաքն Կեսարացւոց՝ զի ձեռնադրեսցեն զՍուրբն Գրիգորիոս». 604։

ԲՒԻԶ. «Զի ձեռնադրեսցեն անդ (ի Կեսարիա) զՍուրբն Ներսէս [ի] կաթուղիկոսութիւն Հայոց Մեծաց». Դ. դ. 72.— «Զի եկեսցեն ձեռնադրեսցեն զՅոհակն ի կաթուղիկոսութիւն (տպ. ի կաթողիկոսութեան) Հայոց». ժե. 123։

171

ԱԳԱԹ. «Մեծաւ պատուով եւ թղթով եւ ժողովով, զՍուրբն Գրիգորիոս անդուստ յուղարկեցին (տպ. յղարկեցին) իշխանաւք հանդերձ». 604։ Այլուր. «Զորս այնուհետեւ յուղարկեցին (տպ. յղարկեցին) գնոսա անտի». 641։

ԲՒԻԶ. «Եւ ի ձեռս սատրապացն Հայոց (զԳնել եւ զՏիրիթ), եւ զնոսա զայս աւրինակ անդուստ յուղարկէր». Դ. ե. 90։

172

ԱԳԱԹ. «Իսկ ընդ որ անցանէին՝ կուտէին ժողովուրդք ի վերայ ժողովրդոց, տեսանել զսուրբ եպիսկոպոսն Գրիգորիոս». 605։ Այլուր. «Եւ ամենայն եկեղեցեացն առնէին պատրաստութիւն պատարագացն, ընդ որ էին անցանելոց». 602։

ԲՒԻԶ. «Եւ ընդ որ միանգամ անցանէին, այսպէս թողուին յամենայն ճանապարհակիցս (շեղջս քարանց)». Դ. է. 16։

173

ԱԳԱԹ. «Առնոյր ընդ իւր զբազմութիւն հաւանելոցն՝ նախարարակոյտ զաւրուն հանդերձ». 605։ Ըստ այսմ եւ այլուր. «Իսկ իբրեւ զայն գիտացին նախարարք հայակոյտ զաւրացն». 39։

բաւքն եւ աշխարհախումբ բազմութեամբք պատուել զնոյն տեղիս». Գ. գ. 7։

182

ԱԳԱԹ. «Իսկ ի լնուլ կիտին (տպ. կետին) եղելոյ պահոցն կատարելոյ». 620։

ԲԻԻԶ. «Եթէ ոչ ուղիղ եկեսցես ի հաւատսն, . . . յետ լնլոյ եղեալ կիտին՝ մեռցի մանուկն». Դ. ե. 86—87։

183

ԱԳԱԹ. «Եւ անափ ելեալ մեծաւ ցնծութեամբ, . . . կանթեղաւք վառելովք եւ մոմեղինաւք լուցելովք». 621—622։

ԲԻԻԶ. «Ցաւուրսն Ներսիսի . . . լոկ արտասուաւք եւ բաստ արժանի սաղմոսիւք եւ աւրհնութեամբ, կանթեղաւք եւ մոմեղինաւք լուցելովք զմեռեալսն յուղարկէին». Ե. լա. 229։ Այլուր. «Կանթեղաւք եւ մոմեղինաւք . . . զՄուրքն Վրթանէս . . . յուղարկէին». Գ. ժա. 28—29։

Տես «Կանթեղաւք վառելովք» ի Կոր.=Բիւզ. Թիւ 43։

[Ա Դաս]† «Եւ արդ աղէ ասա, զի՞նչ յայտ առնիցեն կանթեղքն եւ մոմեղէնք լուցեալք. ո՞չ ապաքէն իբրեւ զնահատակս յուղարկեմք (զմեռեալսն)». Ոսկ. Եբր. Դ. 478։ Եւ այլուր Մոմեղէն, ածական. «Նոյնպէս եւ աստ զմոմեղէն պատկերն եղծանէ զաւրութիւն հրոյն, ցուցանէ ընդ այնր ոսկեղէն։ Արդարեւ մոմեղէնք իսկ եւ կաւեղէնք էաք յառաջ քան զաւազանն, եւ յետոյ ոսկեղէնք». Կողոս. Է. 598. զարձեալ. «Մոմեղէնք իսկ եւ կաւեղէնք էաք». անդ, Ցորդ. 598։

=ԴԻՏ. Բնագիրն Ոսկեբերանի Մեկնութեանն Եբրայեցւոց՝ փոխանակ կանթեղքն եւ մոմեղէնք լուցեալք՝ ունի պարզապէս լապտերքն մեծապայծառք, *ai lampádes ai phaidrai*, ինչպէս զնոյն բառս այլուր կը թարգմանէ Հայ թարգմանն ի նմին Մեկնութեան. «Զի մեծապայծառ լապտերաւք երթայցեմք յառագաստն». ԻԸ. 558.—«Այն է որ մեծապայծառ լուսաւորէ զլապտերսն». անդ, 559։ Նոյն *phaidrai lampádes* բառքն թարգմանեալք են եւ յՈսկ. Մատթ. «Զի՞նչ իցէ վախճան սորա. երկինք, եւ երկնից բարութիւնքն, փառքն անճառք, առագաստն հոգեւոր,

լապտերքն մեծապայծառք». Ե. իդ. Յորդ. 705.—«Առագաստ հոգեւոր է անդ, եւ լապտերք *լուսաւորութեան»*. Ե. գ. Յորդ. 477.—«*Լուսաւոր լապտերաւք* հանդիպեցուք փեսային». Գ. իթ. Յորդ. 110։

184

ԱԳԱԹ. ա. «*Մեծաւ լրջմտութեամբ* եւ բազում զուարթութեամբ լուսաւորեալք եւ հրեշտակացեալք». 622։

բ. «Ուխտ եդեալ միանգամայն վրէժ խնդրել *մեծաւ քինութեամբ* զանկանելն իւրեանց ի տէրութենէն . . . *մեծաւ քինու* նախանձաբեկ լինելով». 31։

ԲԻԻԶ. ա. «Եւ անդ պատահեալ միմեանց *մեծաւ լրջմըտութեամբ*, . . . անդուստ յաշխարհն դարձան». Դ. գ. 73։

բ. «Այլ քաջն զաւրավարն . . . (Մուշեղ) լի էր *քինիւ մեծաւ* եւ բազում նախանձու զամենայն աւուրս կենաց իւրոց». Ե. ի. 213։

185

ԱԳԱԹ. «Եւ յայն աւուրս խթեանցն՝ որ մկրտեցան *յարքունական բանակէ* անտի, ընդ այր եւ ընդ կին եւ ընդ մանուկ, աւելի քան զչորեքարիւր բիւր». 623։

ԲԻԻԶ. «Եւ ինքն (Ներսէս) անդէն մնաց *յարքունական բանակին* . . . եւ մինչ Գնելն *արքունական բանակին* լինէր միջամուխ, ազդ լինէր Թագաւորին եկն նորա». Դ. ժե. 118.—«Յորժամ մերժեցաւ *յարքունական բանակէն* . . . Ներսէս, եւ ոչ ոք զոյր ընդդիմացեալ Թագաւորին». ժթ. 129։ Այլուր *Արքունի բանակ*. 47. 117 երկիցս. 118. 186 երիցս։

186

ԱԳԱԹ. «Հրաման տայր նոցա (եպիսկոպոսացն՝ Գրիգոր)՝ հաւատարիմ *առաջնորդութեամբ* վերակացու լինել *լուսաւորապէս* հաւտին Տեառն». 625։

ԲԻԻԶ. «Անհարոն եպիսկոպոս . . . *առաջնորդէր* (տպ. առաջնորդ) իւրոց ժողովրդոց *լուսաւորապէս* զամենայն աւուրս կենաց իւրոց». «Զ. ժդ. 270։ Այլուր. «*Լուսաւորէր* եւ *առաջ-*

Նորոգէր նոցա Սուրբն Վրթանէս իբրեւ զհայր իբրեւ զեղբայր իւր». Գ. գ. 7։

=ԴԻՑ. Կայ այլուր *Լուսաւորապէս* առանձինն. «Եւ յետ սակաւու միոյ՝ մինչդեռ իջանէ դայ նա ի պատմութեան անդ (տպ. անտի) իւրում, եւ *լուսաւորապէս* այսպէս երկրորդեալ (տպ. երկրորդել) ասէ». Եւս. Եկեղ. Բ. ԺԷ. 113։

187

ԱԳԱԹ. «Զգազանամիտ, զվայրենազոյն, զճիւաղաբարոյ *զաշխարհաբնակսն* (Զ. իսկ տպ.՝ զաշխարհականս), զոր առեալ արկանէր ի բովս վարդապետութեան». 625. (կարկատեալ *ի Վարուցն Մաշտոցի*, 14, 15.)—«Վայրենամիտքն եւ դատարկասունքն եւ անասնաբարոյ *աշխարհաբնակքն* (Զ. իսկ տպ.՝ աշխարհքն)». 626. (*ի Վարուցն Մաշտոցի*, 19։)

ԲԻՒԶ. «Ցայնմ յիշատակ *աշխարհաբնակք* մարդկան՝ որ ժողովեալն էին, եւ բազում եպիսկոպոսք». Դ. ԺԵ. 117։

188

ԱԳԱԹ. «Եւ զոմանս յորդւոց քրմացն առեալ՝ *զառաջասուն* ձեռնասունս առնէր». 629։

ԲԻՒԶ. «Ձեռնասուն էր սա (Խադ) եպիսկոպոսապետին Ներսեսի. *զառաջեաւ* իւրով զսա էր *սնուցեալ*». Դ. ԺԲ. 105.— «Գրիգորիս, եւ . . . Յուսիկ, որք *սնան զառաջեաւ* թագաւորին Հայոց». Գ. Ը. 10։

Տես եւ «Ձեռնասուն» ի Կոր.=Ագաթ. Թիւ 131։

189

ԱԳԱԹ. «*Ցայրս եւ ի քարածերպս երկրին* բնակեալ լինէր (Գրիգոր), եւ ի կատարս լերանց». 632.—«Զոր եւ մարդաբէքն յառաջագոյն գործէին, որք ի լերինս, յանապատս, *յայրս եւ ի քարածերպս* վիմաց դատաւածեղէն կրաւնիցն ծառայութիւն հարկանէին». 636. (առեալ *ի Վարուցն Մաշտոցի*, 24, ուր կ'ըսէ Կորիւն. «որք ի լերինս եւ յանապատս եւ *ի փապարս* վիմաց» եւ այլն։)

ԲԻՒԶ. «Որք միանգամ վասն սիրոյն Աստուծոյ յաշխարհէ

կերակուրս արարեալ (արարեալ զկերակուրս?), եւ կամ զնո-ցին պարզեալ զգինի ճաշակէր». Դ. ժե. 123։ Ըստ այսմ եւ յուղղականն. «Եւ առն[ն] Աստուծոյ ասացեալքն հուպ ընդ հուպ վաղվաղակի կատարեցաւ». Դ. ժդ. 115։

=ԴԻՏ. Ի վկայութիւնսդ ընդ ա նշանագրով՝ սովորականն է կրաւորական անցեալ եւ բացառական խնդիր սեռի, զոսկի սպասս զտուեալս ի կայսերէն (կամ յարարերականաւ զորս ետ կայսրն). զհրամանսն զտուեալս ի նմանէ, ինչպէս կ'ըսէ այլուր Բիւզ. «Իբրեւ լուաւ . . . եթէ կատարեաց ի պլուխ եհան զայս ամենայն ի նմանէ զտուեալ հրամանն». Գ. խա. 57. մինչդեռ զտուեալ զոսկի սպասս կայսերն եւ զտուեալ հրամանս նորա ըսելով՝ բայն ներգործական անցեալ դարձած է ընդ սեռական անուան բայի, գրեթէ մեր աշխարհաբարին ոճով, կայսեր տուած ոսկի սպասները, անոր տուած հրաման-ները։ Իսկ ի վկայութիւնսդ ընդ բ նշանագրով՝ փոխանակ նոյն-պէս կրաւորական անցեալ եւ բացառական խնդիր սեռի գնելու եւ ըսելու զսքանչելիսն արարեալս յԱստուծոյ, զգինին պարզեալ ի նոցանէ, ոչ միայն ներգործական անցեալ եւ սե-ռական անուն բայի դրուած է, այլ եւ անուն բային՝ անցելոյն նախադաս եղած, զԱստուծոյ արարեալ զսքանչելիսն, զնո-ցին պարզեալ զգինի, բոլորովին նման մեր աշխարհաբարին, Աստուծոյ ըրած հրաշքները, անոնց զտած գինին. (տես Չալ.—Այտըն. Քեր. 437—438, Ի). բայց յերկրորդ վկ. Ագաթան-գեղի՝ սովորականն է յարաբերականաւ ըսել «ղխաւարն զոր զգեցեալ էիք», եւ ոչ թէ զգեցեալ ի ձէնջ։ Այս երկու ձեւերս կը գտնուին եւ ի գիրս միւս Դասուց. ա. «Դպիր ոմն՝ Արդամո-նոս անուն՝ այր կորովի՝ (ասեն) զարկեալ առասպելսն Սո-ղոմոնի լուծանել». Եւս. ժմ. 86. (աշխարհաբար՝ Սողոմոնի առաջարկած առեղծուածները. փոխանակ՝ զառասպելսն արկեալս ի Սողոմոնէ, կամ զորս էարկ Սողոմոն։ Ճշդիւ այսպէս եւ ի Ցճխ. «Զարկեալ սահմանն Աստուծոյ՝ որպէս կամիմք շրջիմք ի բարի եւ ի չար». Է. 64. փոխ. զսահմանն արկեալ կամ եդեալ յԱստուծոյ.) բ. «Զի զԱստուծոյ տըւ-եալ զկերակուրսն ոչ իշխեցէ խոտան համարել». Եզնիկ, 287. —«Քանզի եւ չէ սակաւ ուղղութիւն՝ զԱստուծոյ պարգեւեալ

պարծանաց յերկրի Թողուլ, եւ յերկինս ամբարէ զյաւիտենականն». Զ. 52—53։) Տես «Անուն քաջութեան» եւ ի Բիւզ.=Մկբ. Թիւք 31, 105։

=ԴԻՏ. Կայ յԱռաջին Դասի. «Ենթէ կեցցէ, անուն Թողուցու քան Թէ հազարք». Սիրաք, ԼԹ. 15։

Զայլ նմանութիւնս Ագաթանգեղի եւ Բիւզանդայ՝ տես ի Կոր.=Ագաթ. Թիւք 1, Հայաստան աշխարհ. 5, Պատուհասին եւ Թշուառութեանն հասելոյ. 6, Առանց յապաղանաց եւ Առանց յապաղութեան. 19, Սոյն աւրինակ, Նոյն աւրինակ. 34, Նիզակակից. 36, Բարեաց գործոց նախանձաւոր լինիմ. 40, Հոլլէն. 41, Դուռն արքայի. 42, Թագաւոր Հայոց Մեծաց, եւ այլն. 48, Կաթուղիկոս. 49, Որոյ եւ Միուսն անուն ճանաչէր. 54, Իբրեւ զգացեալ եւ Իբրեւ լուեալ (փոխ. զգայ, լուան). 56, Կղերիկոս. 58, Գումարեմ. 59, Խստամբերութիւն. 60. Զառացեալսն մարգարէին եւ Զասացեալսն արքայի. 61, Փախուցեալ եւ Երեւեալ (փոխ. փախուցանէին, երեւէր). 63, Զանց առնեմ զբազում աւթեվանաւք կամ զբազում բերդաւք. 64, Կողմանք Այրարատեան գաւառին. 66, Նպատական լեառն. 71, Աւազանի, Կանանի. 75, Աստուածագործ. 79, Յառաջակարգ եւ Յառաջակարգութիւն. 82, Քահանայապետ (քրիստոնէից). 84, Առաքելականն (այս ինքն Թուղթ եւ Աթոռ Առաքելոյ). 85, Հայրաբարոյ. 86, Փոյթ ի վերայ ունիմ. 87, Տեսուչ եպիսկոպոս. 93, Կենաց ճանապարհ. 100, Ժամադիր կողմանք. 105, Վերակացու Թողում. 106, Որոյ անուն. 114, Գամ երեւել կամ երեւեալ. 115, Զբերեալ պատասխանին եւ Զբերեալ պարգեւացն զշնորհս. 117, Աւծութիւնընկալու եւ Աւրհնութիւնընկալու, Ամուսնութիւնընկալ. 119, Միանձնական լեռնական եւ Միանձունք լեռնականք. 131, Ձեռասուն. 133, Զաւր տանին խմբեմ. 134, Հրաժարեմ (=Մեռանիմ). 138, Համբարձեալ զբազուկսն հանապազատարածս յերկինս. տես անդ ի ԴԻՏ. եւ Հանապազակիր, Մշտակիր. 140, Հրամանակատար եւ Պատուիրանակատար. 145, Կենդանարար մարմին եւ արիւն Քրիստոսի։ Ի Կոր.=Բիւզ. Թիւք 7, Յանկալի եղեալ. 17, Յաւանն եւ Յեկեղեցին դառնային. 19, Արքայագունդ եւ Ազատագունդ բանակ. 22, Յանդիման լինիմ Թագաւորին. 38, Որոյ անուն գըլ-

խաւարին. 43, Սաղմոսիւք եւ աւրհնութեամբ, կանթեղաւք վառեալովք։ Ի Կոր.=Մկբ. Թիւ 5, Ընդակնըք զզաստացեալք եւ Զզաստացեալք ընդարուտք։ ՏԱգաթ.=Մկբ. Թիւք 9, Ջաւր բազում կուտեմ. 10, Գումարտակ. 19, Որ ընդ իւրով ձեռամբ էր կամ լինի։ Ի Բիւզ.=Մկբ. Թիւք 7, Ջանձինս փոխանակ տալ ընդ ճշմարտութեանն Տեառն կամ փոխանակել ընդ Աստուծոյ ճշմարտութեանն. 12, Վահաղն. 19, Որ ընդ իւրն էին. 40, Ջաւրս եւ Գունդս բովանդակեմ. 63, Ժամակալութիւն եւ Ժամակալ լինիմ. 65, Իբրեւ զգացեալ եւ Իբրեւ զայն զգայր. 117, Կապեալ ոտիւք եւ կապեալ ձեռաւք եւ կապեալ պարանոցաւ, Ոտիւք եւ ձեռաւք եւ պարանոցաւ կապելով. 122, Դառնամ քաղում աւարաւ։

բ. ԱԳԱԹԱՆԳԵՂ ԻՒ ՄԱԿԱԲԱՅԵՑԻՔ

1

ԱԳԱԹ. «Վասն հաւրամոյն քաջութեանն Տրդատայ, եւ որ ինչ գործ գործեաց յամս յաւուրս (տպ. յաւուրց) իւրոց ժամանակաց». Յոյք. 20։

ՄԿԲ. «Եւ կացոյց (Լիւսիաս) թագաւոր զորդի իւր (Անտիոքայ Երեւելւոյ) Անտիոքոս, եւ եդ անուն նմա Հաւրամոյն Անտիոքոս». Ա. զ. 17.—«Վասն Հաւրամոյն Անտիոքայ անաւրէն զաւակի՝ ցուցցուք համառաւտ». Բ. ժ. 10։

=ԴԻՏ. Հաւրամոյն ի գիրս Մակաբայեցւոց եդեալ է ի տեղի յոյն բառին Eupátor, որ է ծնեալ ի քաջանուն հաւրէ. նոյն է եւ Քաջահայր, անդ, Բ. բ. 22. «Վասն ընդ Երեւեալ Անտիոքայ (Antiochus Épiphane) կամ ընդ Քաջահայր որդի նորա ճակատամարտս». զոր Թարգմանիչն Եւսեբեայ, Ժմ. 166, եւ Քր. 136, կը կոչէ ըստ յունին Եւպատովր։ Ուրեմն եւ առ Ագաթանգեղի Հաւրամոյն է Քաջանուն հաւր որդի, եւ թերեւս ուղղելի է «Վասն Հաւրամոյն Տրդատայ քաջութեանն»։ Յառաջին տպ. Ագաթ. 16, գրեալ էր հօրամոյցն. այսպէս ունի եւ Նոր Հայկզ. ի հօրամոյն, որ եւ կը գրէ. «Նոյնպէս (այս ինքն՝ հօրամոյն) թուի վերծանելի եւ ի բանն Ագաթ. յոյք. «Վասն հօ-

բանայցն քաղցութեանն Տրդատայ». իբրու նման հօրն»: Զգիտեմ թէ հարաւմոյց ունի աղերս ընդ հարանցամաց անտառյդ բառի Վարուցն Մաշտոցի. (տես Կոր.=Ազգաթ. Թիւ 73, ծան. 1.) իսկ հարաւմոյն թուի ի Մոյն (Ոսկ. Եբր. ԻԸ. 558) բառէ, յորմէ եւ Բարեմոյն (Առակք, ԺԷ. 22), Չարամոյն (Եփր. Սամ. 378), Տմոյն (Ոսկ. Եբր. ԻԸ. 558), Մունաւոր (Ոսկ. Կողոս. Ա. Ցորդ. 530):

2

ԱԳԱԹ. «Սկսանէր Խոսրով թագաւորն Հայոց . . . ապատակ ղնել ի կողմանս Պարսից». 30:

ՄԿԲ. «Սոքա ասպատակ եղին ի կողմն մի». Բ. ժբ. 13. —«Անտի ասպատակ ղնէին ի քաղաք մի Սկիւթացւոց». անդ, 29:

Տես եւ «Ասպատակ սփռեմ» յԱգաթ.=Բիւզ. Թիւ 19. «Ասպատակ տամ» ի Բիւզ.=Մկբ. Թիւ 74:

3

ԱԳԱԹ. «Ուխտ եդեալ միանգամայն վրէժ խնդրել մեծաւ քինութեամբ զանկանելն իւրեանց ի տէրութենէն,՝ սպառսպուռ ջանայր զվրէժ խնդրել». 31:

ՄԿԲ. «Եւ խնդրեցին սպառսպուռ զվրէժ արեան եղբաւրն իւրեանց». Ա. Թ. 42:

4

ԱԳԱԹ. «Մեծամեծս փքայր՝ ի բազմութիւն զաւրացն ապաստան եղեալ». 31:

ՄԿԲ. «Բայց ինքն մեծամեծս փքայր ի հպարտութիւն ամբարտաւանութեան իւրոյ». Բ. Թ. 4:

5

ԱԳԱԹ. «Անտի սմա ձեռն տուեալ ի կողմանց Քուշանաց . . . ի քաջ ազգաց եւ ի մարտիկ զաւրացն». 32:

ՄԿԲ. «Ի նմին տեղւոջ տապաստ արկանէին իբրեւ երիս բիւրս այր պատերազմի ի մարտիկ զաւրաց անտի». Բ. ժբ. 23.

ՄԿԲ. «Ի զաւրատ ամին միւս
սիա)». Ա. գ. 28։

9

ԱԳԱԹ. «Զաւր բազում կուս
ՄԿԲ. «Զաւրաժողով լինէր (Անս
բազում յոյժ». Ա. գ. 27—28։
ԲԻԻԶ. «Գունդ կազմեաց, եւ
կուտեաց զաւրավարն Հայոց Մ
զաւրաժողով լինէր Արշակ արքայ
զաւրս բազումս». Դ. իե. 144։

1(

ԱԳԱԹ. «Զաւր բազում կուտ
զնոյն զաւր կոչէր». 34—35.—«
տակ առնել, անդրէն արշաւ
(տպ. այլազգ. տես յԱգաթ.=Բ
ՄԿԲ. «Եւ ընդ նոսա ար
զար հեծեալ եւ եւթն հազար
«Եւ զումարտակ արար ի վե
ԲԻԻԶ. «Գումարէր զզա
աւագանւոյն ընդ զաւրսն ա
ամենայն ի ձեռս նոցա». Դ.
բազում իբրեւ զաւազ ծովո
=ԴԻՏ. Գումարտակ
gumartèn, Կազմել, շարել
տպ. Ք. Պատկանեան, 19

ԱԳԱԹ. «Իսկ իբրեւ
Պարսից, . . . նեղեցաւ,
նէր յանձն իւր». 35։
ՄԿԲ. «Իբրեւ ետ
. . . զարհուրեցաւ . . .
Տես աստէն եւ
=ԴԻՏ. Միւս Դ

ՄԿԲ. «Ցաւուրս ժամանակացն այնոցիկ՝ ելին զաստանք յորդւոցն Իսրայելի արք անաւրէնք». Ա. ա. 12.—«Ցաւուրս ժամանակացն այնոցիկ համբարձաւ Մատաթի Յմաւոնեան». բ. 1։ Այլուր. «Ընդ աւուրսն ընդ այնոսիկ ժողովեաց Ցովնաթան զաւրս ի Հրէաստան». Ա. ժա. 20։

—ԴԻՏ. Բիւզանդ կ'ըսէ Զայնու ժամանակաւ. Գ. ի. 49. Դ. ե. 80, եւ այլն. Զայն ժամանակաւ. Ե. լէ. 239. Առ այնմ ժամանակաւ. Զ. ե. 264։—Ծանօթ է Աւետարանաց սովորական ասացուածն Ցաւուրսն յայնոսիկ։ Այլուր կ'ըսուի. «Ի ժամանակին յայնմիկ առաքեաց Մարովդաք Բաղդան . . . հրովարտակս եւ պատարագս առ Եզեկիա». Դ Թագ. Ի. 12. Ես. ԼԹ. 1. Եւս. Ժմ. 20.—«Ընդ այնու ժամանակաւ առէ Տէր ցՑեսու». Ցես. Ե. 2.—«Առ այնու ժամանակաւ Մատաթիաս ոմն . . . դիմէր ի վերայ զաւրավարացն Անտիոքայ՝ որդւովքն հանդերձ». Եւս. Քր. 136. զոր համեմատէ ընդ Մկբ. երկրորդ վկ.—«Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ արկ Հերովդէս արքայ ձեռն՝ չարչարել զոմանս յեկեղեցւոյն». Գործք Առաք. ԺԲ. 1։

-17

ԱԳԱԹ. «Զաւրաժողով լինէր իշխանն Գնդաց . . . գայր տալ մարտ պատերազմի (տպ. պատերազմ) ընդ իշխանին Ցանաց». 44։

ՄԿԲ. «Զաւրաժողով լինէր Դեմետր արքայ . . . զի եկեսցէ տացէ մարտ պատերազմի ընդ Տրիփոնեայ». Ա. ժդ. 1։

—ԴԻՏ. Կան յՍռաջին Դասի առանձին առանձին Զաւրաժողով լինիմ, Դ Թագ. Թ. 14. Առակք, Լ. 27. Ես. ԻԹ. 8. Զաք. ԺԴ. 12. Դան. ԺԱ. 40. եւ Տամ մարտ պատերազմի ընդ, Ցուդիթ, Է. 9. Ոսկ. Մտթ. Ա. ժգ. 182։

18

ԱԳԱԹ. «Պատգամս յղէր աւրինակաւս այսուիկ». 44.—«Իսկ միւս եւս այլ հրովարտակ հրամայեաց գրել . . . աւրինակաւս այսուիկ». 110։ Այլուր. «Հրաման ետ Տրդատ արքայ՝ հրովարտակ առնել ընդ ամենայն աշխարհս իշխանութեան իւրոյ,

21

ԱԳԱԹ. «Զհայրենեաց տէրութիւնն յինքն նուաճեաց (Տրդատ), եւ զաւրացաւ ի վերայ սահմանաց նորա». 49։

ՄԿԲ. «Կործանէր զբագինսն, . . . եւ զաւրանայր ի վերայ սահմանացն Իսրայելացւոց». Ա. բ. 46։

22

ԱԳԱԹ. «Հրաման ետ Թագաւորն Գրիգորի, զի պսակս եւ թաւ ոստս ծառոց՝ նուէրս տարցի բագնին Անահտական պատկերին». 49—50։

ՄԿԲ. «Զի յուշ լիցի նոցա՝ որպէս յառաջ զտաւնս Տաղաւարահարացն ի լերինս պաշտէին . . . վասն այսորիկ ոստս առեալ գեղեցիկս ի թաւ ծառոց, եւ ոստս արմաւոյ՝ այնմիկ որ աջողեաց նոցա սրբել զիւր տեղին». Բ. Ժ. 6—7.—«Մատուցանէր նմա . . . ոստս թաւս ի պտուղ մեհենին». ԺԴ. 4.—«Տաղնապէին զնոսա՝ պսակեալս թաւ ոստովք Ոսպանդարամետին կաքաւել». Զ. 7։

=ԴԻՏ. Ագաթանգեղին Թաւ ոստք ծառոց կը գտնուի եւ ի գիրս Նեեմեայ, Ը. 15. «Բերէք տերեւս ձիթենեաց, եւ տերեւս ի ծառոց սաւսեաց, եւ տերեւս մրտոց խնկենեաց, եւ տերեւս արմաւենեաց, եւ տերեւս ի թաւ ոստոց ծառոց. եւ արարէք ձեզ տաղաւարս ըստ գրեցելոցն». Համեմատէ ընդ առաջին վկ. Մակաբայեցւոց, եւ միտ դիր որ նոյն բան գրեալ է այսպէս ի Ղեւտ. ԻԳ. 40. «Եւ առնուցուք ձեզ յաւուրն առաջնում պտուղ զգեղեցիկ ծառոց, եւ կողերս յարմաւենեաց, եւ ոստս ի տերեւախիտ ծառոց եւ յուռեաց, եւ ոստս հագնեաց ի ձորոց, ուրախ լինել առաջի Տեառն զեւթն աւր»։

23

ԱԳԱԹ. «Յայնժամ խաւսել սկսաւ Թագաւորն ընդ Գրիգորի, եւ ասէ. Այր մի աւտարական եւ անաշխարհիկ՝ եկիր յարեցար ի մեզ, եւ զիա՞րդ իշխես պաշտել զԱստուածն զայն՝ զոր ես ոչ պաշտեմ». 50։

ՄԿԲ. «Առին (վաճառականք աշխարհին) զարծաթ եւ զոս-



ղղեակ բերղն Արտաշատ քաղաքին, եւ իջուցանել ի վիրապն ներքին». 103։

3. Այսպէս կը կիտադրէ Զամչեան (անդ), եւ յետ նորա Հ. Սուքիաս Վ. Պարոնեան. տես Քննասէր, Պրակ Ա. 13, ծան. 1։ Սխալ է ի տպա-

եւ իմ անարժանիս՝ եղեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ. որոց առաջինն Սամուէլ անուն, այր սուրբ եւ բարեպաշտաւն՝ եպիսկոպոս կացեալ տանն արքունականին»։ Այլագիր հատուածդ խանգարեալ է առանց իրիք երկբայութեան, եւ թուի ուղղելի. *«յորոց եւ գտան արժանիք ելանել ի կարգ*[1] *եպիսկոպոսութեան վիճակի.* որոց առաջինն Սամուէլ անուն» եւ այլն։ Կորիւն կ'ըսէ թէ հրամանաւ Բակուր թագաւորին Վրաց՝ յայլեւայլ գաւառաց պատանիք կը յանձնուին ի խնամս Սրբոյն Մաշտոցի, եւ նա կը կրթէ զնոսա, եւ զոմանս—որոց առաջինն էր Սամուէլ—արժանի կը համարի եպիսկոպոսութեան. եւ անտարակոյս Սամուէլ եւ միւս եպիսկոպոսքն Վրաց ձեռնադրեալ են՝ ոչ ի Մաշտոցէ որ էր լոկ վարդապետ, այլ յեպիսկոպոսէ աշխարհին որ կը կոչուէր Մովսէս։ Զամչեան՝ յանիմաստ հատուած մի վստահացեալ՝ զԿորիւն ձեռնադրել կու տայ Սրբոյն Սահակայ յեպիսկոպոսութիւն Վրաց աշխարհին «ի վերայ Հայոց եղելոց անդ»(!), որ է առասպելաց առասպել. եւ այսպէս ի Զամչեանէ ճարտարապետեալ Կորեան եպիսկոպոսութիւնն Վրաց՝ հետզհետէ կը դարդարուի ի ձեռն Աւգերեանի եւ Սարգիսեանի պէսպէս յաւելուածովք, թէ Կորիւն էր եպիսկոպոս ի սահմանակցութեան Վրաց եւ Աղուանից (!), յետ Սամուէլի (!), ըստ աւանդութեան Հայոց (!)։

4. (երես 5.) *Ստոյգ թուականք մահուան Սրբոյն Սահակայ եւ Սրբոյն Մաշտոցի.*—Կորիւն կը գրէ (յերես 25)՝ թէ Սահակ վախճանեցաւ «*Յառաջնումն ամի Յազկերտի՝ որդւոյ Վռամայ (Հինգերորդի)*. . . *ի կատարել ամսեանն Նաւասարդի*». (*հմմ ըստ Ղ. Փարպեցւոյ, Պտմ*. 63, «յամսեանն Նաւասարդի, որ աւր երեսուն էր ամսոյն»)։ Նկատմամբ Մաշտոցի՝ զկնի ասելոյ (յերես 26) թէ «*Անդէն ի նմին ամի, յետ ամսոց վեցից անցելոց վախճանի երանելւոյն Սահակայ,* . . . *հասանէր Սրբոյն (Մաշտոցի) քրիստոսակոչ կատարումն*... *յերեքտասաներորդում ամսեանն Մեհեկանի*», կը յաւելու (յերես 29) նշանակել ճշգրտիւ թէ քանի ժամ տեւեց Մաշտոցի «հաւատքն», որ է կրօնաւորութիւնն. թէ որչափ տարի կը գումարուի ի դպրութենէն

1. Տես «Ի վանականաց կարգ ելանել» տողէն, 15, թիւ 7։

մին 361 եւ մեռեալ ուԹսնամեայ ի 44[1]
ցւոյ Պատմութիւնն՝ որ կ'աւարտի մահ
նի, ըստ նոյն Դաթըրճեանի, ցամ Տե
սօրեայ, 1887, երես 11 ա.)։ Ցի
Խորենացւոյ Պատմութեան (Ս. Ղա
5) Մաշտոցի մահուան օրն կը նշա
Հ. Ղ. Ալիշանի համար՝ Սահակայ
439 (Ցուշիկք հայրենեաց Հայ
ցին՝ 17 Փետրուար 440 (Օրա
հաշուումն կը սրբագրուին այս
Բայց երկու տեղիք Փար
Թեանց Թուին հակառակել
կը դնէ յառաջնումն ամի
տեմրեր)։ Փարպեցի կ'ըսէ յ
հակ)... ի սկզբան ամին
Խորենացի, Գ. կէ. 566—
հակայ), կեցեալ եպիսկո
սկսեալ յերրորդ ամէ Վ
ցսկիզբն ամին երկր
Թագաւորութեան եր
Աւգոստոս, վեր ի վե
նալ Թէ Սահակ վա
նացւոյ՝ յ'7 Սեպտե
Ցողկերտի», «Սահ
Ցազկերտի»). եւ
Մեհեկանի՝ յետ
Մաշտոց վախճ
կը գրէ որ Թէ
ամի Երկրոր
պեցի եւ Խո
բան ա (ա
ցսկիզբն ս

1.
ի նմին

executere, conjecturam facimus, deletâ voce *anni*, legendum esse, *usque ad initium secundi Isdigerdis*„.

5. (երես 6.) Մեկնութիւն հատուածի իրիք Պատմութեան Թովմայ Արծրունւոյ, յորում եւ զՉորրորդ գրոց Պատմութեանն Մ. Խորենացւոյ.—Յերես 82 Պատմութեանն Թովմայ Արծրունւոյ կը կարդանք. «Եւ քանզի յետ մահուանն մեծին Սահակայ Բագրատունւոյ սպարապետի, ասպետի եւ դաւրավարի Հայոց, հաւատացեալ էր Թէոդոսի կայսեր զսպարապետութիւնն Հայոց Համազասպ Մամիկոնէի, եւ որդւոյ իւրում Վարդանայ, երկեաւ Վարդան ի մարզպանէն բնակել յանդորրու, այլ այնր աղագաւ էանց գնաց յամուրսն Տայոց...։ Սահակս այս այն Սահակ է՝ որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս, տիեզերահռչակեալ քերթողն, գիրս Պատմութեան Հայոց Մեծաց, հրաշազան յաւրինուածով, սկսեալ յԱդամայ մինչ ի կայսր Զենոն. որոյ ժամանակ կենացն տեւեալ ձգեալ ամս հարիւր [եւ] քսան, լի եւ պարարտ ծերութեամբ. որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոստաբանեալ Պատմութեանն Մովսեսի Խորենացւոյ վերադարձութեան, ի վերայ երկեցունց[1] դրուագեալ հատուածին. զոր եւ երանելին Կորիւն, ուսումնակից Մովսեսի եւ աշակերտ Սրբոյն Մեսրովպայ, յիւրումն ստուգաբանեալ Պատմութեան՝ զայսոսիկ մեզ հաւաստարմացուցանէ»։

Կան ի հատուածիս երկու մեծ սխալք՝ որ Պատմագրին են, եւ մի մեծ շփոթութիւն՝ որ նորա գրակազմին կամ ընդօրինակողին Թուի վերագրելի։ Պատմագրին սխալքն են՝ նախ գերիտասարդ իշխանն Սահակ Բագրատունի[2],—որոյ խնդրանօք Խորե-

1. Տպագիրն Կոստանդնուպոլսի, 82, կը կրտադրէ եւ կը գրէ «Մովսէսի Խորենացւոյ, վերադարձութեան ի վերայ երկոցունց». նոյնպէս կը կրտադրէ եւ տպ. Պետրբուրգի, 76, այլ փոխանակ երկոցունց՝ ունի երկեցունց։ Տես երկեցունց եւ այլուր ի Պատմութեան Արծրունւոյն. «Վասն ապստամբութեան Տաճկացն՝ որ Կայսիկքն կոչին, եւ իշխանին Սիւնեաց ի Թագաւորէն (տպ. ի Թագաւորեյն) Սմբատայ, եւ դարձեալ երկեցունց հնազանդութիւն». տպ. Կ. Պոլսի, 276. տպ. Պետրբ. 245։ Յայլ գիրս նախնեաց հանդիպած չեմ երկեցունց հոլովոյդ։

2. «Այլ տացուք զայսոսիկ մանկականի բոյոց տիոց եւ անհասու»

ժամանակ կենացն ուսեալ ձգեալ ամս հարիւր [եւ] քսան, լի եւ պարարա ծերութեամբ» անմիջապէս յաջորդելով այլագիր հատուածն «որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այսս եւ այլն, այնպէս իմն թուի թէ Թովմա Արծրունի ըսել կ'ուզէ՝ որ ինքն իսկ Խորենացի (!) ի չորրորդ դպրութեան իւր խոստացեալ վերադարձութեան Պատմութեանն կը վկայէ զանձնէ թէ ապրեցայ (!) 120 տարի, կամ որ նոյն է՝ թէ մեռայ (!) 120 ամեայ, եւ թէ Կորիւն եւս (!) կը հաստատարմացնէ յիւրում տաղարան Պատմութեան թէ Խորենացի արդարեւ վախճանեցաւ ի հասակի 120 ամաց. Եւ զի Կորիւն ի Վարս Մաշտոցի բնաւ չյիշատակեր զանուն Խորենացւոյ, Կիրակոս Գանձակեցի՝ որ յ'ԺԳ դարուն անշուշտ կը կարդար զՊատմութիւն Արծրունւոյն ըստ մեր այժմու օրինակաց՝ հետեւցուցած է ի վերայգրեալ բանից Թովմայի թէ Կորիւն գրեց «զՊատմութիւն Սրբոյն Մեսրոպայ եւ այլ ժամանակաց»։

Ըստ իմում կարծեաց՝ Արծրունւոյ այլագիր հատուածն՝ բնագրին թղթոց յետեւյառաջութեամբ անցած է յիւր բնիկ տեղւոյն յ'81 երեսէ յերես 82, ուր ոչ միայն բան բանի չյարմարիր, այլ եւ անլուծանելի առեղծուած մի կը կազմեն չորեքեան բառքն ի վերայ երկեցունց դրուագեալ հատուածին։ Առ ի գտանել զուղիղ դասաւորութիւն բանից Պատմագրին՝ պէտք է 7—17 տողից 81 երեսին կցել զ'20—27 տողս 82 երեսին, այսպէս. «Եւ այս ամենայն այսպէս եղեալ, կեցեալ Սուրբն Սահակ ամս հարիւր [եւ] քսան[5], փոխի յաշխարհէս ի կարգս Հրեշտակաց, եւ տարեալ հանգուցանեն զնշխարս Սրբոյն [ի] Յաշտիշատ Տարաւնոյ, ի տեղւոջ վկայարանի Սրբոյն Յոհաննու Մկրտչին եւ Աթանագինի վկային։ Ի նմին ամի յետ վեց ամսոյ անցանելոյ փոխի եւ սուրբ վարդապետն Մաշտոց. եւ խաչանշան լուսով խաղացուցանեն բազմութեամբ նախարարացն Հայոց ի ձեռն Վահանայ Ամատունւոյ, որ էր ի ժամանակին սպարապետ[6]

5. «Անտեղի է պատմչաց ամանց ըսածն՝ թէ 110 կամ 120 տարի ապրած ըլլայ Ս. Սահակ. վասն զի այդ թուով՝ ծնունդն կ'իյնէ յ'319 կամ 329 թւին Քրիստոսի, յաւուրս Ս. Լուսաւորչի». Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, Հ. Ա. 314։

6. Ըստ Կորեան, Վարք Մաշտոցի, 27, Վահան Ամատունի ոչ էր

մի տեղում չէ յայտնուել Խորենացու Չորրորդ գիրք և ոչ մի ուրիշ տեղում էլ չէ յիշուած այդ մասին, բացի Արծրունու այս հատուածից» (անդ, 94). մինչդեռ Արծրունի որոշակի կ'ըսէ եւ այլուր. «Չորրորդ դպրութիւն Մովսէսի», երես 5. «Երկրորդ պատմագրութիւն Մովսէսի», երես 63: «Խորենացու Չորրորդ գիրքը» վերնագրով յօդուածն՝ հրատարակեալ յԱրարատ ամսագրի, 1891, երեսք 87—106, որով Տ. Մկրտչեան կը կարծէ թէ «յօդս է ցնդում Չորրորդ գրքի գոյութեան խնդիրը» (անդ, 97), անընդունելի է ինձ յառաջին բառէն մինչև ի վերջինն. ոչ ինչ ընդհատ եւ Խորէն Վ. Ստեփանէի գրածներն յ'Առաջաբանի աշխարհաբար թարգմանութեան Խորենացւոյ Պատմութեան, երեսք ԼԸ—ԽԳ[10]:

M. Brosset հրատարակած է ի Պետերբուրգ յամին 1874 (ի մատենին *Collection d'historiens arméniens*, Հ. Ա. երեսք 1—266) զգաղղիերէն թարգմանութիւն Պատմութեան Թ. Արծրունւոյ, կարի անշահ: Աւասիկ թէ ինչպէս հասկացած է զհատուածն «որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս . . .» "ainsi qu' il est exposé et déclaré dans le IVe livre de l'Histoire (de Mosé Khorénatsi), en se référant à deux des divisions précédentes„. երես 68. կամ ինչպէս կը թարգմանէ անդ ի ծանօթութեան, "dans la IVe section ou sommaire de l'Histoire annoncée, avec référence à deux sections indiquées sommairement„. ուր եւ կը յաւելու. "Si ce n'est pas là le sens exact, je ne sais quelle autre version est possible„. ո՜ւր Թ. Արծրունի, եւ ո՜ւր Բրոսէ:

---

10. Որչափ ստոյգ է թէ Խորենացի հայաձեւալով գրած է գիրս գիրս Պատմութեան իւրոյ, նոյնչափ ստոյգ է թէ ունէր ի մտի գրել պարապով Յաւելուած մի կամ Չորրորդ գիրս. «Աւելորդ համարելով զարտաքնոցն երկրորդել յաղագս խնդրանն առասպելս, բայց եթէ զՆիսն». Ա. գ. 18.—«Զորս ոչ կարեւոր համարեցաք այժմ անուամբ թուել, բայց զՆիսն». Բ. ծ. 276.—«Ոչ ինչ վասն այնց ազգաց . . . ճառեսցուք . . . այլ միայն զորս հաւաստի գիտեմք զՆիսն». Բ. կգ. 306.—«Վասն երկարութեան առաջիկայ գործոյս՝ այլում տեղւոյ եւ ժամանակի զայսոսիկ թողեալ». Ա գ. 20.—«Զայլն վասն սորա (Ննոսայ) ի տեսութեանց՝ ի հրաւիրեալն մեր յուղարկեսցուք տեղի». անդ, 22. տես եւ զբանս իւր զորոյն Սահակայ, Գ. կէ 576, զոր արդէն յիշեցի:

յիտալերէն թարգմանութեան Պատմագրիս *nipote* գրած են. բայց եթէ յիտալական լեզուի ներելի է զԹոռն թարգմանել լատինաբանութեամբ *nipote*, գաղղիերէն լեզուն կը պահանջէ *petit-fils*, եւ ոչ *neveu*, որ է եղբօրորդի, քեռորդի։ Կը գտնուի *neveu*=Թոռն յայլ եւ այլ օրինակութիւնս Կոռնէյլի եւ Ռասինի. այլ այս նշանակութիւն՝ վաղուց խափանեալ է, կ'ըսէ Լիտրէ, *Dict. de la langue française*, ի բառն Neveu, առաջին նշ.—«Ղեւոնդ». 17. Léon. p 12 a. Ղեւոնդ է Léonce, լտ. Leontius, իտ. Leonzio. Լեւոն է Léon, լտ. Leo, իտ. Leone.—«Զգոյշ լինիջիք անձինդ». 19. Veillez sur *vos personnes*. p. 12 b. փոխանակ *vous-même*. —«Աղէ ածէք զմտաւ որ այսպիսի համբերութիւն . . . կրեաց, զի մի աշխատ լինիցիմք եւ լքանիցիմք». 24. Réfléchissez... qu'il endura *cette sorte de passion, pour que nous ne nous reposions pas et que nous ne nous délassions pas*. p. 13 b. շատ այլանդակ թարգմանութիւն. էմին չէ հասկացած թէ է բանն Պաւղոսի, Եբր. ԺԲ. 3, որ ի Նոր Կտակարանին de Genoudeի է այսպէս. "Pensez donc en vous mêmes à celui qui a souffert de si grandes contradictions..., afin que vous ne vous découragiez point, et que vous ne tombiez pas dans l'abattement„. —«Զորայ եւ զատուն յիշատակի սրբոյն տաւնախմբեն յերեսուն նաւասարդի ամսեանն». 29. On *fêta* l'anniversaire de la fête du saint, le 30 du mois de navassart. p. 14 b. (on *fêta la fête!*). թարգմանելի էր. "Et [tous les ans] on *célèbre* la mémoire (կամ le jour de la mort) du Saint le 30 du mois de Navaçard„.—«Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ ինքն (աղ. իւր և) զհոգեւոր եռանդն բորբոքէր յաստուածսիրութիւն». 31. Tandis qu'il excitait ainsi l'ardeur spirituelle *du prochain* à l' amour de Dieu. p. 14 b. թարգմանելի էր *de son entourage*.—«Իսկ բարեացապարտն Վահան յանկարծահաս կենաց, ապանջական ցանկալի ամենայն սրբոց լինէր, որ աշխարհածընունդ հայրենեացն սեպհական որդի գտեալ՝ շնորհաւքն Քրիստոսի մերձաւոր կենացն յաւիտենից լինէր». 35. Le bienfaiteur Vahan mourut tout à coup et fut reçu avec joie par tous les saints. S'étant montré un vrai fils de sa patrie, d'où sortit l'humanité, il fut digne d'obtenir par la grâce du Christ

(Գ. խթ. 507), թէ ունէր «աշակերտս վարժուն..., արք կրաւնաւորք, խարազնազգեստք, երկաթապատք, բոկագնացք, որ յար ընդ նմա շրջէին. որովք մշտնջենաւոր պաշտամամբ կատարէր զկանոնն, որպէս զայն՝ որ յանապատսն էին»։ Ի գիրս մեր կը յիշատակուին յանուանէ իբր աշակերտք անմահ կաթուղիկոսին, Եզնիկ Կողբացի (Կորիւն, *Վարք Մաշտոցի*, 21).—Երեմիա սարկաւագապետ (նոյնն, անդ, 25. Խորեն. Գ. կէ. 567).—Աբրահամ եպիսկոպոս Մամիկոնէից (Թ. Արծր. 90).—Անդրէաս («Աբեղայ մի Անդրէաս անուն ի Ղազարու վանացն՝ որ է Սուրբ Առաքելոցն Մշոյ...։ Եւ էր Անդրէասն այն յաշակերտաց Սրբոյն Սահակայ». Յայսմաւուրք, Արեգ իբ. տես Սոփ. Հայկ. Թ. 58—59, ծան. 10. տես եւ Վարդան Արեւելցի, Պատմ. 111)։

Մաշտոցի աշակերտք կը ճանաչուին՝ Յովսէփ Վայոցձորեցի (Կորիւն, 1. Խորեն. Գ. կէ. 570. Ստ. Ասողիկ, Պատմ. Բ. բ. 78).—Յովհան Եկեղեցային, եւ Յովսէփ Պաղնացի (Կորիւն, 10. Խորեն. Գ. ծգ. 520).—Տիրայր Խորձենացի, եւ Մուշէ Տարաւնեցի (Կորիւն, 14. Խորեն. Գ. ծդ. 522. Փրպ. Պատմ. 29. յետին երկու պատմիչքդ՝ Տէր կ'անուանեն զՏիրայր).—Ենովք, եւ Դանան (Կորիւն, 18. Խորեն. Գ. կ. 542).—Յովնաթան (Կորիւն, 19. Խորեն. Գ. ծդ. 523).—Թադիկ, որ թուի Բասենոյ եպիսկոպոսն, Նահատակեալ յԱսորեստան (Կորիւն, 27).—Յովհան Խոստովանող (նոյնն, 28).—Ղեւոնդ Վանանդեցի («Այրն Աստուծոյ Մաշտոց՝ վարդապետն նորին», այս ինքն՝ Ղեւոնդի. Փրպ. Պատմ. 119 տես եւ Խորեն. Գ. կ. 542. Թ. Արծր. 81).—Կորիւն՝ որ «Հայր իմ» կը կոչէ զՄաշտոց յերես 28. (տես և Փրպ. Պատմ. 25,119. Թ. Արծր. 82). —Արձան (Փրպ. Պատմ. 119)։

Թէ ոմանք ի վերոյիշելոցդ կարեն աշակերտած լինել թէ Սահակայ եւ թէ Մաշտոցի, չէ ինչ անհաւանութեան. ահաւասիկ Յովսէփ Պաղնացի, աշակերտ Մաշտոցի, կը կոչուի եւ աշակերտ Սահակայ. «Յովսէփ եւ Եզնիկ, *աշակերտք Սահակայ*», կը գրէ Ստ. Ասողիկ, Պատմ. Բ. ա. 75։ Կը գտնենք եւ այլուր (Սոփ. Հայկ. ԺԱ. 47) որ Թաթուլ եւ Վարոս «աշակերտք էին սուրբ հայրապետացն (իմա՝ վարդապետացն) *Սահակայ եւ Մեսրոպայ*»։

1881, երես 36)։ Բազումք յարդեաց զնորին Խորենացւոյ *Կղեսուր* բառն (*Պատմ.* Բ. ը. 176) կ'իմանան *Կիլի Սիւրիա*[2]. այլ *Կղեսուր* է յունարէն *Կլիսուրիա* կամ *Կլիսուրա*, Կիրճ կամ Կապան լերանց, եւ Լեռնային գաւառ, ինչպէս արդէն գրած եմ յիմ *Տեղեկութիւնս ի գիրս Պատմութեան Ստ. Տարօնեցւոյ Ասողկան կոչեցելոյ*, երեսք 36—37։—*Խորին Եբրայեցի* (Գէ. Սկեւռ. Մեկն. Գծ. ԻԱ. 185) կը նշանակէ յունարէն ոճով Բուն կամ Ճշմարիտ Եբրայեցի։

9. (Երես 21.) *Հ. Գար. Զ., եւ Գեր. Այտընեանի Քննական Քերականութիւնն*.—Ծանօթ է բանասիրաց թէ ըստ Հ. Գար. Զ. ի՛ ինքն իսկ Փաւստոս Բիւզանդ հայերէն գրած է զիւր Պատմութիւնն ի Չորրորդ դարու. տես *Պատմ. Հայերէն Դպրութեանց. Ա. Հին Մատենագրութիւն* (տպ. 1865), 140—142, եւ *Հայկ. Հին Դպր. Պատմ.* (տպ. 1886), 229—230, ուր կ'ըսէ մասնաւորապէս. «Թէպէտ և եղած են ոմանք որ կարծեցին թէ սկզբնագիրը յունարէն կամ ասորի լեզուով եղած ըլլայ, ու ետքը թարգմանուած ի հայ, բայց (տպ. բաց. այսպէս եւ տպ. 1865, 142) հայկական լեզուին քաջ տեղեակ ոմանց բանասիրաց անհաճոյ կը թուի այդ կարծիքը». իմա՛ «հայկական լեզուի քաջ տեղեակ չեն անոնք՝ որ կը կարծեն թէ Բիւզանդայ սկզբնագիրը յունարէն կամ ասորի լեզուով եղած ըլլայ»։ Այլուր կ'ընդօրինակէ ի *Քննական Քերականութենէ* շար մի վկայութեանց՝ զորս Գեր. Այտընեան անխտիր Բ (=Բիւզանդ) սկզբնատառիւ նշանակած է, բայց չեն ամենեքին ի Բիւզանդայ, այլ ոմանք ի *Վարուց Մաշտոցի* Կորեան Վարդապետի, կէսք ի գրոց Մակաբայեցւոց, եւ այլք ի Պատմութենէ Հարանցն Եգիպտացւոց, որ առ հասարակ Հինգերորդ դարու մատենագրութիւնք են։ Հ. Գար. Զ. համարելով թէ ա՛ եւ է վկայութիւն յիշատակեալ ընդ Բ գլխագրով է ուղղակի ի Բիւզանդայ Պատմութենէն՝ որ է Չորրորդ դարու մատենագրութիւն ըստ իւր կարծեաց, կ'ըսէ յիւր գիրսն *Պատմ. Հայերէն Դպրութեան. Բ. Նոր Մատենագրութիւն* (տպ. 1878), 68—69. «Հետազայ օրինակ-

---

2. Այսպէս եւ *Հանդէս Ամսօրեայ*, 1892, երես 291 առ.

արանցդ այդոցիկ արբից յանձինս իւրեանց. վասն զի ոգւովքն իւրեանց բերին զայդ. Ա. ժա. 19.	ոգւովք չափ՝ ըմպիցեմ. Բ. իդ. 17.
Հարիւր հազար արանց որ ճգէին սուսերս. Ա. իա. 5.	Հարիւր հազար արանց զաւրու սուսերամերկաց. Բ. իդ. 9.
Եւ արդ տես զինչ բան տաց պատասխանի որ առաքեացն զիս. Ա. իա. 12.	Եւ արդ ծանիր եւ տես՝ զինչ պատասխանի տաց առաքչին իմոյ. Բ. իդ. 13.
Լսել զաղաւթս[2]. Բ. զ. 19.	Լսել աղաւթից. Գ. ը. 29.
Եւ թագուհին[3] Սաբայ... եկն... յոյժ ծանր զաւրութեամբ. Բ. թ. 1. (տես դարձեալ թագուհի, անդ, 3. իսկ 12, տիկին.)	Եւ տիկինն Սաբայ... եկն... զաւրու ծանու յոյժ. Գ. ժ. 1.
Մի անգամ յերիս ամս. Բ. թ. 21.	Ցերեամ. Գ. ժ. 22.
Զինչ խորհիք պատասխանի առնել ժողովրդեանն այնմ բան ինչ. Բ. ժ. 6.	Զիարդ խորհիք՝ եւ տացուք պատասխանի ժողովրդեանն. Գ. ժբ. 6.

---

2. Կայ այս եւ ի ճառս Զգաւնի, ԺԳ. 242. բայց սովորական խնդրառութիւնն է աղաւթից։

3. Թագուհի կայ եւ յերգս երգոց. «Վաթսուն են թագուհիք եւ ութսուն հարճք». Զ. 7.—«Թագուհիքն եւ հարճք գովեցին զնա». անդ, 8։ Կայ եւ ի Լաբուբնա, 13, 15, 30։ Զգաւն ունի Քանանուհի, Բ. 43։ Ի Թուղթս Սրբոյն Իգնատիոսի կը գտնուին Եբրանուհի, 114. Իմաստուհի, 110, 114. Հաւատուհի. 113։ Ոչ ինչ կարեմ ասել զվաւերականութենէ բառիցդ. բայց Սարկաւագուհի եւ Քանանուհի, զորս կը նշանակէ Նոր Հայկզ. իբր յՈսկեբերանի Ա Տիմոթեայ եւ Մատթէի Մեկնութեանց, անհարազատ են։ Բիւզանդ ունի Համազասպուհի, անուն կնոջ. այսպիսի՞ ինչ է արդեօք եւ Ամուհեան, դուստր Աժդահակայ, յեւս. Ժմ. 22։ Խորենացւոյն Զարուհի եւ Տիգրանուհի, կին եւ քոյր Հայկազն Տիգրանայ, կը մնան խնդրական։

բառք Դասուց թարգմանութեանց հետ նմանութիւնքն են հետեւեալք·

1. *Ընդդիմանամ*. Եզր, Ա. ա. 27. բ. 29. ը. 52. (այլուր *Ընդդիմադարձ լինիմ*. Բ. դ. 14. *Ընդդէմ կամ*. Բ. դ. 15. գ. 11. է. 23)։ Տես *Ընդդիմանամ*, Լաբուբնա, 40. —«Իշխանաց մի *ընդդիմանայք*». Թուղթք Ս. Իգնատ. 104. Բիւզ. 31, 74, 105, 107, 129, 215 երկիցս. որ եւ *Դիմանամ*, անդ, 60։ Կայ մի անգամ եւ այլուր յԱռաջին Դասի *Ընդդիմանամ*, Սեբեր. Զ. 111. այս Դասուս սովորականքն են *Ընդդէմ կամ*, Եսթեր, ԺԳ. 4. *Ընդդէմ դառնամ*, Յեսու, ԺԷ. 14. Եսթեր, Ա. 16. Թ. 2. Յուդիթ, ԺԲ. 13. Յովբ, ԽԱ. 1. *Հակառակ կամ*, Յովբ, ԽԱ. 1. *Զդէմ ունիմ*, Դ Թագ. ԺԸ. 24. *Դիմադարձ լինիմ*, Եսթեր, Թ. 1. *Դիմակաց զտանիմ*, անդ, Ը. 8. *Դիմադարձիմ*, Ոսկ. Մատթ. Բ. իէ. 741. Նոյն, Ես. ԽԲ. 290։

2. «*Զհետ* ամի միոյ». Եզր, Ա. ա. 45.—«*Զհետ* այսորիկ». Ե. ա. 13.—«*Զհետ* այսր ամենայնի». Ա. ե. 1.—«*Զհետ* երկուց եւ երից աւուրց». Ա. թ. 4։ Տես «*Զհետ* երկուց ամաց». Մկբ. Ա. ա. 30.—«*Զհետ* որդւոցն եւ մայրն երանելի ի նոյն աւրէնս կատարեցաւ». Մկբ. Բ. է. 41.—«*Զկնի* վեց աւուր». Զգան, Բ. 36։ Յօրինակսդ *Զհետ* եւ *Զկնի* են փոխանակ *Յետ* նախադրութեան, (աշխարհաբար՝ *ետքը*). Առաջին Աշակերտաց սովորականն է՝ Երթամ, Արձակեմ, Աղաղակեմ *զհետ* կամ *զկնի* ուրուք, (աշխարհաբար՝ մէկուն *ետեւէն*)։

3. *Երկրպագեմ*. «Հաւթիմոս՝ որ *երկրպագէ* քեզ». Եզր, Ա. բ. 17.—«Եւ խոնարհեալ *երկրպագեցին* Տեառն Աստուծոյ». Նեեմի, Ը. 6.—«Քեզ *երկրպագեն* զաւրք երկնից». անդ, Թ. 6։ Համեմատէ. «*Երկրպագեալ*, ասէ, քեզ *երկրպագեսցեն* եղբարք քո». Եփր. Արար. 124.—«Զի մի *երկրպագեսցեն* արարածք ընդ Արարչին՝ արարածոց». Ղազար. 25.—«Որում եւ *երկրպագեալ*, եւ պատարագս մատուցեալ». Ագաթ. 297.—«Զի . . . Աստուծոյ *երկրպագեալ* ծունր կրկնեսցեն». անդ, 579։ Երկրորդ Դասն ունի եւ *Երկրպագիմ*, կրաւորական, շատ յաճախ. «Գաղի[ան]ոս առ ոմանս ի նոցանէ իբրու այն թէ *երկրպագելով երկրպագի*». Եւս. Եկեղ. Ե. իը. 409.—«*Երկրպագի*

7. *Գաղատոս*. «Եւ ետուն զինս զաղատոսաց եւ հիւսանց». Եզր, Ա. ե. 54.—«Եւ զաղատոսք չինոցն չինեցին զտունն Տեառն». անդ, 58։=«Եւ զաղատոս ճարտար կոբոխամիտ փորեաց է զհիմն». Զգօն, ԺԹ. 339.—«Դուք էք զաղատոսք ճարտարք եւ հիմնափորք». անդ, 372.—«Զբազումս ի հնացանէն աշխարհացուցչիք, զի կալեալս կապեալս տարցուք... ի գործ կատարործութեան, զաղատոս (զազատոսս?) ոսմաշէնս պիտոյից մեղաց քաղաքաց». Բիւզ. Ե. դ. 193։

8. *Տալ գիտել*. «Հայեցեալ ցնոսա վասն զի տացուք գիտել քեզ». Եզր, Ա. գ. 12.—«Տուաք մեք քեզ գիտել, թագաւոր». Բ. դ. 16.—«Մինչեւ տացեն գիտել Դարեհի արքայի». Բ. ե. 5.—«Ետու ձեզ գիտել». Բ. է. 24։=«Տուր գիտել ինձ զամենայն ինչ որ միանգամ արարեալ է զորա ի քաղաքիդ քում». Լաբուբ. 34.—«Ասէ՝ տուր ինձ գիտել, ով են լեռինքն այնոքիկ՝ զորս դուն ընդ ունիջ տանէիր». Բիւզ. Դ. ծգ. 169։—Կայ մի անգամ յԵղնիկ, 148, այլով դասաւորութեամբ. «Եւ զայն եւս գիտել ետ մեզ, թէ որոց նա կամի՝ յաղթականք կարեմք լինել, եւ որոց ոչ կամի՝ չկարեմք յաղթել»։

9. *Արկանեմ ի սուր սուսերի*. «Եւ ամենայն թագաւորք երկրի արկեալ զմեզ ի սուր սուսերի՝ գերեցին զմեզ». Եզր, Ա. ը. 78։=«Ցատակեաց զԴարա, ի սուր սուսերին էարկ զբնակիչս նորա». Զգօն, ԺԹ. 335։ (Տես «Արկանեմ ի սուր» յՄկաբ.=Բիւզ. թիւ 59, եւ «Արկանել ի սուր սուսերի իւրեանց» ի Բիւզ.=Մկբ. թիւ 66։)

10. *Զոհարան*. «Զոհարանք ոսկեղէնք՝ երեսուն, եւ զոհարանք արծաթեղէնք՝ հազար քսան եւ ինն». Եզր, Բ. ա. 9։=«Ոսկւոյք պատկաւք եւ արծաթի զոհարանաւք». Ագաթ. 34։ Ցօրինակս Զոհարան է Անօթ զոհից։ Իսկ յԵզր, Ա. ե. 50. Բ. գ. 3, է Սեղան զոհից, ինչպէս կ'ըսուի անդ, Բ. գ. 2, որ կը կոչուի Զոհանոց, Եւր, ԼԱ. 7. Թիւք, Գ. 31. Է. 1. Գ Թագ. Է. 48։

11. *Ժամանել հասանել*. «Եւ ժամանեաց եհաս ամիսն եւթներորդ». Եզր, Բ. գ. 1. Նեեմի, Է. 73։=«Ժամանել եւ հասանել խոստացելոց բարեաց նորա». Լաբուբ. 44։

12. «*Գիտութիւն լիցի քեզ*, թագաւոր, որ եթէ քաղաքն

եմ ալփն և ովն, ա է ակր Աստուած էն, ⁱ: որ գալոցն է ամենակալն»[4]։—Կը գրէ եւ Հ. Բարսեղ Սարգիսեան (*Ագաթանգեղոս*, 339). «Յայտնութեան գրոց թարգմանիչն՝ յետոյ է ժամանակաւ քան զԹարգմանիչն յունարէն Եզաթանգեղոսի», որ կ'ապրէր ի վախճան Վեցերորդ դարու կամ ի սկիզբն Եւթներորդին (անդ, 348)։—Հ. Յ. Գաթըրճեան (*Համագիտ Սրան. Ցուցանեա*, 22) համարձակ կը կոչէ *զՅայտնութիւնն* «Հայոց անծանօթ եւ մինչեւ ԺԲ դար գեռ իրենց Կանոնին մէջ չմտած գիրք՝ որուն ծանօթութիւնը հազիւ 10 երորդ դարուն ունեցան, անանկ *որ ցայն վայր ոչինչ նշմար այս ազգին մատենից մէջ կը գտնուի*»։—Վերջապէս կ'ըսէ եւ Հիւբշման գերմանացի հայագէտն (*Հանդէս Ամսօրեայ*, 1893, երես 17 *բ*). «Յայտնութիւնն Ը դարէն յառաջ թարգմանուած չէ»։

Ինձ թուի թէ այն նախնիքն՝ որ փոյթ ունեցած են թարգմանել զանվաւեր կամ գերկրայական մասունս անգամ Սուրբ Գրոց,—որպիսի են *Երրորդ Մակաբայեցիք* եւ *Երրորդ Կորնթացիք*,—չկարէին անտես առնել *զՅայտնութիւնն*. քանզի եթէ ոչ այլուստ, գոնէ *յԸնկեղեցական Պատմութենէն* Եւսեբեայ՝ որում կանուխ ծանօթացան՝ լաւ գիտէին զկանոնականութիւն գրոցս եւ զյարգ[5]։ Բայց հետեւեալ պարագայն այնպէս իմն իմաստասիրել կու տայ ինձ՝ որ հայերէն *Յայտնութիւնն* վաղ իսկ հրատարակեալ էր յԱռաջին Աշակերտաց՝ երբ մի ոմն

---

4. «Ի Յովհաննէ առ եւթն եկեղեցիս՝ որ են յԱսիա, շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ՝ յէէն՝ եւ որ էն՝ եւ որ գալոցն է, եւ յեւթն զաւրութեանց Հոգւոյն՝ որ է առաջի աթոռոյն իւրոյ. եւ ի Յիսուսէ Քրիստոսէ հաւատարիմ վկայէն, որ է անդրանիկ ի մեռելոյ*, եւ իշխան թագաւորութեանց երկրի. որ սիրեաց զմեզ, եւ ելոյծ զկապանս մեղաց մերոց արեամբն իւրով. եւ արար զմեզ թագաւորս եւ քահանայս Աստուծոյ եւ Հաւր իւրոյ, որում փառք . . .։ Ահաւասիկ գալոց է ընդ ամպս, եւ տեսցեն զնա ամենայն աչք, եւ տեսցեն զնա ծագք երկրի, եւ որք խոցեցին զնա՝ ամենեքեան յերկրի, և կոծեսցին ի վերայ նորա. այո՝ ամէն։ Ես եմ այբ, եւ ես եմ քէ, ասէ Տէր Աստուած, որ էն՝ եւ որ է՝ եւ որ գալոցն է՝ ամենակալ». Յայտն. Ա. 4—8։

*«Անդրանիկ ի մեռելոյ». Կողոս. Ա. 18։

5. Տես Եւս. Եկեղ. Գ. ժը 182. Դ. ժը. 290. Ե. ը. 359. Զ. իե. 473. Է. իզ. 572—580։

սըն վկայութեանն Ցիսուսի· (անդ, 576.)	վկայութեանն Ցիսուսի Քրիստոսի. Ա. 9.
Տուաւ նմա բերան՝ որ խաւսի զմեծամեծս, եւ տուաւ նմա իշխանութիւն տարի մի եւ ամիսս երկուս. (Է. Ժ. 537.)	Տուաւ նմա բերան խաւսել զմեծամեծս* եւ զհայհոյութիւն, եւ տուաւ նմա իշխանութիւն զամիսս քառասուն եւ երկու. ԺԳ. 5.
Երանի իցէ այնմիկ՝ որ պահեսցէ զբան մարգարէութեան գրոցս զայսոցիկ, եւ ինձ Յոհաննու՝ որ լուայ եւ տեսի զայս (Է. ԻԴ. 574. եւ 576, ուր կան մանր տարբերութիւնք։)	Երանի՝ որ պահէ զբան մարգարէութեանս զայս։ Եւ ես Յովհաննէս լուայ եւ տեսի զայս ամենայն. ԻԲ. 7—8։

Եթէ ի բաց հանենք քանի մի ասորաբանութիւնս Եւսեբեայ թարգմանչին, զոր օրինակ. «Ցայտնութիւն Ցիսուսի, այն որ ետ ցուցանել. այն որ վկայեաց. տուաւ նմա բերան որ խաւսի (=խաւսել) զմեծամեծս. երանի իցէ այնմիկ՝ որ պահեսցէ (=երանի որ պահէ. տես եւ «Երանի որ խորհի զաղքատն եւ զտնանկն». Սղ. Խ. 2), մեր այժմու Ցայտնութեան լեզուն գրեթէ կը նոյնանայ ընդ հատակոտորացն Եւսեբեայ։

Անտարակոյս զայս հայաբարբառ Ցայտնութիւն ընթերցած է եւ Դաւիթ Անյաղթ յետ կիսոյ Հինգերորդ դարուն, երբ կ'ըսէ յիւր ճառին *Բարձրացուցեաց*, 114. «Ասպնջեալ ես, փայտ սուրբ, որ փոխանակ Ցայելի՝ Որդի Կուսին ցից զքեզ ընդ ծամելիսն *ծիախրոխտ Մահու* վարեալ, ի դառնութիւն եւ ի մահ զճաշակն նմա գործէ, եւ ընդ ոտիւք զգետնեալ մեռուցանէ»․ (=«Եւ տեսի, եւ ահա ձի աշխէտ (տպ. շլոուոս, զորմէ ի սուրբն), եւ որ նստէրն ի վերայ նորա՝ ունէր *զՄահ*, եւ դժոխք երթային զհետ նորա». Ցայտն. Զ. 8.) եւ դարձեալ յերես 117. «Քեւ անպարատ զաւրինք Եկեղեցւոյ ընտրեալք որոշին՝ անկաս-

* «Բերան որ խաւսէր զմեծամեծս». Դան. Է. 20։

անգղայս համար տես Յայտն. Է. 4—8.) նոյնպէս եւ ի Ներբո-ղեանսն Սրբոյ Խաչին եւ Սրբոյ Աստուածածնին՝ որ գը-րեալք են յամին 986 կամ 987, (երես 402, «Դուռն հեծեալ ի ճերմակ երիվար»=Յայտն. ԺԹ. 11. եւ երես 409=Յայտն. ԺԶ. 20)։ Յետ Գր. Նարեկացւոյ՝ Յոհաննէս Սարկաւագ ի ԺԲ դարու ընթերցած է զՅայտնութիւնն, զոր կը յիշէ յերկս անգիր իւր գրութեանց, ի ճառին Յաղագս Քահանայութեան (Սոփ. Հայկ. Գ. 27—28=Յայտն. Ե. 8. Ը. 3), եւ ի ճառին Յաղագս Մա-սանց պատուոյ եւ պատկերաց (Հ. Գար. Զ. ի մատենին Յղ. Բարեխօս. Սրբոց, 353=Յայտն. ԺԲ. 3—4)։ Կը սխալին ա-բեղն Սուքիասեան եւ Հ. Գար. Զ. որ թարգմանիչ Յայտնութեան կը կոչեն զՆերսէս Լամբրոնացի յԺԲ դարու, մինչդեռ վաղուցուն քան զնա ծանօթ էր յԱզգին հայ թարգմանութիւն գրոցս։ Լամ-բրոնացւոյ գործն եղած է լոկ վերստին սրբագրել ի հելլենացւոյն, այս ինքն՝ սրբագրել ի յունականէն, զոսկեզենիկ թարգմանու-թիւն Առաջին Աշակերտաց, յոր հարկեցուցիչ պատճառաց ընդ-նադատեալ՝ չգիտեմ. այս միայն յայտնի է թէ «վերստին սրբա-գրօղ»ին պարտական ենք զայլաբանութիւնս «Բանալ զկնիքս, զկնիքն (Ե. 2—5). Շլորոս[9] (Զ. 8). Գրկոյք, զԳրկոյսն (Ժ. 2, 8, 10). Կղայ[10] (Ժ. 10), փոխ. Կլի. Տուսն (ԺԲ. 4), փոխ. Տառն.

---

9. Յունարէն chloros բառն, որ կը նշանակէ Դեղին, Դժգոյն, ըստ օրինի Ե դարու հայերէն տառադարձութեան՝ Քլորոս կը փոխուի, եւ ոչ Շլոռոս։ Ի ԺԱ կամ յԺԲ դարու սկսած է շ տառադարձութիւնն փոխանակ ք. Արշիեպիսկոպոս=Արքեպիսկոպոս. Արշիմանդրիտ (եւ Շամանդրիտ. Վրդ. Արեւելցի, Պատմ. 83)=Արքիմանդրիտ. Մոլոշ=Մոլոք։ Նոյն դարերուն մէջ սովորական եղած է նաեւ խ. Խրօնիկոն=Քրոնիկոն. Մոնոմախոս=Մոնոմաքոս. Պախումէոս=Պաքումէոս. (անմարթ է որ հայերէն թարգմա-նութիւն Պրոքորոսի Պատմութեանն Յովհ. Աւետ., յորում կը գտնուին Պրոխորոն եւ Խաւսոս գրութիւնքն, եղնէ մինչ ի Զ դար, ինչպէս սխալ-մամբ կը համարի անանուն ոմն «ազգային արդի ամենէն աւելի նշանաւոր բանասիրաց մին». տես Հ. Գար. Զ. Մատղր. 670—671։) Կայ ուրեք ուրեք եւ հ. Արհիեպիսկոպոս=Արքեպիսկոպոս. Քսենադոհինի=Քսենոդոքինի (յն. xenodocheion, Հիւրանոց, Աւտարանոց)։

10. Լամբրոնացւոյ ժամանակին թուի եւ «Զերկիր ամենայն կլայ», եւ այս մանկանս ոչ կարացի յաղթել». Վարք Հարանց, Հ. Ա. 124, մանրագիրն։

[illegible]

13. [illegible]
[illegible]
(Մ[illegible]. 1?2—1?3 [illegible]
[illegible]
Թիւն [illegible]
[illegible]
114:) [illegible] Հ. Մ[illegible]
[illegible] 1?6, [illegible]
մութեանց [illegible]
է Հրէից [illegible]
[illegible]
Երկրորդ [illegible]
Հրէից [illegible]
[illegible]

տաւորաց (Հ. Ա. 325), *Թագաւորաց* (անդ, 415—416), *Մնացորդաց* (անդ, 463—466), եւ *Դիւթակարգութեանս Եւսեբեայ* (անդ, 299—300) եւ *Սամուէլի* (անդ, 351—354)։ Երկրորդ՝ կ՚ըսուի թէ «Մեր Թարգմանութեանց մէջ գտնուած *Սախաւղլութեանց* նման աշխատութիւն մը կայ յատուկ լեզու յԱմբրոսեան մատենադարանի ի Միլան». Հ. Գար. Զ. *Մատղր*. 757։ Իսկ ներքին պատճառքն են՝ պէսպէս աստուածաբանութիւնք. զոր օրինակ. «*Տանն Սեթայ*՝ չխառնել ընդ *տունն Կայենի*, տանն *Նոյի*՝ չուտել զարիւն կենդանւոյ». «Գահելով սերմն կրկին անման մարդկան *զտունն Նոյի*». Նխդր. Ծնն. 3 ա, բ. (=«Ուխտ եդեալ էր տանն *Սեթայ*՝ զի մի խառնակեսցին ընդ *տունն Կայենի*»[2]. Եփր. Սրբոց. 47.—«Իսկ կանայք *տանն Նոյի* գիրքդ ապրեցան». անդ, 44.—«Եկն բարկութիւն Աստուծոյ ի վերայ ազգին *տանն Նոյի* եւ *Ղովթայ*». նոյն, Եփես. Ե. 149.)—«Առաքեաց Դաւիթ մխիթարել *զՀանան* արքայ Ամոնայ». Գլուխք Բ Թագ. ԻԵ. 271.—«Առաքեաց Դաւիթ մխիթարել *զՀանոն*» Գլուխք Ա Մնաց. ԼԴ. 356. (=«Առաքեաց դարձեալ հրեշտակս մխիթարել *զՀանան* արքայն». Եփր. Մնաց. 471—472։ Ամոնացւոց թագաւորն կը կոչուի *Անոն* յԲ Թագ. Ժ. 1—3. եւ *Անան* յԱ Մնաց. ԺԹ. 1—6. ասորական ուղղագրութիւն է *Հանան* կամ *Հանոն*.)—«Նապան զնա (զՈքոզիա) Յէու՝ *այն որ* ջնջեաց զտունն Աքաաբու». Գլուխք Բ Մնաց. ԺԹ. 381. (=«*Այն որ* եա ցուցանել. *Այն որ* վկայեացն». Եւս. տես վերագոյն յերես 418. եւ այլն.)—«*Բաբէլ*». Գլուխք Եսայեայ, ԻԵ. 730. Եզեկիելի, ԺԶ. 900. փոխանակ *Բաբելոն*, ինչպէս կ՚ըսէ այլուր, Գլուխք Դ Թագ. ՀԳ. ՀԴ. Միքիայ՝ Ա. Յովելայ՝ Գ. Մաղաքիայ՝ Ա. եւ այլն. (=«*Բաբէլ*» (ասորերէն *Bobel* կամ *Babel* P. Smith, *Thes. Syr.* *Բեթ*, 443). Զգօն, Ե. 91 երկիցս. ԺԸ. 318. Եւս. Եկեղ. Բ. ԺԵ. 106. Զ. ԻԵ. 472. Եփր. Հ. *Բ*. 412. Հ. *Դ*. 212. Ագաթ. 429)։ Մեծագոյն մասդրութեան արժանի են զանազան մեկնութիւնք եւ իմաստք՝ որ յատուկ են Ասորի եկեղեցական մատենագրաց.

1. «Յաւելու եւ զայս, զի յետ վեց ամի արձակեսցեն զծա-

---

2. Թարգմանիչն Զգօնի, ԺԲ. 224, կ՚ըսէ. «Խառնեցաւ *ազգն Սէթեան* ընդ անիծեալ *ազգին Կայենի*»։

4. «Յերեսներորդ ութերորդ ամին Ասայի՝ թագաւորէ Աքաաբ, որդի Ամրեայ, ամս քսան եւ երկուս. եւ շինեաց զԵրիքով». Գրուխք Գ Թագ. ԽԶ. 297—298. (=«Եւ թագաւորեցաւ դարձեալ Աքաաբ որդին իւր ըստ նմանէն: Եւ վասն զի փոքր թուէր յաչս նորա երկիր պագանելն ձուլածոյ որթուցն Յորոբովամայ, յաւելաւ նորոգեաց ինքն առանձինն զԲահաղ, եւ շինեաց Բահաղու բագին ի Շամրին, եւ շինեաց զտեղի անիծիցն Յեշուայ զԵրիքով: Բայց կարի վասն այսորիկ առաւել շինեաց զնա, զի ցուցցէ եթէ չիք ինչ չահ յանէծսն Յեշուայ». Եփր. Թագ. 431.—«Կամեցաւ դարձեալ Աքաաբ շինել զԵրեքով կործանեալ, կործանեցաւ արքայութիւն նորա». Նոյն, Համառ. 141.—«[Շինեցին] տունք նոցա վայլուք եւ աղաղակաւ անդրանկաց նոցա իբրեւ Աքաաբուն Աբիրամաւ (տպ. Աբիրամու). եւ կանգնեսցեն զդրունս գուժիւ եւ աշխարանաւք կրտսերոյն (տպ. կարեւոյն) իբրեւ զորդին Ամրեայ Սոքորաւ». Մար. Ի Վկ. Արեւ. 133.—«Սա (Աքաաբ) շինեաց զԵրիքով՝ զնզովեալն Յեսուայ որդւոյ Նաւեայ՝ Աբիրոնաւ անդրանկաւ իւրով, եւ Զերծելաւ կրտսերաւ կախեաց զդուռնն, ըստ բանին Յեսուայ։ Եւ այլք զԱզան (տպ. զանազան) ասեն շինիչ հրամանաւ Աքաաբու, եւ զորդիսն սմա ասեն՝ Աբիրոն եւ Զերծել»[3]. Միխ. Աս. Ժմնկգր. 45։) Ըստ Գ Թագ ԺԶ. 34, ոչ եթէ Աքաաբ, այլ «Յաւուրս նորա շինեաց Աքիէլ (կամ Ազան. Յես. Զ. 26) Բեթելացի զԵրիքով. Աբիրոնաւ անդրանկաւ իւրով արկ նմա հիմունս, եւ Սեգուբաւ (կամ Զերծելով. Յես. Զ. 26) կրտսերաւ իւրով կանգնեաց զդըրունս նորա, ըստ բանին Տեառն՝ զոր խաւսեցաւ ի ձեռն Յեսուայ որդւոյ Նաւեայ»։

5. «Սպան Դաւիթ զարքայն Մծբնայ, եւ տիրեաց մինչեւ ցԵփրատ գետ». Գրուխք Ա Մնաց. ԼԲ. 356. (=«Սպան (Դաւիթ) զթագաւորն Մծուինի, եւ եդ սահմանս ի գետն Արածանի». Եփր. Մնաց. 471։) Փոխանակ արքայ Մծբնայ կամ Մծուինի՝ յԱ Մնաց. ԺԸ. 3, գրեալ է արքայ Սուբայ, ուր ասորական թարգմանութիւնն ունի արքայ Մծբնայ (P. Smith,

---

3. Համառօտ «Եւ այլք զԱզան . . . Աբիրոն եւ Զերծել» թուի յաւելեալ ի Հայ թարգմանչէն։



266:) Զ*Ամովսայ մարգարէի* (Ն. 26) *Հռեմփա*[5] աստուածն՝ Եփրեմ կը մեկնէ *Քեւան*, որ է պարսկերէն *Քէյվան*, Երեւակ մոլորակըն, լտ. Saturnus. (տես *Քէյվան* ի Գէորգ Տէր Յովհաննէսեանի Բռգ. Պրս.—Հայ. տես եւ *Քեւոն* ի P. Smith, *Thes. Syr.* Բռփ, էջք 1659—1660, ուր նշանակութիւն պարսիկ *Քէյվան* բառի կը գրուի «nomen dei, Saturnus», «անուն աստուծոյ, *Կռոնոս*»:

8. «Տեսանէ (Դանիէլ) զտեսիլ գազանացն. *առիւծովն՝ զթագաւորութիւնն Բաբելացւոց. արջովն՝ զՄարաց եւ զՊարսից. ընձուն՝ զՄակեդոնացւոցն, եւ չորրորդիւն՝ զՀռոմայեցւոցն*». Գլուխք Դանիէլի, Թ. 879. (=«Գազանն առաջին նման *առիւծու՝... թագաւորութիւնն Բաբելացւոց է...*: Գազանն երկրորդ նման *արջոյ՝... թագաւորութիւնն Մարաց եւ Պարսից է...*: Եւ գազանն երրորդ նման *ընձու... Աղեքսանդր Մակեդոնացի է...*: Եւ զգազանէն *չորրորդէ* ասէ, Ահեղ եւ զարմանալի... *սա թագաւորութիւն որդւոցն Եսաւայ է*».[6] Զգան, Ն. 95—97. որում գրեթէ համեմատ եւ Գիր. Կոչ. ԺՆ. 314—315, առաջին գազան՝ Պարթեւք եւ Ասորեստանեայք. երկրորդ՝ Պարսք. երրորդ՝ Մակեդոնացիք. չորրորդ՝ Հռովմայեցիք[7]:)

9 «Մարգարէանայ վասն Քրիստոսի եւ վասն Նեռին եւ *Անտիոքու ամպարշտի. զի նա է եղջիւրն փոքրիկ* որ ընկէց զերիսն՝ որ յառաջ քան զնա էին». Գլուխք Դանիէլի, Թ. 879. (=«Եւ ասէ (Դանիէլ). *Եղջիւր մի փոքրիկ* ելանէր ի մէջ

5. Նախավկայն Ստեփանոս յատենախօսութեան իւրում (*Գործք Առաք.* Է. 43) կը յիշէ զԱմովսայ Հռեմփայն, զորմէ կ'ըսէ Գէորգ Սկեւռացի ի Մեկն. Գծ. ԺԷ. 144. «*Հռեմփայն* կուռք էին յանուն կնոջ միոյ բոզի, եւ յորջորջումն պատկերին Աստղիկ, զոր աստուած նոցա ասէ»:

6. «Թագաւորութիւն որդւոցն Եսաւայ» անուամբ՝ Զգան կ'իմանայ զՀռովմայեցւոց տէրութիւնն, ինչպէս յայտ է եւ յայլ երկու տեղեաց նոյն ճառին, 92—93, 103:

7. Ի մեր տոհմային ժամանագրաց՝ Սեբէոս (*Պատմ.* 176—177) կը մեկնէ զչորս գազանս Դանիէլի, առիւծ=Յոյնք. արջ=Սասանեանք. ինձ=Գոգ եւ Մագոգ. չորրորդ=Իսմայելացիք, որ է Արաբացիք: Ըստ Պատմչին վարուց Ս. Ներսիսի (Սոփ. Հայկ. Հ. Զ. 94), առիւծ=Մարք. արջ=Բաբելացիք. ինձ=Պարսք. չորրորդ=Հռոմք:

րեան, եւ մեծ ազդեցութիւն կրած յայդ ընթերցմանէ, հիմն-եալ յիւր ուսումնակցաց (Առաջին Դասուն) հայկաբանութիւնն՝ այնպիսի բառս եւ ասացուածս զորս նոքա բնաւ չէին գիտեր։ Ի յաջորդ համեմատութիւնսդ կը նշանակեմ նախ զայն նմանու-թիւնս՝ որ միայն Պաւղոսի Մեկնութեանց եւ Կորեան գրուածոց մէջ կը պատահին, Ուղղակի ի Կորիւնէ. եւ ապա զայնոսիկ՝ որ թէպէտ կը գտնուին եւ յայլ գրութիւնս Առաջին Աշակերտաց, բայց թերեւս Կորիւն եղած է յուշարարն Թարգմանչին Պաւղոսի Մեկնութեանց, Միջնորդաւ Կորեան։

Ա

ՈՒՂՂԱԿԻ Ի ԿՈՐԻՒՆԷ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ա ՏԻՄՈԹԷՈՍ

1. *Սաղմոսանուագն.* «Զոր Սաղմոսանուագն զհաւրէ ասէ, թէ Ցոյս ամենայն ծագաց երկրի». Ա. 4. տես եւ Կողոս. Բ. Ցորդ. 550. Եփես. ԺԴ. 819, 823. Ի. 888. եւ Ցորդ. 892։= «Քանզի զնմանէ իսկ նշանակէ (ըստ Զ.) *Սաղմոսանուագն*, թէ Աղբիւրն կենաց ի քէն է». Ագաթ. 300։ (Այլուր կ՚ըսէ թարգ-մանն. «*Մարգարէն* ասէ *ի Սաղմոսին* . . . որպէս *ի Սաղմո-սին* ասէ». Եփես. ԺԱ. 787, 788։ Ա՛յլ է *Սաղմոսասաց* յներ. Դ. 479, 480։—Միւս թարգմանիչք. «Զլսեօ *Սաղմոսին* որ ասէ». Ոսկ. Մատթ. Բ. գ. Յորդ. 476.—«Դարձեալ ասէ *ի Սաղմոսին*». Բրս. Վեց. Ա. 17.—*Սաղմոսերգն.* Կիւր. Կոչ. Թ. 132. Թ. 148. երկիցս. *Սաղմոսերգեացն.* անդ, Ժ. 160. *Սաղմոսերգիչն.* անդ, ԺԸ. 417. *Սաղմոսերգողն.* անդ, Ա. 7։ Ցաճախ եւ *մար-գարէն*, կամ *Դաւիթ*։—*Սաղմոսանուագ* ի գիրս Մնացորդաց, Ա. գ. 33. Թ. 33, եւ այլն, է Ո՛ր եւ է երգիչ սաղմոսաց։)

2. *Բարեաց գործոց նախանձաւոր լինիմ.* Ա. Ցորդ. 13։ Տես ի Կոր.=Ագաթ. թիւ 36։

3. *Անդուստ ի վերուստ յերկնից.* «Եթէ կամիցիս՝ զոյ եւ այլ ինչ կարի անոյշ, որով կարես զոգիսդ անուշացուցանել. ոչ յԱրաբացւոց եւ յԵթովպացւոց եւ ի Հնդկաց եւ ի Պարսից, այ

7. *Ի վանականաց կարգ ելանեմ*. «Բազումք յանարգաց . . . ի *վանականաց կարգ ելանեն*». ԺԱ. Յորդ. 90—91։ =«Յորոց եւ գտան արժանիք (ի մանկանցն Վրաց) *ելանել ի կարգ եպիսկոպոսութեան վիճակի*». Կորիւն, 16. այսպէս թուի ուղղելի գրեալն ի տպագրին (տես աստէն, 3)՝ «յորոց եւ իմ անարժանիս՝ եղեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ». բաց ի վկայութենէն Ոսկեբերանի՝ միտ դիր եւ յաջորդացդ. «*Յորոց եւ զտեալ շնորհս* . . . ի տիեզերական քաղաքին մեծարել զարմանօքք». Կորիւն, 17.—«*Ելին ի վիճակս* երկնաւորս։. Ագաթ. 401.—«Եւ անդ *ի միայնակեցի կարգ ելեալ*՝ լինէր ի խրճիթ». Յոհ. կթ. *Պատմ*. 62. ոլ սխալ գրեալ է ի *Շիրակ* Ալիշանի. երես 172 *բ*, «ի միայնակեցի կարգ *եղեալ*», ինչպէս եւ ի Կորիւն՝ *եղեալ* փոխ. *ելանել*։ (Թարգմանն կ՚ըսէ յայլում վայրի. «Թէ մինչեւ ուսեալ ընդ իշխանութեամբ լինել՝ եւ *յիշխանաց աստիճան ելանիցէ*, յամբարհաւաճութիւն հատանի». անդ, Ժ. 81։)

8. *Նժոյգ*. ԺԱ. Յորդ. 93, եւ այլն։ Տես ի Բիւզ.=Մկբ. թիւ 43։

9. *Նախանկար աւրինակ*. «Այն իսկ է՝ եթէ *Նախանկար աւրինակ* բարի վարուցն դու լինիցիս». ԺԳ. 106.—«Ըստ աւրինակի նկարչաց միանգամայն դրոշմեցի (տպ. դրոշմիցէ) քեզ, ասէ, զպատկեր առաքինութեան . . . , իբրեւ զկանոնս եւ զ*նախանկար աւրինակս* եւ սահմանս արկի (տպ. արկ) ի միտս քո». Բ Տիմ. Գ. 192.—«Իբրեւ զ*նախանկար* ինչ (տպ. զնախանկարիչ. տես *Հայկ. Բառաքնն.* երես 46) տիպս եւ *աւրինակս*». Փիլիպ. ԺԲ. Յորդ. 485։=«*Նախանկար աւրինակաւ* փութալ յառաջագոյն ի գուշակեալ հանդիստն». Եւթաղ, Գլուխք Եբր. Ե. 1171։ (Այլուր *Նախանկար տիպք*. Բ Տիմ. Ը. 245. Տիտ. Դ. 313. Փիլիպ. ԺԲ. 485. եւ Յորդ. անդ. Եփես. ԺԵ. 836։)

10. *Ողորմանաւք խաւսիմ*. ԺԳ. 107։ Տես յԱգաթ.=Բիւզ. թիւ 53։

11. *Հրաժարեմ*. (մեռանել.) ԺԳ. 109։ Տես ի Կոր.=Ագաթ. թիւ 134։

12. *Զկնի կրթիմ*. «Հետամուտ եղեայ, *զկնի կրթեցայ*,

չանչ եւ մեռեալ, եւ շաչիւն եւ շառաչիւն[3], եւ ի կեղծաւորութիւն». Ը. 245։—«Զարժէին առ հասարակ ամենեքին որ լսէին զձայն բաշբառոյ բազմութեանն, զշաչիւն զինու, զշառաչիւն, զերիվարացն թնդիւն». Մկբ. Ա. գ. 41.—«Անդ էր լսել . . . շաչիւն նշանաց, շառաչիւն նետից». Բ. ե. 3։ (Յայլ գիրս կայ Ճաչիւն առանձինն. Գատ. Ե. 16. Միք. Ա. 13. Նաւում, Գ. 2. կայ Ճառաչումն, Իմաստ. ԺԶ. 16. Երեմ. ԾԱ. 16. կայ եւ Ճաչել շառաչել, Երեմ. Խէ. 3։)

18. *Մարձեմ*. «Զիք ոք որ մերկանայցէ եւ ածանիցի եթէ հանդիպատ խնդրիցէ. քանզի յըմբշամարտ ի կռիւսն (յըմբշամարտիկ կռիւսն?) մերկանան ածանին, ապա ի մրցել եւ յաղթել մարտչին։ Եթէ հանդիպատ խնդրիցես, ընդէ՞ր մերկացար, հեմ զբաղուկս *մարձիցես*». Ը. 249.—«Որ զմարտուսն երկայնս հանդերձ մանեալ պերճեւշտիւք *մարձէին*». Տիտ. Ե. 330։—«Լուացեալ զհերս իւր, ածեալ *մարձեալ*[4], վարսակալ եդեալ ի գլուխ իւր». Բիւզ. Զ. ը. 266։ (*Մարձեմ* կամ *Մարզեմ* է Ածանեմ, ինչպէս կ'ըսէ արդէն թարգմանն յառաջին վկայութեանն, նոյնպէս եւ այլուր. «Եւ եթէ անցանիցէ ոք, ասէ, ի կռիւն եւ *ածանիցի*». անդ, Դ. 203.—«*Ածանի* իբրեւ զմարտիկսն որ ի կռիւ մտանելոց իցեն». Կողոս. Զ. 591։ Ըստ այսմ եւ յՈսկ. Մատթ. Ա. ժա. Յորդ. 170. «Յայսմ ածէ եւ անդր՝ ի բարւոք կռուանացն մտանիցէ, *ածեալ* իւղով Հոգւոյն պարգեւաց»։)

19. *Անուն առնում*. «Զթշնամիս վանեցաք, *անուն առաք*, նշան յաղթութեան կանգնեցաք». Թ. 260։—«Կամէր յանպատրաստից գալ անկանել ի վերայ Մանուէլի, միայն անձամբ *անուն առնուլ*». Բիւզ. Ե. խգ. 251։ (Միւս թարգմանիչք. *Անուն*

---

3. Ըստ այսմ եւ *Հաչիւն* եւ *հառաչիւն*. Եփես. ԺԵ. Յորդ. 837։

4. Տպ. *մերձեալ*, զոր վաղ իսկ ուղղած եմ *մարձեալ* ի Հայկ. Բառաքնն. Էջեւք 60—61։ Համեմատէ ընդ *ածեալ մարձեալ*. «Ծննդոցն յառաջատեք քաղաքավարութեան, եւ սնեալք աւրինաւք, որ յամենայն առաքինութիւն *ածեալ մարզեն*». Փիլոն, Յղ. Բազնին իրաց, 209.—«Զիթոյն բնութիւն *ածեալ մարզէ* զըմբիշսն, աներկիւղս ի գուպարս ատենիցն արբուցանելով». Խորեն. Պիտ. Է. գ. 507։

բերդին». ծա. 171. տես եւ Ն. դ. 199. ե. 201, 202 երկիցս. իզ. 219. լե. 236 երկիցս. խդ. 257 երկիցս:

Համակ. բ. (ածական, Ամենայն, Բովանդակ. պարսկերէն Հէմէ, Ամենայն. Հէմէկի, Բովանդակ. տես ի Գէորգ Տէր Յովհաննէսեանի Բառ. Գրս.—Հայ.) «Եթէ *համակ* իսկ մարմինն բորոտ իցէ՝ այնպիսին սուրբ է, եւ եթէ ի միում վայրի՝ չիցէ սուրբ». Տիտ. Գ. 308.—«Չիք ինչ բարութիւն որ ի դառնութենէ ոգւոյն գործիցին, եւ ոչ առողջութիւն եւ բժշկութիւն, այլ ամենայն վիշտք, բնաւ արտասուք, *համակ* ողբք, ամենեւին հաչիւն եւ հառաչիւնս». Եփրեմ. ԺՆ. Յորդ. 837:=«Վտղրաւորք, սակրաւորք, . . . *համակ* հեծելազաւրք զրահաւոր պատենազէնք». Բիւզ. Դ. ի. 130.—«Եւ դասն հեծելազաւր սպառազէնք . . . *համակ* վաթսուն բիւր». իա. 137:

Կայ բառս ի Մեկնութիւնս Պաւղոսի եւ երրորդ նշանակութեամբ, իբր մակբայ, Ամենեւին, Բնաւին, Բոլորովին, Համաւրէն. «Երանելի, ասէ, զի չիք անդ տրտմութիւն, այլ *համակ* երանութիւն. եւ ոչ տխրութիւն, այլ ամենեւին իսկ ուրախութիւն»[7]. Ա Տիմ. ԺԸ. 163.—«Չիցէ տեսանել զթագաւորս եւ զհիւպատոս կառաւք եւ երիվարաւք ելեալ ի ճեմելիս, . . . ոսկեհուռ հանդերձիւք, ոսկեսանձ երիվարաւք՝ *համակ* ոսկիվարաւանդաւք (այսինքն ոսկի վարաւանդօք) եւ ապարդմաւք». Եփես. Թ. 769.—«Եթէ այլոց բաշխեսցուք զինչս, եթէ զոր ինչ ունիցիմք՝ *համակ* իւր գործիցեմք, անդ աւգնեսցէ, յայնժամ չայեկան լինիցի մեզ». Եբր. ԻԸ. 559: Միայն սովին նշանակութեամբ կը գտնուի *Համակ* բառս ուրեք յայլ թարգմանութիւնս Առաջին Դասուն. «Գնդակք նոցա . . . *համակ* ճախարակեալ». Եզք, ԻՆ. 36.—«*Համակ* կապուտակ». անդ, ԻԸ. 31. ԼԹ. 20. Թիւք, Դ. 6.—«*Համակ* ոսկի». Եզք, ԼԷ. 17.—«*Համակ* ծիրանի». Թիւք, Դ. 7, 13.—«Ձոյլ ոսկի բուն նորա (աշտանակին), եւ շուշանք նորա ձոյլ *համակ*». անդ, Ը. 4.—«Բերանայն՝ որ հոգեւոր հրովն լնուցու, եւ լեզուին՝ որ *համակ* ի կարմիրս յահագին յարենէն (Քրիստոսի) ներկա-

---

7. Համեմատէ. «Ոչ խռովութիւն ոգւոց է անդ, եւ ոչ աշխատութիւն եւ ոչ բարկութիւն, այլ ամենեւին հանդարտութիւն եւ համաւրէն խաղաղութիւն». Ոսկ. Մատ. Գ. ԺԷ. Յորդ. 72:

33. Ուրուկ, յգ. *Ուրկունք*. «Քան զուրկունս տրորեալս՝ եւս յանհնարին հարուածս էր (Յովբ)». Ը. 439։=«Ժողովել զախտաժէտս եւ զ*ուրկունս* եւ զմարմնաւորս եւ զամենայն ցաւոտս». Բիւզ. Դ. դ. 75.—«Եւ զ*ուրկունս* եւ զաղքատս հանդուցանէր (Ներսէս)». Ե. իա. 213։ (Ի *Ճառս* Սեբեր. Թ. 181, կը գտնենք յգ. *Ուրուկք*, ուրկաց. «Բաշխեաց, ասէ, եւ ետ *ուրկաց*»։ Թարգմանն ունի եւ յգ. *Հաշմունք*. «Տես որչափ խեղք եւ *հաշմունք* իցեն». Փիլիպ. Դ. 391. զոր այլուր կ'ըսէ ըստ սովորականին. «Քանի մերկք, որչափ *հաշմք*». Ա Թես. Թ. 462։)

34. *Աշխատութիւն երկայն ճանապարհաց*. Ժ. Յորդ. 468։ Տես յԱգաթ.=Բիւզ. Թիւ 3։

35. *Գամ քան զգամ*. «Նա (Պաւղոս) հանապազ մեռանէր, ցանկ առաքինանայր. չէր ժամանակ, չգոյր ժամ յորում ոչ յաւելոյր *զամ քան զգամ* յընթացսն». ԺԲ. 482։=«Իբրեւ զայն տեսանէր Փիլիպպոս՝ զի *զամ քան զգամ* իւր առնն յառաջադէմ աջողէին». Մկբ. Բ. ը. 8. որ ի Բիւզանդ, Ե. ա. 188, ըսուած է *հաղ քան զհաղ*. տես ի Բիւզ.=Մկբ. Թիւ 95. տես եւ *Հաղ* յԱգաթ.=Բիւզ. Թիւ 46, ԴԻՏ. (Այլք յԱռաջին Աշակերտաց կ'ըսեն *Տակաւ*, *Եւս քան զեւս*, ինչպէս ի Թղթին Փիլիպ. Ա. 12. «Որ ինչ վասն իմ էր, *եւս քան զեւս* ի յառաջադիմութիւն Աւետարանին եկն»։)

36. *Ասպարակիր*. «Եթէ որդի առն թագաւորի ... դառնայցէ, զաւրաւք բազմաւք մեծաւ յաղթութեամբ, ... գունդ գունդ *ասպարակրաւք*՝ որ շուրջ զնովաւ սատի եւ անտի յաւրինեալ մտանիցեն». ԺԳ. Յորդ. 497։=«Հասանէին բազում *սպարակիրք* հետեւակք». Բիւզ. Դ. ԺԵ. 118.—«Եւ էին կուռ վառեալք ինն*ը*սուն հազարք ... թող *զսպարակիրս*». Ե. Ե. 200.—«Յունաց զաւրացն *սպարակիրն*, նոյնպէս եւ Հայոց *սպարակիրն*». անդ, 201.—«Ի լեզէոն վահանաւորացն Յունաց կամ ի *սպարակիրն* Հայոց իբրեւ ի բերդ մտեալ հանգչէին». անդ.—«Կայր շուրջ *սպարակիրն* փակեալ սակրաւքն (տպ. սակրաւորքն) ... ։ Ապա մըտեալ շուրջ զնովաւ ի տեղւոջն ձգձգէին զնա *սպարակիրքն* ... *ասպարակիր* մարդկանն պատեցին զնովաւ ... զաւրք *սպարակրացն* մածին զնա ի ներքս ի տունն պատմուճակացն». գ. 204—205.—«Լեգէոն *սպարակիր* հետեւակն». լբ. 232։ (*Աս*-

գնալու»: (Ցապարանելն երթալ կամ անցանել եւ Ի ճեմիշն՝ երթալ՝ է Միզելու երթալ. Զապարանեղին պէտս վճարել է Միզել. Ապարանեղը է Մէզ։—Բիւզանդեայ ապարիկին ունի «փ-բրեւ յապարանէ զանց առնելոյ պատճառաւ». այսպէս եւ Նոր Հայկզ. յ'Ապարան, եւ Գեր. Լ'յարձեան ի Քնն. Քեր. 109։ Այս նորօրինակ ասացուած՝ որ անմեկնելի մնացած էր ցարդ[10], օգնութեամբ Թովերբերյանի թարգմանչին յայտնի կը առնուի որ ընդօրինակողաց աղաւաղութիւն է՝ փոխ. «փբրեւ յապարանեղ անցանելոյ պատճառաւ»։ Մարթ էր նա եւ ասել յապարանեղանց առնելոյ, եթէ այլուր յԹովերգարուն մատենագրութիւնս գտնուէր Անց առնեմ[11]։—Այլ թարգմանիչք գիտեն միայն Մէզ

9. Ճեմիշ է Մէզ, եւ նոյն ընդ պարսկականին Զամիզ կամ Զէմիզ, որ եւ Կիմիզ կամ Քիմիզ. (տես զբառս ի Դէսրգ Տէր Յովհաննէսեանի Բառ. Պրս.—Հայ.)։ Կիմիզ կամ Քիմիզ կը գտնուի առ Եղիշէի (Պատմ Վարդանանց, Բ. 40)՝ Գումէզ կամ Գումիզ գրութեամբ. «Զեռք առանց գումիզոյ (բառ Զ.) մի լուացցին», որ է Զրադաշտական մատենից gaomaêza բառն=Ցլու մէզ. (“Chaque jour, au lever du soleil, le Parsi se lave les mains et la figure avec de l’urine de taureau, *gaomaêza*, qui protège le corps de l’atteinte des démons„. Fr. Lenormant et E. Babelon, *Hist. anc. de l’Orient*, Paris, 1887, Tome V, pp. 406—407.) Եթէ ուղիղ է Գէորգայ գրածն՝ Կիմիզ կամ Քիմիզ կարուած է առ այժմու Պարսիկս զիւր նախնական նշանակութիւնն Ցլու մէզ, եւ նոյնացած ընդ Զամիզ, Ճեմիշ, Մէզ։ Նոր Հայկազեանն սխալ կը մեկնէ զՃեմիշ. «Բառ. պրս. չէմշէ, Թուրքերէն չէշմէ, որ է Աղբիւր, և Տեղի թափելոյ զաւելորդս ընութեան. ասից ճամբայ. քէնէֆ»։ Նոյն սխալ է եւ յայլ ամենայն Բառարանս, (Ջախջախեանի Հայ.—Իտալ., Ատձեռն, Չաղըճեանի Բարբառարան, Էմինեանի Գաղղ.—Հայ.՝ ի բառսն Aisance, Garde-robe, Privé, Selle, եւ Նորայրիս Գաղղ.—Հայ.՝ ի բառսն Aisance, Cabinet, եւ այլն)։—Զնշմահեմ Գիւրղի Աղեքսանդրացւոյ Մեկնութեանն Գատաւորաց, զոր Նոր Հայկզ. կը մեկնէ «Կործանել զոեզին, և կարգել ի լուալիս. ճէմիշ (պրս. չէմշէ, Թուրք. չէշմէ) կացուցանել», կարօտ է քննութեան։

10. Այլ է Զանց առնեմ յումեքէ. «Մի զանց առներ ի ծառայէ քումմէ». Ծնն. ԺԸ. 3.—«Զանց արարին ի նմանէ քահանայապետքն». Ոսկ? (Եփր?) Ցանդամայոյծն, 849։

11. Կայ ի Բարսղի Վեցաւրէին, Զ. 124. «Ցորժամ սկսանի արեգակն ատրճանել եւ ելս առնել ի հարաւակողմն կողմանց». բայց Անասնեան Հարց ընտիր օրինակն ունի ելանել։

կան». Եփես. Ի. Ցորդ. 895։=«Իսկ որ արդ ես նորոգ ամուսնութիւնք ի միմեանս հասեալ թերալից ուրախութեամբ՝ նորասէր առագաստից, չարաչար կուժիւ մերկացեալք՝ ուղւոյ լինէին». Մկբ. Գ. դ. 5։

45. *Երկեղուկս արկանեմ*, «*Երկեղուկս* ինչ *արկանելոյ* է բանս, նա եւ ամենայն իսկ ուրեք ահագին է». ԺԲ. 658։=«Թշնամիք իմ հրապուրեցին զիս, եւ *արկին երկիւղուկս* ի քէն, եւ փախուցին ի քէն». Բիւզ. Դ. ծդ. 167։ (Բիւզանդ ունի եւ *Պատկառուկս արկանեմ* ումեք. Գ. ժզ. 32։ Կորեանն *Նախանձուկս արկանեմ*, 6, կը գտնուի եւ յայլ գիրս. Թիւք, ԺԱ. 29. Ոսկ. Մատթ. Ա. ա. 11. նոյն, Եփես. ԺԵ. 829։ Կայ եւ *Ողորմուկս արկանեմ*. Եփր. Սամ. Ե. 396. *Ցեղեղուկս արկանեմ*. Եւս. Եկեղ. Գ. ը. 171։)

46. *Զուլամբ երթամ*. «Դուք աւադիկ *զուլամբ* իմն *երթայք* եւ գեղխիք». ԺԲ. Ցորդ. 669։=«Վաշէ, երկրորդն Մանուելի, ձին *զուլամբ երթեալ*՝[12] սպանանէր». Բիւզ. Ե. խգ. 255։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՓԵՍԱՑԻՈՑ

47. *Շուրջ պսակիմ* (գիւիք, զոմամբ). «Որպէս զի ամենեցուն լիցի *շուրջ* զարքով սեղանովս *պսակել*». Գ. Ցորդ. 704. (տպ. «շուրջ զսեղանովս».— ա տպ. Հատուածք, 158, «շուրջ զսուրբ սեղանովն» —Ն. Լմբ. Մեկն. Պտրգ. 497, «շուրջ զարքով սեղանոյն»)։ Այլուր ներգործաբար. «Կորոյս որդիս. . . . եւ աւասիկ այլս ետ փոխանակ այնց, եւ զնոսա եւս ածեալ՝ *շուրջ պսակիցէ* զնովաւ (տպ. նովաւ) ի յարութեան». Բ Տիմ. Է. Ցորդ. 242—243։=«Եւ լեգէոն սպարակիր հետեւակն՝... *շուրջ* ի ներքոյ *զորմովք* խորանին պատեալ *պսակէին*». Բիւզ.

12. Ցորմէ *Զուլամբիմ* առ Թովմայի Արծրունւոյ, 220. «Ոտն երիվարին շաղեալ ընդ փոքր թուփ մի, որպէս ասեն, եւ *զուլամբեալ* (տպ. գուլումբեալ. այսպէս եւ բ տպ. 195) ի վերայ գլխոյն՝ . . . ի բաց ընկէց զհեծեալն»։ Այլուր կ'ըսէ. «Ձիոյ խրոխտացելոյ *զանձամբ երթեալ* (տպ. զանձն ամբարթեալ. այսպէս եւ բ տպ. 234)՝ ելոյծ ի կենաց դքաջ արանցըն». 264։

Ժե. Յաղ. 234. «Եւ ոչ [illegible]` [illegible]
[illegible] [illegible]. Եւ ոչ [illegible] [illegible] [illegible]

53. Ոսկիգմբէ վարժան. Ոսկիկմբաբա
«Չիցէ [illegible] [illegible] եւ [illegible]
[illegible] [illegible] ի [illegible]. [illegible] եւ [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible]
[illegible] վարժանաց` [illegible] Ոսկիգմբէ[illegible]
[illegible] [illegible], [illegible] [illegible]
բաւանդակ (տող. [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible]` [illegible] ի Թ[illegible] [illegible]
Կմբէ վարժանաւքն. Բիւզ. Ե. [illegible]
(տող. Նմայքս, [illegible] [illegible]`
վարժարանդ աշխարհամուսն, [illegible]
անդ [illegible] Բիւզանդ [illegible]
Թագ Զենոնի. «Ծով [illegible]
ղասապատըն յերկիրըն հանէիր
Ոսկիկմբէ վարժան[13] է Վա
Ոսկիգմբէ բառին է Կմբեւ
որ եւ Օ[illegible] «Զենիցն գն
ցեն, [illegible] [illegible]
կմբեայք (տող. կմբեայ) (
Ժգ. Յաղ. 66. որ ի Մե
«Յորժամ ի [illegible] [illegible]
Նակեալ իցեն, խորանս
շողացեալ. Կմբեթեա

---

13. [illegible] [illegible] Ոսկեփնեօր վարժան.

14. [illegible] [illegible] քեզ երկինքս. [illegible] բաղամ ընթերցու [illegible]. «Եթէ [illegible] Ենդէոս, Ե. 4։

15. Ի Գա[illegible] վարժանս կմբբա

—«Մի՛ վայրապար զամենայն ընդ միմեանս խառնեսցուք. Թէ ձեռաւք (տպ. ձեռօվք)՝ որով սպանանեմք, նովին *զոգցես* եւ ողորմութիւնս առնիցեմք». Եբր. ԻԴ. Յորդ. 537։ Այսպէս եւ յայլ գիրս Առաջին Դասուն[17]. «Իսկ որ *զոգցես* փոքր մի հանդարտագոյնք իցեն ի նոցանէն, արդար կոչեն զԱրարիչն, եւ բարի ոչ անուանեն». Ոսկ. Մատթ. Ա. ժգ. 249.—«Քո աւադիկ *զոգցես* վասն այնորիկ առնել իցէ». անդ, Բ. ժԹ. Յորդ. 650.—«Քանզի ի ժամանակի գերութեան Հրէից *զոգցես* կասցն իմն յաղթութիւն համարէին». Նոյն, Ես. ԽԱ. 282։ Կ'գտնուի նաեւ Գրհգ. Գաղատ. Բ. 11. Ոսկ. Մատթ. Բ. գ. Յորդ. 476. Գ. ժէ. Յորդ. 69. Նոյն, Փիլիպ. Ժ. 460։)

55. *Արեգակնակէզ լինիմ*. «Զի եթէ ոչ տղերք եւ ճահիճք եւ գետք եւ ծովք...զովացուցանէին, չէր ինչ արգել ամենայնի եւ բնաւի հրայրեաց *արեգակնակէզ լինել*». ԺԲ. 803։—«Զի թէ ոչ քրտնի մշակն ի տապ խորշակի ջերմոյն *արեգակնակէզ* (տպ. արեգնակէզ) *լինելոյ*, ոչ ըմբռնէ արդիւնս շայեկանս». Ագաթ. 93.—«Ի ժամանակս *արեգակնակէզ* գարնայնւոյ». 554։ (Ի գիրս Ծննդոց, ԼԱ. 40, դրեալ է. «Զցերեկ *այրեալ լինէի ի տաւթոյ*, եւ զցայգ ի ցրտոյ». զոր յԵրկրորդ Դասէ Թարգմանիչն Զգաւնի դարձուցած է այսպէս. «Ի տուէ *արեւակէզ լինէի* ի խորշակէ, եւ զցայգ ի ցուրտ փայտանայի». Ժ. 192։ Նման եւ յԵփր. Սամ. Գ. 376. «Ցրտահարեցան երեսք նորա (Դաւթի) յեղեմնախառն ցրտոյն, *եղեւ* եւ *արեւակէզ* ի տապոյ արեգականն»։ Յայլ գիրս. «Մերթ *խորշակահար*, մերթ ցրտակէզ խորովէր յանապատին». Ոսկ. Մատթ. Ա. Ժ. 146.—«Առ ի չգոյէ հիւթոյ երկրին՝ ի ծագել արեւուն *տապացաւ*». Մատթ. ԺԳ. 6. կամ ըստ Ոսկ. Մատթ. Բ. ԺԹ. 644, «ընդ ծագել արեգականն *խորշակահար եղեւ*»։)

56. *Լեառնական*. ԺԳ. Յորդ. 813։ Տես ի Կոր.—Ագաթ. Թիւ 119։

57. *Բոկազնաց*. «Զայնպիսի փափուկ աղջկանցն այնպէս

17. «*Զոգցես թէ*, ասելի կանոնաւոր է, բայց սովորականն է առանց թէի». Թոռն. Հատ. *Ընթերց*. 408, ծան. 10։

61. *Կալուկալ.* «Զի կայցէ իմ եւ
ուկալ (այլ. իրաց և կալուկալ) լինելոյ
բեք ուրեք եղեալ է, եւ ոչ ի մէջ Թշնա
պատերազմի, Թարամատար Հրեշտակաց
Դ. Ե. 88։

62. *Թաղնորդ.* «Բազում անգ
մէջ բազում [Թաղնորդաց տունն
Բերդնորդ «Եւ եղեւ յետ չորեքտ
տուհաւք] հարուածոց որ յԱստուծ
նին բերդնորդեացն, զի մահ ա
ծե. 170։ (Թաղնորդ է այն զա
ցի. Բերդնորդ՝ է Բերդացի,
395, 398։ Անտարակոյս Բուզա
է Թաղնորդ[20] ածանցման, ս
Ն գրոյ, Կց—որդ, Հազ—որդ,
եւ զարձեալ՝ Անդէ—որդ,
հան—որդ[21]։

63. *Գեր.* (մեծ՚աձա
եւ որք ընդ կիրճան անց
զակն եւ զնաժշտացն զ
քան զայն ծանականք

---

20. Սուրին Հայե
ինքն՝ Հերկահար, որ ե
կանաց, զի Հ. Մկրտի
թառն՝ կը գրէ. «Վար
վարդապետի Մեկնու
ութիւնն դժբախտա
կայ եւ ի Պատմու
ամանք ունիքորք
գործս, որք վար
300, ունի «վա
թեան Թուրիժ
տեւելով կը գ

21. Ն
Մաթ. Ա. ժ
ազաշնոցու
ցէ, եւ ի

Թագաւորն Գող ի չքմեղս լինելով՝ չլսելոյն առնէր, իբրեւ թէ իւր չիցէ գործեալ զայն». Բիւզ. Ե. իգ. 218: (Թարգմանն կ'ըսէ այսպէս. «Նենգել, սուտ, մեղմանալ. այս ինքն զոր ինչ լսիցէ իք՝ չլսեալ առնիցէ». Կաղան. Ը. 611:)

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵԲՐԱՅԵՑԻՈՑ

74. *Կանթեղք եւ մոմեղէնք լուցեալք.* Գ. 478: Տես յՕգոստ.=Բիւզ. Թիւ 183:

